ԼԵ. Իշխանն ոչ է բաւական պինդ ունել զժողովուրդն ի հնազանդութիւն ամենայն ակնարկութեանց իշխանին, այլ սէրն, զի նոքա ոչ են գերիք՝ այլ քաղաքացիք. և որպէս ոչ է բարւոք զի լինիցին գլխովին ազատք, նոյնպէս ոչ է բարւոք զի իցեն բոլորովին ծառայք։

ԼԶ. Իշխանք պարտին ունել զդութ ի վերայ հպատակաց իւրեանց. զի եթէ ծանրացուցանեն զհարկն առաւել քան զկար նոցա, խորհուրդն ապըստամբութեան զօրացեալ ի նոսա, ծնանի զատելութիւն ի կործանումն հասարակաց. զի յայնժամ կամ իշխանն նուաճէ զհպատակսն ի չարաչար ծառայութիւն, կամ հպատակքն խպառ մերժեն զնշխանութիւն նորա. և լինի պատառումն չար ի միում մարմնի։

ԼԷ. Նմին է իշխանն՝ որ կարծէ մեծարու լինել անիրաւ բռնութեամբ, կամ գողութեամբ, կամ խստութեամբ. զի այն է մեծարելի, որ է արդար, հեզ և քաղցրաբարոյ։

Իշխանք առաւել բարեհամբաւ և մեծանուն հանդիսանան իմաստուն կառավարութեամբ՝ քան թշնամեացն յաղթութեամբ։

ԼԸ. Երանելի է ժողովուրդն, որոյ իշխանն կրթէ զնոսա ի բարիս. բայց այնու երանելի եւս լինի

իշխանն՝ զի դատանէ զժողովուրդ ի ի փոխանակ՝ ի ընտանեաց, զի զարգացեալ առաքինութեամբ՝ ուժգին կարիցն ընդ ինքեան սիրոյ քան երկիւղիւ։ Յայժմամ ոչ իշխանն ունի սէտս ջանից առ՝ ի հնազանդեցուցանել զժողովուրդն, զի յաժարութեամբ հնազանդիցի նմա։ և ոչ ժողովուրդն ցանկայ վարանչել և ազատ մնալ յիշխանութենէ նորա։ զի երկնչի կարուսանել զնա, վասն որոյ նուիրէ զկեանս իւր վասն նորա։

Այն է արժանաւոր իշխանութեան, զոր կամի Աստուած յայտնէ՝ կամ ժողովուրդն ինդրէ։ զի իշխան լինել բռնութեամբ ընդդէմ կամաց և հաճութեան ժողովրդեան, է առնել զանձն թշուառ և զհասարակութիւնն գերի։

Բռնաւոր և անիրաւ իշխանն է ցաւուն ատուուածային՝ հասեալ՝ ի վերայ մարդկային սեռի՝ ի կործանումն բաղմաց։

ԼԹ. Ժբաղդ են ժողովուրդք, զի կառավարին՝ ի միջէ իշխանէ, որ նա եւս է մարդ իբրեւ զնա սխալական բնութեան վիճակեալ. քանզի կառավարել և ուղղել զմարդիկ՝ Աստուծոյ էր անկ, զի նա միայն է անսխալ։

Ժբաղդ է և իշխանն, զի է մարդ բաղմանգիտ հանգուանակից այլոց, և ունի կառավարել անթիւ բաղմութիւն նենգամիտ մարդկան, և կալ անբամբաս։

Իշխան ոք բարի՝ է տակաւին մարդ. ունի կիրս, բարս և սովորութիւն ոչք իշխեն նմա, և պաշտեալ է յարամ՝ յ շահասիրաց, ոչք խաբեն զնա. վասն որոյ հանապազ անկանի՝ ի սխալանս, երբեմն յախտից իւրոց և երբեմն յախտից այլոց. և յուղել իւրում զմի ինչ պակասութիւն, դահավիժի՝ ի միւսն։

Խ. Իշխանք աշխարհի առաւել քան զամենայն

մարդիկ փ�թով 'ի ծերությունն հասանեն. զի եթէ լնուլ կամիցին զպարտաւորությունս իւրեանց, խըստությունք պատերազմի և հոգք հասարակության հիւծեալ մաշեն զկեանս նոցա։ Իսկ եթէ անփոյթ լինիցին զպարտաւորությենէ իւրեանց, և թողեալ զՀոգ հասարակաց բարւոյ՝ տացեն զանձինս 'ի մարձական հեշտությունս, կորուսանեն զառողջությունն՝ և փությացուցանեն զմահ։

Որ ցանկայ իշխանությեան՝ չէ իմաստուն. զի եթէ չանայցէ արդար իրաւամբ դատել, անհնարին աշխատությունն է նմա. իսկ եթէ անիրաւությամբ՝ լինի ատելի մարդկան, արժանի և յաւիտենական դատապարտության։

Իշխանությունն է ծպտեալ իմն ծառայություն. զի՞ փառք և մեծություն իշխանին կախի զբազմաց՝ որոց իշխէ. իսկ կախիցն զբազմաց՝ է ծառայել բազմաց։

Հարկաւոր է իշխանին առաւել քան զամենայն մարդիկ լինել ժուժկալ և թշնամի փափկության. զի Լուսաւորչ ոչ արար զնա իշխան և մեծ վասն իւր, այլ վասն օգտի ժողովրդեան. վասն որոյ պարտ է նմա զամենայն ժամանակս կենաց իւրոց զքանս և զաչքս նուիրել վասն նոցա, մինչեւ մոռանալ վանն ձրն իւր, և զսիրել վասն բարեաց հասարակության։

ԽԱ. Իշխանք վասն երկուց առաւել պարտին հոգալ, մի՝ վասն ունելոյ ինքեանց խորհրդակից զարս իմաստուն և առաքինիս, որք ծաղկեցուսցեն զօգտակար արհեստս, և առաջարկեսցեն նոցա առնել զարին. և երկրորդ՝ վասն բազմացուցանելոյ զերկրագործս, որպէս զի երկիրն բարւոք մշակեալ՝ աճեցուսցէ զարմտիս 'ի դարման և 'ի սնունդ ժողովրդեան։

Իշխանն ոչ կարէ քաջ ճանաչել զընտրություն

մարդկան որք շուրջ կան զիւրեւ. քանզի նորան միշտ կերպարանափոխ եղեալ՝ ծածկեն զանաւորութիւնս իւրեանց, եւ այնպէս հնարիւք ջանան հաճոյ երեւիլ յաչս նորա եւ խաբել զնա։ Զի որքան մեծ է իշխանն եւ ունի ընդ իւրեւ ժողովուրդ բազում, այնքան բազում գործակալաց կարօտի. եւ որքան բազում են գործակալք, այնքան բազում են խաբողք. ապա կարի արիութեան պէտս ունի՝ զի մի խաբեսցի։

ԽԹ. Պարտ է իշխանին կրթել զհոգատակս իւր յօգուտակար արհեստս, մանաւանդ յերկրագործութիւնս. եւ ապրելոյ զանպիտան արհեստս՝ որք հային 'ի փափկութիւնս եւ 'ի զարդարանս. չներել երբէք ոչնասիրութեան արանց եւ կանանց, եւ շռայլութեան կերակրոց եւ ըմպելեաց, զի չափազանց վայելչութիւնք եւ զեղխութիւնք ապականեն զբարս. ուստի որպէս քաջ պարտիզպան հատանել պարտ է նմա զանպիտան ճիւղս, զի մի գօսացին պտղաբեր ծառք։

ԽԳ. Իշխանն արկանէ զանձն 'ի վերանս, յորժամ հաւատայ զինքն գործակալի իւրում՝ որ կեղծիւք ձեւանայ հաւատարիմ. քանզի 'ի կասկածիլ իւրում զհաւատարմութենէ նորա, երկնչի հերքել զնա, զի գիտակ է ամենայն գաղտնեաց իւրոց. եւ ջանայ անտես առնել զխարդախութիւնս նորա եւ ցուցանէ կամովին՝ թէ խաբեալ է։

Զի մինչ կեղծաւորեալն զգայ՝ թէ իշխանն ունի զիւրմէ կասկած, խորհի հնարս նենգութեան՝ ցուցանել զանձն հաւատարիմ։ Զեռն արկանէ 'ի նուրանոր գործս՝ որք յաւելուն զփառս եւ զհամբաւ իշխանին, զորս 'ի կատար ածել՝ հարկաւոր է գործակալութեան իւրոյ։

Պարժէ զկեղծաւորեալն իւր ըստ հաճոյս իշխանին, զի բարձցէ 'ի մտաց նորա զդպիրակութիւնն։ Զատապուցուցանէ զարս բարիս 'ի նմանէ, զի մի յայտնեսցի

ցին խոստովանութիւնք իւր։ Յորդորէ զիշխանն հանդիպել և վայելել 'ի փափկութիւնս, և ինքն յանձն առնու կրել զամենայն աշխատութիւն վասն կենաց և փառաց նորա։ Վասն որոյ և իշխանն միշտ մնայ 'ի վարանման, և չկարէ որոշել՝ թէ արդեօք ի՞նչ հաւատարիմ, եթէ նենգաւոր և դաւաճան։

ԽԴ. Իշխանք առլորաբար կասկածուք են և անզգուշք. կասկածուք են, զի քաղուա՛մ անգամ առեալ են զփորձ նենգաւոր դաւաճանութեան մարդկան. անզգուշ են, զի տուեալ զանձինս 'ի դաւանն՝ յանձն նեղուին զդէպ կատարմանն թեան 'ի ձեռս գործակալաց, որոց բազու�մբ ոչ ծառայեն նմա ուղղութեամբ. վասն որոյ և խաղալիկ լինին սուտակասպասից, և թշնամանքն զամենայն մարդիկ։

ԽԵ. Իշխանք անդստին 'ի մանուկ տղոց յարդանան գոմեստիւք զարդացեալք, և մանուանդ շողոքորթական բանիւք ապուսկանեալք, խաժուին յայժ՝ յորժամ ոք անհաւան գտանի խորհրդոց և գործոց նոցին, և զուղիղն առաջարկէ. այլ սիրեն զհաճելիս ախորժակաց, և զգովութիւն խորհրդոց և գործոց իւրեանց։ Վասն որոյ մարդահաճոյք օրիրելի են յաչս իշխանաց իբրու իրաւախոհք և քաղաքավարք, և ճշմարտախօսք առելի՝ իբրու յանցաւորք և վայրենաբարոյք։

Այլ հարկաւոր է իշխանին 'ի խնդիր լինել և գտանել բարեկամ և խորհրդակից զայնպիսի այր, որ կարող իցէ ասել զճշմարիտն և ոչ երբէք շողոքորթել, և 'ի գտանելն անկորուստ պահել, և մուտ դիւր անսալ բանից նորա։

ԽԶ. Կենցաղավարութիւնն իշխանաց՝ է ջինջ հայելի հատարակաց, զի ամենեքին ցանկան նմանիլ նոցա ըստ կարողութեան իւրեանց։ Եթէ առաքինի կեանս վարեսցէ մեծատունն, բազմանան առաքինիք

'ի հասարակութեան. իսկ եթէ մարդկան վարս ունի-
ցի, բաղմանան մարդիք։ Այսպէս եղուկ է մարդ մեծա-
տանց, որք օրինակաւ իւրեանց լինին պատճառ չա-
թեաց հասարակաց։

Խե. Իշխանն կամի զի ամենեքին հետեւեսցին
կամաց իւրոց. և ամենեքին կամին զի իշխանն հե-
տեւեսցի կամաց իւրաքանչիւրոց. ահա վէճ ան-
վերջ։ Այսպէս կամեսցի թշխանն զարքին հասարակաց,
և յայնժամ ամենեքին հետեւին կամաց իշխանին. ա-
հա խաղաղութիւն անվրդով։

Խզ. Իշխանաւորք պարտին լինել զգուշաւորք 'ի
խօսս և 'ի գործս իւրեանց, զի զոր ինչ խօսին՝ ամե-
նեքին լսեն. և զոր ինչ գործեն՝ ամենեքին իմանան։
Քանզի նմանին ահագին զանգակի, զի եթէ 'ի բարձ
բազմն դիտանոցի, որ մինչդեռ հարիանի՝ ամենե-
քին լսեն։ Իսկ ռամիկքն նման են ծոցակրելի զան-
գակի, որոյ ձայնն միայն ինքեանց է լսելի։

Խթ. Անիրաւութիւն իշխանին խանգարէ զկարգ
աշխարհի, զի հպատակքն նեզեալ յանիրաւութենէ
նորա՝ գուն գործեն լինել աղաւ, և ազատութիւնն
առիպէ՝ զի լինիցին հրամայող։ Իսկ արդ՝ 'ի լինել
ամենեցուն հրամայող, ով լինիցի հպատակ, կամ ո-
ւմ հրամայեսցէ. ահա խառնութիւն անհաշտ, և
ազմուկ անսխալման։ Այսպա իրաւասէր լինիցին իշ-
խանք, զի եղիցին հպատակքն հլու և հնազանդ։

Ծ. Անկարգութիւն ինչ 'ի թոյլտուութենէ իշ-
խանին տիրեալ միանգամ 'ի հպատակս, հեղինա-
կութիւնք օրինաց և վերժմանդրութիւնք պատժոց՝
կարի դժուարաւ և կամ ոչ բնաւ կարեն բարեկար-
գել։ վասն որոյ չէ արժան գոնէ դոյզն մի համար-
ձակութիւն տալ նոցա, որք օրինազանցն լինել կա-
մին. զի որ զփոքր յանցանս ուրուք անտես առնէ,
թողու նմա գործել զմեծամեծս։

ԾԱ. Իշխան զի եթէ իցէ ապահ, սովոր է կա-
զմոպոել զհարստութիւնս հպատակաց իւրոց. և զի
հաստատեալ է 'ի միտս՝ թէ հպատակքն ոչ կարեն
տանիլ անիրաւ զրկանաց իւրոց, չունի հանգիստ 'ի
տուէ, և ոչ քաղցր քուն 'ի գիշերի. յարաժամ եր-
կնչի 'ի ստուերէ իւրմէ, և ամենայն ինչ թուի նմա
վտանգաւոր։

Իբ. Ստուած տա 'ի յաւելուլ զտանջանս նորա,
բեռնաւորէ զնա գանձիւք բազմօք, զորս ոչ համար-
ձակի վայելել։ Զանձն զոր մթերէ տա 'ի լինել եր-
ջանիկ, է արգել երջանկութեան իւրոյ. զի երկիւղն
կորուսանելոյ՝ ոչ տայ նմա հանգիստ երբէք։

Զիք ուրախութիւն 'ի սիրտս նորա, այլ անհնա-
րին սարսափ. յամենայն շշնչմանց այլափոխի, և դժնդ-
դակ տխրութիւն 'ի դէմս նորա նկարի։ Ոչ յաճախ,
և հառաչէ յանկարծ. ոչ կարէ թաքուցանել զկայթ
սրտին որ տոչորէ զայլիս նորա, համեղութիւնք կե-
րակրոց անախորժ թուին նմա և դառն, և փափուկ
գահաւորակք՝ գետնախշոի անկողին։ Արհնչի յորդ-
ւոց իւրոց, և համարի զնոսա թշնամի. ամենայն ըս-
տացուածք իւր անօգուտ են նմա, և անպիտան որ-
պէս զաւազ, զի ոչ կարէ վայելել 'ի նոսա։

Ապա յայտ է՝ թէ ոչ զբռնաւոր կարէ լինել ա-
պահով. զի որչափ անիրաւ բաղձանս ունի, այնքան
դահիճս ստացեալ է անձին իւրոյ։

ԾԲ. Ենծաւուն զի՝ մինչ յօժարամիտ է յանձն
առնուլ զվիճակ նուաստութեան, 'ի փոխիլ յաջողու-
թեան իւրոյ՝ այնպիսին անվրդով մտօք վայելէ 'ի մե-
ծութեան իւրում. ապա թէ ոչ՝ միշտ 'ի կասկածա-
նրս է և ոչ ունի հանգիստ, դիտելով՝ թէ մեծու-
թիւն իւր յորս վայելէ, անհաստատ է և շուտա-
փախուստ։

ԾԳ. Հաստատութիւն. իշխանութեան հիմնի 'ի

հաւատարմութեան, յարդարութեան և 'ի բարեպաշտութեան, թէ առ հպատակս և թէ առ տանտիրանակիցս։ Լուսոյ միջոց պակասին ոչքս և փոխանակ խարդախութիւն, անիրաւութիւն և անզգամութիւն, օր քան զօր տկարացեալ կործանի իշխանութիւնն։

ԾԴ. Իշխան ժողովրդեան կամ ազգի՝ եթէ իցէ ազատ և հպարտ, յառնէ պատերազմաւ 'ի վերայ սահմանակից իշխանաց ոչք կան ոչնչութեամբ և խաղաղութեամբ ընդ նմա, որպէս զի ոչինչացի նոցա, և յաւելցէ իւր դանձ և հարկաւ։ Այս ազգ անիրաւ բաղձանք՝ լինի պատճառ չարաչար կործանման իւրոյ. քանզի սահմանակից իշխանք դաշնաւորեալ ընդ միմեանս՝ 'ի կռիւ գումարին ընդ նմա, խորտակեն զեղջիւր ամբարդաւանութեան նորա և բառնան 'ի միջոյ զապականիչն հասարակաց։

ԾԵ. Իշխան ոք՝ եթէ վասն անափառութեան յուրոցանէ զպատերազմ անիրաւ, և իբրեւ թէ 'ի խաղարկեալ զմարդկային բնութիւնն՝ զոհէ ախտից և կամաց իւրոց զանհամար անձինս, այնուիսին չար քան զդազանս գտանի. զի նոքա զտեսակակիցս իւրեանց ոչ սպառեն, իսկ սորայս անագորուն սիրտ՝ գլխովին մոռացեալ զմարդասիրութիւն և զմարդկութիւն, վասն անուտի փառաց և կորստական մեծութեան՝ թաթաւէ զձեռն յարեան եղբօր իւրոյ, որ նման է ինքեան։

Այսուհետև երբեմն յամեցուցանէ զվրէժխնդրութիւն այսպիսեաց, այլ ոչ իսպառ թողլս անպատիժ. զի 'ի վախճանի հատուցանէ զփոխարէնն արդար կշռամբք։

ԾԶ. Պատերազմն է օրինաւոր՝ եթէ իցէ հարկաւոր վասն բարեաց հասարակաց. զի ոչ է արժան հեղուլ զարիւն ժողովրդեան, եթէ ոչ՝ 'ի փրկել զնոյն

ժողովուրդ 'ի ծայրագոյն վտանգէ։ Իսկ յարուցանել զպատերազմ վասն անտի փառաց և ազահութեան, է անզգայ թշուառութիւն. զի արկանէ զանձն 'ի վտանգ առանց հարկաւորութեան, և գործէ անթիւ չարիս ժողովրդեան իւրոյ առաւել քան թշնամեաց։

Դ. Ներագոյն յաղթութիւն թշնամւոյ՝ է բարեկամանալ նմա, քան վնասել. զի վնասելն է գործ սիսարի և չարագործի, իսկ բարեկամելն է գործ վեհանձին և բարւոյ, որով և զթշնամին առնէ իւր բարեկամ և մտերիմ, որպէս 'ի թիւնաւոր օձից կազմեալ զդեղթափ։

ԴԱ. Թշուառ է իշխանն որ զքանօք ժողովրդեան իւրոյ հառնարի լինել երկանիկ. զի յափշտակեալ 'ի չարաչար կրից իւրոց, ոչ կարէ ճանաչել զպարտաւորութիւն իւր, որ է միայն առնել զբարս, և ոչ գիտէ վայելել 'ի քաղցրութիւն առաքինութեան։

Ներաց՝ իշխանաց ցաւակցութեան են արժանի. զի եթէ չարք են և խաշտանգեն զմարդիկ, գանձեն անձանց իւրեանց զպատիժ գեհենին։ Իսկ եթէ բարիք են և ջանան առնել բարիս հասարակաց, անդադար կրեն նեղութիւնս 'ի նենգութենէ չարագործաց. զի չարքն միշտ հակառակ կան բարեաց։

ԴԲ. Իշխանք որ ոչ խորհին բարերարութեամբ և սիրով յինքեանս յանկուցանել զսիրտս հպատակաց, այլ առաւել քան զչափն նուաճելով զնոսա ջանան ահարկու երեւիլ նոցա, են խանդաբիչ և պատիժ ազգի մարդկան։ Այս արկանեն յամենեսին, բայց ասեցեալ լինին յամենեցունց. վասն որոյ ինքեանք առաւել սրտրտին երկնչիլ 'ի հպատակաց, քան նոքա յիշխանաց։

Որ թոյլ տայ ծառայից իւրոց անիրաւիլ և վնա-

սել այլոց, մի յուսացի մեալ ազատ 'ի վնասու է կա-
ցին. զի որ ուսան անիրաւիլ առ այլս, անիրաւես-
ցին և առ տեարս իւրեանց։

Կ. Իշխան անիրաւ չունի զոք բարեկամ. քանզի
զոք բարիք վնասացեալ յանիրաւութենէ նորա՝ ա-
տարանան 'ի նմանէ, ոչ ինչ չար կամելով նմա. և
չարք երկուցեալ 'ի խստութենէ նորին՝ նիւթեն ըն-
չարիս, զի բարձցեն 'ի կենաց, վասն որոյ և է միշտ
'ի վտանգի։

ԿԱ. Իր ոչ զգայ զնայլթ խղճի մտաց, ոչ ճանաչէ
նա զառաքինութիւն. և կարծէ թէ մեծութիւն և
իշխանութիւն կայանայ 'ի տիրելն ամենեցուն և յա-
հարկու երեւիլն բազմաց, վասն որոյ 'ի մտի դնէ
զքակել զայլս և ծառայեցուցանել ինքեան, բայց խա-
բի յոյժ. զի մեծութիւն և իշխանութիւն կայանայ
'ի լինելն բարերար, և տիրելն հաստատութեան՝ քան
երկիւղալի։

Իշխան քաջի առաւել ախորժէ լսել զգազակս
աղքատաց և կարօտելոց՝ զի արասցէ առ նոսա բա-
րիս, քան զքաջագործութիւն երգոց և նուագա-
նաց։ Բայց որ խնդրէ միայն փոփիանալ 'ի զանա-
զան հեշտութիւնս, և ոչ ինչ հոգայ զաղգդ օգուտ ի-
րոցուն թեանց, այնպիսին է խանգարիչ ազգին. զի ոչ
միայն ինքն ոչ օգնէ ազգին, այլ և չար օրինակաւ իւ-
րով արգելլինի բազմաց հետի կալ 'ի գործոց օգտա-
կարաց, և պարապիլ միայն 'ի հաճոյս անձանց իւրեանց։

---

* Տուք 'ի ձեռն ձեզ զարս խնամատանս՝ և խորհրդականս՝ և կանանս
ժողովս՝ 'ի վերայ ցեղից ձերոց. և կացուցից 'ի վերայ ձերոյ իշխանս ձեզ։
Բ. Օրէն. Ա. 15։

** Ա՛ռ ձեզ՝ ով բանունք՝ են բանք իմ. զի ուսանիցիք զիմաստութիւն,
և մի սխալեցիք. ո Խնար. Զ. 10։

«Եթէ ցանկայք աթոռաց և գահաղանաց իշխանութեան, բուռնք ժողովրդոց, պատուեցէք զիմաստութիւն։» Իմաս. Զ. 22։

«Իմաստութիւն բանի՝ տայ սիրելոյն արդարութեան. և առաջնորդ լինի կարօտութեան՝ հակառակութիւն և կռիւ։» Առակ. ԺԷ. 14։

«Դատաւոր իմաստուն խրատ ժողովրդեան... քաղաք շինեսցի յիմաստութենէ իշխանաց։» Սիր. Ա. 1։

«Շատ լեցի ձեզ իշխանքդ Իսրայելի. արդ 'ի բաց արարէք զաղիրատութիւն և զշուառութիւն. իրաւունս և արդարութիւն արարէք, 'ի բաց մերժեցէք զբռնութիւն 'ի ժողովրդենէ իմմէ, ասէ Տէր Աստուած։» Եզեկ. Խե. 9։

«Մեծատանց որ են յայսմ աշխարհի, պատուէր տուցէր՝ մի հպարտանալ և մի յուսալ 'ի մեծութիւն մատի։» Ա. Տիմ. Զ. 17։

«Զգայշ լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթակղութիւն լեցի ոչխարաց։» Ա. Կոր. Ը. 9։

ԳԼՈՒԽ Դ.

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Ա. ՈՐՊԷՍ առաջնորդք և իշխանք սիրեն զհասարակութիւնն, և կրեն միշտ զպէտսն աշխատանս և զնեղութիւնս վասն օգտի և խաղաղութեան նոցա, նոյնպէս պարտ է հասարակութեան և ամենայն ստորադրելոց՝ հնազանդ լինել սիրով հրամանաց առաջնորդին և իշխանին, և ճանաչել զբարերարութիւնն զոր առնեն նոքա յօգուտ իւրաքանչիւրոց։

Իսկ եթէ ոչ ճանաչիցեն զերախտիս և զյարգ բարերարաց իւրեանց, և խստապարանոց եղեալ՝ հեռանիցեն հրամանաց նոցա, յայնժամ Աստուած բարկացեալ ընդ ապերախտութիւն ժողովրդեանն՝ բառնայ զիմաստակալ և զբարեջան առաջնորդս և զիշխանս, և վոխանակ նոցա տայ զրկողս և չարայոյզս։ Իսկ ասա՝ ապստամբային բարկութեան և պատժոյ նըշան է՝ պակասիլ բարեբարոյ իշխանաց և յաճախել չարաբարոյից։

Բ. Պարտ և արժան է ամենայն ժողովրդականաց նախ՝ ունել զբարի համարումն զառաջնորդէն, որ ուսուցանէ զամենայն բանս օգտաշահ. և մի թիւր դատողութեամբ առ չիմանալոյ զմիտս ասողին՝ անգոնել 'ի սրտի և ծարանալ 'ի նմանէ։ Այլ կարդորդ՝ ճանաչել զնա օգտակնդիր հասարակութեան, և վարէժիանդիր հայրենատուր օրինացն. և մի 'ի պատժելն զմանս վասն բանի կրօնի, շնչել ընդ միմեանս և բամբասել՝ թէ առ ատելութեան առնէ, և այլն։ Այսպա եթէ զերկուս զոյսսոսիկ չունիցին ժողովուրդք, ամենայն բանք և գործք առաջնորդին այլ ընդ այլոց երեւ ին նոցա և կասկածելի. ուստի բառնի հնազանդութիւնն ժողովրդոց առ առաջնորդն, և սէր առաջնորդին առ ժողովուրդն։

Գ. Խարեբաստիկ է ազգն՝ յորժամ ունիցի սխոհեմ և սիմաստուն առաջնորդ. այլ բարեբաստիկ եւս է, եթէ ունիցի ժողովուրդս հնազանդս առաջնորդաց եկեղեցւոյ։ Բանզի հպատակութիւն ժողովրդոց առ բանս իրատու և պատուիրանաց հոգեւոր իշխանաւորաց՝ առ Աստուած վերաբերի, ըստ այնմ. «Որ ձեզ լսէ, ինձ լսէ։» Ղուկ. Ժ. 16։

Բայց գտանին ոմանք, զի պակասութիւն ինչ զոր տեսանեն 'ի կարգաւորս, առ ամենայն կարգաւորս տարածանեն, և զամենեսին ստգտանեն և բամբասեն, գոնէ լուիցեն այնպիսիքն առտուածային գրոյն՝ որ ասէ. «Օ իշխան ժողովրդեան քո մի հայհոյեսցես։» Այլեւ. ԻԲ. 28։

Դ. Իշխան քաղաքի կամ ազգի՝ է որպէս գլուխ 'ի մարմնի. իսկ ժողովուրդք՝ որպէս անդամք ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի։ Այլ զոր ծրինակ ամենայն անդամք մարմնոյն արբանեկեն գլխոյն, զի մի ինչս ինչ հատանիցէ նմա. որպէս 'ի կարկառել թշնամւոյն զսուր՝ հարկանել զգլուխ ուրուք, ձեռն

նորա վաղվաղակի յառաջ մատչի՝ յինքն ընդունել զհարուածն. և 'ի ձգել ուրուք զքար հարկանել զաչն՝ դիմակալ լինի բաղուկն։ Այլ թէպէտ միոյ մարմնոյ անդամք են գլուխ և աչք և ձեռք, սակայն ձեռն իւրովի ընդ առաջ ելանէ ի և իցէ արկածից՝ 'ի պաշտպանութիւն գլխոյ և աչաց. քանզի բնութիւնն իսկ ուսուցանէ՝ թէ նուաստն ծառայեսցէ պատուականին։

Այդ՝ իբրեւ գլուխ և իբրեւ աչք են առաջնորդք եկեղեցւոյ և ազգասէր իշխանք և գլխաւորք, իսկ հասարակութիւնն իբրեւ ձեռք։ Այսպէս արժան է ժողովրդեան առ պատուականս ունել զգլխաւորս ազգին, ոգւով չափ ճգնիլ զի մի վնաս ինչ հասանիցէ, ճանաչել զնոսա հայրենասէր և խորախորհուրդ, և բարեկարգ ակնարկութեան նոցա ամենայն յօժարութեամբ հլու և հպատակ կալ։ Քանզի 'ի տկարանալ կամ 'ի պակասիլ գլխաւորաց՝ անդէն լքեալ թուլանայ հասարակութիւնն, բառնի վայելչութիւն և յարգ և համբաւ նորա, և լինի կոխան ազգաց օտարաց։

Ե. Պերսազանց գտան մեղուք 'ի խոհականութեան քան զամենայն կենդանիս, 'ի կարգել 'ի վերայ հաստատակութեան իւրեանց զմի նախագահ և իշխան՝ հնազանդիլ նմա ամենայն ակնածութեամբ. զի եթէ ոչ ունէին զգլխաւոր՝ հնազանդ լինել նմա, միաբանութիւն իւրեանց քակտեալ փոռեկոտէր, և ոչ կարէին ընդալ զմեծակս իւրեանց մեղու։

Այսն օրինակ ճահ է իմանալ և վասն բազմութեան ժողովրդոց, որք եթէ ունին առաջնորդ և իշխան՝ և հնազանդին նոցա, լքեալ պարարին ամենայն բարեաք հոգւոյ և մարմնոյ։ Իսկ եթէ իւրաքանչիւր անհատ զինքն ծանիցէ գլուխ, տիրէ 'ի վերայ նոցա ամկարգութիւն և շփոթութիւն, և զրկին

յամենայն բարեաց, նմանեալ իշամեղուաց որք ոչ ունին գլուխ և ոչ կարգ և ոչ միաբանութիւն, վասն որոյ և ոչ կարին գործել զմեղր, և են անարդ և հալածեալ յամենայնէ։ Այսպէս պատշաճ է ժողովրդոյ ունիլ զգլխաւորս, և կամակար սիրով հնազանդիլ նոցա, զի բարեվայելուչ կարգաւք և շինութեամբ օր քան զօր պայծառասցի ազգն, հոգեւոր և մարմնաւոր բարեմասնութեամբ բարգաւաճեսցի։

Զ. Այլ ոք 'ի մարդկանէ որ զմիտս ունի՝ կարէ յերկուանալ կամ հակառակիլ յայտնի ճշմարտութեանս, թէ առանց գլխաւորի չէ հնար հաստատուն կալ բարեկարգութեան իմիք։ Այլ յատկութիւն գլխաւորութեան է ունիլ հպատակեալս, և յատկութիւն հպատակութեան է միամիտ հնազանդութիւն իւրաքանչիւր գլխաւորի։ Որ մին յերկուց առի պակասի՝ ոչ գտանի անդ բարեկարգութիւն, և հետեւաբար ոչ երեւի բնաւ ազգօգուտ շահեկանութիւն ինչ, զի 'ի բառնիլ պատճառին՝ բառնի և գործն. իսկ պատճառ ամենայն գործոց՝ որով սանձալի հանդիսանայ ազգն, է հաստատութիւն բարեկարգ սահմանադրութեանց։

Օ. Ինչ օգուտ է գտանիլ 'ի մէջ ազգի կամ քաղաքի խոհեմ և ազգասէր իշխան, եթէ հասարակութիւնն ոչ հնազանդեսցի նմա, և օգտակար բանից նորա ոչ անսայցէ։ Այլ զինչ օգուտ է լինել ժողովրդեան հնազանդ և բարեմիտ, եթէ ոչ գտցի 'ի նոսա արժանաւոր իշխան՝ առաջնորդել նոցա 'ի բարին և յօգուտակարն, դիմագրաւ լինել վտանգաւոր դիպուածոց, և դնել զանձն 'ի կշիռ՝ 'ի պաշտպանել զհասարակութիւնն։

Այլ սակայն մարթ է խոհեմ իշխանի առանց ժողովրդոց իբրեւ զմի 'ի հասարակ մարդկանէ կեալ յանքոյթ, վհոգ անձին իւրոյ և զիւրոյնոց միայն հո-

գալ, և լինել երջանիկ յառանձնութեան իւրում. այլ ոչ է հնար բազմութեան ժողովրդոց՝ առանց իշխանի և բարեկարգ սահմանադրութեան իւրաքանչիւր անձին իւրում օրէնսգիր լինելով մնալ անխառով, և լինել երջանիկ։

Բանզի բազում՝ 'ի նոցանէ զաջ և զահեակ ոչ ճանաչեն, զոգտակարն և վնասակարն ոչ կարեն որոշել. ուստի բազում անգամ զբարերարն իւրեանց քամգասեն և վշտացուցանեն անիրաւ դատողութեամբ. որով ոչ միայն մեղանչեն առ իշխանն՝ որ ապրար զմեծամեծ բարիս, այլ և առ Աստուած՝ որ ետ նոցա զայնպիսի իշխան, նմին իրի բազմիցս պատժին յաստուածուստ վասն ապերախտութեան իւրեանց։

Ը. Հասարակութիւն ողջոյն ազգի կարի վայելչապէս նմանի ծառոյ, որոյ գլխաւորքն ունին զտեղի սրմատոյն և բնոյն, և ժողովուրդքն՝ ոստոց. և որպէս ոստք ծառոց յամենայն հողմոց շարժին, և յոլովակի անզօրքն 'ի նոցանէ ոչ կարացեալ տոկալ բբանութեան նորին՝ բեկանին և 'ի բուն՝ 'ի բաց քեցեալ չորանան, ըստ այսմ և տկարամիտքն 'ի ժողովրդոց յամենայն շնչմանց աղմկեալ վրդովին, և հեռատեալ խորհրդոց և կամաց գլխաւորաց իւրեանց՝ զանձինս 'ի բաց որոշեն, որով ոչ զայլ ինչ շահին, բայց եթէ զվնաս անձանց և զկործանումն ազգին։

Թ. Փառք ազգին՝ են գլխաւորք նորա. զի որքան գլխաւորքն են մեծաշուք և զօրաւոր յիրս և 'ի բանս, այնքան գովանի հանդիսանայ անուն ազգին, և երանելի համարին իւրաքանչիւր անհատ նորա. որպէս Դաւիթն հարաւոյ երանէր զծառայսն Սողոմոնի, զի այնպիսի իմաստուն տեառն ծառայէին։ Գ. Թագ. Ժ. 8։ Այս ժողովուրդ՝ որ զգլխաւոր իւր սիրէ և պատուէ, զվառս իւր բարձրացուցանէ։

Իսկ փառք գլխաւորաց՝ են ամենայն առանձնա-

ւորք ազգին. այլ այս փառք նոցա ոչ 'ի բազմութեան անհատից կայանայ՝ քան թէ 'ի բարեկարգութեան օրինաց և 'ի միաբանութեան ընդ միմեանս, վասն զի բազմութիւն ապստամբ և խաժամուժ ամբոխից առաւել վնաս գործեն քան օգուտ։ Այլ ոսկայն չէ արժան բարի իշխանի՝ վշտացեալ ընդ անպատկան բանս և գործս սոսկ և անուղղայ անձանց, հրաժեշտ տալ յազգօգուտ իրողութեանց. քանզի 'ի մէջ հաստատակութեան ազգին ոչ սակաւ ազնուաբարոյ, խոհեմ և բարեսէր անձինք գտանին, որք քաջ ճանաչեն զերախտաւորս և զպատիւ իշխանաց։ Նայց մի այն պարտ է նոցա յորդորել զհամազգիս, լինել հնազանդ՝ երախտագէտ և պատուադիր ազգասէր բարերարաց, և աղօթս առնել վասն նոցա, զի օր ըստ օրէ շքեղափայլ զայծառասցին 'ի բարօրութեան և 'ի յաջողութեան, 'ի սէր և 'ի խնամս հաստատակութեան, որով առաւել եւս ազգն փառաւորեսցի 'ի նոսա, և նոքա 'ի բազմութեան ազգին։ Քանզի և Աստուած մինչ տեսանէ զնոսա և զսէր գլխաւորացն և ժողովրդեան, ինքնին կանխէ ընդ զամենեսեան հոգեւոր և մարմնաւոր բարեօք, ըստ այնմ. «Յեղեղի մինչչեւ կարդացեալ ի՞նչ նոցա, ես լուայց նոցա. և մինչդեռ խօսեսցին, ասացից՝ թէ զի՞նչ խնդրէք։» Յոել. Կ. 24։

«Աղաչեմ զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի Տէր, և զխրատիչս ձեր. և համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա։» Ա. Թեսս. Ե. 12։

«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ հաշիւ տուլոց իցեն ընդ ձեր։» Եբր. ԺԳ. 17։

«Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, 'ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստիք է իշխանութիւն. եթէ ոչ Աստուծոյ։» Հռովմ. ԺԳ. 1։

ԳԼՈՒԽ Ե.

ԱԶԳԱՍԷՐ

Ա. Որպէս մարմին մարդոյ է բոլոր ինչ բաղկացեալ յանդամոց իբրեւ 'ի մասանց, այնպէս և հասարակութիւն միոյ ազգի է բոլոր իմն, որոյ մասունք կամ անդամք՝ են իւրաքանչիւր անձն նոյն ազգին։ Այլ որպէս 'ի վնասակար հիւանդութեամբ միոյ յանդամոց մարմնոյն, այլ ամենայն անդամք ջանան դարման մատուցանել նմա և բժշկել, զի մի հիւանդութիւնն մահաբեր զբոլոր մարմինն ապականեսցէ, որով և ինքեանք ապականեսցին։

Այսպէս և իւրաքանչիւր առանձնաւորք՝ որ են անդամք հասարակութեան ազգին, պարտին օգնական լինել, և դարմանիչ տկարութեան և ցաւոց ընկերին, որ վնասացեալ իցէ ձախողակի պատահարօք. զի մի հետ զհետէ յայլ ամենայն անդամս հասարակութեանն տարածանիցի ախտն. վասն զի 'ի տկարանալ և 'ի կործանիլ ողջոյն ազգին՝ անշուշտ կործանին և ինքեանք։ Ուստի որք կարողք են՝ եթէ ոչ ջանան ցաւակից և օգնական լինել ազգայնոց իւրեանց, պարտաւոր են դատաստանի. զի անհոգութեամբ լինին պատճառ կործանման բոլոր ազգին։

Որ ոչ լինի ձեռնտու փորձանաւորաց 'ի յաջողութեան իւրում, ոչ զոք գտցէ ձեռնտու ինքեան 'ի ձախորդութեան իւրում։

Բ. Ամենիմաստ տեսչութիւնն աստուածային՝ որ խնամէ զարարածս իւր քաղցրութեամբ, ոչ արար զամենայն մարդիկ միօրինակ, այլ զոմանս փարթամ և զոմանս աղքատ, որպէս զի ազորմելի վիճակ աղքատաց շարժեսցեն 'ի գութ զփարթամս, և փարթ

թամբ յընչից իւրեանց լուսցին զկարօտութիւնս աղքատաց, և փոփոխակի լինելով միմեանց պատճառս բարեգործութեան՝ ամենեքին ընկալցին զվարձս Յաստուծոյ։ Զի եթէ ամենեքին լինէին աղքատ, ով կարէր տալ զողորմութիւն. և եթէ ամենեքին էին փարթամ, ով զիշանէր առնուլ զողորմութիւն։

Այս ոչք կարող են ողորմիլ, գոհացողք ընչին զՏեառնէ որ ետ նոցա զինչս օգնել կարօտելոց, որպէս զի ընկալցին վարձս անեղական փոխանակ բարերարութեան իւրեանց։ Այնպէս և աղքատք՝ ի ընուլ իւրեանց զկարօտութիւն ստոյգ փարթամանց. երախտահատոյց լինիցին գոհութեամբ զՏեառնէ և զպարգեւողաց, որպէս զի արժանացին առնուլ վարձս Յաստուծոյ։

Սակայն թէ և բազմութիւնն չլինիցի երախտագէտ, չէ արժան փարթամաց դադարիլ՝ ի բարերարելոյ, եթէ ցանկան նմանողք լինել Աստուծոյ. զի ահա բազու�զբազում բարիս ընկալեալ Յաստուծոյ՝ ոչ ճանաչեն զբարերարութիւն նորա, սակայն Աստուած տակաւին առնէ նոցա բարիս։

Գ. Ընդ ազգասիրի չէ բաւական միայն սիրել զօգուտն հասարակաց, և վասն նորա աշխատիլ։ այլև պարտ է ատել և՝ ի բաց հալածել զայն՝ որ ներհակի բարեաց դիտաւորութեան իւրում, և Չանայ վնաս հասուցանել հայրենեաց։

Դ. Չէ արժան հայրենասիրին խոպառ համակիլ սրտմտութեամբ և լքանիլ, տեսեալ թէ բազմութիւն մարդկան ատելութեամբ բերին առ միմեանս. առ երեսս կերպարանին բարեկամ, և՝ ի սրտի իւրեանց խորհին զչարիս. կեղծաւորին զօգուտն միմեանց խնդրել, բայց գործով ոչ դադարին վնասել. լարեն որոգայթս ոտից երախտաւորաց իւրեանց, և՝ ի յայտնիլ դաւաճանութեանն՝ պլանան և՝ ի չքմե-

ղբա լինին. խրատին և ոչ զգաստանան. յանդիմանին և ոչ պատկառեն։ Այլ պարտ է նմա քաջալերիլ և միխիթարիլ, զի գտանին և սակաւք՝ ոյք սիրեն զնա կերպս իւրեանց ճշմարտութեամբ, և ջանան առնել նոցա բարիս. դնեն զանձինս 'ի վտանգի վասն հաւատակից օգտի, և ոչ 'ի թշնամութենէ ստուտ բանիցն սրտաբեկ եղեալ կասին յետս։

Ե. Որ կարող է 'ի բարերարել, այլ եթէ ոչ գուցէ կարօտ ոք որ խնդրիցէ 'ի նմանէ զօգնական նութիւն, մնայ անարդիւն. իսկ եթէ գտցին կարօտեալք, բայց ինքն ոչ կամիցի օգնել նոցա, մնայ պարտական։ Զի զինչ օգուտ իցէ լինել հարուստ՝ և ոչ ձեռն կարկառել աղքատաց, կամ գիտնական՝ և ոչ ուսուցանել տգիտաց, կամ խորագէտ՝ և ոչ խորհուրդ տալ փորձանաւորաց, կամ ուժեղակ՝ և ոչ բառնալ զտկարութիւն տկարաց։ Զի ամենայն բարիք իւր՝ որք չեղեն ինչ օգուտ ումեք յընդարձակ աշխարհի, ոչ բնաւ լինիցին օգուտ նմա յանձուկ գերեզմանի. այլ մանաւանդ դարձցին 'ի պատիժ և 'ի դատապարտութիւն անձին իւրոյ, զի ասելոց է 'ի Տեառնէ յանաչառադատն ատենի. «Օտարաց չար և վնասս՝ ընդէր ոչ եսուր զարծաթն իմ 'ի սեղանաւորսն, զի և ես եկեալ տոկոսեօք պահանջէի։»

Զ. Որ մասնաւոր անձին ումեք առնէ զբարերարութիւն, առնու հատուցումն 'ի նմանէ զշնորհակալութիւն. իսկ որ հասարակաց լինի բարերար, ոչ ոք զնա համարի ինքեան յատուկ երախտաւոր, զի գոնէ հատուցցէ նմա զպարտս իւր գոհութեամբ։ Այսն որոյ հասարակաց բարերարն առնու զհատուցումն վաստակոց իւրոց 'ի Տեառնէ, որ անթերի հատուցանէ իւրաքանչիւր ումեք ըստ գործս իւր։

Է. Որ կարէ բանիւ և գործով օգնել կարօտեալսն, և միայն բանիւ բերանոյ մատչի յօգնութիւն՝

և ոչ գործով, պարտաւոր գտանի վարձուց գործոյ զի կարէր՝ և ոչ կամեցաւ առնել. կարուտանէ եւս զվարձս լեզուի իւրոյ, որում աշխատ եղեւ վասն նորա։ Իսկ որ ոչ կարէ օգնել գործով, և միայն բանիւ ջանայ նպաստել՝ միջնորդութեամբ, կամ խրատու, կամ միխիթարութեամբ, առնու զվարձս գործոյ վասն յօժարութեան, զի կամէր՝ և չէր ձեռնհաս առնելոյ։

Մարդիկ հանդերձեալ են պատժիլ 'ի դժոխս, ոչ միայն վասն չարեացն զոր արարին, այլ և վասն բարեացն զոր պարտ էին առնել՝ և զանց արարին։

Ը. Կանացի և անարի սրտիւ է երկնչիլ 'ի ծանրութենէ աշխատութեան, և յետս կալով յարդ օգուտ իրուղութեանց՝ յարժամ կարող է յանձնապատութեամբ դժուարութեանց կատարել զայնս. զի այնպիսին ոչ միայն մնայ անվարձ՝ այլ և պարտաւոր, զի ձեռնհաս էր առնել՝ և ոչ արար։

Ոչ այլ ինչ է լինել իշխան, բայց եթէ բառնալ զբեռն հատարակութեան։

Թ. Զգոյշ մարդկան՝ որ ընդ ամենայն աշխարհս են տարածեալ, ունին զսկիզբն սերնդեան իւրեանց 'ի միոջէ, և են եղբարք միմեանց, վասն որոյ պարտին սիրել զմիմեանս, և օգնական լինել այր ընդ ընկերի իւրում. ապա որ վնասէ ընկերին՝ վնասէ անձին, զի 'ի միոջէ արենէ են զանգեալ։

Ժ. Ոնաւորն որ զայլս ծառայեցուցանէ, նման է զայրացեալ գետոյ, որ փոխանակ հեզիկ խաղացմամբ արբուցանելոյ զերկիր, ուժգին հոսանամբ արբաստաքս ղեղեալ 'ի խրամոյ իւրմէ, ապականէ զանդամս և զտունկս ընդ որս անցանէ։

ԺԱ. Ոնութիւնք իշխանաց ոչ կարեն առնուցանել 'ի քաղաքի զօգտակար արհեստս ինչ, այլ վարձատրութիւնք արհեստաւորաց և օգուտն հասարակաց. զի մարդիկ վասն օգտի իւրեանց ջանան հրդ

նոքին կամ կատարելագործել զարհեստս։

ՃԲ. Հոգեվարքք որ առաջնորդին 'ի բարերար և յիմաստուն իշխանէ, կեան երջանկաբար և ի սանձեալն բարեաւք, վասն որոյ սիրեն զիշխանն առաւելել քան զիեանս իւրեանց, և նմա յօժարին նաւիլել զամենայն բարիս, զի նովաւ ունին զամենայն։ Ապագ և իշխանք պարտին սիրել զհպատակս իւրեանց իբրեւ զորդիս, զի և ինքեանք սիրեցեալ լիցին 'ի նոցանէ իբրեւ զհայր։

ՃԳ. Իշխան որ ջանայ վասն բարւոյ և հանգրաւեան ժողովրդեան իւրոյ, նոքին եւս օգնեն նմա 'ի ժամանակի ներքուԹեան. ոչ խնայեն 'ի նմանէ զինչս իւրեանց, զոր ջանիւք նորա ստացեալ ունին. և այսպէս ինչք հասարակաց լինին իշխանին առանց զրկուզուԹեան և յափշտակուԹեան. նա է նոցա իբրեւ բարեգուԹ հայր, և նոքա իբրեւ որդի հաւատարիմ։

ՃԴ. Իշխան չարի և ապգասէր չունի հոգ կարգել պահապանս վասն կենաց իւրոց, զի սէրն հաստատեալ պահէ զիեանս նորա. գիտեն՝ զի 'ի կորուանելոյ նոցա, կորուանեն զերջանկուԹիւն իւրեանց, զինչն որոյ նուիրեն զանձինս իւրեանց 'ի պահպանել զիս, զի պահեսցեն զերջանկուԹիւն իւրեանց զոր ունին նովաւ։

ՃԵ. ԱնշնորհուԹիւն ինչ յօգուտ ազգի կամ քաղաքի կարէ լինել կրկնակի, կամ նուիրմամբ անձին վասն փոքր հարեւանեաց՝ առանց ակնկալուԹեան վարձուց, և կամ վաճառմամբ աշխատանաց՝ վասն ընդունելուԹեան վարձուց։ Արդ՝ նուիրումն անձին ձրիապէս՝ է գործ ազատաբարոյի, իսկ ակնկալուԹիւնն վարձուց՝ է գործ ծառայի, զի այս երկու ծայրք են անմէջ։

Նոյց պահանջէ արդարուԹիւնն զի հասարակուԹիւնն ճանաչիցէ զչափ երախտեաց բարերարին, որ

աշխատի ձրիապէս, և հատուցանէ փոխանակն՝ ապ-
շնարհակալութիւն կամ զվարձս. միայն մի եղուկ
տաւորն չունիցի ինչ ակնկալութիւն, զի մի ոչա-
տութիւնն ազնուական՝ դարձցի յանապատ ծառայու-
թիւն. զի ծառայից է առնուլ վարձս ընդ աշխա-
տութեան։ Ընդհանար է թէ կորուսցէ ինչ, որ յօգուտ
ընկերին առնէ զբարիս։

ԺԶ. Աշխատիլ ձրիապէս 'ի սէր Աստուծոյ վասն
օգտի ընկերին՝ է ծառայել Աստուծոյ և բարեգոր-
ծել ընկերին. իսկ աշխատիլ վասն ընկերին ակնկա-
լութեամբ վարձուց՝ է ծառայել մարդկան և գա-
ղերապրել անձին։ Որ ակնկալութեամբ պատուոյ և
մեծութեան աշխատի յօգուտ հասարակաց, է ծա-
ռայ մեծութեան և պատուոյ. իսկ որ աշխատի ա-
զատօրէն՝ միայն վասն սիրոյ առաքինութեան, է ինք-
խոզ պատուոյ և մեծութեան։

ԺԷ. Փառքն կայանայ 'ի բարերարութեան և ոչ
'ի փարթամութեան, ապա թէ ոք կամի ստանալ
զփառս, մի դադարեսցի առնել զբարիս այլոց։ Ա-
ոք կարէ ունիլ ճշմարիտ մեծարանս և փառս, ե-
թէ չունի բարերարութիւն։ Պարտ է աշխատիլ յօ-
գուտ հասարակաց սակ վասն սիրոյ առաքինութեան,
և ոչ եթէ վասն փառաց՝ գովութեան և շահու.
զի եթէ իբրեւ վարձ աշխատութեան ընկալցի գիտ-
ուրս կամ զգովութիւն կամ զինչս, կորուսանէ ըզ-
յարգ առաքինութեան, և որպէս թէ զասկի փոխ-
խանակէ ընդ հողոյ։

Մեծատուն ոք օրէնսդիր 'ի հնումն՝ եղ զգա-
զում օգտակար օրէնս ազգի իւրոյ, և երգմնեցուց
զնոսա չլուծանել ինչ յօրինաց անտի, մինչ ինքն ոչ
գտանի ներկայ 'ի միջի. և ապա գաղտ մեկուսա-
ցեալ 'ի հայրենեաց իւրոց յերկիր օտար, եկաց անդ
իբրեւ այր մի աղքատ մինչեւ ցմահ. զայս ապա

վան սիրոյ տպրդին, զի հաստատուն և մշտնջենաւոր մնասցեն օրէնքն ընդ պարտաւորութեամբ երդման։

Սերբուալ եդիպտացի՝ որ եղեւ իմաստուն թագաւոր Թեբեացւոց, այնքան կամեցող էր բարւոյն հաստատեալոյ, մինչ զի ոչ կամեցաւ կարգել զորդին իւր յաջորդ թագաւորութեան, ածեալ զմտաւ՝ թէ գուցէ գտանիցի այլ ոք առաւել արժանաւոր քան զորդին իւր։

ԺԸ. Հէ ինչ են զարմանք, եթէ իշխան բարի և երախտաւոր հեռատեսակաց վաստահմբաւեցցի՝ յայնց յանէ՝ որոց արարեալ է զբարիս. զի այս իսկ են այժմ օրէնք աշխարհի՝ թէ երախտաւորն ատեցցի յամենեցունց։ Աւստի և բարերար իշխանն գիտելով զայս, ոչ ինչ դժուարի ընդ դժնդակ հատուցումն զոր ընդունի, այլ միսիթարի ընդ դիւցազնական առաքինութիւնս իւր՝ որք բաւական են սփոփել զսիրտս նորա. մանաւանդ զի հաստատեալ է՝ ի միտս թէ արժան է բարւոյ իշխանի առնել հատարակաց զբազում բարիս, գիտելով թէ առաջի կայ նմա առնուլ հատուցումն յապաշնորհից զբազում չարիս։

ԺԹ. Ընկերական կենցաղավարութիւնն է իբրեւ անուաւոր ժամացոյց, ուր անդամք ընկերութեան հաղորդութեամբ միմեանց գործեն զհասարակաց բարին. զի ոմն մշակէ զերկիր, և ոմն դարմանէ ըզխաշինս. ոմն անկանէ զոստայն, և ոմն գործէ զերկաթ. ոմն օգտակար օրինաց կառավարէ զհասարակութիւնն, և ոմն զօրութեամբ զինու պահէ զհայրենիս. և այլք ամենեքեան ըստ պէսպէս շնորհացն զոր ունին յԱստուծոյ՝ արդեամբք վաստակոց արբանեկեն հասարակութեան։

Ի զոր օրինակ՝ եթէ մի ինչ անիւ՝ ի ժամացուցէ անտի պակասեսցի կամ իանպարեսցի, տկարանայ ցնոա հետեւեալ զպարտաւորութիւն

իւր անվրէպ կատարել. այլ՝ է զի կազ 'ի կազ ընթանայ, և է զի կառեալ դադարի։ Ըստ այնմ տարբերի եթէ մի 'ի կարեւոր անդամոց անտի հասարակութեան պակասեցի կամ խանգարեցի, հասարակութիւնն ողջոյն լինի 'ի վտանգի, կամ իսպառ կործանի, որպէս եթէ պակասեցի մշակ կամ ատաղնագործ կամ դարբին։ Իւ կամ թէ խանգարեցի զինուորական բարեկարգութիւնն՝ կամ օրինացն արդարութիւն, որպէս եթէ զինուորն փոխանակ լինելոյ քաջասիրտ և հայրենասէր, եղիցի վատասիրտ և հայրենեացն մատնիչ, և իշխանն կամ դատաւորն փոխանակ օգտակար և իմաստուն օրինաց, դիցէ զբրենս անիրաւս և ինքնակարս հասարակութեան մատնաւանդ եթէ զկամս իւր արասցէ օրէնք։

Այդպէս փութալի է ազգասիրին զպակասն յանդամոց անտի ընուլ, և զխանգարեալն ուղղել։ Իսկ եթէ նա չկամեցի ուղղիլ, արժան է զայնպիսին 'ի բաց քեցուլ 'ի մարմնոյ հասարակութեան, զի մի և զայլս յանդամոց խանգարեսցէ։ Իւ սոյն յայտմ է հաստատեալ երջանկութիւն և թշուառութիւն ընկերական կենցաղավարութեան։

Ի. Զորք ինչ կարի հարկաւորք են առ երջանկութիւն ազգի. առաջին՝ մեծ և սուաջին գրել զպահպանութիւնն օրինաց. երկրորդ՝ իւրաքանչիւրս ոմեք աշխատ լինել 'ի ստացումն կարեւոր պիտոյից. երրորդ՝ 'ի ժամանակի հարկաւորութեան 'ի թիկունս հասանել ընկերին. չորրորդ՝ Ջանալ վասն օգտի և բարւոյ հասարակութեան։

Երջանիկ է ազգն, որոյ առաջնորդք են բարեկարգ, իշխանք հայրենասէր, քահանայք իմաստուն, դատաւորք արդար, ուսուցիչք առաքինի, ծերք խորհրդատու, երիտասարդք բարեջան։

ԻԱ. Աստուած ոչ առնէ զոքան կարէ՝ այլ որքան

կամի, իսկ մարդս ոչ առնէ որքան և կամի՝ այլ որքան կարէ. և Աստուած այնչափ ինչ պահանջէ 'ի մարդ, կանէ զբարիս, որչափ կարէ առնել։ Այլ պարտ է առն հպարտնասիրի առաւել ընտրել զօգտակարն աղքատին՝ քան զփառաւորն, յորժամ չիցէ հնար զերկոսին եւս միանգամայն առնել։

ԻԲ. Որ ունի զսէրն Աստուծոյ բնակեալ 'ի սրտի իւրում, ոչ դադարի 'ի սիրելոյ զընկեր իւր. իսկ սիրել զընկերն՝ է առնել նմա զբարիս. զի սէրն է հիմն և արմատ, և բարերարութիւնն է ոստ և բողբոջ. իսկ եթէ ոստն իցէ դալար, յայտ է թէ արմատ նորա է կենդանաւոր։ Այսպէս որ բանիւ լոկով ցուցանէ սիրել զընկեր իւր, և չառնէ ինչ գործ օգտակար նմին, չէ կատարեալ 'ի սէրն Աստուծոյ։

ԻԳ. Որ կորու տանէ զգութ և զմարդասիրութիւն, ոչ եւս է մարդ՝ այլ գազան այլանդակ. վասն որոյ մինչ անկանի 'ի վտանգս, ոչ ոք գտանի նմա կարեկից և օգնական, այլ ամենեքին իբրեւ 'ի գոռ գազանէ հեռի կան 'ի նմանէ. զի որ անգութ էր այլոց, արդարութիւնն Աստուծոյ ոչ ներէ գտանել նմա գթութիւն յումեքէ։ Վասն որոյ մի ումեք մեղադիր լիցի 'ի նեղութեան իւրում, զի արժանի անգթութեան պտի իւրոյ առնու զհատուցումն։

ԻԴ. Որ կարէ օգնել և ոչ յանձն առնու օգնել, է անգութ. իսկ որ կարէ և յանձն առնու՝ այլ ոչ օգնէ, է անգութ և անիրաւ, զի առաւել սրտաբեկ առնէ զկարօտեալն։

Հշան է բարեգութ սրտի, որ ինքն 'ի նեղութեան գոլով՝ ջանայ օգնել նեղելոյն ըստ ձեռնհաս գոլոյ։

ԻԵ. Օգնել ամենեցուն յամենայն ժամանակի՝ է գործ Աստուծոյ. կատարել զամենայն խնդիրս՝ է գործ ծառայի. կատարել զամենս՝ և զանց առնել

զամանքը, է գործ ապատի. տրանջել վասն այն՝ զոր խնդրեաց և ոչ էառ, է գործ անիրաւի. ապերախտ գտանել առ այն՝ զոր խնդրեաց և էառ, է գործ անհաւատի. չորտիլ ընդ այն՝ զոր խնդրեաց և ոչ էառ, է գործ առն բարեբարոյի։

ԻԶ. Այր քաջ և երկայնամիտ ոչ լինի յուսալեկ յորժամ յապաղի կատարումն խնդրոյն՝ զոր խնդրեաց յօգուտ իւր, այլ քաջութեամբ համբերի մինչեւ առցէ. իսկ որ անարի է և փոքրոգի, ընդ յապաղելն լքանի և 'ի բաց դառնայ։ Եւ նա որ մեռանայ զբարեբարութիւնն զոր ընկալեալ է յումեքէ, և գանգատի վասն այնր զոր խնդրեաց և ոչ էառ, անիրաւ է և ապերախտ։

ԻԷ. Յետին անմտութիւն է և պրտաքոյ բնաւորութեան՝ վատահամբաւել ումեք զանձն իւր. և զարմանք են՝ եթէ զիմրդ ումանք վատահամբաւեն զազգն իւրեանց չարախօսելով զնմանէ, որպէս թէ ինքեանք միայն իցեն ընտիր և պատուական, և ազգն ողջոյն անարգ և վատթար։ Եւ ոչ տեսանեն կուրացեալքն կրիւք, եթէ ամենայն մասն կարգի առ զոր ոչ և 'ի նմա բովանդակի, իսկ եթէ բոլորն վատթար իցէ և արհամարհ, քաջայայտ է՝ թէ և մասն ինչ նորա է ընդ նմա անարգ և վատթար։

Արդ՝ թէ հասարակութիւնն ողջոյն ազգին իցէ անգոսնելի և վատթար, ապա նոքին իսկ չարախօսքն՝ որք են անդամ և մասն հասարակութեան ողջոյն ազգին, լինին անգոսնելի և վատթար։ Իւրեանց չարաչար կուրութիւն է վատահամբաւել ումեք զազգ իւր։

ԻԸ. Այր մոլի՝ իբրեւ յանդիմանի և անարգի յազգէ իւրմէ, երթայ յարի յազգ յայլ՝ կատարել զհաճոյս իւր. զի ոչ յուսայ այնուհետեւ լնուլ զկամս չարութեան իւրոյ յազգի անդ իւրում, և ոչ եւս գտանել զպատիւն զոր կորոյս։

Այսպես սկսանի չարախօսել զազգէ իւրմէ անխիղճ մտօք բիւր բամբասանս կուտելով՝ ի վերայ՝ առ՝ ի չքմեղս կացուցանել զինքն և հաճոյ յաչս օտարացուցանել զանազ կուրութեան մտացն և յաւէտ անզգամութեանն. կամելով գտանել յարգանս, առաւել ա՜ նարգի, զի նախատելով զազգ իւր՝ զանձն նախատէ. քանզի եթէ արմատն ոչ է բարի, ապա և ոստն։ Նա պտուղ յաւելու զչար՝ ի վերայ չարի. զի յառաջն միայն էր չար յազգի իւրում, և յաւելով զանարգ և զոր մարդի գործ ազգատեացութեան՝ լինի ամենաչար և մատնիչ հայրենեաց։ Նա որով կամէր զվատթարութիւն իւր վարագուրել, այնու առաւել յայտնի ցուցանէ. զի լսողք բազմիցս անզգոյշ գտեալ՝ հաւատի համարին զսուտ զգայարտութիւնս նորա. բայց վասն ապերախտութեան նորա առ ազգն իւր՝ արհամարհեն զնա և խոտեն, ածեալ զմտաւ՝ թէ որ առ իւրսն անհաւատարիմ եղեւ, զիարդ առ օտարս լինիցի հաւատարիմ։

Տեսեալ ազգատեցին՝ թէ ունայնայաւ մնոտի յոյս իւր, որ ակն ունէր ընուլ զհաճոյս ոնձին իւրոյ, միանգամայն և գտանել զպատիւ իբրեւ ճշմարտասէր, այնուհետեւ դարձ առնել՝ ի հայրենիսն ոչ ախորժէ, զի ոչ կամի ճանաչել զսխալանս իւր. վասն որոյ խոպառ յուսահատեալ՝ յաճախիւ զանհնարին բարուրանս և զտուութիւնս, մերթ՝ ի վերայ միոյ և մերթ՝ ի վերայ միւսոյ ազգին, որպէս զի գոնէ միւսմ՝ ի նոցանէ բարեհաճոյ թուեսցի. այլ սակայն միշտ անարգ և վատահամբաւ գտանի։

Արդ՝ ի պատճառս չարութեան այսպիսեաց լի ին գրեանք բազմամազգաց սուտ զրպարտութեամբք զմիմեանց. զի հայրենատեացն՝ ի ծածկել զյանցանս իւր՝ անխիղճ մտօք ստէ, և լսողն առանց քննութեան հաւատայ և դատի. յորոյ ծնաւ և ծնանի միշտ ան-

հնարին տառերաբերութիւն 'ի մէջ ազգի և ազգի։

ԻԹ. Այնքան հարկ 'ի վերայ կայ խորհանչելոց 'ի մարդկանէ սիրել զհայրենիսն և զազգ իւր, մինչև 'ի տարերել բանաւոր պատճառաց հարկիս 'ի վերայ եկելոց՝ պարտաւոր դատի ոչ միայն զարտաքին բարիս՝ զինչս և զստացուածս, այլ և զկեանս մարմնոյ նուիրել 'ի սէր և յօգուտ հասարակաց բարւոյն, զի այս է կշիռ իրաւանց ազգասիրութեան։ Վասն զի եթէ միայն ինասուք և մահուամբ մարմնոյ՝ բազում փրկելոց իցեն 'ի վտանգէ կորստեան հոգւոց կամ կենաց, ինասեսցի այն մին՝ զի փրկեսցին բազումք։

Իսայան դիպուած ոչ համարի նոա մեռեալ, այլ անմահական յիշատակաւ յաւերժացեալ. զի ընդ իւրոյ ազգին կամ հայրենւոյն կեաց միշտ կենդանի, որոց եղեւ առիթ փրկութեան. մանաւանդ թէ ազգքն կեաց 'ի նմին, որ ետ զանձն և զինչս իւր վասն ազգին, ըստ այնմ՝ քաղցր է վասն հայրենեաց մեռանիլ։

Ոչոյց զգուշալի է յաւէտ, զի մի վասանգ կորստեան հոգւոց իւրոյ լինիցի. զի զինչ օգուտ է՝ զաշխարհ ամենայն շահիլ, և զանձն իւր տուժել, այսինքն զհոգին։ Քանզի պարտ է ամենայն մարդոյ զփրկութիւն հոգւոյ իւրոյ նախադասել քան զազգ իւր և քան զհայրենիսն։ Զի ուր հոգին տուժի, անդ շահ ինչ ոչ գործի. զի ընդդէմ է իրաւանց և աստուածային վճռոյն՝ 'ի պատճառս այլոց ոմանց կորուսանել ուժեք զհոգի իւր։

Դարձեալ՝ եթէ կորստեամբ ընչից կամ մահուամբ մարմնոյ միոյն փրկելոց իցէ հոգի միւսոյն, լաւ է միոյն թէ կորիցէ ինչք նորա, և մեռցի մարմնոյն՝ զի կեցցէ հոգի միւսոյն. զի առաւել է փրկութիւն հոգւոյ միոյն՝ քան զամենայն գանձս և զմարմնական կեանս միւսոյն. քանզի ընդ գիւտ միոյ հոգւոյ՝ ոչ

ինչ գանձք աշխարհի և ոչ ինչ մարմնական կեանք կարեն փոխանակել։

Եւ դարձեալ՝ եթէ միոյ ուրուք 'ի յերկուց ոչ մանց մեռանիլ հարկն ստիպեացէ միայն մարմնոյ մահ հաւամբ, պարտ է երկաքանչիւրոցն եւս ջանալ 'ի պահել զկեանս իւրեանց. զի նախկին է սէր անձին, և երկրորդ՝ ընկերին։ Այսու օրինակաւ վարելի է և 'ի կարուստ ընչից. զի պարտ է ամենեցուն զիւրն նախ ապահովանել, և ապա զընկերին։

Եւ դարձեալ՝ թէ պատահի ումեք կամ զհոգին կորուսանել, կամ զինչս և զկեանս, պարտ է զհոգին պահել, և զինչս և զկեանս մարմնոյ կորուսանել. զի ոչ եթէ հոգին վասն ընչից և մարմնոյ, այլ ինչք և մարմինն վասն հոգւոյն են յաստուածուստ սահմանեալ։

Լ. Ամբոխային ազգ՝ յայտ է զի յառաջագոյն 'ի միջի սկզբնաւորեալ եղեւ, և ապա տեղեաւ, լեզուաւ կրօնիւք, և քաղաքական կառավարութեամբ 'ի միմեանց որոշեալ զատան. բայց 'ի բնութիւնս մարդոյ արմատացեալ գոլով գերազանցիլ 'ի վերայ ընկերին, իւրաքանչիւր ազգ օր ըստ օրէ փոյթ կալան զաւա 'ի միմեանց փոխ առնուլ զօգտակարն և զդիւրագոյնն 'ի կենցաղօգուտ պիտոյից, որով այժմ պայծառացեալ պանծան ազգ յազգի վերայ։

Այլ սակայն ազգային իրք յայնժամ 'ի լաւ անդր յառաջանան, յորժամ անհատ անձինք նորա 'ի մի կամս գօտէպնդեալ ջանան յառաջ ածել զբարին հասարակաց. և զոր միանգամ ստանան, զնոյնն յարատեւութեամբ հաստատուն պահեն. որով ազգն ողջոյն անպակաս յամենայնի որ ինչ մարդկութեանս է ապիտանացու՝ 'ի բարեբաստիկ կեանս վայելեն յաշխարհի։

Բայց սոյն ազգօգուտ իրողութիւն չէ հնար յառ

կանալ միոյ ու�ք, կամ ասկաւուց ոմանց. զի եթէ 'ի մի ոք՝ կամ յոմանս սեղմեալ լինէր, 'ի պակասել նոցա չքանայր և գործն այն օգտաբեր. ապա յայտ է թէ առ ամենեսին տարածեալ պահի։ Այլ ո՞յժ մենեցունց տիրաբար կարէ պանծալ զանձնէ իւրմէ՝ թէ իցէ պատճառ բարութեան ազգի միոյ, մինչ նոյն մին՝ ո՛ ոք և իցէ, կարօտի բազմաց օգնութեան. զի բաց 'ի ՅԱստուծոյ ոչ գոյ մի ըստ ինքեան բաւական՝ առնել զոր կամի։

Ուրեմն անկ է միաբանութեան բազմաց գործել ինչ յօգտակարաց. և այս լինի միայն ազգասիրութեամբ, որպէս զի օգնութեամբ միմեանց կարողացին ունել՝ զոր ոչ ունէին, և անկորուստ պահեցին՝ զոր միանգամ ստանան։

Այսպա եթէ տեսանես թէ գոյ ազգ մի մեծ, ծանիր թէ գոն 'ի նմա բազումք՝ ոչք ազգասէր բարոյիւք միաբանեալ զօրէն մեղուաց՝ նախանձախնդիրք են պահպանութեան հայրենի ազգին իւրեանց, ապա թէ ոչ՝ անհետանայր ողջոյն ազգն այն։

Վասն զի պահպանութիւն ազգի կայանայ 'ի յաստուաց օրէնս իւր, 'ի կառավարութիւն իւր, 'ի լեզուս իւր, և 'ի սովորական կանոնս իւր. քանզի յեղծանիլ և 'ի կորնչիլ սոցա՝ կորնչի և ազգն, զի 'ի բառնիլ սոցա պիսի տարբերութեանց՝ ամենայն մարդիկ որպէս նոյն են 'ի բնութիւնս, նոյն լինէին և յազգի. և աշխարհս դառնայր որպէս ընդհանուր բազանիս, ուր մերկ 'ի հանդերձից ոչ որոշին 'ի միմեանց մարդիկ՝ թէ յորմէ ազգէ իցեն։

Այսպա կրօն, լեզու, սովորութիւն, և այլն, են որպէս զարդ և հանդերձ ազգի, ոչք վայելչանան հանապազօր երկասիրութեամբ ազգասէր անձանց. զի ոմանք զկրօնն պահպանեն, ոմանք զլեզուն կատարելագործեն, կէսք զգիտութիւնս պայծառացու-

ցանեն, այլք զօգտակար արհեստս, և զայլ պիտանի յօտարս երկրէ 'ի ներքս ածեն։ Եւ ոչք ոչ ընդունին առանց միմեանց, զի 'ի պակասիլ միոյն՝ պակասին կամ թերանան և այլք, զի կախումն ունի զմիմեանց. ուրեմն ամենեքեան պիտանի են առ ամբողջութիւն և կոստարելութիւն ազգին։

Այլ ոչ ոք 'ի նոցանէ կարէ ասել զանձնէ, թէ ինքն միայն է ըմբռնող և պահող. և ոչ ոք պարծի ուրանալ, թէ չիցէ ինքն միայն ըմբռնող և պահող ազգի։ Այսպա յայտ է յասացելոցս, թէ իւրաքանչիւր անհատ ազգի միոյ՝ զայս օրինակ պարծի ասել և հաւատալ, որպէս թէ ինքեան միայն կարօտ իցէ բոլոր անդն, և դարձեալ՝ թէ օգնել հարկ է եղբայրութեան։ Զի ոչ ինքն՝ այլ միաբան եղբայրութիւնն է որ պահէ զազգն, վասն որոյ և ինքն պահի ընդ ազգին։ Նմին իրի որ օգնէ եղբայրութեան, օգնէ իւրեան։

ԼԱ. Յատկութիւն իմն է ազգասիրութեան ջանալ շահեցուցանել զազգակիցս իւր առևտրութեամբ կամ օգտակար գործով. որովհետեւ օգուտ միոյն համարի լինել միւսոյն. զի թէ այսօր նա 'ի քէն օգնի, 'ի վաղիւն գուցէ դու յայլոց օգուիցիս, կամ 'ի նմանէ։ Ընդ՝ այնչափ սերտ կապակցութիւն պարտի լինել 'ի մէջ ազգայնոց, որպէս թէ համայն անհատ անձինք ազգին իցեն մի անձն և մի հոգի։ Այլ աւա՛ղ՝ զի այժմ իսպառ անհետ երեւի ոգի ազգասիրութեան յազգի մերում. զի առաւել կամին ընդ օտարս առևտուրս առնել՝ քան ընդ համազգիս, և առաւել ընդունելութիւն ցուցանեն. առ օտարս՝ քան առ իւրայինս։

ԼԲ. Ոչ փոքր պարծանք է ազգի միոյ ունել յաւուրս լեզու, գիր, կանոն և կրօն, և ոչ փոքր ազգասիրութիւն է հաստատուն պահել զնոսա, և օր ըստ օրէ շքեղացուցանել. որով ոչ միայն ողջոյն ազ-

գլուն փառաւոր հանդիսանայ, այլ և իւրաքանչիւր անհատք նորին. զի փառքն ազգի 'ի յանհատս իւր երևի։ Այս ազգասէր ջանք՝ տեսանի յամենայն հրահանգեալ ազինս։

Այլ զինչդ ոմանք յազգէն մերմէ առաւել փոյթ են ուսանիլ զլեզու և զգիր օտար ազգաց՝ քան զՀայոց. բազումք եւս տեղեակ լեզուին՝ ընդ մի մեանս խօսին այլազգաբար, ոչ միայն 'ի փողոցս և 'ի շուկայս՝ այլ և 'ի տունս իւրեանց, գուցէ և զայն պարծանք համարին։

Այսու ախտիւ անհոգութեան բազումք զանուն եօթանասուն, ութսուն, և իննսուն թուոց անգիտացեալ են. զի 'ի տասն թուոյ մինչ ցվաթսունն հայերէն թուեն, և յետ այնորիկ տաճկական անուանակոչութեամբ վարին. և ոչ ածեն 'ի միտ՝ թէ ողջոյն ազգն նախատելի լինի առաջի այլոց ազգաց իբրեւ աղքատալեզու։

Անծ անարգանք է ազգի ոչ ունել սեպհական լեզու և գիր, զի ոչ թուի լինել յատուկ ազգ. ապա մեծագոյն նախատինք է այնմ՝ որ ունիցի և ոչ գիտիցէ. և եւս մեծագոյն արհամարհանք՝ որ գիտէ և ոչ 'ի գործ ածէ։

Լեզուագիտութիւնն այն գովելի է և օգտակար, զի որքան լեզու գիտիցէ ոք, համարի այնքան թըւով մարդ. բայց նախ պարտ է գիտել զիւրն, և ապա զայլոցն։ Իսկ որ ոչ գիտէ զլեզու և զդպրութիւն ազգի իւրոյ, արտաքոյ գտանի կարգի բնութեան, որ նախ զարմատն և յետոյ զոստն յառաջ ածէ։ Այսպէս պարտ է ամենեցուն նախ զիւր հայրենի լեզուն և զդպրութիւնն քաջ ուսանիլ, և ապա ըստ լեզուս այլոց ազգաց։

Յայն սակս պարտական են առաջնորդք և գլխաւորք՝ որոց յանձն է ինամ և տեսչութիւն ազգին,

ամենայն հոգոզութեամբ ջանալ կրթել զմանկունս ազգին 'ի հայրենի լեզուս ։ և 'ի դպրութիւնս , մանաւանդ յայնոսիկ քաղաքս՝ ուր ոչ երբէք գիտեն հայերէն ։

Զի եթէ առաջին հոգաբարձուք փութացեալ էին վարժել զնոսա 'ի հայրենի լեզուս , արդէն գտան նէին նոքա հայրենախօս ։ Եւ որ տեսուչք և խնամաձուք են այժմ՝ եթէ տակաւին անփոյթ արասցեն , յետնարդք նոցա գացեն զամենեսին այլալեզուս . զի օր ըստ օրէ 'ի բազում տեղիս պակասի յազգէ մերմէ գործածութիւն հայկական բարբառոյ ։

Բազումք եւս անտեղեակ գոլով պատուականութեան և հնութեան Հայոց լեզուին , առ ոչ ինչ համարին զնա . այլ սակայն լեզու մեր կատարեալ է , և հնագոյն քան զայլոց բազմաց , գուցէ քան զլեզուս ամենայն աղանց ։

Հաւաստի իմն թուի , որպէս և մարթի ցուցանել 'ի բազում փաստից , թէ սա իցէ նախկին լեզուն որով խօսէր Ադամ և որդիք և սերունդք նորա՝ մինչեւ 'ի շինութիւն բաբելոնեան աշտարակին ։

Զայն զի՝ նահապետն Այր և ընտանիք նորա խօսէին զլեզուն Ադամայ . որովհետեւ նախ քան զՋրհեղեղն ոչ գոյր այլ լեզու 'ի վերայ երկրի ։ Եւ 'ի խառնակիլ լեզուաց 'ի պատիժ աշտարակաշինութեան, Այր կենդանի էր 'ի Հայաստան , և անխառն մնաց 'ի տան նորա նոյն լեզու , և բնակիչք Նախիջեւանու և Արարատայ նովին լեզուաւ կրթեցան ։ Եւ 'ի դառնալն Հայկայ 'ի կողմանցն Բաբելոնի յաշխարհն արարատեան , յոյժ հաւանելի է ասել՝ թէ նովին լեզուաւ վարեցաւ , որով խօսէին բնակիչք տեղւոյն . մանաւանդ զի այն բարբառ՝ էր նոյն ինքն հայրենի լեզուն Հայկայ , որով խօսէր յառաջ քան զխառնակումն լեզուաց ։ Բայց աւաղ՝ զի գտանին ոմանք ,

ողք զյսպրգ. նորա ոչ ՀԱՆՈՒՇԵՐԻՄ՝ անգ ասանեն ՝ի զուրբ՝, որով զաղգն անպատիւ առնեն, ընդ նմին և զինչ քեռանս՝ որ մասն են աղգին։

«Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զքաղաք ամուր. և զբարեկամ բարձրացեալ իբրեւ զթագաւորութիւն հաստատեալ։» Առակ. ԺԸ։19։

«Զօրացարուք որդիք՝ քան զերուք ՝ի վերայ օրինացն. զի ՝ի նմին փառաւորեսջիք։» Ա. Մակ. Բ. 24։

«Օրինակ բարեաց և առաքինութեան մանկուց թողից, զի յօժարութեամբ և քաջութեամբ ՝ի վերայ որբութեան օրինացն մահս քաջ ընդալ մարթասցին։» Բ. Մակ. Զ. 28։

«Աւժանի է որսմ՝ զնորհս զայս առնես. զի սիրե զաղգս մեր, և զժողովրդանոյն՝ նա շինեաց մեզ։» Դան. Է. 3։

«Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ ասերի. և ասուն բաժանեալ յանձն՝ կործանի։» Դան. ԺԱ. 17։

«Եւ գլուխ ամենայնի զի համամիտք իցէք, հոգատարիք, եղբարասէրք, ողորմագութք, խոնարհք։» Ա. Պետ. Գ. 8։

«Ուխտիւք խնդրեի, եւ ինքնին նզով լինել ՝ի Քրիստոսէ՝ վասն եղբարց և ազգականաց իմոց ըստ մարմնոյ։» Հռովմ. Թ. 3։

«Լաւ համարեցաւ չարչարիլ ընդ ժողովրդեան Աստուծոյ։ քան առ ժամանակ մի վայելել ՝ի մեղս։» Եբր. Թ. 3։

ԳԼՈՒԽ Զ.

ՎԱՐԺԱՊԵՏ

Ա. ՎԱՐԺԱՊԵՏՔ պարտին լինել բարեկեցիկ, զի աշակերտք առաւել ուսանին զայն ինչ՝ զոր ՝ի վարժապետն իւրեանց տեսանեն, քան թէ յայլ ամենայն մարդիկ։ Բայց այս ինչ է խտիր, զի եթէ վարժապետն է կատարեալ առաքինի, աշակերտն թէպէտ և նմանող լինի նմա, այլ յոլովակի ոչ հասանէ ՝ի չափ կատարելութեան նորա։

Իսկ եթէ վարժապետն իցէ մոլի, աշակերտն ոչ

միայն հասանէ 'ի չափ յոռութեան նորա, այլ և զանպատեալ բազմաց, և լինի յոռեգոյն։

Այլ միայն բարի օրինակ վարուց ուսուցչին առաւել օգուտ է աշակերտին, քան զբազում դասս առանց բարի օրինակի։

Արժանի է նախատանաց՝ որ զայլս աշխատի կրթել և զանձնէ չունի ինչ փոյթ, առ որ իրաւացի է ասել. բժիշկ՝ բժշկեա զանձն քո։ Զի նա որ միայն զբնական մակացութիւնս գիտէ ուսուցանել, այլ ոչ արժանի բանաւորութեան գործս, է ծառ տեբեւախիտ՝ բայց անպտուղ։

Բ. Անուկ անհրահանգ և տգէտ՝ է իբրեւ անբան, զի ոչ գիտէ կառավարել 'ի բանէ՝ որ յատուկ է բանաւորաց, այլ 'ի կրից՝ որ սեպհական է անբանից։ Իսկ յորժամ ուսանի անդ զիմաստութիւն, ըստ կանի նուաճել զկիրս, և վարել բանիւ, և երանէ անտի այր բանական։

Զնողք ծնանին զորդիս իբրեւ անբան, իսկ վարժապետք առնեն զնոսա բանական։ Զնողք տան զաւակաց միայն զկեալ, իսկ վարժապետք տան զբարուք կեալ։

Գ. Անկունք եթէ քաջ ճանաչէին՝ թէ զինչ է անուանդ մարմնոյ, և զինչ անուանդ հոգւոյ, զվարժապետս կոչէին հայր բարի, և զծնուցս հայր միայն. զի ծնողք զմարմինս անուցանեն կերակրովք, իսկ վարժապետք զհոգիս իմաստութեամբ և առաքինութեամբ։

Դ. Անծ զգուշութիւն պիտի 'ի վարժել զորդիս իշխանաց, ածեալ զմտաւ՝ թէ հանդերձեալ են նոքա լինել կառավարիչ հասարակութեան։

Ե. Ընդաստանք եթէ ոչ մշակեսցին, ոչ բերեն զարմտիս բարեաց. մանկունք եթէ ոչ դաստիարակեսցին, ոչ պտղաբերեն զառաքինութիւն։ Զի՞նչ 'ի կեանս մարդկան որ առաջնորդեսցէ յառաքինու-

թիւն, որպէս խրատ բանից և օրինակ գործոց։

Զ. Հոգի խրատու՝ է առնել և ուսուցանել. զի զոր խօսի զբանիւ, պարտ է և ինքն կատարել գործով, ապա թէ ոչ՝ ոչ ինչ զօրեն բանքն խրատու։

Է. Որ հանդերձեալ է լինել խրատիչ այլոց, նախ ինքն առցէ զկրաւտ յայլոց։

Ը. Խրատք իմաստնոց՝ թէ և խստապոյն թուին, բայց օգտակար են յոյժ. որպէս դեղք բժշկաց՝ թէ պէտ և դառն իցեն, բայց առողջարար են հիւանդաց։

Գաւազան խրատու պիտոյ է նոցա, որք ոչ զգաստանան բանիւ խրատու. զի ըստ առածին՝ որ ոչ ունկամբ լսէ զբան, լսէ թիկամբ մինչ ընկէ գան։

Թ. Որ կարգեալ է ուսուցանել այլոց՝ զորս ոչ գիտեն նոքա, ջանասցէ և ինքն ուսանիլ յայլոց՝ զորս ոչն գիտէ. ապա թէ ինքն չունի փոյթ ուսանելոյ, յայտ է թէ և ոչ այլոց ջանայ ուսուցանել. զի որ զօգուտն անձին ոչ ինդրէ, ոչ բնաւ ինդրէ զօգուտն այլոց։ Անաւանդ զի ոչ է նմա բաւական գիտել զգիտութիւն, այլ և գիտել զկերպն ուսուցանելոյ. ապա թէ ոչ՝ աշխատի բազում, և շահի սակաւ։

Ժ. Դասատուք եթէ ճշդելով ուսուցանեն աշակերտաց իւրեանց զգիտութիւն, յաւէտ քան զժլատս ընդունելոց են զդատաստան. զի ժլատք երկրն չին ծախել զարծաթ 'ի պէտս, կամ ընձեռել ինչ կարօտելոց, գիտելով թէ որչափ ինչ տան այլոց, այնչափ պակասի 'ի մթերից իւրեանց։ Իսկ դասատուք չունին այդպիսի երկիւղ. զի նմանին լուսաւոր ճրագի, յորմէ որչափ ճրագունք լուցանիցին; ոչ կորուստ նէ 'ի լուսոյ իւրմէ։ Անաւանդ զի փորձառու են և գիտեն, թէ դասատուութեամբ աճի գիտութիւն իւրեանց՝ և ոչ եթէ նուազի. զի ըստ առածին՝ որ ուսուցանէ, և ինքն ուսանի։

Բայց զգայշ լիցին դասատուք ուսուցանել զգի-

սուրթիւն որոց ուշիմ են մտօք՝ այլ յանդուգն բա-
բաւք, որպէս ոչ բարւոք առնեն, որք տան զսուր 'ի
ձեռս չարաբարոյից. զի բնաձիր ուշիմութիւնն՝ ըս-
տացական գիտութեամբ զօրացեալ, լինի 'ի նոսա
առիթ վնասու անձանց իւրեանց և ընկերաց։

ԺԱ. Պատուական ձիրք բնութեան՝ որպէս սրա-
մտութիւն, քաջ յիշողականութիւն, ճարտարու-
թիւն լեզուի, և այլն, որ գովութեան պատճառք
են բարեկարգ իմաստնոց, դառնան 'ի նախատինս
անզգոյշ իմաստնոց։ Իմաստուն մոլի՝ հրէշ է այլան-
դակ, զի ունի զգիտութիւն մարդոյ և զգործ ան-
բանից։ Յոսկան մարդիկ՝ եթէ արեգակն սփռեսցէ
ճմեգ մթութեան, և իմաստունն՝ եթէ արասցէ ըզ-
գործ մոլեկան։

ԺԲ. Ընհնարին ցաւ է առն բարեսրտի տեսանել
զտգէտս ամբարձեալ 'ի պատիւ, և զիմաստունս՝
ներգեւեալ և կոխան եղեալ. Որպէս ակն աղնիւ՝
դեղեցիկ փայլի 'ի շարս անարգ քարանց, նոյնպէս
այր իմաստուն՝ 'ի ժողովս տգիտաց։ Իմաստունն ոչ
մեռանի, որ գրաւոր աշխատութեամբ թողու յի-
շատակ յերկրի։

« Իմաստութիւն բարի՝ տայ շնորհս, և Հանուէլ զօրենս՝ մտաց բա-
բեաց է։» Առակ. ԺԳ. 15.

« Բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն, իբրեւ աղիւ հա-
ճեմեալ լիցի. գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք՝
տալ պատասխանի։» Կող. Դ. 6.

« Փութացիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշ-
շակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն Ճշմարտութեան։»
Բ. Տիմ. Բ. 15.

ԳԼՈՒԽ Է.

ԾՆՈՂ

Ա. ՀԱՅՐ՝ որ բարեաք կրթէ զորդիս իւր 'ի կենդանութեան, յաւերժացուցանէ զիշատակ իւր զկնի մահուան։ Որպէս կենցաղավարութիւն որդւոյ կենդանւոյ՝ փառաւոր առնէ զհամբաւ հօրն մեռելոյ։

Բ. Ծնողք՝ 'ի մեռանիլ իւրեանց եթէ թողցեն զորդիս իւրեանց աղքատ՝ բայց իմաստուն, բազում ընչից ժառանգորդս առնեն զնոսա, քան թէ թողուցուն հարուստ՝ բայց տգէտ։

Գ. Լրթէ ոչ կամիս տրտմիլ 'ի վերայ զաւակաց քոց, տրտմեցո զնոսա 'ի մանկութեան իւրեանց յանդիմանութեամբ և սաստիւք։ Ոչ այնքան վիշտ է տեսանել զորդին վաղամեռիկ, որքան տեսանել զնա չարաճճիկ։

Դ. Նոգուտ է հօր կրթել զորդին 'ի վարս բարիս, եթէ մայրն թոյլ տայ նմա սովորիլ 'ի չարիս։

Ե. Որ զորդին իւր փափկութեամբ սնուցանէ, 'ի տեղի կամին թոյն արբուցանէ. զի մանկական փափկութիւնն 'ի զարգանալ հասակին՝ առաւել քան զթոյն վնասէ։ Նգուութ է մայրն, եթէ ոչ մնուցանէ զորդի իւր. բայց առաւել անգութ է, եթէ սնուցանէ փափկութեամբ։

Զ. Փափկութիւնն 'ի մանկունս՝ է իբրեւ փուշ կակուղ. բայց որքան մեծանայ մանուկն՝ այնքան կարծրանայ և նա, մինչեւ խայթել առ որս մերձենայ։

Է. Ծնողք եթէ իցեն առ որդիս իւրեանց կարի բազմագութ, որդիք նոցա լինին առ նոսա խոպառ անգութ։ Այրն հայրական դառնայ 'ի թշնա-

մութիւն, եթէ ներելով յանցանաց զաւակին՝ պատ-
ճառս տայ անդրէն մեղանչելոյ։

Ը. Խորթ մայր իրաւամբ կոչի այն ծնող, որ գի-
տէ ծնանիլ զորդիս, այլ ոչ գիտէ բարւոք կրթու-
թեամբ սնուցանել. նա է մայր հարազատ՝ որ գիտէ
ծնանիլ՝ միանգամայն և սնուցանել 'ի համեստ վարս։

Թ. Մանկունք առաւել ուսանին 'ի մարց քան 'ի
հարց, զի մայրենի դաստիարակութեամբ անտանին
մինչեւ 'ի զարգանալ իւրեանց. ապա պարտին մարք
բարիւք կրթել զմանկունս իւրեանց, զի մի յետոյ
ըստացեն 'ի վերայ կենդանի որդւոյն առաւել քան 'ի
վերայ մեռեալ զաւակին։

Ժ. Պարտական են ծնողք կրթել զմանկունս իւ-
րեանց 'ի բարի վարս հոգեշահ խրատուք, և օրինա-
կօք առաքինագործ քաղաքավարութեան իւրեանց.
քանզի մատաղ հասակն մանկական՝ թէ և բնական
խառնուածով իցէ բարի, անաներլումն 'ի մէջ չարաբա-
ղոյից, և տեսութեամբ անբարի կենցաղավարու-
թեան ծնողաց իւրոց՝ լինի վատթար և մոլի։

ԺԱ. Ակնատինք հօր չարաբարոյի ծանրանայ չա-
ղաչար վարուք որդւոյ իւրոյ, զի 'ի հօրէն ուսաւ
լինել չար։

ԺԲ. Ծնողք՝ արժանի են նախատանաց և պատ-
ժոց, որ զորդիս իւրեանց թողուն շրջիլ անգործ։

ԺԳ. Ծնողք որ անփոյթ լինին, և ոչ տան զոր-
դիս իւրեանց յուսումն գիտութեան՝ զի լինիցին
այր բարի, և ոչ յարհեստս կարեւորս՝ զի շահեսցին
զպէտս անձանց, պարտաւոր են դատաստանի, զի
ինքեանք գտանին պատճառ անհրահանգ և անգործ
լինելոյ իւրեանց։

ԺԴ. Պականին ձուք յորժամ թիսամայրն թող-
ու անիւնամ, և շրջի ըստ հաճոյս իւր. անպիտան
լինին մանկունք յորժամ ծնողք ոչ պահեն զնոսա

ընդ թեւոք իւրեանց, այլ անհոգ եղեալ՝ ընդունեալ
խնդրեն զդիւրութիւն անձանց։

ԺԵ. Եթէ ոք կամի զի որդի իւր լինիցի այր բա-
րի, յանձն արասցէ այնպիսի դաստիարակի, որ ոչ
միայն իցէ գիտնական՝ այլ և առաքինի. զի մանու-
կըն զայն ուսանի՝ զոր միանգամ յուսուցիչ իւր տե-
սանէ. քանզի տեսութիւն աչաց առաւել զարթու-
ցանէ զբաղձանս կամաց՝ քան լուրն լսելեաց։

ԺԶ. Ոչ է փառք հարց տեսանել զորդիս իւրեանց
գիտունս միայն՝ այլ և գործունեայս բարեաց, զի
ուսանելի է զգիտութիւնն վասն գործելոյ զբարիս։

ԺԷ. Որդիք մեծատանց եթէ իցեն անհրահանգ,
հուսկ ապա լինին աղքատ. որդիք աղքատաց եթէ
իցեն հրահանգեալ, 'ի վախճանի լինին մեծատուն։

ԺԸ. Այնպէս լինի ոք յերիտասարդութեան, որ-
պէս սնեալ իցէ 'ի տղայութեան. ուստի մեծատուն
ոք եթէ կամի զի որդի իւր լինիցի երիտասարդ բա-
րի, սնուսցէ զնա 'ի մանկութեան հասակի 'ի բարի
կրթութիւնս։

ԺԹ. Որդի առն մեծատան՝ եթէ բնաւական հա-
ճարի զիտուն և զհամբաւ զոր ժառանգութեամբ
ունի 'ի նախնեաց, և ոչ ջանայ յաւելուլ օր ըստ օ-
րէ գիտութեամբ և առաքինութեամբ, մինչ յար-
կածից ժամանակին կորուանէ զնոսա, միշտ մնայ
յանարգութեան, զի 'ի մանկութեան իւրում ոչ
ուսաւ ոստանալ զփառս։

Ի. Ոչ զոք մինչ տեսանեն զորդիս իւրեանց գործ-
ել զանուղղայս, պարտական են քաղցրութեամբ
խրատել զնոսա. իսկ եթէ որդիքն անհնազանդ գը-
տանիցին, չափաւոր ասստիւք ածցեն զնոսա 'ի յու-
ղղութիւն։ Ոչ ամարձակութիւն տալ երիտասարդաց
է թողուլ զանձ ամենի ձիոց, կամ հեղուլ զձէթ
'ի գորբոքեալ հուր, կամ 'ի սարկ վէրոյ արկանել ըզ-

կոչեն։ Դպատուութիւն է գովելի՝ չատալ համարձակութիւն երիտասարդաց և մանկամարդաց։

ԻԱ. Հապահաս մարդիկ՝ ի տեսանել և ի լսել զանպատշաճս, ե երբեք՝ զի հետեւին, և է՝ զի ի բաց խորշին. իսկ մանկունք ոչ բնաւ գիտեն խորշիլ. այլ զոր լսեն և տեսանեն՝ վաղվաղակի յաժարին ի գործ դնել։

ԻԲ. Ընդողք՝ եթէ ոչ բարուոք վարեսցին ի զարգացուցանել զորդիս իւրեանց, որդիք նոցա ոչ կարեն լինել ժառանգ բարի։ Պարտ է և արժան՝ զանազանն ծնողական զոր բնութիւնն ետ ունել ի վերայ զաւակաց, պահել ի ծածուկ առ ժամանակ մի ի պտի իւրեանց, և յայտնել զաւակին յորժամ հասանի ի չափ, և կարէ ճանաչել զյարգ ծնողական սիրոյ և զպարտաւորութիւն իւր։

Որստի մինչ տղայ է նա, և չունի զկիրառութիւն բանի, տացէ նմա զքաղցր կաթն ի մնունդ, և զկերակուր ինչ ի յագուրդ, և զհանդերձ անպատճաճ ի ծածկոյթ։ Եւ յորժամ լինի մանուկ իբրեւ եօթն ամեայ, առաքեսցէ զնա ի դպրատուն. ուր վարժապետն ուսուսցէ նմա զգրավարժութիւն, և ապա զգիր և զթուագիր, մինչեւ լիցի տասնամեայ. յետ այսորիկ զկզքունս քրիստոնէական հաւատոյ, և բարոյական առաքինութեանց տացէ նմա սերտ ի բերան ունել, և ի միտ առնուլ։

Եւ եթէ մանուկն իցէ ուշիմ և ժրաջան և եռանդնոտ, ասասցէ նմա դաս. զարհեստն քերականութեան, որպէս զի օր ի յօրէ հասու լիցի նշանակութեան բառից և խնդամուտ իմաստից ընթերցուածոց, և ձեռնհաս ի շարադրել զբանս ինչ ըստ կանոնի և ըստ սովորութեան հայկազնեան լեզուիս, և կացցէ ի հրահանգս կրթութեան մինչեւ հասցէ յերեքտասան կամ չորեքտասան ամ հասակի իւրոյ։

Բայց ամենայն ժամանակս պիտոյ է մանկան սատ և խրատ 'ի ծնողացն և 'ի դաստիարակէն, որպէս զի անդամին 'ի թարմ և 'ի մատաղ տիոց ուսանիցի հեռի կալ 'ի չարեաց, և զհետ երթալ բարեաց։

Յետ այսր ամենայնի պարտուպատշաճ խնամոց՝ եթէ նպքին իսկ ծնողք փափաքին սրժանաւորել զորդին իւրեանց սրբազան կարգի և աստիճանի, և մանուկն յօժարի, թողուցուն զնա 'ի հրահանգս՝ուսանիլ զարտաքին և զհոգեւոր գիտութիւնս, և կրթիլ 'ի մարդս առաքինութեան՝ ցորչափ արժան իցէ կալնամ։ Իսկ եթէ ծնողք կամին մուծանել զորդին իւրեանց 'ի կարգ աշխարհի, տացեն զնա 'ի կարեւոր արհեստս, որով կարասցէ շահիլ զոյիտս կենաց։

Բայց այս բարեկարգ դաստիարակութիւն որ դուռոց ոչ տեսանի այժմ 'ի ծնողս, յայլազգս որոց ցանցառակի երեւի և որդիասպարտ հնազանդութիւն նոցա առ ծնողս իւրեանց։ Բանզի ծնողք անդստին 'ի կամենալոյծ հասակէ մանկանն մինչեւ 'ի տիս պատանեկութեան՝ զգուեն զնա և փայփայեն, ազնիւ զգեստուք պճնեն, ծիծաղին ընդ երեսս նորա; շրջեցուցանեն 'ի տեսարանս խաղուց և զբօսանաց, անյապաղ կատարեն զամենայն կամս նորա և զբաղձանս նորա. և թէպէտ մինչդեռ տղայն է՝ առաքեն զնա 'ի դպրոցն, բայց յետ ուսանելոյ զհասարակ ընթերցումն և զգիր, ածեն զնա 'ի վաճառանոցն։

Իւ մանուկն թէ և իցէ ուշիմ և եռանդնոտ, և խնդրեսցէ ուսանիլ զարհեստ քերականութեան և զգիտութիւնս կարեւորս, վաղվաղակի սաստեն զնա սելով. Մեք ոչ ենք առնելոց զքեզ քահանայ կամ վարդապետ. և զայն ոչ գիտեն՝ թէ պարտական են առնել զնա մարդ բանական, և ոչ եթէ թողուլ մարդակերպարան։

Ապաքէն լուիցեն ծնողք, թէ կարեւոր է ամե-

նայն տղայոց ուսանիլ զարհեստն քերականութեան ըստ իւրաքանչիւր կարողութեան, զի գոնէ ծանիցեն զբացայայտ միտս բանից աստուածաշունչ կտակարանաց հնոյն և նորոյս. խելամուտ լիցին օրինացն Աստուծոյ, որ պատուիրէ սիրել զԱստուած յամենայն սրտէ, և զընկերն վասն Աստուծոյ. հնազանդ լինել ծնողաց, և պատուել զնոսա 'ի վաստակոց ձեռաց իւրեանց։

Օհուսկն առացիս, եթէ ծնողք բարեոք սնուցցեն և կրթեսցեն զորդիս իւրեանց, որդիքն եւս լինին ժառանգ բարի, և փառք ծնողաց իւրեանց։ Այլ քանզի ուսումնատեաց բաղք բնաւորեալէ 'ի ծնողս, վասն որոյ և անհնազանդութիւն որդւոց առ ծնողս իւրեանց՝ յաճախեալէ յաւուրս մեր։

ԻԳ. Լորձանեալէ քաղաքն, կամ մերձէ 'ի կործանումն՝ եթէ ծնողք անփոյթ են 'ի կրթել զորդիս իւրեանց 'ի գիտութիւն, յառաքինութիւն և յաշխատութիւն. զի տգիտութիւն, մոլութիւն և դատարկութիւն՝ են աղբիւր վնասու և թշուառութեան։

ԻԴ. Աստ մեծ է ծնողաց թողուլ զորդիս իւրեանց անխրատ, մինչեւ կարօտիլ նոցա խրատու այլոց՝ զի գայցեն յուղղութիւն։ Փոքր մի անհոգութիւն ծնողաց թողու աճիլ մեծամեծ մոլութեանց 'ի զաւակս իւրեանց, որք ապա բազում աշխատութեամբ հազիւ ուղղին, կամ իսպառ մնան անուղղելի։ Քանզի և յանհոգութենէ նաւապետին տակաւ տակաւ ընդմտեալ ջրոց 'ի նաւն ընդ ծակտիս նորա, լճանան 'ի գոգն, և բազում ջանից կարօտին տրտաքս թափիլ. և է ուրեք զի առնեն զնա խորասոյզ։ Լաստք պարտ է ծնողաց զգոյշ լինել՝ և չտալ թոյլ մոլութեանց մուտ գտանել 'ի վարս որդւոց իւրեանց, զի դժուարին է այնուհետեւ ապաքինել 'ի նոցանէ։

ԻԵ. Որդի անիրաւ՝ սովոր է լինել ստասաց, զի զվերիպակ գործոց՝ զոր առնէ 'ի գողանիս, իբրեւ հարցանի 'ի ծնողաց՝ այլ ընդ այլոց տայ պատասխանի զի մի յանդիմանեսցի։ Այսպիսի մանուկն պարտին ծնողք կրկնակի պատժով խրատել, մի՝ վասն գործոցն, և միւս՝ վասն ստախօսութեանն, որպէս զի առանցի այնուհետեւ հեռի կալ 'ի վերիպակ գործոց և 'ի խօսելոյ զսուտ։

ԻԶ. Հայր բարի՝ եթէ ունիցի որդի բարի, երկոքին եւս լինին երանելի. զի բարի համբաւն հօր՝ առաւելու զփառս որդւոյն, և բարի համբաւ որդւոյն՝ աճեցուցանէ զմեծարանս հօր։ Այսպէս ջանասցին ծնողք կրթել զորդիս իւրեանց 'ի բարիս. զի եթէ անհոգութեամբ թողուցուն զնոսա սովորիլ 'ի չարիս, վատանութեամբ նոցա աղաւաղն համբաւ բարութեան իւրեանց, և պարտաւոր եւս գրաստանին դատաստանի։

ԻԷ. Երկիւղելի է մանուկն որոյ ծնողք են չարաբարոյ, յորոց և ինքն ուսանի լինել չար. և երանելի է նա՝ որոյ ծնողքն են բարեբարոյ, յորոց և ինքն դաստիարակի լինել բարի։ Իսկ եթէ հայրն իցէ բարի՝ և մայրն չար, յոլովակի և մանուկն լինի չար. զի տղայք 'ի մատաղ տիս իւրեանց առաւել ուսանին 'ի մարոյ՝ քան 'ի հարց։ Լաւագոյն եթէ ծնողքն կամին զի որդիք իւրեանց եղիցին բարի, նախ ինքեանք լինիցին բարի։

ԻԸ. Հօր բարւոյ որդի բարի՝ յաւելու զպատիւ հօր, զի 'ի հօրէն ուսաւ լինել բարի. հօր չարաբարոյի որդի բարի՝ յաւելու զպատիւ որդւոյն, զի ինքնին ուսաւ լինել բարի։

ԻԹ. Ծնողք ոչ ունին իրաւունս գանգատել ընդ բնութենէ, զի ետ նոցա ունիլ զաւակ չարաբարոյ. քա՛զի ոչ եթէ բնութեամբ ծնան զնոսա չար, այլ

ինքեանք անհոգութեամբ իւրեանց արուրին զնոսա չար. քանզի և երկիր եթէ անդարման մնասցէ, մա լախոտի և բուսուցանէ փուշս։

Լ. Պարտաւոր են ծնողք կարգացուցանել զորդիս իւրեանց բարոյք կրթութեամբ, որպէս զի մանկունք պարապեսցին յօգտակար արհեստս և 'ի գիտութիւնս, զգուշացին պահպանութեան օրինաց, և լինիցին հաւատարիմ ստուգ Աստուած և առ մարդիկ։

ԼԱ. Ոչ այնքան ցաւալի է կորուստ ընչից և մեծութեան, որքան կորուստ ամօթխածութեան և բարի անուան. զի զինչս և զմեծութիւն հնար է միւսանգամ 'ի ձեռս բերել, բայց զամօթխածութիւն և զանուն բարի ոչ բնաւ. զի ըստ նմանութեան անօթոյ բրտի մկանգամ խորտակեալ՝ ոչ երբեք ամբողջանայ։

Այլ զգուշացին ծնողք 'ի պարկեշտութեան պահել զզաւակս իւրեանց. զգուշացին և զաւակք անկորուստ պահել զհամեստութիւն և զանուն բարի. զի երիտասարդական բորբոքն է անցաւոր, հեշտութիւնն վայրկենական. բայց ամօթահարութիւնն և ցաւն է մշտնջենաւոր յաստի կեանս, և պատիժն յաւիտենական 'ի հանդերձեալն։

ԼԲ. Ո՞ւրեմն քան զայս ապիտալի, մինչ հայրն ժողովէ զարծաթ և զստացուածս բազում տառապանաբ՝ զի որդին ապրեսցի երջանկաբար. և որդին վայրապատին աւնէ զնոսա, զի ապրեսցի թշուառաբար։ Այլ զինչ պատճառ եղկութեանցս, բայց եթէ անկարգ խնամքն ծնողական. զի հայրն ջանայ հարստացուցանել զորդի իւր բազում գանձիւք, այլ ոչ սակաւ մի գիտութեամբ. կամի ժառանգորդ առնել ստացուածոց, այլ ոչ առաքինութեանց։

ԼԳ. Իշխանք եթէ ցանկան զի որդիք իւրեանց լինիցին իշխան, սնուցեն զնոսա ոչ իբրեւ զորդի՝

այլ իբրեւ զծառայ. զի որ ոչ եղեւ ծառայ հօր իւրոյ, ոչ կարէ իշխան լինել այլոց. զի նա գիտէ լինել հրամանատար, որ եղեալ է հրամանակատար։

ԼԴ. Իւրախուութեամբ ելանէ յաշխարհէ որ թողցու յաշխարհի որդի բարի. և տրտմութեամբ հրաժարի՝ որ թողու զկնի իւր որդի չար։

Այսպա բարուք առնէ՝ որ 'ի մեռանիլն յանձն առնէ բարեկամին զորդի փոքր՝ խնամել զնա և խրատել։ Քանզի մանուկն եթէ չունիցի զոք խնամածու, ընկերակից եղեալ չարաց՝ լինի և ինքն չար և անզգամ, և այնուհետեւ ոչ օգտի ինչ 'ի խրատուէ բարեաց։ Զ'ի ըստ հասարակաց առածին, խափշիկ սեւամորթ ոչ խնդրէ օճառ. անմիտն չառնու խրատ օգտակար։

ԼԵ. Որ սիրէ զորդի իւր՝ զգուշանայ 'ի պահպանել զնա, ապա թէ ոչ՝ ոչ սիրէ զորդին. քանզի զգուշաւոր պահպանութիւն յառաջ գայ յերկիւղէ կորըստեան, և երկիւղն կորստեան ծնանի 'ի սիրոյ. ապա ուր պակասի գործ սիրոյ, ոչ գտանի անդ սէր։

ԼԶ. Զարք զգուշացին դստերաց իւրեանց, զի մի իւիք արատեսցի համեստութիւն նոցա. զի համեստութիւն նման է դիւրաբեկ ապակւոյ, որ 'ի դոյզն բախմանէ խորտակի, և կորուսանէ զնիւրն յարգ, և չէ հնար անդրէն 'ի ձեռս բերել։

ԼԷ. Զայր՝ որ պահէ զդուստրն 'ի տան որպէս 'ի բանտի, և ոչ թոյլ տայ նմա խօսակից լինել ընդ այլոց, ոչ այնու ցուցանէ՝ թէ դուստր իւր է չար և անպատկառ, այլ զգուշանայ՝ զի մի լինիցի. զի օրիորդ ամօթխած և բարի՝ որքան խնամով և զգուշութեամբ պահեսցի, այնքան առաւել պարկեշտ և բարեգոյն գտանի։

ԼԸ. Զանկամարդ եթէ նստիցի 'ի տան հսմեստ և անխօս, այլք ամենեքին բարեբաւութեան նորա լինին մասնակիցք և քսրոզ։

ԼԹ. Թշնամաբար սիրող է զաւակի իւրում այնպիսի մայր, որ զդուստր իւր ընդ ապգականաց կամ ընդ դրացեաց առաքէ 'ի գնեին կամ 'ի ղբօսանս, և Թողուս մնալ աւուրս ինչ 'ի տան նոցա, ասելով. Այսպէսն բազում ժամանակք են, յորմէ հետէ արգելեալ զաւակն իմ 'ի տան, խարապայ կապեցաւ 'ի սրտի նորա. Թող փոքր մի սրտաքոյ ելցէ, և բացցի սիրտ նորա և հովահարեսցի. զի չէ օտար տեղին, ապգականն են մեղ և մերձաւոր։

Բայց աւաղ կուրութեան մտայն և անզգայութեան. այն ինչ յուսայ և սպասէ զի բացցի սիրտ դստերն, փաղփաղակի բացեալ լինին աչք նորա, և ոչ առանէ զմերկութիւն իւր 'ի համեստութենէ։ Այլեալ 'ի տանէ կորուսանէ զամօթխածութիւն. մնառեալ 'ի տունն ոչ եւս մնալի գտանել։ Այլ զգեայ զուարճութիւն ղբօսանացն՝ փոխի 'ի տրտմութիւն անփարատելի, և ցնծալից բերկրութիւնն՝ 'ի սուգ և 'ի կոծ։

Այս պարտ է որդեսէր մարց հանապազ հսկել 'ի վերայ պահպանութեան դստերաց, և չԹողուլ հեռանալ 'ի քշանցից իւրեանց։ Զի 'ի Նմանին նոքա ձըւոց հաւուց, զորս պարտին Թխսամարք ընդ Թևոք ունել, մինչեւ յելանել նոցա 'ի ձուոց. և յետ այնորիկ ընդ իւրեանս շրջեցուցանել մինչեւ 'ի զարգանալ։

Այս եԹէ Թողուցուն զձուս արտաքոյ Թեւոց, ապականին 'ի ներքուստ. և եԹէ Թոյլ տացեն ձագուց հեռանալ 'ի բոց, յափշտակին յանգեղաց։ Բստ սմին սարասի և մարք պարտաւոր են լինել միշտ հոգաբարձու դստերաց. իսկ եԹէ անփոյԹ լինիցին ընոցանէ, ինքեանք գտանին պատճառ չարեացն, և արժանի պատժապարտութեան։

Խ. Այրն եԹէ զքնական սէրն որով սիրէ զդուստրն իւր՝ ցուցանիցէ յայտնի, լինի դստեր իւրում

գաղտնի թշնամի. զի գուստրն 'ի տհաս հասակի իւրում ընկալեալ 'ի մօրէն զհամարձակութիւն, որքան զարգանայ 'ի տիս՝ այնքան առաւելու 'ի համարձակութեան, մինչեւ ոչ հնազանդիլ բանից ծնողին, եւ ոչ անսալ խրատու նորա։ Եւ զի ուսեալ է նա 'ի մատաղ տիոց անտի ամենայն հաճոյից իւրոց կատարիլ, 'ի մեծութեան հասակին զնոյն խնդրէ 'ի մօրէն. եւ մինչ նա զանայ կատարել, խոժոռի ինքն և տրտմի, և երբեմն կագէ և հակառակի։

Եւ այսմ ամենայնի գլխաւոր պատճառ է թուլութիւն ծնողին, որ յառաջագոյն ետ դստերն զհամարձակութիւն՝ առնել զհաճոյս կամաց իւրոց. և մինչ դժուարանայ զսպել զդուստրն, մաշի ծնողն, և աւաղ կարդայ անձին իւրոյ և դստերն։ Եւ արդարեւ բազում ջանից պէտք են զուսոյ ունել զայնպիսին, և զանուն բարի նորա չարատել։ Այսպա պտրտ է ծնողին զսէրն իւր յառաջագոյն պահել 'ի ծածուկ, որպէս զի 'ի զարգանալ դստերն արասցէ յայտնի, որով երկոքին եւս լինիցին բարեվիճակ։

ԽԱ. Որիորդք՝ որք զձայնս իւրեանց ոչ առնեն այլոց լսելի, համբաւ բարութեան նոցա ամենեցուն լինի ազդելի։ Կոյս՝ որ բարձրաձայն ընդ ումեք խօսի, խափանէ ինքնին զանուն իւր բարի։ Զի օրիորդ՝ եթէ 'ի մատաղ մանկութենէ ուսանիցի բարձրաձայն խօսել ընդ ծնողաց իւրոց և եղբարց և ազգականաց, զնմիրդ հնար է նմա 'ի զարգանալ հասակին զուսոյ ունել զձայն իւր, և զգուշանալ զի մի ոք յօտարաց լուիցէ։ Անկամարդ՝ որ սովոր է խօսիլ բարձրաբարբառ, մարթ է լինել այնպիսին յանդուգն և անպատկառ։

ԽԲ. Հարուք էր՝ եթէ տուն յորում բնակին աղջկունք, ոչ ունէր պատուհան կամ դուռն հայել 'ի փողոցս. զի յորժամ կանգնեալ հային նոքա ակն

յանդիման 'ի տես անցաւորաց, ամբոխի բարեմտութիւն նոցա, իբրեւ այն թէ կայծ հրոյ անկանի 'ի խուրձս բամբակի, և ժամ ըստ ժամէ արծաթեալ՝ կիզու և ծախէ զողջմտութիւն նոցա և զհամեստութիւն։ Այսպա երիտասարդուհի կամ կուսան՝ որոյ աչք են 'ի պատուհան, կամ է անամօթ, կամ ակամայ է անամօթանալ, զի ամենայն հրդեհ 'ի դպչի մի կայծէ բորբոքի, և ամենայն մեծ փնաս՝ 'ի փոքր փնասուէ գայ յառաջ։

Խգ. Այրք մի հաւատացեն զդուստր իւրեանց կենցաղավարիլ ընդ երիտասարդի, թէեւ 'ի մերձաւորաց՝ ելցէ կամ յազգականաց. զի մոլեկան ցանկութիւնն խառնէ զմիտսն, մինչեւ մոռանալ զանձն և վարիլ իբրեւ զանբան։

Խդ. Այ տրտմեսցին դստերք՝ յորժամ զգուշութեամբ պահպանին 'ի մարց իւրեանց. զի անկատար հասակ նոցա ոչ գիտելով զօգուտն զոր ունին 'ի պահպանութենէն, գուցէ տրտմեցուցանէ զնոսա, բայց գիտասցեն առ յապա՝ յորժամ լինիցին մայր գստերաց։

Խե. Աշկիր՝ եթէ ուխտեսցէ արգելուլ զգողշիս ջուրց, և օդ՝ զհոգին սաստիկ, միշտ մնայ ծանր խաղաղ և անխռով. և օրհնիր զք՝ եթէ պահ դիցէ աչաց իւրոց զի մի հայեսցի յարատ, և ականջաց՝ զի մի լուիցէ զանպատեհս, մնայ հանդարտ և համեստ. ապա ցորչափ զաչն 'ի պատուհան ունիցի, և զունկն 'ի բերանս այլոց, անհնար է նմա կալ մինոյ 'ի տան համեստ և ամօթխած։

Այր 'ի կուսութեան իւրում մնասցէ 'ի տան որպէս 'ի բանտի, յամուսնութեան իւրում գտցէ ըզվիճակ բարի։ Կոյս շատաշնջիկ՝ դիւաց է խաղալիկ։

Խզ. Լսուք առնեն կանայք, զի զսպատատ ակնակուռ և ոսկեղէն զարդուց իւրեանց բազում

աչալրջութեամբ պահեն. և եթէ գէպ մինչի եղ-
թայլ 'ի տունս ազգականաց իւրեանց, ընդ ինքեանս
առեալ ածեն, և փականօք ամրացուցանեն զի մի
կողոպտեսցի 'ի գողոց։ Բայց ոչ բարբոք առնեն՝
մինչ ոչ այնչափ զգուշանան դատերաց որչափ զոր-
դուց իւրեանց. և յետ կորուսանելոյ նոցա զհամեա-
տութիւն իւրեանց, զուր և ընդվայր հառաչեն և
կոծեն։

Եւ որովհետեւ օրինաց բնութեան առաւել պար-
տին սիրել զզաւակս իւրեանց՝ քան զամենայն մե-
ծագին զարդսն, ապա առաւել արթնութեամբ պա-
հեսցեն զնոսա, զի մի վտանգ կորստեան հասանիցի
համեստութեան նոցա. և ընդ նմին եկեսցէ կո-
րուստ ընչից, կորուստ շահուն, և կորուստ բարի
անուան։

Խէ. Դուստրն մինչ փոքր է՝ աշխատի մայրն 'ի կե-
րակրել զնա և դարմանել. այլ մինչ լինի չափահաս,
մայրն հանգչի, և դուստրն աշխատի։

Բայց այս հանգիստ մարմնոյ յաւելու զաշխա-
տանս մտաց ծնողին. զի պարտի շուրջ հայիլ և զգու-
շանալ 'ի պահպանութիւն դստերն. զի ըստ հասա-
կաց առածին, որչափ մեծանայ զաւակն, այնքան
մեծանան և ցաւք ծնողին։

ԽԸ. Եր ընտրէ հարմարացուցանել զդուստր իւր
առն ազնուոյ՝ բայց մոլեկանի, կերուանէ զպատիւ
և զհանգիստ անձին իւրոյ։

Խթ. Զէ արժան հայիլ 'ի փարթամութիւն փեսայացուին՝ այլ 'ի խոհեմութիւն նարին. զի որ տա-
նու զփեսայ հարուստ՝ բայց մոլի, առնէ զդուստր
իւր մշանջենաւոր գերի։

Ծ. Ոչ ընուն զպարտաւորութիւնս իւրեանց ծը-
նողք, որ վասն փեսութեան անուան և համբաւոյ
իւրեանց՝ ոչ յօժարին տալ զդստերս իւրեանց հա-

մեստ արհեստաւորաց, եթէ չունին նոքա զմեծութիւն բազում։ Եւ մինչ դստերքք իւրեանց անտեսելին 'ի մեծատանց ածիլ 'ի հարսնութիւն, անցեալ ըստ չափ հասակի՝ մնան 'ի տան իւրեւ զայրի զամենայն աւուրս կենաց իւրեանց։

Իսկ պատճառ այսմ ինասու՝ է անափառութիւն ծնողաց, որք խնդրեն զհարստութիւն՝ և ոչ զհամեստութիւն։

ԾԱ. Դժուարին է յոյժ, և բազում զգուշութեան պէտս ունի ընտրութիւն փեսայի, զի գլխովին զամենէ կախի երջանկութիւն կամ թշուառութիւն դստերք իւրեանց։

Այլ մի ընտրեսցեն փեսայացու զերիտասարդ ոգեյոյն սակս՝ զի է յաղնիւ տոհմէ, այլ զի կարէ լինել սկիզբն ազնիւ տոհմի։ Զի են բազումք, որք զազնուութիւն տոհմի իւրեանց սպառեն յինքեանս, և են՝ որք սկզբնաւորեն յինքեանց։

ԾԲ. Հարեւից խնճոյք՝ ոչ առնեն զհարսանիսն վայելուչ, այլ յարմարութիւն փեսային և հարսին։ Նուն որոմութեան է այն հարսնարան, որոյ փեսայն և հարսն չեն միմեանց արատկան։

---

* Պատուիրեցէք սրդոց ձերոց, պահել և առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ։» Բ. Օրէն. ԼԲ. 46։

“ Որ խնայէ 'ի գաւազան՝ ատեայ զորդի իւր, իսկ որ սիրէն՝ խնամով խրատէ։» Առակ. ԺԳ. 24։

“ Դատերքդ իսկեն քո՝ զգաշչ կաց, և մի գգուեր զնոսա և համարձակեցուցաներ. առն խմաստնոյ տուր զնոսա, և քո գործ մեծ գտանի կատարեալ։» Սիրաք. Է. 26։

“ Որ խրատէ զորդի՝ շահեսցի զնա, և 'ի մէջ բարեկամաց փառաւորեսցի։» Սիրաք. Լ. 2։

“ Որ ուսուցանէ զորդի, նախանձաբեկ առնէ զթշնամիս, և առաջի բարեկամաց ցնծասցէ, մեռաւ հայր նորա՝ և չէ մեռեալ, զի նման իւր եթող յաշխարհի։» Սիրաք. Լ. 5։

«Հաւքք՝ մի զգայացուցանէք զորդիս ձեր։ զի անուցանիցէք զնոսա խրատաւ և ուսմամբ Տեառն։» Եփես. Զ. 4։

«Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն։» Կող. Գ. 20։

«Կամիմ զմանկամարդացդ՝ ամուսնանալ, որդիս ծնանել, անաւրարս լինել. և մի ինչ պատճառս տալ հակառակորդին՝ ի հայհոյութեան ազգաց։» Ա. Տիմ. Ե. 14։

ԳԼՈՒԽ Ը.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ա. Բարեբաստիկ է ամուսնութիւն, եթէ ամուսինք պահեն զհաւատարմութիւն առ միմեանս, և սիրեն զերեսաս որպէս զանձինս իւրեանց, մինչեւ այր և կին ոչ երեւիլ երկու զանազան անձինք, քան թէ մի հոգի յերկուս մարմինս բնակեալ. որք և ի ցեն ողջամիտ և աշխատասէր, ուրախ, հանդարտ, փոփոխակի հոգածու ընտանեաց. սորն՝ յարտաքին գործս, և կինն՝ ի կառավարութիւն տանն զբաղեալ. մխիթարիչ միմեանց և օգնիչ, մինչ զի ոչ յայլ սակրս՝ քան թէ կեալ յօգուտ և ի հաճոյս իրերաց։

Բ. Ոչ է պարտ խնդրել զկին գեղեցիկ՝ այլ բարեբարոյ։ Կին գեղեցիկ տեսլեամբ՝ այլ չարաբարոյ, է օձ գեղեցկախայտ։

Որ խնդրէ առնուլ զյոյժ գեղեցիկն ի կնութիւն, հուսկ ապա կամ խելագարի, կամ անկանի յաղքատութիւն։

Գ. Գեղեցկութիւն կնոջ ոչ է վայելչութիւն կերպարանաց նորա, որ աւուրց յաւուրս եղծանի, այլ համեստութիւն և հնազանդութիւն՝ որ ոչ գիտէ պակասիլ մինչեւ ցվախճան։

Դ. Որ յամենայնի զհետ երթայ կամաց կնոջ իւրոյ՝ առնէ զանձն գերի, և որ միշտ ընդդիմանայ՝ առնէ զինքն թշնամի։ Այպա ամուսնացեալն առաւել պէտս ունի խոհեմութեան քան զամուրին, զի ամուրին զիւր անձն միայն հոգայ բարւոք կառավարել, իսկ ամուսնացեալն՝ զիւրն միութեամբն և զամուսնոյն իւրոյ։

Ոչ է արժան առն ունել զկին իւր որպէս աղախին անարդ, և ոչ որպէս տիկին հրամանահան ինքեան, այլ պահել 'ի չափաւորութեան։

Ե. Անզգամ է կինն՝ եթէ կամաց առն իւրոյ հակառակ զինի. և խելագար է այրն՝ եթէ վիճէ ընդ նմա 'ի հրապարակի։

Զ. Կին՝ եթէ բարի է, պարտ է առաւել եւս խնամել զի բարեգոյն լինիցի. իսկ եթէ չար է, պարտ է համբերել զի մի չարագոյն եւս լինիցի։

Է. Օրաւորդ ոք իմաստուն՝ որ բաւական է կառավարել զմեծ լմն բանակ, տկարանայ կառավարել զմի միայն կին դմնդակ. զի որ արտաքոյ մարդկութեան կենցաղավարի, չէ հնար մարդկային խոհեմութեան կառավարել զնա։

Ը. Անզգամութիւն կնոջ՝ առաւել քան զերկրաշարժ կործանէ զտուն առն իւրոյ, և քան զհողմակած հրդեհ զամենայն ստացուածս նորա 'ի մոխիր լուծանէ։ Որ կամիցի գիտել ինչ զտանջանաց դժոխոց, ուսանիցի յայնմանէ որ ունի զկին անզգամ։

Թ. Մեծ արիութեան պէտս ունի տանիլ անզգամութեան կանանց՝ քան բռնութեան հզօր թշնամեաց։ Վասն զի՝ անզգամ կանանց բարկութիւնն է դաղանական, նախանձն դիւական և սէրն կեղծաւորական։

Ժ. Խավարական մտութիւն է ազգի կանանց առ ոչ ինչ համարիլ զայն բաքի զոր ունին, և ցանկալ

այնմ զոր ոչ ուներն, թէ և տառապումն նորին իցէ ա-
նօգուտ կամ դժուարին։

ԺԱ. Կանայք եթէ գտանեն փոքր մի հանգստա-
կութիւն, աճեցուցանեն զամբարտաւանութիւն
իւրեանց. եթէ զկան դոյզն մի անպատուութիւն,
յարուցանեն զմեծ իմն խռովութիւն, զի զամենայն
ինչ տեսանեն խոշորացուցիւ. ապա մեծ զգուշու-
թիւն պիտի պահել զնոսա 'ի չափաւորութեան։

ԺԲ. Կանայք երեւելի լինել զմիկամակ և անհա-
ւան ընդ գլխաւորութիւն արանց, ասելով ընդ
միոսն՝ թէ ընդէր արք կարգեցան 'ի վերայ մեր հրա-
մանատար, և մեք եղաք հրամանակատար։ Զի որովհ-
հետեւ ոչ կարեն յայտնի ընդդէմ զնեալ, զի գիտեն
լինել այնմ յաստուածային կարգաւորութենէ, սկը-
ռտանին լռելեայն հակառակիլ, զի գանդատեն զքա-
ջուց արանց՝ թէ տիրողաբար հրամայեն մեզ։ Զի
հաւատի իմն երեւի, թէ այս տրտունջ յառաջ
գայ յանհաւանութենէ գլխաւորութեան արանց.
ապա թէ ոչ՝ պարտ էր նոցա յամենայնի հլու և հը-
պատակ կալ ամենայն բարեկարգութեան արանց
իւրեանց։

ԺԳ. Ի աճառէ զանձն 'ի ծառայութիւն անզերծ,
որ գոլով ինքն աղքատ՝ առնու կին ընչաւէտ։ Զթէ
կամիս գիտել՝ թէ ո՞ր գերի իցէ կարի ողորմելի և
դժբաղդ, իմա զայն՝ որ ծառայ եղեալ կնոջ իւրոյ՝
չերեւի լինել այր մարդ։

ԺԴ. Զէ՞ նա այր իսկապէս, որ կարծէ զանձն
ինքն հաստատուն. զի նորա որպէս բարաւք՝ նոյն-
պէս և սիրով են յողդողդուն։

Զին որպէս առաջին է 'ի տիրողս առն իւրոյ՝ մինչ
կենդանի է նա, նոյնպէս առաջին լինի 'ի մոռացողս
մինչ յետ մահուան նորա ամուսնանայ ընդ այլում։

ԺԵ. Ամանկամարդ կին՝ մինչ առաւելքան զվայրկ-

լուչն ՀՀէ և լայ 'ի մեռանիլ առն իւրոյ, կորուսա-
նէ զպատիւ իւր. քանզի բազումք վայելուչ իմն զբ-
պարտութեամբ ասեն զնմանէ՝ թէ լալագին կոծովն
կամի կարծեցուցանել զանձն հաւատարիմ առն իւ-
րում, որպէս զի հաճեսցի ոք առնուլ զնա 'ի կնու-
թիւն։

ԺԶ. Կանայք ոչ այլ իմիք այնպէս ըղձանան՝ որ-
պէս տեսանել զայլս, և տեսանիլ յայլոց. վասն որոյ
եդան օրէնք 'ի վերայ կանանց՝ նստել 'ի տան, զի
մի յայլոց տեսանիցին։

ԺԷ. Այն է վայելուչ արանց՝ թողուլ յաշխարհի
յիշատակ յաւերժական զպատերազմական քա-
ջութիւնս, զգտակար մեծագործութիւնս, զնմաս-
տուն մատենագրութիւնս, և զնորանոր արհեստից
հեղինակութիւնս. իսկ վայելուչն կանանց ազգի՝ է
թողուլ զհամբաւ համեստութեան իւրեանց։

. Գեղեցկութիւն կանանց դառնայ յանարգանս
նոցա, թէ չլցեն ամօթիսած։

ԺԸ. Ինական է արանց լինել սակաւախօս, և կա-
նանց՝ շատախօս. զի այրն 'ի կաւոյ երկրի ստեղծաւ,
և կինն յոսկերէ կողին։ Այսպէս կաւ ընդ կաւոյ
զարկուցեալ՝ մեղմ ինչ շաչիւն լինի լսելի. բայց
ոսկր ընդ ոսկր բախեալ՝ արձակէ գանգիւն ազդող
լսելեաց։

Որ զխորհուրդ իւր յուսկանէ պատմէ կանանց,
փութով գտանէ քարոզեալ 'ի վերայ տանեաց։

ԺԹ. ՅԹէ 'ի շատախօսութեան կանանց ոչ գտա-
նէր բամբասանք, ոչ ոք բարկանայր նոցա, գիտելով
թէ շատախօսութիւնն ընդաբոյս է բարուց նոցա։

Որ ոք կամի լսել զունայնաբանութիւնս, խօսա-
կից լեցի ընդ կանանց։

Ի. Կանայք՝ մինչդեռ ունին զմի հոգի, դժուա-
րաւ նուաճին. ապա յորժամ ունիցին զերկուս (այ-

ինքն յղի իցեն,) ոմ է որ կարասցէ յաղթել նոցա, զի վաղվաղակի կորուսանեն զմին գուցէ և զերկուսն։ Այս խոհեմութեամբ պարտ է կենցաղավարիլ ընդ նոսա, որք իբրեւ անսէթ բրտի 'ի դոյզն բախմանէ փշրին։

Ոչ ինչ են զարմանք՝ եթէ տղայք սովորաբար լինին անխրատ, քանզի 'ի կանանց ծնանին, և 'ի կաթանէ նոցա սնանին։

« Կին ժլատքու�՝ պակէ առն իւրոյ. որպէս որդն՝ վասաք վնասակար է, նոյնպէս կորուսանէ զայր՝ կին չարագործ։ » Առակ. ԺԲ. Յ.

ԳԼՈՒԽ Թ.

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ա. ԵՐԻՏԱՍԱՐԴՔ այնքան կրթեսցեն առ ուսս իմաստից և առաքինեաց, մինչ զի 'ի բաժանիլ ի հեռանալ իւրեանց՝ կարող եղիցին անկոծուստ յուշի ունել զանս նոցա իբրեւ ուսուցիչ բարեխրատս։

Որ ունի զիմաստութիւն և զհաճոյական քաղաքավարութիւն, յոր վայր և երթիցէ, յորմէրսի ճանաչիցուն և անկանիցի, գտանէ զփառս և զհամբաւ բարի։

Երիտասարդ իմաստուն՝ է որպէս ծառ խորարմատ, զոր հողմունք արկածից թէպէտ և շարժեն զնա, այլ ոչ կարեն կործանել։

Բ. Երիտասարդ մեծազգի՝ սովորեալ 'ի մանկութենէ իւրմէ 'ի զերկիւղութիւն և 'ի զերծ վարս, 'ի վայելչանի անկանի 'ի թշուառութիւն, և լինի նպաստակ նախատանաց 'ի մէջ աշխարհի. զի մեծամեծ

թիւնն յառաջ եկեալ 'ի պայծառութենէ տոհմին, չթողու. նմա խոնարհիլ 'ի չափաւորութիւն. և սովորական մեղութիւնն արգելու ստանալ զարի վարս։

գ. Բազմութիւն յաղնութեան երիտասարդաց՝ պատճառաւ հարստութեան իւրեանց ուսանին զբազում մեղութիւնս. և կորուսեալ զհարստութիւնն՝ ոչ կորուսանեն զմեղութիւնն։

դ. Զարմանք են, զի որդիք աղքատաց ջանան ստանալ զարծաթ, զի լինիցին մեծատուն. և որդիք մեծատանց՝ զհետս են վատնել զարծաթ, զի լինիցին աղքատ. և բազումք են այսպիսիք՝ որք կորուսեալ զհայրենի փարթամութիւնն, շրջին աղքատ և ինչ բռնեալ։

ե. Հասակն երիտասարդական դիւրաստահ է յամենայն հաճութիւնս. վասն որոյ և ախորժակ ինչ թէ և երեւեսցի նմա անմեղ, տակաւին պարտ է նմա կասկածիլ, և խորհուրդ հարցանել իմաստնոց և փորձառուաց, և ըստ խրատու նոցա վարել։

զ. Զրժան է մարդոյ ոչ հաւատալ անձին իւրոյ, զի մի զնա ինքն խաբեսցէ. և ոչ մոռանալ զկիր իւր՝ յորոց երբեմն խաբեցաւ, զի մի այլ եւս խաբեսցի 'ի նոցանէ։ Զի զեւոր ոք անծանօթ ճանաչէ՝ հետեւի առաջնորդի. բայց զարմանք են, զի երիտասարդ՝ որ ճանապարհորդէ 'ի հասակ ծերութեան, ոչ հետեւի առաջնորդութեան ծերոց։

է. Զի որ սխալի, բայց այնու ճանաչէ զպակասութիւն իւր, զգաստանայ և օգտի. և է որ սխալի, բայց այնու առաւել կամակորի 'ի կարծիս իւր և վնասի. զի տգիտական սխալմունքն դառնան 'ի յանդուգն խելագարութիւն, և վնասեն չարաչար։ Զուտի ոչ այնքան մեղադրելի է նա՝ զի սխալի, այլ նա՝ որ ոչ կամի ճանաչել զսխալանս իւր և սուղղել. իսկ այս ոչ օգնի կամաւ, վնասի ակամայ։

Ը. Որ չէք նախատեսութիւն ապառնեաց, փոր-ձառութիւն անցելոց, բարեկարգութիւն ներկայից, գահավէժ լինին միտք 'ի գործել զանկարգս։ Այլ որ ճանաչէք զսխալանս իւր և խոստովանի, չէ յան-դիմանութեան արժանի, քանզի նշան է ազնուու-թեան հոգւոյ նորա. և թէ այնու սխալմամբ ուսաւ զգուշանալ յապագայ արկածից, և բարեկարգել զընթացս իւր, քանզի չէք ինչ ծայրագոյն յանցանք որ խոնարհ խոստովանութեամբ չլցէ ներելի. ապա չէ արժան վհատիլ ումեք՝ թէ և անկեալ իցէ 'ի վը-տանգս, այլ անվեհեր սրտիւ ջանալ 'ի գտանել հը-նարս ազատութեան։

Թ. Երիտասարդք՝ որք պատուադիր լինին արգոյ ծերունեաց, զորս փորձառութիւնն բազում իրաց արարեալ է իմաստունս, 'ի ծերութեան իւրեանց գտանեն զպատիւ և զյարգանս իբրեւ փորձառուս և խոհեկանս. զի զոր սերմանէ ոք, զնոյն և հնձէ։

Ժ. Երջանիկ լինէին մարդիկ, եթէ յերիտասար-դական հասակի ունէին զխոհեմութիւն փորձառու ծերոց, և 'ի տիս ծերութեան՝ զզօրութիւն առոյգ երիտասարդի։ Երանի էր եթէ երիտասարդք 'ի փոխ առնուին զխոհեմութիւն 'ի ծերոց, և ծերք զզօրու-թիւն յերիտասարդաց. զի բազում ինչ զգայ ծերն, զոր ոչ զգայր յերիտասարդութեան իւրում. և բա-զում ինչ կարէ երիտասարդն, զոր ոչ կարասցէ առ-նել 'ի ծերութեան։

ԺԱ. Խարեվիճակ է մանուկն, որ ընդ զարգա-նալ և աճել հասակին՝ զարգանայ և առաւելու գիտ-ութեամբ և առաքինութեամբ. այնպիսին և 'ի պակասիլ ծերութեամբ 'ի զօրութենէ մարմնոյ; ոչ պակասի 'ի խոհականութենէ և յառաքինութենէ։

ԺԲ. Երիտասարդութիւնն է գոռոզ ինքնահա-ճութիւն, որ հաւատարմացուցանէ անձին՝ թէ կա-

ըէ առնել զամենայն, և համարձակ միսի յամենայն վտանգս, և անկանի յորոգայթ։ Այս երբեմն Աստուած թոյլ տայ նոցա սխալիլ, որպէս զի ծանիցեն զմարդկային տկարութիւնն և զգաստասցին, և մի եւս 'ի զօրութիւն անձին ապաստան լիցին։

ԺԳ. Խսալանք ծերոց դժուարաւ ուղղին, զի ծանեալ թուի նոցա անսալ խրատուց, նմանեալ հինաւուրց ծառոյ՝ որ 'ի թիւրութենէ ոչ իւիք արհեստիւ ուղղի։ Ծերք՝ թէ և ծանիցեն զպակասութիւնս իւրեանց, ոչ կարեն զգաստանալ. զի վատթար սովորութիւնն եղեալ է նոցա երկրորդ բնութիւն։ Նորահասակ երիտասարդք նմանին մատաղատունկ ծառոյ, և դիւրաւ ուղղին՝ եթէ անսան խրատուց բարեաց։

ԺԴ. Առանդագին երիտասարդք առաւել կարօտ են խրատուց՝ քան դրամոց. զի եթէ խրատեալ լիցեն և բարեկարգ, թէ և չունիցին դրամ, չէ ինչ դժուարին նոցա ստանալ զայն, և 'ի գործ ածել յօգտակար իրողութիւնս։ Իսկ եթէ ունիցին դրամ՝ բայց լիցեն անխրատ, հնար է վատնել զայն 'ի մոլեկան գործս, և մնալ միշտ յաղքատութեան 'ի վնաս անձանց իւրեանց։

Իսկ ծերք՝ որք տառապին յաղքատութեան, առաւել կարօտ են դրամոյ՝ քան խրատուց. քանզի բազմամեայ փորձառութեամբ վարու եւս խրատեալ են նոքին. և ոչ եւս է արժան 'ի կարծիս լինել, թէ դրամք արբանեկեսցեն նոցա յանարժան գործս. այլ յուսալի է առաւել, թէ ձեռնտու լինիցին նոցա յօգտակար իրողութիւնս։ Այս զի ոչ եւս կարեն աշխատիլ և շահիլ զդրամ՝ զի դարմանեսցեն զկեանս, վասն որոյ վշտանան լսել զխրատս, և միսիթարին յառնուլ զդրամս։

ԺԵ. Երիտասարդք առաւել հակամէտ են 'ի շը-

ռայլութիւն՝ քան 'ի ժլատութիւն, զի յուսան թէ յորժամ և կամեսցին, կարեն ստանալ զինչս։ Իսկ ծերք յաւէտ լինին ժլատ՝ քան շռայլ, զի ոչ յուսան թէ կարեն ստանալ զինչս յորժամ կամեսցին. վասն որոյ առած է, թէ 'ի ծերն ամենայն մոլութիւնք ծերանան, բայց ագահութիւնն մանկանայ։

ԺԶ. Մոլութիւնք ծերոց նմանին հնացեալ ախտից, որք կարի դժուարաւ և կամ ոչ բնաւ ապաքինին. իսկ մոլութիւնք երիտասարդաց նմանին նորոգ պատահեալ հիւանդութեանց, որք դոյզն դարմանօք կարեն բժշկիլ։

ԺԷ. Օգտական բաղձանքն յորժամ ստամբակեալ տիրէ կամաց, մթագնի լոյն բանին, և դարափոքքն երեւին նմա ճանապարհ յարդարակ։ Այլ չեն ինչ զարմանք՝ եթէ երիտասարդք վարեալք զպայական ցանկութեամբ՝ գահալիժին յազգի ազգի անկարգութիւնս. զի մթագնեալ է լոյս մտաց նոցա տեսանել զուղիղն և զվայելուչն մարդկութեանս, և ընդ այն գնալ. և խոտորիլ 'ի շաւղաց՝ որք կարապետեն 'ի կորուստ։ Զէ հնար մարդոյ հեշտանալ 'ի մարմնական հաճութիւնս, մինչեւ ոչ վշտացուցէ զհոգին. ապա որ՝ ինդրէ զհեշտութիւն մարմնոյ՝ ինդրէ զվիշտս և զտանջանս հոգւոյն։

ԺԸ. Ընդոյգ հասակն երիտասարդութեան՝ եթէ կից իւր չունիցի զհամեստութիւն, իբրև սեպհական անուամբ 'ի դէպ է կոչել խելագարութիւն. զի արդարեւ իբրեւ խելագար չկարէ ընտրել 'ի մէջ բարւոյ և չարի, և անկանի 'ի վտանգս։

ԺԹ. Որ կենցաղավարի ընդ մոլիս, առ սակաւ սակաւ թուլանայ յառաքինական պնդութենէ, և զի դժուարին է քաջ առաքինւոյն հաստատուն կալ՝ և ոչ գայթակղիլ, ապա դժուարագոյն եւս իցէ երիտասարդական տիոց մնալ անկործան։

Պարտ է փախչիլ յերկրէ յայնմանէ, ուր առաքինութիւն ոչ բնակէ։

Ի. Կերակուր ինչ ազնիւ՝ արկեալ յանօթ աղտեղի, լինի սնմանքուր և նողկալի. երիտասարդ առաքինի ընկերացեալ ընդ վատահամբաւ արանց, լինի և ինքն վատահամբաւ և անգոսնելի։

«Ի՛ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր. այլ՝ ի պահել զբանս քոս։» Սաղմ. ՃԺԸ.

«Երիտասարդ որ՝ ի սրբութեան է՝ ուղիղ են ճանապարհք նորա։» Առակ. Ի. 11.

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Յաստուծոյ է մարդկային ազգի յայտնել ընկերին զիմացուածս մտաց իւրոց, և զկիրս անձին՝ ըղհաճոյս կամ զանհաճոյս. վասն որոյ իւրաքանչիւր ազանց տուեալ եղեն ձայնաւոր նշանք կամ բառք՝ յայտ առնել նոքօք զտրամախոհութիւնս, կամ զներքին բանսն. և միայն հրահանգեալ ազանց պարգեւեցան գրաւոր նշանք կամ գիրք՝ ի կերպաւորել և յերեւեցուցանել զբառս կամ զխօսս։

Այլ քանզի ձայնաւոր բառք կամ խօսք առժամայնք են և ցնդականք, և ոչ ինչ օգտեն առ հեռաւորս և առ ապագայս, վասն որոյ մասնաւոր պարգեւ Աստուծոյ յարգեցան նշանագիրք, որ զբանն մտաց՝ միանգամայն և զբարբառ լեզուի առ հեռաւորս և առ ապագայս հասուցասեն. և զգործս անցելոց և ներկայից յաւերժացուցանեն ազգէ յազգ։

Հրեշտակք ոչ են կարօտ գրոյ, զի չունին պէտս բարբառոյ. այլ զոր միանգամ կամին յայտ առնել տպաւորեն զայն 'ի միտս միմեանց։ Ինքեանք չունին միտս և զբան, վասն որոյ անպիտան է նոցա բարբառ և գիր. զի զոր պէտս ունի ազահպանութիւն բնութեան միոյն՝ ազդ առնել միւսոյն, վարի նշան նաւ անյօդ և անխօս ձայնի։

Այս միայն մարդոյ բանաւորի և քաղաքականի պիտանի եղեւ գիր, վարիլ նոքօք 'ի հոգեւոր և 'ի մարմնաւոր պէտս. զի և աստուածային պատուիրանք գրով դրոշմեցան, և աւետարանական և առաքելական պատգամք գրով աւանդեցան, և ամենայն օրէնսդրութիւնք և կարգք և կառավարութիւնք համարէն տիեզերաց, և դաշինք և սակարկութիւնք և ուռեւտրութիւնք մանաւորաց՝ գրով վճարին։

Այս որ անպիտան համարի ուսանիլ զգիր և ըստ կարդացումն, արհամարհէ զշնորհն Աստուծոյ. զի գիրն ազդեցութեամբ շնորհացն Աստուծոյ պարգեւեալ է մարդկութեանս. և հաւասարի եւս անբանից, զի զերեւակայեալն ոչ կարէ նշանակել գրով. մանաւանդ զի անբանագոյն քան զանբանս գտանի; զի նոցա ոչ է պիտոյ գիր, իսկ սմա պիտոյ է, քայց անգոյնէ և ոչ ուսանի։

Բ. Որ ընթեռնու զգիրս, խօսի ընդ մարդիկ՝ որք 'ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցառաջս իւր անընդհատ յաջորդութեամբ քաղաքավարեցան յաշխարհի. և ըստ 'ի նոցանէ՝ զոր միանգամ առացին կամ արարին յընթացս կենաց. և խրատեալ 'ի բանից և 'ի գործոց նոցա, ուսանի ատել զվնասակարս և սիրել զգոտակարս 'ի պահպանել զանձն. զօրանալ 'ի ձախողակս, և անընկճելի մնալ 'ի տարադէպ պատահարաց. ուղղել զմոլորութիւն զգայական կարողութեանց՝ և գործարանաց իւրոց. բարեկարգել

զկիրս և զբաղձանս և զամենայն շարժմունս հոգւոյն. խոկալ, կամիլ և աշխատիլ 'ի բարին առ 'ի լինել երջանիկ։

Գ. Որ շարադրէ զգիրս, խօսի ընդ մարդիկ՝ որք յաւուրց անտի իւրոց մինչեւ 'ի կատարած աշխարհի հետզհետէ գալոց են յաշխարհ. և ուսուցանէ նոցա զամենայն որք կարեւորք են 'ի լուսաւորութիւն մտաց և յուղղութիւն բարուց, տայ ճանաչել զպարտաւորութիւն և զյարգ մարդկութեանս, պատուասիրել զառաքինութիւն, և ատել զմոլութիւնս, ջանալ և աշխատիլ վասն յատուկ պիտոյից և օգտի իւրեանց առ 'ի լինել երջանիկ։ Այսպա հարկաւոր է ամենայնի գոնէ ընթեռնուլ և իմանալ ըզգիրս, զի ծանիցեն զանձինս թէ մարդիկ են։

Զնք զբաղումն օգտակար՝ քան զզբաղումն գրոց։

Դ. Մի ինչ զարմանար, թէ զիսիդ ոմանք ոչ փափագին ուսման գրոց. զի ահա և անասունք ոչ ըզձանան մարդկային կերակրոց։

Ե. Այթէ բարձցի 'ի մարդկանէ գիտութիւն, ոչ ինչ գտանի զանազանութիւն 'ի մէջ մարդոյ և անասնոյ։ Ցանկալի է լինել աղքատ և իմաստուն՝ քան տգէտ և մեծատուն։

Որ Ճոխանայ ընչիւք, զբարեկամն նուազեցուցանէ, և զթշնամիս առաւելու. և որ Ճոխանայ 'ի մտաստութեամբ, զբարեկամն առաւելու, և զթշնամիս նուազեցուցանէ։

Այս է հարստագոյն՝ որ գիտէ բազում ինչ, և նա աղքատագոյն՝ որ գիտէ և ոչ ինչ։

Զ. Որ ցանկայ անմահութեան, ջանասցէ լինել իշխան մեծագործ, կամ իմաստուն մատենագիր, զի յիշատակ սոցա յետ մահու իւրեանց մնայ անմահ։

Է. Պաղց մարմնոյ շատանայ սակաւ կերակրով. իսկ քաղց մտաց ոչ գիտէ ասել շատ, զի որքան ա-

ուսուցանել ուսանի, այնքան առաւելու քարոզ նորա. որ եթէ ոչ գտանիցէ օգտակար ուսանելի ինչ, դիմէ 'ի վնասակարս, քանզի չունի յապուրդ։

Այս պարտ է անպակաս տալ մտաց զոգեշահ ճարակ 'ի բժշկել զքաղց նորա, զի մի գուցէ ձգեսցի 'ի վնասակարս, և 'ի հոգեւոր կենաց զրկեսցի.

Ը. Փոփոխ կերակուրք գրգռեն զախորժակս առ 'ի ուտել, զի ապրեսցի ըստ մարմնոյ. պէսպէս գիտութիւնք գրգռեն զմիտս առ 'ի զբաղնուլ, զի կեցցէ ըստ հոգւոյ. զի եթէ միտք ուրուք յապրասցի միոմն և տաղտկասցի, յայլ ինչ գիտութիւնս պաբապեսցի և օգտիցի.

Թ. Ոչ է իմաստուն որ գիտէ որչափ պիտոյն է, այլ որ գիտէ՝ որչափ կարելի է գիտել.

Ժ. Յատուկ է իմաստնոց գիտել բազում՝ և խօսիլ սակաւ, որպէս յատուկ է տգիտաց խօսիլ բազում՝ և գիտել սակաւ, կամ ոչ ինչ.

ԺԱ. Լաւ է կուրութիւն աչաց քան կուրութիւն մտաց. կոյրն աչօք ոչ տեսանէ զլոյս արեւու, կոյրն մտօք ոչ ճանաչէ զանձն իւր. Քանզի գիտել արժան է ամենայն ումեք, թէ յինչ վախճան կարգեալ է կեանք մարդոյ. ապա եթէ չգիտիցէ՝ և չկամիցի գիտել, իբրեւ 'ի խաւարի մոլորեալ շրջի, և ոչ եւս խնդրէ ուղեցոյց առաջնորդել ինքեան, նմանեալ նաւու՝ որ 'ի լայնատարած ծովու իցէ, և չունիցի ղեկավար ճարտար՝ հմուտ ընթացիցս աստեղաց և ծանոթ կղզեաց և եղերաց. և զինչ այլ ինչ առաջի կայցէ նմա, բայց եթէ նաւաբեկութիւն և կորուստ.

ԺԲ. Ինտրելի է տրտմիլ ընդ իմաստնոյ՝ քան զբարձանալ ընդ անմտաց. զի յիմաստնոյ կարէ գտանել զբ զմխիթարութիւն սրտի, իսկ յանմտաց միայն զտանջանս մտաց։

ԺԳ. Արջանիկ կեանք գտանի միայն յիմաստունս.

զի ոչ էտն եթէ ապիկար ոք իցէ, գուցէ նուաճի ընդ ձեռամբ այլոց, եթէ աղնուական՝ գուցէ ամ բարտաւանեսցի, եթէ փարթամ՝ գուցէ մոլեսցի 'ի հեշտութիւնս մարմնական, եթէ աղքատ՝ գուցէ ագահիցէ ընչից օտարաց, եթէ ուժեղակ՝ գուցէ լինիցի յանդուգն. զի որովհետեւ խաւարաւ ոգիտութեան մթագնեալ է լոյս բանին, ոչ կարէ գտանել զարքունական զկուռ պողոտայն, այլ խոտորի յաջ և կամ յահեակ. իսկ իմաստունն՝ վասն զի ունի առաջնորդ ինքեան զբանն և նպատակ զառաքինութիւն, գնայ անխոտոր և անսասան։

ԺԴ. Ոչ նոյն վիճակ է իմաստնոյ և տգիտի, զի իմաստունք ոք՝ թէ և սխալեսցի 'ի մեծամեծս, կարէ տակաւին զինքն ուղղել. իսկ տգէտն թէ և վրիպեսցի 'ի փոքունս մնայ անուղղելի եթէ ոչ ոք յիմաստնոց ձեռնտու լինիցի նմա, զի ոչ գիտէ թէ զիարդ արժան է յառնել 'ի գլորմանէ։

ԺԵ. Զարմանան տգէտք ընդ իմաստունս, եթէ զինարդ կարեն զգործ մեծ և աքանչելի 'ի գլուխ ածել, զի չեն բաւական հասու լինել խորախորհուրդ դիտողութեան մտաց նոցա՝ առ 'ի գտանել զպատճառս, յորոց գրեթէ հարկաւ յաւաջ գայ այնպիսի գործ։

Ոչ զարմանան իմաստունք ընդ անմիտ պործս տրգիտաց, զի խելամուտ են և գիտեն՝ թէ առանց նախատեսութեան պատճառացն զորմէ կարէր գործն, վայվաղակի ձեռնամուխ եղեն առնել։

ԺԶ. Ընդ վայր տագնապին մարդիկ յածեալ ընդ ծով և ընդ ցամաք 'ի ստանալ զոսկի. զի թէ ստասցին զիմաստութիւն և զառաքինութիւն՝ որ առ գուրս կայ իւրաքանչիւրոց, կամ դիւրաւ ստանային զոսկին, կամ անպիտան լինէր նոցա ոսկին, և ոչ աշխատէին ընդունայն։

ԺԷ. Իմաստունք եթէ լինէին բազում և տգէտք սակաւ, վաղու եւս հալածական լինէին տգէտք. բայց այժմ իմաստունք հալածին 'ի տգիտաց, զի սակաւաթիւ են յոյժ։

ԺԸ. Անդրդոյն պիտոյ է մարդ՝ զի արասցէ զմարդն մարդ. մարդն եթէ ոչ լինիցի մարդ, ոչ առնէ զմարդն մարդ։

ԺԹ. Յաստուկ է առաքինութեան անկորուստ ունել զվարձս իւր. զի իմաստուն ոք և առաքինի՝ թէ և 'ի ծառայութիւն վարեսցի, տակաւին փայլի յերեսս նորա շնորհք բարեբաւութեան, և գտանէ զսիրելութիւն և զպատիւ իբրեւ վարձք առաքինութեան և իմաստութեան իւրոյ, և լինի երջանիկ։

Ի. Դաղտը և ողոք բանքն իմաստնոց պատուել յաղթեն թշնամեաց, քան զահագին ռումբս պատերազմողաց։

ԻԱ. Լաւ է սիրելի լինել ամենայն իմաստնոց, քան թէ բազում տգիտաց։

ԻԲ. Անի հպարտասցի գիտունն ընդ պայծառութիւն մտաց իւրոց, զի կայ տակաւին 'ի դիւրատահ մարմնի։

ԻԳ. Անշահարհս է լնել աղտեղի, 'ի մէջ նորա մուտ և ել. մարմինդ նաւ, խելքդ թիւ, վարեա զթիդ՝ ելանել։

ԻԴ. Խոսկան մարդիկ եթէ արեգակն փոխեալ ըստ բնութիւն իւր՝ սփռեսցէ զմէգ մթութեան, և ի մաստունն՝ թէ փգիտացեալ զանձնէ արասցէ զգործ մոլեկան։ Լաւ է ուսանիլ բարիոք գործել՝ քան բարիոք խօսել։

ԻԵ. Անվ ինչ որ ոչ մեղադիր լինիցի երկրի, զի ժուժայ կրել զիմաստուն ոք, որոյ բանքն իցեն բարի և գործքն յոռի. զի ճոռոմաբանէ զառաքինութենէ 'ի զարմացումն լսողաց, և գործէ զմոլութիւն

նքա 'ի գայթակղութիւն հասարակաց։ Ցորեան յո-
րոմն փոխարկի, եթէ իմաստուն ոք լինիցի մոլի։

ԻԶ. Վախճան գիտութեան է ուղղութիւն վա-
րուց, ապա եթէ գիտուն ոք չունիցի զվարս բարիս
խոտորեալ է 'ի վախճանէ, և չէ իսկապէս գիտուն,
զի վախճանն է պսակիչ և տեսակաւորիչ գործոյն։

ԻԷ. Ոչ սակաւ ամօթ է իմաստնոյն, եթէ անգը-
րագէտ ոք առաւել քան զնա լիցի բարեմտոյն։ Զէ
նա ճշմարիտ իմաստուն՝ որ ուսեալ է զբազում գի-
տութիւնս, այլ որ ուսեալ է եւս գործել զբարիս։

Զարմանք են՝ զի ոմանք 'ի գիտնոց 'ի խօսիլ և 'ի
շարադրել զգիրս՝ արթուն մտօք շուրջ հային, զի
մի սխալեսցին, այլ 'ի գործս բարուց ոչ ջանան ըզ-
գրաշանալ, զի մի վրիպեսցին։ Զինչ օգուտ է մար-
դոյ գիտել զբազում, և ոչ գիտել զիւր ինքն։

ԻԸ. Իմաստունն չարաչար վարուք իւրովք գայ-
թակղեցուցանէ զբազում, քան թէ գռեհիկ ոք
մոլի. զի գռեհիկն յաչս ամենեցուն է անարգ, և
ոչ ոք յանձն առնու նմանող լինիլ նմա, իսկ իմաս-
տունն է որպէս հայելի, և նպատակ հասարակաց,
որում բազումք լինին նմանող, և պէտք երթան մո-
լորութեան նորա։

ԻԹ. Բազումք զբազում գրեանս շարադրեցին, և
զուսանողն արարին այն նրբամիտ և գիտուն, այլ
ոչ բարի և առաքինի. զի ոչ յայն սակս աշխատեցան
'ի գրել զգիրս՝ զի ընթերցողք նոցա ուսանիցին գոր-
ծել զբարիս և լինիցին բարի, այլ զգիտութիւնս
իւրեանց միայն յայտնել ջանացին փքացեալ մտօք։

Ապաքէն պարտ է ուսանիլ զգիրս իմաստասիրա-
կանս, ոչ յայն սակս՝ զի համբաւեսցի գիտուն մի-
այն, այլ մանաւանդ զի լինիցի բարի։ Քանզի մարդ
գիտուն և առաքինի՝ է իբրեւ մաքուր ոսկի՝ ազնիւ
ակամբ ընդելուզեալ և զարդարեալ. իսկ եթէ զերբ

կոսեան միանգամայն ոչ կարասցէ 'ի ձեռս՝ բերել, ընտրելի է լինել բարի քան գիտուն։

Լ. Այս է ճշմարիտ գիտուն՝ որ զօգուտն իւրաքանչիւրոց ուսուցանէ. իսկ նա որ գիտէ, բայց խնայէ ուսուցանել որոց խնդրեն 'ի նմանէ, ոչ միայն կորուսանէ զոր գիտէ, այլ և ընդ անձին հակառակի, և բոլոր մարդկան թշնամի լինի. զի ոչ ինքն վայելէ զբարին զոր ունի, և ոչ այլոց մատակարարէ. զայնպիսին արժան է ընդ խելագարս շղթայել իբրեւ անգէտ անձին և հասարակաց օգտի։

ԼԱ. Ոչ ոք համարի զանձն դժբաղդ և թշուառ՝ պակասութեամբ անծանօթ և անհաս բարեաց, կամ զոր կարծէ ունել, բայց եթէ նա՝ որ ճանաչէր զբարեմասնութիւն ինչ կարելի, այլ ոչ ջանայ 'ի ձեռս բերել, և կամ ունէր՝ և անհոգութեամբ կորոյս։

Վասն որոյ ոգէտք՝ որք անհասանելի վարկանին զառաքինութիւն և զշնորհս զորս կարէին ստանալ, և մոլեք՝ որք ոչ համարին զանձինս զրկեալ 'ի հոգեւոր բարեաց զոր ունէին յառաջագոյն, բայց կորուսին, են արդարեւ դժբաղդ և թշուառ։ Որոց եթէ հաստատեալէր 'ի միտս՝ թէ չէ անհնարին գործել զառաքինութիւն և ստանալ զշնորհս, կամ թէ չար է կորուսանել զբարեմասնութիւն ինչ հոգեւոր քան զամենայն բարիս կենցաղոյս, յիրաւի ցանկային մանհու չափ վիշտս աշխատանաց յանձն առնուլ առ 'ի ստանալ զնոսա, քան թէ առանց նոցա կեալ օր մի։ Որոյ համար զարթուցանել զբաղձանս ոգիտաց 'ի սէր առաքինութեան և շնորհաց, նախածանաձիս արասցէ զնոսա առաքինութեան, և կարելի գոլ ցուցցէ, և զգացուսցէ մոլեաց զյարդ բարւոյն՝ յորմէ զրկեցան, որպէս զի ինքնին շարժեսցի ախորժակ նոցին՝ առ 'ի ստանալ զառաքինութիւն և զշնորհս, և զկորուսեալ բարին անդրէն 'ի ձեռս բերել։

ԼԹ. Աստուած զոր ինչ յայտնեաց, և որքան յայտնեաց, միայն զայնոսիկ պարտին գիտել մարդիկ. իսկ զոր ինչ կամեցաւ ծածկել, ոչ է պարտ այնոցիկ լինել խուզարկու։ Գիտութիւն գաղտնեացն Աստուծոյ ոչ մնայ անպատիժ, զի բազում ինչ ծածկէ Աստուած վասն տկարութեան մարդկան, և վասն անսահման բարութեան իւրոյ և իմաստութեան։ Օ՛ի այն է մեզ օգտակար 'ի գիտել, որ ունի կապ խուճն զանձն իշխան կամաց մերոց, այսինքն է՝ խոկալ զբարին և առնել։ Իսկ որ ոչ կախին զմէնջ, զգիտութիւն նոցա պահեաց Աստուած ինքեան միայնոյ. և ոչ տակաւ շահ է մեզ չգիտել զնոսա։

ԼԳ. Կզբունք մարդկային գործոց՝ են զգայութիւնն, իմացականութիւնն, կամքն, կիրքն. եթէ իմացականութիւնն չիցէ լուսով գիտութեան պայծառացեալ, թիւրէ զնա զգայութիւնն զհետ կրելոց իւրոց, և նա զկամս՝ որ է գործադիր և հուպ պատճառ գործողութեան։ Իսկ թիւր կամաց ներգործութիւնն օտարացուցեալ զմարդն 'ի մարդկօրէն կենցաղավարութենէ՝ արկանէ յանբանից կարգ. վասն զի մարդն որոշի յանբանից՝ միայն իմացականին լուսով և ուղղութեամբ կամաց. ապա 'ի մթագնիլ բանին և 'ի թիւրիլ կամաց, չիք խտիր 'ի մէջ մարդոյ և անասնոյ։

Յայտ է փորձն 'ի խելագարս և 'ի տղայս, որոց միոյն իմացականութիւնն խանգարեալ է, և միւսոյն դեռ ոչ հասունակեալ, որք յորդորմամբ զգայութեան առնեն զոր ինչ առնեն. վասն որոյ օրէնքն ոչ դատին զնոսա արժանի պատժոց և վարձուց, զի գործք նոցա ոչ է գործ մարդկային՝ այլ գործ մարդոյ, վասն զի ոչ առնեն իմացական ճանաչմամբ և ազատ կամաք, այլ կոյրզկուրայն և իբր բնական ազդմամբ։

Արեմն պարտ է կարեւոր գիտութեամբ լուսա-

գործել զաչս մտաց՝ զի մի իբրեւ զաչացու մուրացիկ ընդ ձեռն զգայու թեան յածեալ շրջեսցի վասն փրշրանաց հացի՝ այսինքն վասն մարմնական հեշտութեան՝ ի դրունս զգայական կրից, և նքթիցի խսպառ։ Վասն որոյ որ զուրկ է ի լուսոյ գիտութեան, մշոք կոյր է, և քաղցեալ շրջի, և կեայ իբրեւ անքան։

ԼԴ. Տեսական գիտութիւնն առնէ զմարդս իմաստուն ի խօսս, և արհեստականն՝ բազմահնար ի ձեռագործս, մին պատուղն զբնականաւք կամ զգերբնականաւք, մինչեւ ի զգալեաց աստի վերանալ ի ծանօթութիւն իմանալեաց. և միւսն պատուղն զարհեստականաւք կամ վնիւթաւորաւք, մինչեւ ի նմանութիւն բնական իրաց յարմարել զարհեստակերտեալն իւր։

Այլ ոչ տեսականն և ոչ արհեստականն առնեն զմարդն բարի, զի մարթ է լինել բազմաց քաջավարժ ի տեսական և յարհեստական գիտութիւնս, բայց մոլի ի վարս. իսկ բարոյական գիտութիւնն առնէ զմարդն բարի։ Զի այլ գիտութիւնք զմիտս կատարելագործեն ի կարգի առ ճշմարիտն, և սա զկամս ուղղէ ի կարգի առ բարին. և մարդիկ վարձատրին յԱստուծոյ կամ պատժին ի ներգործութենէ կամաց՝ և ոչ ի ներգործութենէ մտաց։ Այսպէս պարտ է սեանիլ զբարոյական գիտութիւնս առ ի ուղղել զկամս ի բարին։

---

* Իմաստութիւն օգնեսցէ իմաստնոյն քան զտասն իշխան որ իցեն ի քաղաքի։» ԺՈՂ. Է. 29։

“Զի որոց զիմաստութեամբ զանց արարեալ ոչ միայն վնասեցան առ ի չճանաչելոյ զբարիս, այլ և զանմտութեան յիշատակ թողին յաշխարհի։» Իմաստ. Ժ. 6։

“Սուզանէ զվնաս իւր բանգէտն յատենի։» Առակ. ԻԶ. 26։

“Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց։» Առակ. ԺԷ. 2։

“Որ ստանայ զհանճար՝ սիրէ զանձն. և որ պահէ զիմաստութիւն՝ պահէ զբարիս։» Առակ. ԺԹ. 8։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԻՃԱԿ ԽՆԴԱՌՈՑ

Ա. Կրկին է վիճակ մարդկան, մին՝ աստուծոյ, և մեւսն՝ հանդերձելոց. և ի նոսա զոր ինչ ունին վայելել բարիս, են պարգեւ բարերարութեանն Աստուծոյ։ Զի որպէս ինքն Աստուած ստեղծ զմարդն, նոյնպէս ինքն զամենայն պիտոյս նորա յառատութենէ իւրմէ չափով, կշռով և կարգաւ շնորհեաց և շնորհէ օր ըստ օրէ յօգուտ իւրաքանչիւրոց. զի որ ոսայ զգոլ, ոսայ և զհետեւակն գոլոյ։

Եւ զերկիրս զայս իբրեւ զսեղան բարելից զարդարեաց ի վայելս մարդկան, և զընդհանուր բարիսն զոլոյս, զօդ և զջուր անձրեւոյ, որք են կարի հարկաւորք և մեծ, եւ ամենեցուն միապէս։

Իսկ զմասնաւոր բարիսն ինքեան միայնոյ յաւուցեալ ասել ում կամի, որքան կամի, յորժամ կամի, զիարդ և կամի. թէ զբնական բարիսն, այսինքն՝ ըստ մարմնական կենաց տեւողութիւն, զառողջութիւն, զուշիմութիւն, զուժեղութիւն, և այլն. և թէ զբարոյական բարիսն, այսինքն՝ զնշխանութիւն, մեծութիւն, հարստութիւն, և այլն։ Այսն զի այսոքիկ ոչ ըստ կամաց մարդկան, այլ ըստ կարգադրութեանն Աստուծոյ պարգեւին, ըստ այնմ. "Տիրէ բարձրեալն թագաւորութեան մարդկան, և ում կամի տացէ զնա։" Դան. Դ. 29։

Զանազի բարիք և վայելչութիւնք աշխարհի՝ որով հետեւ են ներկայ, զգալի և չափաւոր, եթէ ոք կամիցի ունել մի ինչ յայնցանէ, հարկ է այնմ յայլմէ ի բաց բառնիլ. և կամ զոր մի ոք ունի, այլ ոք նոյն թուով զայն ոչ ունի, և ի ցանկալ բազմաց ունիլ

զմի և զնոյն իր, անդէնք ծնանին վէճք և խռովութիւնք, զի ստիպին խլել և յափշտակել 'ի միմեանց զոր կամին ունել։

Վասն որոյ եթէ Աստուած Թողցոյր 'ի կամս մարդոյ ունիլ զբարին աշխարհի՝ որպէս կամին, որչափ կամին, և ուր կամին, աշխարհս լինէր առպարեզ աւազակաց և յափշտակողաց, և ամենեքեան լինէին զրկող և անիրաւ։ Զի կարողքն յաղթէին տկարաց, և տկարքն միաբանեալ՝ յառնէին ընդդէմ կարողաց, մինչեւ ջնջել զմիմեանս յերկրէ. զի զգալի առաւելկայն 'ի լինելն ներկայ, շարժէ զզգայական բաղձանս իւրաքանչիւրոց 'ի սէր և 'ի ստացումն իւր։

Իսկ զյաւիտենական և զերկնային բարին հանդերձեալ կենաց, որք են իմանալի և անչափ, յանձնեաց Աստուած 'ի կամս մարդոյ, զի ով որք կամի և խնդրէ, նմա տացէ։ Որպէս 'ի խնդրել որդւոցն Զեբեդեայ՝ Յակոբոս և Յովհաննու Նստիլ յաջմէ և յահեկէ Քրիստոսի 'ի փառսն երկնից արքայութեան, ասաց Քրիստոս. "Ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ իցէ։" Մատ. Ի. 40։ Քանզի փառքն այն ամենեցուն է պատրաստեալ, այլ Աստուած կամի՝ թէ ամենեքեան 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն և խնդրեսցեն. բայց քանզի ոչ գան և խնդրեն ամենեքին, վասն որոյ այնոցիկ միայն տուեալ լինի՝ որք խնդրեն զնա. իսկ խնդրեցին զնա որոյ՝ Զեբեդեայ, և առին 'ի Տեառնէ։

Բայց Աստուած յիւրմէ կողմանէ նախ ձրի տայ և պարգեւէ իւրաքանչիւրոց բաւական շնորհս, որով զօրացեալ կարասցեն արժանանալ առաւելագունի շնորհաց՝ մինչեւ հասանիլ առ փառս, ըստ այնմ. "Զողորմութիւն և զճշմարտութիւն սիրէ Տէր Աստուած, զշնորհս և զփառս տացէ։" Սաղմ. Զգ. 12։ "Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս

և արբցէ։» Յովհ. Է. 57։ «Լրթէ կամիս կատարեալ լինել, երթ զոր ինչ ունիս վաճառեա, և տուր աղքատաց։» Մատթ. Ժ. 21։

Որովհետեւ փառքն արքայութեան այժմ ոչ անկանին ընդ զգայութեամբ մարդոյ՝ զի շարժեսցեն զաղճանս նորա 'ի խնդրել զնա, այլ միայն ըմբռնին զօրութեամբ հաւատոյ, և տեսանին հոգւոյ աչքամբ. ապա ով որ ըստ պնդութեան հաւատոյ և սիրոյ խնդրէ զնա, գտանէ և առնու։

Զանազի եթէ իբրեւ զբարիս աշխարհիս ինքն Աստուած բաշխէր զյաւիտենական բարիսն՝ որոց ոչ խնդրեն 'ի նմանէ, հետեւէր ամենեցուն միապէս տալ. այլ յայնժամ ոչ զատեալ որոշէին 'ի միմեանց խնդրողք և ոչ խնդրողք, չարք և բարիք, հաւատացեալք և անհաւատք, մանաւանդ 'ի դերեւս եղանէին արդիւնք շնորհաց՝ հաւատոց և առաքինութեանց։

Ուրեմն անարդեալքն ոչ կարեն մեղադրել զԱստուած՝ թէ անարդեցան. քանզի Աստուած ոչ է պատճառ անարգութեան նոցա՝ այլ ինքեանք, զի ոչ կամեցան և ոչ խնդրեցին ըստ արժանւոյն, զի գրեալ է. «Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք։» Մատթ. Է. 7։

Ուստի Աստուած ինքնին իբր ձեռամբ առաջնորդեաց մարդկան ազգի ազգի ճանապարհաւ առ երկնային բարիսն՝ բնական և գրական օրինօք, տեսլեամբ, սքանչելեօք, օրինակօք և խրատուք նահապետաց և մարգարէից, և 'ի վախճանի Քրիստոսիւ տերամբ մերով, զի մի՛ ասասցեն՝ թէ ոչ գիտէաք։

Այլ եւս՝ եդ 'ի բնութիւնս մարդոյ փափագ անմահութեան՝ մեծութեան և հանգստեան, որ յաստի կեանս ոչ կարէ լնուլ. զի ամենայն ոք ցանկայ կեալ, մեծանալ 'ի փառս, և վայելել 'ի հանգիստ

անվախճան ժամանակաւ։ Ահա Աստուած զնոցա խոստացաւ տալ, զի պատրաստեալ է մարդկան յերկինս անմահ կենդանութիւն, անխոնարհելի մեծութիւն և անտրտում հանգիստ, միայն թէ կամեսցին և խնդրեսցեն զնա ըստ արժանւոյն՝ որպէս պարտ է խնդրել, ըստ այնմ. «Որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ։» Մատթ. Է. 8։

Արդ՝ եթէ ոք 'ի վիճակ աստուածս վարեսցէ զկեանս ըստ կամացն Աստուծոյ, գոհանալով զնմանէ յաւմենայնի, և շատասցի այնու զոր Աստուած կարգեաց չափեաց և ետ իւրաքանչիւրոցն յոգւոյն նոցա, և յերկս առաքինութեան աշխատեալ՝ խնդրեսցէ զերկնից արքայութիւնն, գոցէ զնա անեղկաց 'ի հանգերձեալ վիճակի։

Դարձեալ՝ եթէ Աստուած միօրինակ տայր ամենեցուն զբաշխին աշխարհի յաստի կեանս, եղծանէր կարգ և կառավարութիւն տիեզերաց։ Այլ եթէ զաշ մենայն մարդիկ 'ի մուտ վիճակի և կարգի անփոփոխ պահէր միշտ, կարծէին մարդիկ թէ 'ի բնութենէ ունին զայն՝ իբրեւ զսերսկական ինչ. և յայնժամ փարթամք և կարողք հպարտացեալ յանդգնէին, աղքատք և տկարք յուսահատեալ լքանէին։ Այլ թէ զմնդիրս ամենեցուն կատարէր, բազումք զբազում անարժան խնդրուածս հայցէին յԱստուծոյ՝ 'ի վնաս անձանց և ընկերաց։

Այլ եթէ ոչ երբէք տայր թոյլ ումեք հասանիլ խնդրոց և բաղձանաց իւրոց, խափանէր զաղատութիւն կամաց մարդոց։

Որեմն մեծի իմաստութեան և բարերարութեանն Աստուծոյ նշան է այս, զի կամաց իւրոց սերսկականաց զբարին այսր կենցաղոյս՝ տալ որոց կամի, որպէս զի մարդիկ խաղաղ կենաց քաղաքավարեսցին ընդ միմեանս։ Իսկ զերկնային վիճակի բարի

ոչն՝ 'ի կամս մարդոյ սեպհականեաց, զի ոչք խընդ-
բեսցեն զնա, նոցա տացէ։

Որովհետեւ յերկինս միաբանին կամք մարդոյ ընդ
կամացն Աստուծոյ, և ծայրագոյն բարին յոր անդ
վայելեն՝ ոչ պակասի 'ի բնաւից, զի է անհուն, և
միապէս յաղեցուցանէ և հանգուցանէ զկիզ և ըզ-
փոփաք ամենեցուն։ Զի զոր ունի մի ոք, ունի զայն
և այլ ոք. և յունիլ միոյն՝ ոչ բառնի 'ի միւսոյն, և
ամենայն երանեալք անթերի վայելեն յայն բարին,
մինչեւ ոչ ցանկալ և կարօտիլ այլոյ իրի, զի է պա-
տառութիւն ամենայն բարեաց. վասն որոյ անդ ոչ
գոյ նախանձ, ոչ ատելութիւն, ոչ զրկողութիւն,
և ոչ յափշտակութիւն։

Ռ. Զինչ քան զայս աղետալի վիճակ, եթէ ոք
յօրէ ծննդեան մինչեւ ցօր մահուն իսկ 'ի ձեռս
խարդախ մնուցչի, և ահա այս իսկ է վիճակ ամենայն
մարդոյ։ Զի ծնանի մարդ մանուկ տխմար, և վաղ-
վաղակի գիրկս արկանէ մնուցանել զնա պատրուակ-
կան այս աշխարհ. որոյ աչք են սիրանշմար և միտ-
քն չարահնար. շրթունք նորա անուշակ իբրեւ
քաղցրաւենի, և բանք նորա դառն քան զլեղի. կեր-
պարանք նորա 'ի նմանութիւն սիրելւոյ, բայց սիրտ
նորա իբրեւ մահաբեր թշնամւոյ. ատամունք նորա
ապառականք, իսկ խոցուածքն անբժշկականք. ձեռք
նորա նակելի, բայց ապտակն երկաթի։

Այն ինչ ծայրիւ մատին տայ ումեք զճաշակ
քաղցրութեան, իսկոյն ընու զկոկորդ նորա լեղեաւ
դառնութեան, զմանս վտանգէ խելութեամբ 'ի
ոչխ մանկութեան, զոմանս հիւանդութեամբ՝ 'ի
ծաղկեալ երիտասարդութեան, զոմանս խելագարու-
թեամբ՝ 'ի հասակի կատարելութեան, զոմանս ալ-
քատութեամբ՝ 'ի տկար ալիս ծերութեան, և զայլս
ոմանս տառապեցուցանէ 'ի դժնդակ ծառայութեան

զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Բայց առաւել չար այն է, զի ամենեքին փորձիւ գիտեն զդաւաճառութիւն նորա, այլ տակաւին ոչ զգաստանան, մանաւանդ զի մատնիչ եւս լինին անձանց իւրեանց 'ի կորուստ՝ վասն սիրոյ նորա։

Գ. Զիմար է՝ որ խաբի յանցաւոր բարեաց. զի կեղծուպատիր այս աշխարհ զթիւնաւոր ժանկս կերպարանէ իբրեւ. զոսկի, զորտնական կիրս իբրեւ ըստ հեշտալի, զվնասակար գործս իբրեւ օգտակար, և զորս հաւատան և խաբին՝ զկէ 'ի հոգեւոր բարեաց։ Ապա պարտ է տչալրջութեամբ քաջալերիլ. զի որք ննջեն անհոգ, զարթնուն արհաւրօք։

Դ. Զանի՞ անմտութիւն է այս, զի մարդիկ ծնանին յաշխարհի, բնակին յաշխարհի, սիրեն զաշխարհ, միշտ կամին մնալ 'ի յաշխարհ, և ոչ խելամուտ լինին բնութեան և բարուց աշխարհի, զոր եթէ գիտէին՝ համբերութեամբ տանէին վտանգաւոր արկածից աշխարհի և ոչ տրտնջային։ Զի զի՞նչ այլ ինչ յուսալի է յաշխարհէ, բայց եթէ նեղութիւն և վիշտ, զի զայն տայ՝ զոր ունի. իսկ ունի նա զնեղութիւն և զվիշտս, ապա զայնոսիկ ընդունելոց են յաշխարհէ որդիքն աշխարհի։

Ե. Անարդիկ լալագին աղաղակաւ մոռանեն յաշխարհ, բայց լուռ և անձայն ելանեն յաշխարհէ. իբր զի յօրէ յորմէ մտին 'ի յաշխարհ, զփորձ առին ցաւագին կրից նորա, և 'ի մի բարբառ ամենեքին լացին. այլ յելանել իւրեանց յաշխարհէ, իբրեւ թէ փոխուցեալ զերծանին 'ի տառապանաց նորա, վասն որոյ լուռ լինին, և ոչ ճիկ հանեն, որպէս տուվորութիւն է փախուցելոց։ Իսկ բնակիչք աշխարհի տեսեալ զփախուստ նոցա՝ գոռան, գոչեն, աղաղակ բառնան զի արգելցեն, բայց նոքա որք զերծուցին զօձիս իւրեանց 'ի ձեռաց աշխարհի, ոչ երբէք դառ-

նան յետս ըմբռնիլ 'ի նմանէ, այլ երթան անդարձ՝ ընդ որ սառաջնորդեն արդիւնք գործոց իւրեանց։

Զ. Որ գանգատի զաշխարհէ, կամ է խելագար, կամ նորոգ զդաստացեալ 'ի խելագարութենէ. զի իւրաքանչիւրոք յիւրոց կրից առաւել վնասի՝ քան թէ յաշխարհէ։ Եւ զինչ իցէ աշխարհ, բայց եթէ բուսանդակութիւն զգալի գոյութեանց որ յերկինս և որ յերկրի. և ահա այս ամենայն արարածք Աստուծոյ են բարի, և չիք ինչ 'ի նոսա խոտան։

Զի սկզբնատարերքս՝ հող և ջուր և օդ և հուր, բաղադրութեամբ ընդ միմեանս և յատուկ զօրութեամբ՝ որ հարկաւ յառաջ գայ 'ի բաղադրութենէ իւրեանց, տարբացուցանեն զկազմուածս մարդոյ, և մարմինն բանական հոգւով շարժի 'ի գործ։ Աստեղք արքանեկեն 'ի լուսաւորութիւն տրեալ ընչեան և գիշերոյ։ Երկիր ծառայէ 'ի սնունդ և յաճուն կենդանեաց և բուսոց՝ 'ի դարման մարդկան։ Գազանք և սողունք նպաստեն 'ի բժշկութիւն մարմնոյ, և յայլ պէտս։ Այսպէս զոր ուրուք գանգատիցէ մարդ, ոչ սանիկ ամենեքին օգտակար են և պիտանի, ուրեմն վնասի մարդ 'ի մոլար դատողութենէ իւրմէ, և յանկարգ բաղձանաց։

Որպէս բարի է, մինչդեռ կայ յընդերս երկրի, բայց ագահութիւնն եգիտ զնա գործիք տանջանաց։ Գինին անմեղ է ցորչափ կայ 'ի կարասի, սակայն արբեցութիւնն արար զնա պատճառ խելագարութեան։ Կերակուր 'ի սնունդ մարդկան տուաւ, իսկ որկորստութիւնն դարձոյց զնա 'ի պէտս զեղխութեան։ Հանդերձ 'ի ծածկոյթ մարմնոյ սահմանեցաւ, այլ փափկութիւնն էառ զնա 'ի նիւթ պըճնութեան։ Տուն վասն ընկերութեան կազմեցաւ, բայց սմբարտաւանութիւնն ընդարձակեաց զնա յաճուն մնափառութեան։ Ցանկութիւնն 'ի պահպան

նութիւն տեսակի բնաւորեցաւ, և անբաւականութեան փոխաբերեաց զնա յանկարգ բաղձանս շնութեան։

Տեսեր ո՞ մարդ, դու ես որ զբարի և զօգտակար պարգեւան Աստուծոյ դարձուցեր 'ի չարիս՝ 'ի վնաս անձին քո. դու ես մասն աշխարհի և՝ կոչիս փոքր աշխարհ, բայց անկարգութեամբդ լինիս մեծ չար աշխարհի։ Ի զուր գանգատիս զաշխարհէ, զի դու ես որ տանջես զքեզ իբրեւ զթշնամի. դուցէ առաւել եւս քան զթշնամի, զի օտար թշնամին ոչ այնչափ կարէ չարչարել զքեզ, որչափ դու չարչարես. հա՛պա զգաստացիր 'ի կամաւորութենէդ, և մի՛ այսուհետեւ բամբասեր զանմեղ արարածս Աստուծոյ, այլ միայն զքեզ։

Ե. Անմիտն՝ զչարիսն զոր հարկ էր կրել պատճառաւ անկարգութեան կրից իւրոց, արկանէ 'ի վերայ երկնից, և բողոքէ զնմանէ. և ոչ յայն հայի, թէ որ անկանի 'ի հուր՝ այրի, և որ թարթափի 'ի փուշ՝ խոցոտի. ուստի և ամենայն որ անկարգ ունի զկիրս՝ գործէ զմոլութիւնս, և որ գործէ զմոլութիւնս՝ 'ի հարկէ վնասի։

Ը. Ամենայն որ տանջի և տառապի, կամ մեղապարտ է, կամ անմեղ. եթէ իցէ մեղապարտ՝ պարտի համբերել, զի արդար իրաւամբ կրէ զպատիժ յանցանացն որով յանցեաւ։ Իսկ եթէ իցէ անմեղ, պարտի և նա համբերել, զի կայ և մնայ նմա հատուցումն 'ի Տեառնէ վասն խոշտանգանացն, որով խոշտանգի տարապարտուց յանիրաւութենէ մարդկան։ Ապա չէ արժան տառապելոյն՝ եթէ իցէ իրաւամբ և եթէ յանիրաւի; գանգատել զտարերաց կամ զԱստուծոյ, այլ համբերութեամբ տանիլ, ածեալ զմիտս՝ թէ վիշտք և տառապանք աշխարհիս այսորիկ փոփոխական են և անցաւոր, և առիթ մշտնջենաւոր հանգստեան և փառաց։

Թ. Յանիրաւի տրտնջէ ոք զԱստուծոյ՝ յորժամ չքաւորի, կամ հիւանդանայ, կամ 'ի ձախողութիւն ինչ անկանի. զի ինչք, առողջութիւն և յաջողութիւնք 'ի Տեառնէ Աստուծոյ յաւանդ տուեալ են մարդկան։ Ուստի մինչ պահանջէ և առնու զաւանդն իւր, չէ արժան ումեք տրտմիլ կամ տրտնջել, այլ մանաւանդ պարտի համբերել գոհութեամբ, որ զամս բաղումս ձրիապէս վայելեաց 'ի պարգեւս նորա. որով քաղցրացուցանէ զկամս։ Տեառն տալ անդրէն զոր էառ, եթէ օգուտ ինչ իցէ նմին։

Ժ. Արդիւք՝ զոր միանգամուն յաշխարհի ինչք և մեծութիւնք, ստացուածք և զաւակք, ոչ են նոցա տեարք՝ այլ աւանդապահք, զի Աստուծոյ է ամենայն, որ բաժանէ իւրաքանչիւր որպէս և ախորժէ. ապա չունի ոք իրաւունս տրտնջել զԱստուծոյ, յորժամ առնու 'ի նմանէ զաւանդ իւր, և տայ այլում։ Զի մինչ տեսանէ Աստուած, թէ ոչ բարւոք վարի ոք նոքօք, կամ ոչ կամի վարիլ, առնու 'ի նմանէ զաւանդն իւր՝ և տայ ընկերին։ Եւ եթէ նա բարւոք վարեսցի, յաւելու տալ զայլ ևս բարիս, ապա թէ ոչ՝ առնու 'ի նմանէ եւս, և տայ այլում։ Ուստի եթէ ոք կամի ընդ երկար վայելել 'ի պարգեւսն Աստուծոյ, 'ի վար տրկցէ զնոսա ըստ կամս ցն Աստուծոյ. իսկ եթէ չարաչար վարեսցէ, կամ մտաբերեսցէ վարիլ, անդրէն տեսանէ զանձն ունայնացեալ։

ԺԱ. Որ 'ի կեանս յայս սգոյ և տառապի, 'ի հանդերձեալ կեանսն ուրախանայ և հանգչի. վասն այսորիկ կեանք աշխարհիս ոչ սահմանեցաւ յԱստուծոյ լինել երկարատեւ, զի մի մարդիկ յաւասաբեկ լինիցին 'ի կրելոյ զվիշտս 'ի ժամանակս ձիգս. այլ աւրարաւ սաւղ և կարճատեւ, զի առանց տրտնջանաց կարասցեն իսպառ համբերել, և սակաւ օրեայ ժուժկալութեամբ նեղութեանցն զյաւիտենականն ժա-

ռանգեսցեն հանգիստ և զինդութիւն։

ԺԲ. Իշխանք աշխարհի 'ի պատժել իւրեանց՝ ըղձեղապարտս, հրատարակեն զյանցանս նոցա, զի մի ասիցեն մարդիկ՝ թէ յանիրաւի դատապարտեցին. իսկ Աստուած՝ վասն զի է մարդասէր և արդար յաւիտենից, յորժամ ձախողութեամբ իւիք պատուհասեն զյանցաւորն, չկամի յայտնիլ լինել յանցուածոց նորա, զի մի յանցաւորն վատահամբաւեսցի 'ի մէջ մարդկան. քանզի իշխանք աշխարհի յանձինս իւրեանց ինայեն, իսկ Աստուած յանձն մեղապարտին։

ԺԳ. Եր ոչ գոհ լինի ընդ վիճակ իւր, մեղանչէ ընդդէմ տեսչութեանն Աստուծոյ, որ ըստ անքննելի խորհրդոց իւրոց ինամէ զամենեսին քաղցրութեամբ ոմանց թոյլ տայ աղքատանալ, և ոմանց մեծանալ առ իւրաքանչիւր օգուտ։ Եվ՝ զի կառավարութիւն ընդհանուր աշխարհի պահանջէ ունել կարգ ինչ յառաջնութեան և յետնութեան՝ ըստ իշխանութեան, ըստ փարթամութեան, ըստ խոհեմութեան, ըստ քաջութեան, և ըստ այլ եւս հանգամանաց, որպէս զի փոփոխակի օգնելով միմեանց՝ 'ի բարւոք խաղաղութեան վարեսցեն զկենցաղս իւրեանց։ Նաև միւս՝ զի տարբերութիւն և զանազանութիւն կարգաց ոչ սակաւ նպաստէ իւրաքանչիւր ումեք առ յաւիտենական վարձուցն արժանաւորութիւն։ Զի առաւելեալն հոգեւոր և մարմնաւոր բարութեամբ երախտաւոր լինելով առ նուազն, և նուազն երախտագէտ գոլով բարերարութեանցն, երկաքանչիւր նոքա արժանաւորին միանգամայն յաւիտենական վարձուց։ Եստի եթէ իշխանաւորքն դժգոհ լինիցին զվիճակէ իւրեանց վասն ծանրութեան զբաղանաց և բազմավաստակ հոգւոց, և հպատակքն վասն աղքատութեան իւրեանց՝ կամ քրտնաջան աշխատութեանցն, մեղանչեն արդարեւ ընդդէմ ընդհա-

նուբ կարգի աստուածային նախախնամութեան։

ԺԴ. Յոլովակի երկնչին մարդիկ՝ յորմէ չէր արժան երկնչիլ, և տրտմին՝ առ որ ոչ պիտէր տրտմութիւն, զի երկնչին 'ի ձախողութեանց՝ յորժամ տեսանեն մերձենալ, և տրտմին՝ յորժամ հասանեն չարիք։ Այս զայն ոչ ածեն զմտաւ, թէ ձախորդութիւնք անցաւորք են և փոփոխականք. և չէ արժան մարդոյ՝ որ վիճակեալ է անմահական հոգւոյ, երկրնչիլ վասն հերոտութեամբ և տրտմիլ ցաւոք։

ԺԵ. Այլ ինչ են զարմանք, զի հոգան և տրտմին մարդիկ ընդ կորուստ յաջողութեան, իսկ ընդ կորուստ անմեղութեան ինչ ոչ հոգան, զի գլխովին մարմին եղեալ՝ զմարմնականն միայն տեսանեն, և ոչ ինչ փոյթ է նոցա զաստուածայնոց և զհոգեւորացուսպա արժանապէս զերկին տուտ 'ի մարմնաւոր բարեաց, և. անդ 'ի հոգեւոր փառաց։

ԺԶ. Որ ծառայէ Աստուծոյ միամտութեամբ սրտիւ 'ի յաջողութեան իւրում, գտանէ զԱստուած ձեռնտու և օգնական 'ի ձախորդութեան իւրում։ Մարդիկ մինչեւ իցեն թողեալ զԱստուած բազում անգամ, Աստուած ոչ թողու զնոսա մի անգամ։

Երբեմն թոյլ տայ Աստուած խարդաւանիլ ումեք 'ի վտանգս ինչ, զի փոքր մի խրատեալ յուղղութիւն գայցէ. և մինչ տեսանէ թէ այնու ոչ զգաստանայ, թողու հանդիպիլ առաւել ծանուցեալ և դժնդակ վրէշտաց. և եթէ նոքիմբք եւս ոչ ինչ խրատեսցի, բարձիթողի առնէ զնա, և հասանէ նմա որպէս արագ սուրհանդակ անհնարին կորուստ և ապականութիւն։

ԺԷ. Դիմբաղդութիւն և վիշտք խիթան տուան մարդոյ զարթնուլ 'ի թմրութենէ, և առնուլ 'ի միտ՝ թէ աշխարհս ոչ է տեղի երջանկութեան՝ այլ նեղութեան և կրից։

ԺԸ. Եվ յաշխարհի քաղաքավարի, անհնար է մշնալ անփոփոխ յիւրում վիճակի, ապա թէ ոչ՝ պարտ է աշխարհի յեղափոխել զիւրն բնութիւն. զի յոլովակի տայ աշխարհ միով ձեռամբ, և բառնայ միւսոմն. միով ակամբն ուրախացուցանէ, և միւսոմն լացուցանէ։ Այսպա չէ արժան վիքանալ՝ յորժամ տայ ումեք զյաջողութիւնս, և ոչ տրտմիլ՝ յորժամ բառնայ զնոսին, զի այս է բնութիւն նորա՝ լինել դիւրափոփոխ։ Եվ յուսայ մնալ միշտ 'ի յաջողութեան, տիրեսցէ նախ 'ի վերայ բնութեան և ժամանակի. և զի չէ բաւական այդմ, ապա մի՛ վստահացի 'ի յաջողութիւնս զոր ունի ոք։

ԺԹ. Անցեալ յաջողութիւնք յիշատակեալ 'ի ձախողութեան՝ բարեմասնութեան զվիշտն, և անցեալ ձախողութիւնք յիշատակեալ 'ի յաջողութեան՝ աւելուն զբերկրանն. բայց պարտ է զգաստ կալ յերկոսին եւս, զի մի՛ գուցէ յաջողութիւնք բարեդիպութեանց՝ յանդգնութեան եղիցին առիթ, և ձախողութիւնք արկածից՝ տեղի տուցեն յուսահատութեան։

Ի. Թէ պակասի ձիւն և անձրեւ 'ի ձմերան, ցամաքին աղբիւրք յամարան. թէ պակասի իսպառ արկածք ձախողութեան 'ի մարդկանէ, լուեն լեղուք 'ի գոհանալոյ 'ի յաջողութեան։

ԻԱ. Յաջողութիւն չարաց ուղէ և անհաստատ, զի ըստ՝ օրինակի փայլատականց՝ կամ ասուպ աստեղաց փոքր մի փայլին փառաք, բայց անդէն անկանին և անհետանան։ Այսուհետ երբեմն թոյլ տայ չարաց ունել զյաջողութիւնս, և գործել զանիրաւութիւնս վասն բարւոյ իրիք վախճանի, որպէս զի կրթեսցէ զստաքինիս արիաբար տանել վշտաց, որով աճին վարձք նոցա և փառք։

ԻԲ. Դժբաղդութիւնք և անյաջող ելք՝ բազում

անդամ այնպէս անզգայ առնեն զմարդիկ, մինչ զի ոչ թաղուն նմա ճանաչել զգուտն անձին իւրոյ։ Այլ որ իմաստուն է և նախատես՝ ոչ իսպառ լքանի, զի գիտէ բարեխառնել զտրտմութիւնն, և մնալ զգաստ և անընկճելի։ Զան է անհաստատ մտաց վրդովիլ յիրս՝ որք պատահին ընդդէմ կարծեաց, քանզի հաստատուն միտք 'ի փոփոխիլ դիպուածոց՝ մնայ անփոփոխ։

ԻԳ. Խոկումն դիւրափոփոխ վիճակի կենցաղոյս՝ խոնարհեցուցանէ զյանդգնութիւն հպարտացելոցն բարեբաղդութեամբ, և զօրացուցանէ զլքումն սրբոցի վհատելոցն դժբաղդութեամբ։ Զի ածեալ 'ի յուշ՝ թէ յաջողուած և ձախողութիւն իբրեւ զանելս սրավար կառաց անդուլ հոլովեալ՝ փոփոխակի յաջորդեն 'ի տեղի միմեանց, փարթամն զինչանի 'ի չափաւորութիւն 'ի յաջողութեան իւրում, և նըւաստն քաջալերի 'ի ձախորդութեան իւրում. և երկոքին եւս հրաժեշտ տուեալ 'ի ծայրայեղ խուտոլմանց՝ գան 'ի միջասահմանութիւն, յորում կայանայ առաքինութիւնն։

ԻԴ. Որ 'ի մեծութենէ անկանի 'ի թշուառութիւն, մնայ յանձն առնուլ զմին յերկուց աստի, կամ մեռանիլ 'ի տրտմութենէ, կամ յաղթել տրտմութեան։ Այլ քանզի մահուամբ իւրով ոչ կարէ պտանել զմեծութիւն իւր զոր կորոյս, ապա լաւ է նմա արհամարհել զամենայն վիշտս, և մնալ կենդանի, յորում յուսալի է հասանիլ անդրէն յառաջին իւր բարեբաղդութիւն։

ԻԵ. Ուրախութիւնն յուէտ ներգործէ 'ի լեզուի քան 'ի սրտի, և տրտմութիւնն՝ յաւէտ 'ի սրտի քան 'ի լեզուի. զի ուրախն առաւել խօսի՝ քան զոր ունի 'ի սրտի զբերկրանս, և տրտմեալն նուազ խօսի քան զոր կրէ 'ի սրտի ցաւս. նա՝ բաղում անգամ չկարէ խօսիլ բնաւ՝ որ տրտմագին է յոյժ։

Տրտմեալն յաւէտ հանգչի 'ի վշտաց պատմելով զպատս սրտի իւրոյ՝ քան լսելով յայլոց զբաւնս սփոփանաց։

ԻԶ. Այր իմաստուն համբերէ դժբաղդութեանց. զի վասն այն ուսանին մարդիկ զիմաստութիւն, զի կարող լինիցին համբերել նեղութեանց. ապա որ ոչ գիտէ համբերել՝ չէ իմաստուն։ Որպէս ասկի քնեի 'ի բովս, նոյնպէս և իմաստունն 'ի ձախող դիպուածս։

Ստուած երբեմն թոյլ տայ իմաստնոյն անկանիլ 'ի վտանգս, այլ ոչ թողու կորնչիլ, բայց միայն՝ զի փորձառութեամբ վտանգին առաւել եւս իմաստուն լինիցի և զգոյշ։

Որ կենցաղավարի 'ի մէջ բազմութեան, լինիցի զգուշաւոր և նախատես, որպէս զի 'ի յեղակարծ դիպուածս ոչ ինքն վրդովեսցի, և ոչ զոք վրդովեսցէ։

ԻԷ. Ձախորդութիւնն է մեծ դաստիարակ. զի զոր ոչ գիտեն մարդիկ 'ի բարեբաղդութեան, զայն ամենայն հարկաւ ուսանին 'ի նեղութեան իւրեանց. զի որ չէ անկեալ 'ի ձախողութիւնս, ոչ գիտէ ինչ, զի ոչ ճանաչէ զայլս, և ոչ զիւր ինքն, ոչ զչարս և ոչ զբարիս։

ԻԸ. Բազում անգամ օգտի ոք 'ի սխալանաց իւրոց՝ քան 'ի բարեբաստիկ գործոց։ Օ՛ի 'ի մեծամեծ գործոց և 'ի յաջող դիպուածոց հպարտանայ ոք և կորուսանէ զիմաստութիւն, իսկ 'ի սխալանաց իւրոց լինի խոհական և զգոյշ. ուսանի ճանաչել զչափ անձին, և ոչ լինել յանձնապաստան։ Օ՛ի բարեբաղդ յաջողութեանք յափշտակեն զմիտս, իսկ ձախող պատահարք վերածեն 'ի զգաստութիւն։ Ինչան բարի ցուցանէ՝ որ ամբաստան լինի զանձնէ, զի երեւի թէ զգաստացեալ իցէ 'ի նախկին անուղղայ գնացից իւրոց։

ԻԹ. Ձախողակի դիպուածք՝ որ յառաջագոյն պա-

տահեալ են այլոց, ոչ սակաւ խրատեն զմարդիկ և զգաստացուցանեն, մանաւանդ զնշխանս և զկառավարս, ածեալ զմտաւ՝ թէ այն դժնդակ վախճան մերթ է պատահիլ և ինքեանց, որպէս պատահեցաւ այլոց։

Լ. Փորձառութիւն իրաց անցելոց՝ հմտութիւն գործոց ներկայից՝ տայ ծանօթութիւն ապագայից։ Զի որ զփորձ առեալ իցէ ձախողակի դիպուածոց և վշտաց, քաջ գիտէ կառավարել քան զայն՝ որ ոչ կրեաց ինչ ձախողակ։

Ձախողութիւնն յաւելու զիտաս մեծամեծ աւրանց, զի այնու լինին կատարեալ և զդոյշ յամենայնի։

ԼԱ. Ուստուած երբեմն ձախողակի պատահարօք խրատէ զմարդ, որ յաղթեալ յանկարգ բաղձանաց՝ մերձ է յանկումն, որպէս զի զգաստասցի և 'ի բաց փախիցէ յայնպիսի ցանկութենէ։

Որ չէ առեալ զփորձ տկարութեան իւրոյ և բռնութեան կրից, չէ տակաւին իմաստուն, զի ոչ ճանաչէ զանձն իւր, և ոչ գիտէ պաշտպանել։

ԼԲ. Ի հատիլն 'ի ձախողակս ծանրացուցանէ ըստ կշիռ վտանգին, և դժուարին գործէ զելս նորա. իսկ արիութիւնն թեթեւացուցանէ զվտանգն, և տայ գտանել զելն։ Ի իշոք և ներողութիւնք փոխին յանհնարին թշուառութիւն, յորժամ հատանի յոյս և բառնի համբերութիւն։ Յաղթիլ 'ի ձախողութեանց՝ ոչ է գործ արիական սրտի, այլ կանանցաւ բարոյի։

ԼԳ. Ոչ զերծանի յիրաւացի նախատանաց և 'ի վնասուէ՝ որ վատթար երկիւղիւ կամ՝ պղերգութեամբ յետս կասի յայնմանէ, զոր պահանջէ վիճակ անձին իւրոյ առնել թէ 'ի բարեբաղդութեան և թէ 'ի դժբաղդութեան։

Ի տանգ մինչ հեռի է, պարտ է նախատես լինել

և երկնչել. իսկ յորժամ գայ հասանէ, պարտ է յայն-ժամ ստանալ զարիական սիրտ՝ մեծ քան զվտանգն որ առաջի կայ, և քաջութեամբ արհամարհել։

ԼԴ. Ճախողութիւնք հրահանգեն զմարդ լինել բարեգութ և կարեկից վշտացելոց, ուստի և մեծատունք՝ որք չեւ են ճաշակեալ զդառնութիւն ձախողութեան, հաւատան զանձինս գոլ Աստուած, և ոչ ինչ համարին զմարդիկ, և կամին ծառայեցուցանել ախտից իւրեանց զամենեսին։ Այլ յորժամ լսեն զաղքատութիւն, զօտարութիւն, զվիշտ, ոչ իմանան թէ զինչ իցեն նոքին, և իբրեւ երազ թուի նոցա։ Այլ յորժամ զփորձ առնուն ձախողութեան, փոխարկի խստութիւն ապառաժ սրտից նոցա 'ի սիրտ մարմնեղէն; և զգան՝ թէ և նոքա մարդիկ են նման ինքեանց, և վարին ընդ նոսա գթութեամբ։

ԼԵ. Ոչ գիտէ կարեկից լինել փորձանաւորաց և նժդեհից որ չէ կրեալ զձախողութիւն և զօտարութիւն. զի որ առեալ է զփորձ դժբաղդութեան ինչ, գիտէ օգնել վտանգելոց։

ԼԶ. Բարեվիճակ է այն, որ երբեմն սխալեալ լցէ՝ և դարձեալ անդրէն 'ի զգաստութիւն, զի խրատեալ նոքօք՝ այնուհետեւ ուղղէ զանձն, և ուսանի թէ զինչ պարտ է առնել և զիարդ վարել։

Փորձառութիւնն վտանգի՝ անօգուտ իմն է մեղկ և անզգայ անձանց, զի և այնու ոչ ուսանին զգաստանալ։

ԼԷ. Զթէ ոք զկրէ իմէքէ խորհի, արժան է յաւէտ նախատես լինել ձախողակի դիպուածոցն որ կարէ պատահիլ յընթացս գործոյն։ Զի ճշմարիտ խոհեմութիւնն կայանայ 'ի տեսանել յառաջագոյն զամենայն վտանգս, և ճշմարիտ արիութիւնն երեւի յայտհամարհել զնոսա մինչ ընդ առաջ ելցեն. զի որ ոչ տեսանէ յառաջագոյն զկարելի վտանգս, ոչ կարէ

ունիլ բաւական վստահութիւն ընդդէմ կալ, և զերծանիլ անվնաս։

ԼԸ. Դիւրին է խրատել զանուղղայս, կամ համոզել զբարկացողս, կամ քաջալերել զվհատեալս, բայց դժուարին է յոյժ՝ զոր ասեն բանիւ, կատարել գործով. զի մարդիկ քաջ գիտեն ուսուցանել այլոց, բայց ինքեանք ակաքանատառնել։ Զի աւանիկ կարէ ոք տեսանել զերեսս այլոց, և նշմարել զբիծն որ 'ի նոսա, իսկ աչս տեսիլ երեսաց իւրոց՝ պէտս ունի միջնորդութեան հայելւոյ։ Արդ՝ հայելի են փորձառութիւնք պէտպէս դիպուածոց, որովք ուսանի ոք խրատիլ, համոզիլ և քաջալերիլ, և ոչ կարօտի ուսանիլ յայլոց։ Իսկ որ չէ փորձառու, պէտս ունի իմաստնոյն խրատաբանութեանց, որոց եթէ անլուր գտանիցի, վարանի 'ի խորհուրդս, և յուսա հատեալ վտանգի։

Այս՝ որ ոչ գիտէ մխիթարել զանձն 'ի ձախորդութեան իւրում, վարանի միշտ հոգովք տառապանաց, և բազում անգամ անկանի 'ի յուսահատութիւն, որ մեծ է քան զամենայն չարիս։ Բանզի չառնու 'ի միտ եթէ կեանք աշխարհիս այսորիկ անդուլ հոլովի 'ի մէջ յաջողութեան և ձախողութեան, և ոչ 'ի մինն կամ 'ի միւսն դադարի. զի աշխարհս ոչ եղեւ երաշխաւոր պահել զմարդիկ միշտ 'ի բարեբաղդութեան, և ոչ երբէք խոստացաւ ոսալ ամենեցուն զյաջողութիւն։

Այլ զի չէ հաստատուն ո՛ և իցէ վիճակ՝ յորում գտանին մարդիկ՝, վասն որոյ ոչ է պարտ յուսահատիլ 'ի ձախողակս, և ոչ յապահովիլ և յանհոգս կալ 'ի յաջողուածս. զի մարթ է գլորիլ ձիոյ 'ի հարթայատակ դաշտի՝ մինչ անվնասեր արշաւէ։ Այլ որովհետեւ երկաքանչիւր սոքա յաջողութիւն և ձախողութիւն՝ յոլդոլդուն են և փոփոխական, և չունին յաբատեւութիւն, ապա մնայ մարդոյ ղգաստ լինել 'ի

յաջողուածս, և արի 'ի ձախողակս։

ԼԹ. Պատրողական է կենցաղս և խաբուսիկ, զի զբաղեալ դուք թիւն և զմեծութիւն վաճառէ անարժանից դիւրագին, և զանայ յարժանաւորսց. որով պատրեալ անզգոյշք՝ յօրանան 'ի մարմնական հեշտութիւն և 'ի զբօսանս ուրախութեան։ Դայց իբրեւ շրջի անիւ բաղդին, քաղցր հեշտութիւնն փոխի 'ի դառնութիւն և 'ի զզուանս, և ուրախութիւնն 'ի տրտմութիւն։ Ուստի պարտ է նախահայեաց զգուշութեամբ զուսպ ունել զանձն, զի ծանր են տուգանք՝ որ պատրաստեալ մնան փոխանակ առօրեայ հեշտութեանց։

Խ. Որ ոչ շատացեալ յաջողութեամբն զոր ունի՝ ցանկայ առաւելագունի, 'ի պատահիլ ձախողութեան խմիք՝ փութով ընկճի և յուսահատի։

ԽԱ. Ակերախտ է նա և տմարդի, որ զամս բազումս վայելեալ 'ի պարգեւս Աստուծոյ, յանկանիլ իւրում 'ի ձախորդութիւն՝ վաղվաղակի սկսանի տրտնջել զՏեառնէ և լքանիլ։

Որ անտրտունջ համբերէ ձախողակ կրից, է քաջայոյս և արի. իսկ որ տրտնջէ և գանգատի, երկչոտ է և վեհերոտ։

ԽԲ. Իմաստունք առաւել երկնչին 'ի յաջողութենէ՝ քան 'ի ձախողութենէ. զի յաջողութիւնն բազում անգամ առնէ զոք յանդուգն՝ գահավէժ լինել 'ի վտանգս, իսկ ձախողութիւնն առնէ զգուշաւոր և զգաստ, զի մի միւսանգամ անկանիցի։

Օխանելիք 'ի հուր արկեալ՝ լաւ եւս բուրեն զանուշահոտութիւնս իւրեանց. առաքինիք 'ի նեղութիւնս անկեալ, առաւել եւս ցուցանեն զբարեմասնութիւնս իւրեանց։

ԽԳ. Որ ոչ ճանաչէ զօգուտ իւր և զվնաս, թշնամի է անձին իւրոյ. և արդարեւ ոմանք անզգա-

յեալ Հանձր ուգիտութեամբ, կամ յափշտակեալ բուռն կրիւք՝ ոչ ճանաչեն զօգուտն իւրեանց և ըզ-ինս, և բանիւ կամ գործով իւրեանց գահավիժեալ զանձինս 'ի վտանգ՝ գանգատին զայլոց ասելով. այս ոք կամ այն արար մեզ զԹշնամութիւնս զայս. և ոչ գիտեն եղկելքն, թէ ոչ ոք ինասի՝ բայց եթէ յիւրմէ։ Այսպա մի ոք մեզադիր լինիցի այլոյ՝ բայց միայն անձին իւրոյ. ուշ գիցէ ճանաչել զօգտակարն՝ զի ապրասցէ զայն, և զինասակարն՝ զի խորշեսցի 'ի նմանէ, որպէս զի կարասցէ պահպանել զանձն, և կալ յապահովի։

ԽԴ. Զիք բժիշկ ճարտար քան զհամբերութիւնն յապաքինել զցաւս քո, և ոչ ձեռն զօրաւոր՝ ազատել 'ի նեղութենէ, և ոչ փարթամ առատ՝ 'ի լնուլ զքեզ բարեաւք, և ոչ բարեկամ կարեկից՝ 'ի փարատել զտրտմութիւնս քո. զի համբերութիւնն ամենայն անհնարից է ճարակ։

Դժբաղդութիւնք՝ որչափ ակամայ տարեալ լինին, այնքան առաւել ծանրանան։

ԽԵ. Այնպէս վիշտ և նեղութիւն՝ որ 'ի թոյլ տալոյն Աստուծոյ գան 'ի վերայ մարդոյ, է վրէժխնդրութիւն յառաջագոյն գործեալ մեղաց. զի որ կամաւ մեղանչէ՝ պատժի ակամայ։ Այսպա որ համբերէ խոնարհութեամբ հոգւոյ, զարդար ցաստուծն ասառաւածային գարձուցանէ 'ի քաղցրութիւն, և գտանէ զազատութիւն։ Համբերել վշտաց՝ է շնորհ Աստուծոյ։

ԽԶ. Անմիտ է՝ որ կարծէ զԹշնամին իւր բարեկամ, և ոչ ճանաչէ՝ բայց եթէ յորժամ ինասի 'ի նըմանէ. և յիրաւի եթէ չէր անմիտ, գոնէ 'ի նշանաց ինչ կասկածէր զնմանէ վաղագոյն և զգուշանայր անձին։

Սոյգ իմն է, զի բազում են չարք աշխարհի, որք զանազան կերպիւ նիւթեն զԹշնամութիւն, և արբ-

ինանեն զմարդիկ 'ի վտանգս. և զի յանհնարիցն է բառնալ զամենեսին, կամ յուզղութիւն ածել, ապա արժան է՝ որչափ ինչ մարթ է՝ զգաստ և աշխարհաշինիչ կալ առ մնալոյ անվնաս։

Այլ յետ կարելի զգուշութեան եթէ վնասեսցի ոք, պարտ է տալ զայն հարկաւոր և անյեղլի օրինաց բնութեան և աշխարհի՝ ըստ նախախնամութեանն Աստուծոյ. ուր բաղում ինչ իրողութիւնք բնականք կամ բարոյականք՝ որք մեզ երեւին ըստ դիպաց՝ վասն ոչ գիտելոյ մեր զպատճառսն, հարկաւ պարտ էին լինել. զի այսպէս պահանջէր զուգընթացութիւն պատճառացն՝ յորոց յառաջ գան այնոքիկ գործք, եթէ օգտակարք իցեն և եթէ վնասակարք։

Խէ. Ինձ քաջութիւն է տանիլ յանկարծահաս արկածից բաղդի, քան ընդդէմ կալ յանդուգն յարձակման թշնամեացն գրոհի։

Ոչ յաղթահարի 'ի ձախորդութեանց՝ որ ունի զխոնարհութիւն, զհամբերութիւն և զհնազանդութիւն, զի երեքին սոքա անբաժան ընկեր են միմեանց և իբրև երեքկոլի առասան անխզելի են 'ի բռնութենէ։

ԽԸ. Մարդիկ՝ թէպէտ և յամենայն ժամ 'ի նորանոր դիպուածս ձախողութեանց անկանին, բայց կարծելով թէ համայն ձախորդութիւնք անցեալ գնացին, ետ յապայն միշտ յաջողութիւնք յաջորդեն, քաջայոյս եղեալ ուրախանան. այլ յորժամ ձախորդ դիպուածքք դարձեալ ժամանեն, վաղվաղակի լքանին և տրտմին։ Այց սակայն ոչ երբէք պակասի յոյս յաջողութեան 'ի մարդոյ, և ոչ խապտ վերջանան ձախորդութիւնք. այսու յուսով միշտ խաբին մարդիկ, և դնեն 'ի մտի ոչ ևս խոսքիլ։ Յուրթուի թէ այս յուսագրութիւն յաստուածուստ հաստեալ է 'ի բնութիւնս մարդոյ, ապա թէ ոչ՝ անդէն առ ժամայն յուսաբեկ եղեալ, 'ոչ ետ կարէին զանձինս մխիթարել։

Կայց այլ կատարեալ և իմաստուն՝ գիտելով թէ ոչ պակասին նորանոր արկածք, հանապազ պատրաստէ զանձն 'ի կրել զնոր փորձութիւն ինչ, և 'ի գալ նորա՝ մնայ անխռով և անտրտում։ Զի եթէ առ ժամանակ մի տեղի տուեալ ձախողութեան՝ յաջողդէ յաջողութիւն, տակաւին ոչ ուրախանայ, որովհետեւ գիտէ՝ թէ յաջողութիւնն դիւրաստահ է և անհաստատ։ Ուստի և 'ի նոյն յաջողութեան դարձեալ սպասէ փորձութեան. ոչ եթէ զնա խնդրէ, այլ զի ստոյգ վկայէ թէ զհետ յաջողութեան ունի ժամանել նոր ձախորդութիւն ինչ, նմին իրի միշտ կեայ միապէս. ոչ ընդ յաջողուածս ուրախանայ և ոչ ընդ ձախորդութիւնս տրտմի, ըստ առածին՝ թէ իմաստնոց ոչ գոյ դիպուած, ոչ տրտմութիւն և ոչ զարմացումն։

Զի ոչ միայն յընթացս կենաց է անյողդողդ 'ի ոգեսպէս կիրս, այլ և 'ի մահուն իւրում լինի անվրդով, զոր միշտ անմոռաց ունելով 'ի միտս, բարեպէս ուղղէ զանձն 'ի մեռանիլ։ Զայն որոյ իմաստունք միշտ մեռանին, և ոչ երբեք մեռանին. մեռանին՝ զի հանապազ զմահն առաջի աչաց ունին, ոչ մեռանին՝ զի բարւոք մեռանելով կենդանի գոլ համարին։ Զնահն ոչ ինասէ կատարելոց և իմաստնոց՝ այլ օգնէ, զի զերծուցեալ զնոսա 'ի տառապանաց աշխարհի՝ հասուցանէ 'ի հանգիստն յաւիտենից։

Խթ. Զի ոք գայթակղեսցի զնախախնամութենէն և զդատաստանէն Աստուծոյ, թէ զինչդ թոյլ տայ Աստուած չարաբարոյից յաստի կեանս կեալ 'ի յաջողութեան, և բարեբարոյից 'ի տառապանս։

Սպաքէն որքան և չար իցէ ոք, հնար է նմա թէ երբեմն արարեալ իցէ զգործ ինչ բարի, այլ ոչ արժանաւոր երկնային վարձուց. Նմանապէս որքան և բարի իցէ ոք, մարթ է և նմա առնել երբեմն չար

ինչ, այլ ոչ արժանի դժոխային վրիժուց։ Եւ Աստուած այնու պիտի է արդար՝ ոչ զոք թողու անվրէժ, վասն որոյ զփոխարէնն նուազ բարւոյն՝ զոր արար չար ոք յայս կեանս, հատուցանէ անցաւոր բարեաց յաջողութեամբ, և թողու պատժիլ 'ի հանդերձեալն՝ ըստ բազում չարեաց իւրոց։ Այսպէս և փոխանակ փոքր չարի՝ զոր մարդկային ակարութեամբ կամ տգիտութեամբ արար բարեգործ ոք, յաստիս անցաւոր տառապանաց պատժէ. բայց 'ի հանդերձեալն փոխանակ բազում բարեաց զոր արար յընթացս կենաց, հատուցանէ զվարձս վասն անտեսելի խոստմանն զոր խոստացաւ յառատութենէ բարութեան իւրոյ։ Զի բարին զոր գործէ ոք արժանի յաւիտենական վարձուց, ոչէ 'ի զօրութենէ մարդոյ, այլ 'ի զօրութենէ հնարհացն Աստուծոյ. այլ զվարձան հատուցանէ Աստուած իբրեւ զպարտս վասն հաւատարմութեան խոստման իւրոյ, ըստ այնմ. «Վարձք ձեր բազում են յերկինս։»

Դարձեալ՝ Աստուած երբեմն բառնայ զչարս յաչս խարհէ, մինչ ոչ ունին դառնալ 'ի բարին, զի մի առաւել ծանրացի պատիժ նոցա, կամ վնասակարին բարեաց։ Եւ երբեմն թողու մնալ կենդանի, զի զգաստացեալ ուղղեսցին, կամ նոքօք բարիք կրթեսցին։ Երբեմն բառնայ զչարիս, զի մի սահեսցին 'ի մեղս, կամ առաւել վնասցին. և երբեմն պահէ զնոսա 'ի նեղութեան, զի առաւել սրբեսցին, կամ այլոց բարի օրինակ լիցին, և վարձք նոցա բազմասցին։

Զպաբէն աշխարհս կառավարի իմաստութեամբն Աստուծոյ, նախախնամի ողորմութեամբ նորա և արդարութեամբ, որ ոչ գիտէ վրիպիլ, կամ ուժգին ինիրաւիլ. քանզի և վասնզի որ յերկնի և որ յերկրի, 'ի տարերաց, կամ յանիրաւութենէ մարդկան, ոչ եթէ ըստ պատահման՝ այլ ըստ անքննին դատաստանաց

տանացն Յստուծոյ հաստատեն 'ի մարդիկ, ըստ այնմ. «Ոչ յարեւելից, և ոչ յարեւմտից, և ոչ յանապատէ լերանց։ այլ Յստուած դատաւոր է։» Սաղմ. ՀԴ. 6։

Ուրեմն լուեսցեն լեզուք կարճամտաց խօսել ընդդէմ նախախնամութեանն և դատաստանին Յստուծոյ. այլ միայն գոհացեն զնմանէ, որ զամենայն ինչ բարւոք արար, և առնէ հանապազ։

«Եւ զամենայն ինչ զոր խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցայ 'ի նոցանէ, և ոչ արգելի զսիրտ իմ յամենայն ուրախութենէ. և ահա ամենայն ինչոքի է, և յօժարութիւն ոգւոյ։» Ժող. Բ. 10։

«Մարդ նանրութեան նմանեաց, և աւուրք նորա որպէս հովանի անցին։» Սաղմ. ՃԽԳ'. 4։

«Ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. ցամաքեցաւ խոտն՝ և թօթափեցաւ ծաղիկ նորա։» Եսայ. Խ. 7։

«Զի ամենայն որ 'ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, ցանկութիւն է աչաց։» Ա. Յովհան. Բ. 16։

«Մի՞ ոք որ 'ի փորձութեան իցէ, ասիցէ թէ Աստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չարեաց, փորձէ նա և ոչ զոք. իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոյ ցանկութեանց ձգեալ և պատրեալ։» Յակ. Ա. 13։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԵՐԿԱՆԿՈՒԹԻՒՆ

Ա. Ոչ աք է որ ոչ խնդրեսցէ զերջանկութիւն, քանզի ոչ գիտեալով զտեղին յորում գտանի, անդուլ ոստայնէ քնդ վայր։ Սերթ հասարի թէ գտանիցի 'ի հոտնոգատ խորտիկս. և իբրեւ յաճախէ առ այն, սասզուսցեալ թողու զնա և ցանկայ հարստութեան, յուսալով թէ 'ի նմա իցէ։ Այս իբրեւ զփորձ առնու սահմանութեան՝ զոր սպասս էր ունել առ ստացու�

և առ պահպանութիւն ընչից, զժկամակեալ ընդ այն
զհետս կրթի իշխանութեան։ Եւ մինչ փոխանակ հան-
գուցեան գտանէ 'ի նմա վտանգս յայտնի թշնամեաց,
և որոգայթս սուտ բարեկամաց, թողու զայն իբրև
բեռն անտանելի, և 'ի խնդիր լինի այլոց։

Եւ զոր օրինակ անկեալն 'ի ծով այսր անդր յածե-
ցուցանէ զձեռն գտանել ինչ որով մարթասցի ապ-
րել, ըստ սմին սարսափ և սա յամենայն իրս զիմէ։
Թերեւս հանգուցանիցէ զբաղձանս իւր։ Այլ 'ի
զուր ջանայ և տաղտապի, զի ցորչափ ուղէտ է ոք
և մոլի, չկարէ լինել սրտադիւր. վասն զի երջանկու-
թիւն՝ որ է հանգիստ մտաց և բաղձանաց, ոչ յայլ
իրս գտանի, բայց եթէ յիմաստութեան և յառա-
քինութեան։ Այսպէս պարտ է իւրաքանչիւր մարդոյ
'ի խնդիր լինել և ստանալ զիմաստութիւն և զառա-
քինութիւն, որովք կարասցէ գտանել զերջանկու-
թիւնն բնական յաշխարհիս յայսմիկ, և զդերբնականն
'ի կեանսն յաւիտենից։

Բ. Որովհետեւ բնական է մարդոյ 'ի խնդիր լի-
նել երջանկութեան, սմին իրի և մանկունք մինչ ըս-
կսանին նորոգ քայլել, ընդաբոյս իմն ախորժակօք
ցանկան շրջիլ անդադար, զի զերջանկութիւնն մարդ-
թասցին ուրեք գտանել։ Ստոյգն ընդ օդս 'ի վեր
'ի խաղալ իւրեանց, կարծելով թէ անդ իցէ բնա-
կեալ։ Զեռն կարկառեն առնուլ զոր ինչ սեսանեն,
զի համարին թէ այն իսկ իցէ խնդրելին իւրեանց։
Հետամուտ լինին իմանալ՝ զոր միանգամ յուսկանէ
խօսին մարդիկ ընդ միմեանս, զի այնպէս թուի նոցա
թէ զայնմանէ զրուցաբանեն՝ որում ինքեանք փա-
փագին։

Այլ իբրեւ 'ի ծերութիւն հասանեն, յայնժամ
քաջ ճանաչեն՝ թէ երջանկութիւնն ոչ գտանի 'ի վե-
րայ երկրի, և ոչ 'ի բարձունս օդոյ, և ոչ յայլ իրս

յորս ինդրէին։ Այլ փոխեալ զկարծիս իւրեանց, հաստատին գտանել 'ի ստորինս երկրի, վասն որոյ զգլուխս և զմէջս իւրեանց ընդ երկիր մածուցանեն։ Այլ ախորժեն 'ի վերս յառնել, և ոչ գնալ և շրջիլ ուրեք. տաղտկացեալ խորշին յամենայնէ՝ զորս սիրէին, և ձանձրանան լսել յումեքէ՝ որոմ նախ փափագէին. և իբրեւ յուսաբեկ վարանական դեգերեալ՝ տագնապին 'ի խորհուրդս, և ոչ գիտեն թէ զինչ արասցեն։ Հուսկ յետոյ ապաստան եղեալ մահուան՝ որ թուն աչք սպասեն նմա, հաստատութեամբ եգեալ 'ի մտի՝ թէ նա միայն կարէ հաստատել երջանկութեան, զոր 'ի մանկական տիոց անտի կամեցին բազձանաք ինդրէին։

Որ կամի լինել բարեբաստիկ, ապաստան եղիցի յԱստուած, սակայն մի հեղգացցի տունել զոր կարէ 'ի պահպանութիւն անձին իւրոյ. զի այնպէս կամի Աստուած, թէ մարդիկ զոր ինչ կարեն՝ արասցեն, և զոր ոչն կարեն՝ ինքեան յանձնեսցեն։ Այլ է մարդ՝ որ կամի զԱստուած ունել իբրեւ սպասաւոր. և զոր մարդկութեան է անկ առնել, և զայն թողու Աստուծոյ կատարել. և մինչ ոչ կատարի, դժգոհ լինի զԱստուծոյ, և ոչ որոշէ զաստուածավայելուչ գործսն 'ի մարդավայելուչ գործոց։

Արդ՝ դու արա զայն զոր կամիս՝ և կարես առնել, և յանձն արա Աստուծոյ զոր կամիս՝ և ոչ կարես առնել։ Այլ եթէ օգուտ իցէ քեզ զոր կամիս, կատարէ Աստուած. և զոր ոչ կատարէ Աստուած, ծանիր՝ թէ այն չէ ինչ օգուտ քեզ, զի Աստուած առաւել գիտէ զօգուտ քո՝ քան զոր դու Հանաչես և կամիս։

Գ. Անութիւնն մարդոյ՝ միշտ բազձայ հեշտալեաց, զի 'ի նոսա հանգիցէ յաւիտեան, և փախչի 'ի մահուանէ, որ է բաղձանք անմահութեան։ Իսկ

բնութիւնն ոչ վերիպի յայսմ, զի գործ բնութեան՝ է գործ Աստուծոյ. և զոր ինչ միանգամ ունի բնութիւնն, յԱստուծոյ ունի. ընդէր սպա օրէնք արգելուն զմարդիկ 'ի հեշտալեաց, և զմահն ասեն բաբի։ Այսպէս բնութիւնն ոչ բաղձայ հեշտութեան և կենաց որ աստ է, այլ՝ այնմ որ 'ի հանդերձեալն է, ապա թէ ոչ՝ ընդ ինքեան հակառակէր բնութիւնն. քանզի փորձիւ գիտեմք թէ որ զհեշտալեօք փարի, տակաւին բնութիւնն 'ի նմա ոչ հանգչի, այլ անդէն տաղտկացեալ զգուի, և ցանկայ այլոց բաղձալոց. նոյնպէս եթէ որ 'ի տառապանաց ծերութեան կամ փորձութեան նեղի, զմահ խնդրէ։

Իսկ եթէ բնութիւն մարդոյ այսմ հեշտութեան և այսմ կենաց ըղձանայր, ուրեմն 'ի նոցանէ ոչ ձանձրանայր, այլ խակայն իբր 'ի կեդրոն իւր 'ի նոսին դադարեալ հանգչէր 'ի յաւիտեան։ Այսպա յայտ է թէ զայլ ինչ խնդրէ նա՝ զոր մարդիկ ոչ զգան, նմին իւրի նեղլին տագնապին և զբնութիւնն մեղադրեն։ Այսպէսն բնութիւնն անսխալ է 'ի բաղձանս իւր. և օրէնք իրաւամբ արգելուն զմարդիկ 'ի սնոտի հեշտալեաց աշխարհիս զի ուղղեսցեն զկամս իւրեանց 'ի յաւիտենական հեշտալիս և յանվախճան կեանս՝ առ 'ի լինել երջանիկ և մի հակառակեսցին ընդդէմ Աստուծոյ՝ որ ուղիղ սահման հաստատեաց զբնութիւնն։

Դ. Երջանկութիւնն կայանայ 'ի սիրելն զԱստուած 'ի վերք քան զամենայն. զի որպէս սիրէ Աստուած զմարդն 'ի վերք քան զամենայն արարածս իւր, կամի զի և ինքն սիրեսցի 'ի մարդկանէ 'ի վերք քան զամենայն։ Եր ոչ սիրէ զԱստուած որպէս պարտն է սիրել, վարանի անհանգիստ. զի չէ հնար յայլ իրս հանգչիլ բաղձանաց մարդոյ՝ բայց միայն 'ի յԱստուած։ Զայն որոյ և մարդիկ մինչ սիրեն զնմն արտաքոյ Աստուծոյ, ոչ կարեն անտաղտուկ յաբամնալ

'ի նմա. վասն զի Աստուած միայն է առարկայ սիրոյ, յորում կարեն հանդիպիլ բաղձանք մարդոյ։

Ե. Պարտ է ամենայնի զգուշութեամբ պահել 'ի սրտի զերկիւղն Աստուծոյ առաւել քան զամենայն բարիս. զի նովաւ կարէ ոք ստանալ զՀշմարիտ առաքինութիւնս, որք առաջնորդեն առ երջանկութիւն։ Որ ոչ երկնչի 'ի դատաստանացն Աստուծոյ, կամ ունի զսէրն Աստուծոյ կատարեալ, կամ հոգւոքն է գլխովին մեռեալ։

Զ. Աստիրջանիկ է նա և թշուառ, որ չունի զուղիղ հաւատս և զառաքինի վարս, զի է կոյր հոգւով, և ոչ կարէ տեսանել զպայծառութիւն աստուածայինն լուսոյն։ Օ, ի թէ և իմաստուն ոք իցէ, և խոստանայցէ գիտել զամենայն, հպարտասցեալ է այնպիսին և ոչ ինչ գիտէ. զի չունի զՀշմարիտ գիտութիւնն, որ է ճանաչել զԱստուած ուղիղ հաւատով, և ծառայել նմա բարի գործով։

Լաւ է սիրել զԱստուած առանց գիտելոյ զգիտնական սահման սիրոյ, քան գիտել զսահման սիրոյ առանց սիրելոյ զԱստուած։

Ճշմարիտ հաւատացեալն 'ի գործ դնէ զայն զոր հաւատայ. ապա որ հաւատայ՝ եթէ պատրաստեալ կայ երջանիկ վիճակ այնմ՝ որ բարոք կեայ, և ինքն վարի չարաչար՝ որպէս թէ ոչ հաւատայր. ապա կասեալ է 'ի հաւատոյ. զի ոչ կամի գործել զչար, որ հաւատայ թէ գոյ հատուցումն իւրաքանչիւր ոմեք ըստ գործս իւր։

Ոչ ոք կարէ առնել զՀաճոյսն Աստուծոյ 'ի ժառանգութիւն կենացն յաւիտենից, եթէ ոչ խնդրեսցէ յԱստուծոյ և տացի նմա առնել, ըստ այնմ. «Խնդրեցէք՝ և տացի ձեզ։» Մատթ. Է. 7։

Է. Մարդս արարաւ յԱստուծոյ ազատ և անձնիշխան, բայց ոչ գիտելով զերջանկութիւն իւր՝ ծա-

ռայէ մոլութեանց որպէս գերի շղթայակապ։ Այսպէս քէն ազատ է նա, որ զերծ է 'ի բռնութենէ, և իբրեւ շարժի 'ի բարիս. կի թէպէտ և կորուսանիցէ զինչս և զյաջողուածս և զանդամս ինչ մարմնոյ և գրաւեսցի ընդ մահուամբ, ունի տակաւին զկամ սրն ազատ և բարեյօժար։ Իսկ որ չարաչար վարէ զանձնիշխանութիւն իւր, թէ և ազատ և հրամանատան ոք իցէ, առնէ զինքն ծառայ մոլութեանց, քան զոր չիք առաւել անսրբ և յետին ծառայութիւն։

Այսպա մարդիկ մի՛ արասցեն զանձինս ծառայ, որ ծնեալ են ազատ։ Ճշմարիտ ազատ նա է, որ զկամս իւր հաստատեալ ունի 'ի բարիս, և գործէ յօժարութեամբ։ Այլ բաւական համարի լինել բարի, այսինքն՝ շատանալ սակաւ բարեաց, այլ և փութայ լինել բարեգոյն, այսինքն օր քան զօր առաւելու 'ի գործս բարեաց։

Այր ծառայէ Աստուծոյ և հպատակի օրինաց նորա, է ճշմարիտ ազատ յորում վիճակի և իցէ։

Ը. Իրջանիկ է նա որ ճանաչէ զինքն միշտ ներկայ առաջի Աստուծոյ, և զԱստուած ներկայ առաջի իւր, որպէս և է իսկ։ Հաստատեալ 'ի միտս՝ թէ Աստուած ոչ զայլոյ ումեքէ հոգայ՝ բայց եթէ զիւրմէ, և ինքն ոչ զայլ ինչ խորհի՝ բայց եթէ զհաճոյսն Աստուծոյ առնել. զի Աստուած արար զամենայն վասն մարդոյ, և զմարդ վասն իւր միայն, ապա հարկ է մարդոյ միայն ծառայել Աստուծոյ. և այս յայնժամ լինի, յորժամ մարդ զոր ինչ խորհի և ասէ և առնէ, այն ամենայն 'ի փառս Աստուծոյ վերածէ։

Իւ մինչ ճանաչէ զանձն ներկայ առաջի Աստուծոյ, և զԱստուած ներկայ յամենայն ուրեք, սեռսոզ գործոց և քննիչ խորհրդոց, ոչ բնաւ վրդովի 'ի պատահիլ վնասակար դիպուածոց. զի ստուգիւ ճանաչէ՝ թէ Աստուած սիրէ զինքն, և միշտ կամի զօգու-

ազն իւր, և յորժամ թոյլ տայ գալ վնասու, է տա-
կաւին վասն օգտի իւրոյ։ Արդ՝ որ 'ի սոյն միտս
հաստատեալ է, արդարեւ ուրախ և խաղաղ է նա
յամենայն 'ի կեանս իւր։

Թ. Երջանիկ է նա՝ որ ոչ ինքն է ծառայ այլում,
և ոչ զայլս ունի ծառայ կամաց իւրոց։

Ժ. Պատճառն և գործն՝ այնու զի են առընչա-
կից, փոփոխակի հային և ցուցանեն զմիմեանս։ Արդ՝
չորք են պատճառք. արարչական, ուստի է գործն.
նիւթական, յորմէ է գործն. և տեսական, որով է
գործն. և վախճանական, վասն որ է գործն։

Այս որովհետեւ արարչական պատճառ մարդոյն
է Աստուած, նիւթականն՝ հող կամ տարերք, տե-
սականն՝ հոգի բանական, վախճանականն՝ փառքն
երանութեան, վասն որոյ մարդն իբրեւ գործ Աս-
տուծոյ՝ ունի զկարգ և զհայեցուած առ արարչական
պատճառն իւր առ Աստուած, զի ցանկայ պաշտել
զնա. զի թէ և ոչ կարասցէ ճանաչել զճշմարիտ Աս-
տուածն, տակաւին զարարած ինչ իբրեւ զԱստուած
պաշտէ՝ զո և կարծէ, զի բնութիւնն իւրովն ձկտի
առ այն։

Ունի զկարգ և առ նիւթն յորմէ գոյացաւ, նը-
մին իրի ըստ մարմնոյն՝ վասն զի է 'ի հողոյ կամ 'ի
տարերաց, միշտ 'ի նոյն հակի, մինչեւ լուծանիլ 'ի նա։

Ունի զկարգ և առ տեսական պատճառն առ
հոգին, զի ոչ կամի թողուլ զնա, զի մի ապակա-
նեսցի. վասն որոյ խորշի մարդն 'ի մեռանելոյ. զի
մեռանիլն՝ է բաժանումն հոգւոյն 'ի մարմնոյ։ Իսկ
հոգին իբրեւ անմարմին գոյացութիւն՝ ըստ ինքեան
միշտ ցանկայ անմարմնոյն վիճակի և ազատութեան
'ի բանտէ մարմնոյն. և յաւէտ զիմանալեացն խոկալ
սիրէ և զհոգեւոր մխիթարութիւն խնդրէ։ Այս զի
գոլով անմահ՝ միշտ ցանկայ անմահութեան. եւ

սակաւին 'ի մարմնի բնակեալ, ինքեան առ յապայն յիշատակ յաւիտենական թողուլ, որ է նշան անմահ հաւատեան նորա։

Եւ նի զկարգ և առ վախճանական պատճառն. զի երանութիւնն ըստ որում է հանգիստ և լրումն բաղձանաց, առ ինքն քարշէ զամենեսեան որք կարգեալ իցեն առ նա։ Զան որոյ ամենայն ոք ցանկայ իւրոյ հանգստեան, որպէս ճանապարհորդ 'ի դէմ եղեալ տեղին. զի բնութիւնն մինչչեւ իցէ ժամանեալ 'ի վերջին վախճան իւր՝ ոչ հանգչի։ Եւ սակայն վերջին վախճան մարդոյ ըստ սահմանելոյն Աստուծոյ ոչ տուեալ լինի յաստի կեանս, այլ 'ի հանդերձեալն. զի չիք արարած 'ի վերայ երկրի՝ որ կարող իցէ ընուլ զփափագ մարդոյ, նմին իրի մարդիկ 'ի կեանս յայս միշտ են անհանգիստ, թէ և իցեն ամենայն բարեաք աշխարհի յղփացեալ։

Եւ այս յայտնի ցուցանի 'ի հանդարտութենէ մտաց առաքելեաց, և յալէծուփ խորհրդոց աշխարհասիրաց. վասն զի արք առաքինիք ուղղեալ զշաւիղս իւրեանց առ Աստուած, անցեալ զանցանեն զբարեաք աշխարհի. և զառաքինութիւնն կալեալ իբրեւ մի ջոց 'ի հասանիլ առ վերջին վախճանն, յամենայնի անդորր մտաք նաւեն ժամանել 'ի նաւահանգիստն վերջին երջանկութեան, ոչ լինչ փոյթ կալեալ զերաց անցաւորաց և զփոփոխութեանց աշխարհի։ Իսկ արք աշխարհասէրք վարանական խորհրդով խաւճապեն անհանգիստ, և ոչ կարեն գտանել գոնէ վայրկեան մի անդորրութիւն մտաց, թէ և իցեն մեծագանձ իշխան կամ ինքնակալ կայսր։

Այց ըստ որում բնութիւնն բուռն բերմամբ դիմէ առ վախճանն, 'ի գտանել դոյն ինչ դիւրութիւն մարմնոյ՝ յարի 'ի նա զչայական կոյր բաղձանաքն, իբր 'ի վախճան իւր. այլ տեսեալ թէ ոչ կարէ 'ի նմա

հանգչիլ, 'ի բաց թողու զայն՝ և ցանկայ այլուամ, զզուի և յայնմանէ՝ և փոփոգի այլոց։ Այս այսպէս ամենեքին 'ի միոյ հեշտալեաց 'ի միւս հեշտալիս ոստուցեալ թափառին անդադար՝ հասանիլ 'ի վախճան իւրեանց. բայց ոչ գիտելով զինչ իցէ այն, կամ ուր գտանիցի, ընդ վայր տագնապին։

Այպաքէն ծանիցին զի Աստուած է ստոյգ վախճան մարդոյ, առ որ հնար է հասանիլ միայն առաքինութեան ճանապարհաւ. թողցեն ուրեմն զաշխարհասիրութիւնն, և զհետ լիցին առաքինութեան, զի գտանել մարթասցին զոր խնդրեն, ապա թէ ոչ՝ զինք հնար նոցա հասանիլ 'ի վախճան իւրեանց՝ և լինել երջանիկ։

Բայց ումանք աշխարհասէրք տակաւին դեգերին յիրս աշխարհի՝ գտանել զնա, այլ սակայն ոչ փոփոգ մարդոյ դադարի 'ի խնդրելոյ զնորանոր հեշտալիս, և ոչ հեշտալիք պակասին։ Այս վէճ սրտի մարդոյ ընդ հեշտալիս աշխարհի տեւէ մինչեւ 'ի դուռն գերեզմանի, ուր յաւաբեկ եղեալ՝ քաջ ճանաչէ մարդ, թէ ընդունայն վաստակեցաւ յիրս աշխարհի գտանել զվերջին երջանկութիւն իւր. բայց անկարելի է զկնի այնորիկ 'ի ձեռս բերել զնա, զի յայնժամ սկսանի սերմանել, յորժամ այլք հնձեն։

ԺԱ. Մարդիկ ոչ զամենայն զոր սիրեն՝ արժանի են սիրոյ, զի սիրեն զաշխարհ և զոր յաշխարհի են մայելութիւնք. վասն որոյ յոլովակի փոփոխեն զսէր իւրեանց 'ի միոյ առ այլ, և ոչ յայս կամ յայն մշնան հաստատուն։ Այպա եթէ կամին միշտ մնալ 'ի սէրն, սիրեսցեն զՀմնարիտ բարին, զի նա միայն է արժանի սիրոյ։

ԺԲ. Մարդս եթէ ոչ ունէր զառ 'ի յԱստուծոյ խոստացեալ ինքեան զերջանիկ կեանս 'ի հանդերձեալն, ոչ ոք գտանէր թշուառ քան զնա 'ի վերայ

երկրի. զի ծնանի արտասուօք, ուսանի աշխատանօք, ապրի տառապանօք և մեռանի ցաւովք։ Այս փոյթ յանձին ունել պարտ է ամենայնի՝ գործովք բարութեան հաստատել ի ժառանգութիւն երանաւէտ կենացն խոստացելոց։

ԺԲ. Արիք և չարք խոստովանին զանձինս ծառայ Աստուծոյ, բայց տարբերին ի վախճանն. վասն զի բարիք ծառայեն իբրեւ զորդի, զի աշխատին միայն վասն փառաց և վասն սիրոյն Աստուծոյ, և զհոգանձանց և զիւրայնոց յանձնեն աստուածային կամաց. վասն որոյ Աստուած հոգայ զնոցանէ որքան են յերկրի աստ, և յերկինս շնորհէ նոցա զյաւիտենից փառս։ Զի այսպէս վայելէ մեծութեանն Աստուծոյ՝ տալ տրիտուր ըստ յաւիտենի իւրում զանհուն բարիս այնմ՝ որ ըստ յաւիտենի իւրում սիրեաց զԱստուած, և ծառայեաց նմա հաւատարմութեամբ։ Եւ այս փոխարինութիւն ոչ է ըստ արժողութեան գործոյն և կամ գործողին, այլ ըստ առատութեան բարութեան և ողորմութեան Աստուծոյ ընդունողին, զի ըստ առաքելոյն. «Չէն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձեալ փառացն։» Հռոմ. Ը. 18։

Իսկ չարք ծառայեն իբրեւ ՝վարձկան, զի աշխատին վասն փառաց և վասն սիրոյ անձանց. և ոչ յանձնեն Աստուծոյ զանձինս և զիւրայինս, զի կամին ըստ հաճոյս իւրեանց առնել զամենայն ինչ. վասն որոյ և Աստուած զչարս իբրեւ զվարձկան՝ ժամանակաւոր բարեաւք միայն վարձատրէ, ըստ որում են արդարածք իւր, նմին իրի ընդ սպառիլ կենաց նոցա, սպառին և վարձք նոցա. ըստ օրինակի ի վարձու կալեալ մշակաց, որք յերեկոյանալ աւուրն առեալ զասկ արկեալ դրամն գնան, զի ոչ իբրեւ որդի ծառայեցին՝ զի մոցեն ի ժառանգութիւն որդւոյ։ Եւ

որովհետեւ 'ի յաւիտենին իւրեանց արհամարհեցին զանհուն բարին, զոր խոստացաւ Աստուած հաւատարիմ ծառայից իւրոց, իրաւամբ զրկին յանհուն ապրումն 'ի յաւիտենին Աստուծոյ։

«Երանելի են անբիծք 'ի ճանապարհի, և այք գնան յօրէնս Տեառնէ։» Սաղ. ՃԺԸ. 2։

«Արդ երանելոյ ժողովրդեանն որոց այս այսպէս է. Նա՝ երանի է ժողովրդեանն, որոյ տէր Աստուած է նոցա։» Սաղ. ՃԽԳ. 17։

«Երանելի է այր որ լուիցէ ինձ, և մարդ որ զճանապարհս իմ պահիցէ. զի որ զիս գտանէ՝ գտանէ զկեանս, և ընդունիցէ զփրկութիւն 'ի Տեառնէ։» Առակ. Ը. 34։

«Ընդէր բնաւ ամբարիշտք կենդանիք իցեն, հնացեալք և 'ի մեծութեան են։» Յոբ. ԻԱ. 7։

«Երանելիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա. նոքա ունին իշխանութիւն ուտել 'ի փայտէն կենաց՝ և մտանել ընդ դրունս քաղաքին։» Յայտ. ԻԲ. 14։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Ա. Առաքինութիւնն է գործադրութիւն օգտակարաց, և խորշումն 'ի վնասակարաց յառս և 'ի կիրս՝ ըստ առաջնորդելոյ ուղիղ բանին, հաստատեալ 'ի մէջ երկուց մոլեկան ծայրից։ Դարձեալ՝ առաքինութիւնն է բարեկարգ ունակութիւն հոգւոյ, որով վարի մարդ ըստ օրինի 'ի խորհուրդս՝ 'ի բանս՝ և 'ի գործս, որք կամ յԱստուած, կամ առ ինքն, կամ առ ընկերն վերաբերին։

Պարտէն օրինապահ, բարեպաշտ, արդար և երկիւղած ասի, որ անթերի կատարէ որ ինչ օրինադրեալ է 'ի վերայ իւր յԱստուծոյ՝ կամ 'ի լուսոյ բա-

նին, և խորշի յայնմ ամենայնէ յոլոց արգելուն զ-բէնք, այլ տակաւին ոչ է՝ և ոչ ասի նա կատարեալ առաքինի։ Բանզի 'ի լինիլ մարդոյ կատարեալ, խընդրի առնել ինչ՝ որ իցէ գերազանց քան զհասարակ կանոնական պատուէրս և հարկադրութիւնս. վասն զի ամ և իցէ ուստուիրան աստուածային օրինադրեալ մարդկան, համարի նմա պարտք, զոր եթէ կատարէ՝ ազատի 'ի պարտուց, և եթէ ոչ կատարէ՝ մնայ պարտական, և զրկի 'ի վարձուց զոր խոստացաւ Աստուած այնոցիկ՝ որք ամբողջ պահեն զամենայն հրամանս իւր։

Իսկ նա՝ որ յառաւելութենէ սիրոյն առ Աստուած առնէ զգերազանց գործս բարիս՝ անդր քան զոր 'ի 'ի հասարակի պահանջէ, յայնժամ կոչի կատարեալ առաքինի. որոյ վարձք այնքան առաւելու քան զայլս՝ որքան ինքն առաւելու 'ի գործս բարեաց։ Բանզի առաքինութիւնն յառաւելութենէ ասացեալ է, որպէս թէ զբարին առաւել քան զայլս տրար. վասն այնորիկ որ 'ի մեզ առաքինութիւն անուանի, առ Աբրահամայիս՝ ֆալելեի կոչի, որ է առաւելութիւն։

Այս զի՝ առաքինին կազմի 'ի բառէս այր, յորմէ ածանցին և բառքս արու՝ կամ արի, և ստուգաբանի ունող այրութեան կամ արիութեան, որ այն ինքքն է՝ արքենի, քաջ, վեհանձն, զօրաւոր քան զայլս. յայս միտ ասէ Յղիշէ. "Արուք առաքինիք 'ի հոգեւոր պատերազմի։"

Արդ՝ օրինապահ ասին նոքա, որք զամենայն հրամայեալ օրէնսն պահեն. կոչին եւս բարեպաշտ, կամ բարեգործ. զի բարի են օրէնքն՝ զոր Աստուած կամ սուրբ եկեղեցին օրինադրեաց. ասին և արդար, զի արդարութիւն է՝ հնազանդելոյ զհրամանս Տեառնն կատարել. կոչին և երկիւղած, զի երկնչին Աստուծոյ, որ բարկանայ այնոցիկ որք ոչ առնեն ըստ

հրամանս իւր։ Ալբերտն առ 'ի լինել ուժեղ կատարեալ առաքինի, արժան է նմա տառաւել քան զայլս 'ի մարգկանէ վաստակիլ 'ի գործս բարիս, և խորշիլ 'ի չարեաց։

Այլ զինչ ասելի է զնոցանէ որք ոչ միայն թերանան 'ի գերազանց առաքինական գործոց, այլ և քաղաքացիք ակամայն յայնս՝ որք միօրինակ պարտաւորք են զամենեսեան պահել, գուցէ և զընդդէմն առնեն հրամանացն Աստուծոյ և օրինադրութեանց տուրբ Եկեղեցւոյ։ Այդ նոքա որք ոչ պահեն զօրէնս, մի ակնկալցին զվարձս օրինապահաց և առաքինեաց առնուլ յԱստուծոյ. զի յանդգնութիւն է՝ մանաւանդ թէ յիմարութիւն՝ առանց արդեանց յաւսալ և ակն ունել վարձուց։

Բ. Առաքինութիւնն է կրկին, աստուածաբանական և բարոյական։ Աստուածաբանականն բաժանի յերիս, 'ի հաւատս, 'ի յոյս և 'ի սէր։ Բարոյականն բաժանի 'ի չորս, 'ի խոհեմութիւն, յարդարութիւն, յարիութիւն և 'ի բարեխառնութիւն. որք առանց միմեանց ոչ գործին, և ոչ առնեն զոր կատարեալ առաքինի. ուր մին 'ի նոցանէ անթերի կատարի, այլք զհետ նորա հարկաւ հետեւին շրջաթայաբար։

Քանզի որ ունի զկատարեալ հաւատս, հետեւի նմա ունել զյոյս աներկմիտ. և զսէր անկեղծ. և 'ի նշան արդեանց կատարելութեան սիրոյ՝ պահանջին գործք բարոյական առաքինութեանց, որք գործին խոհեմութեամբ, արդարութեամբ, արիութեամբ և բարեխառնութեամբ, որովք իբրեւ աստիճանաւ ժամանեն 'ի կատարելութիւն առաքինութեան, և արժանանային 'ի վայելել և 'ի ժառանգել զերկնային փառսն, զոր խոստացաւ Աստուած սիրողաց իւրոց. զաստի առաքինութիւնք են միջոցք և ճանապարհ

տաւ երկնային փառան, առանց որոյ չէ երբէք հնար հասանիլ։

Այլ սակայն ճշմարիտ առաքինութիւնք կախումն ունին զշնորհացն Աստուծոյ, և նոքաւ արդիւնաւորին, և շնորհք Աստուծոյ պարգեւին յարդեանց չարչարանացն Քրիստոսի. վասն որոյ ճշմարիտ առաքինութիւնք՝ միայն 'ի քրիստոնեայս գտանին, և ճշմարիտ առաքինիք՝ միայն քրիստոնեայք են։

Թէպէտ և արտաքոյ քրիստոնէական հաւատոյ գտցին ոմանք, որք յոգդաբարութենէ լուսոյ բանին և բնական օրինաց վարեցին խոհեմութեամբ, ազգարութեամբ, արիութեամբ, բարեխառնութեամբ, և ստացեալ եւս իցեն յանձինս իւրեանց զքաջնութեան, զգաստութեան, ժուժկալութեան, խնարհութեան, հեմբերութեան, որք և իցեն ողջմտութեամբ և աղօթասէր, այլ ոչ ասին տիրապէս առաքինք։

Զի այսպիսի բարոյական գործք առանց շնորհացն Աստուծոյ՝ համարին իբր բնական գործողութիւնք. իսկ բնական ճանապարհաւ ոչ ոք կարէ գալ նալ առ գերբնական երջանկութիւնն, վասն որոյ առաքարդիւն լինին 'ի ստացումն երանական փառաց առ մեծաւորք Արարչութեան։

Վասն զի 'ի ժառանգել զԱստուած՝ պիտոյ են շնորհք, որք բղխին յարդեանց չարչարանացն Քրիստոսի. ուրեմն ոչ է ճշմարիտ առաքինի՝ որ ոչ ունիցի զհաւատս սուրբ Արարչութեան և Անանին մարդեղութեան. զի ոչ կարէ ընդունակ և արժանաւոր լինիլ աստուածային շնորհացն, նմին իրի և ոչ ժառանգ երանական փառացն Աստուծոյ։ Զայս պարտէ նախ քան զամենայն ունիլ զուղիղ հաւատս քրիստոնէական, և հետեւապէս զառաքինական ունակութիւնս և զգործս բարիս։

Այլ թէպէտ նախ քան զԲրիստոս 'ի բնակիսն և

'ի գրական օրէնս բաղդաւ հաճոյացան Աստուծոյ, այլ ոչ առանց շնորհացն Քրիստոսի, զի հաւատային 'ի գալոց Սեսիայն, ըստ այնմ. «Աբրահամ հայր ձեր՝ ցանկացաւ տեսանել զօր իմ. եւ տես եւ ուրախ եղեւ։» Յովհ. Ը. 56։ Եւ թէ՝ «Խաղաւմ մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէք, ի ոչ տեսին, եւ լսել զոր լսէք, եւ ոչ լուան։» Մատթ. ԺԳ. 17։

Գ. Արդ՝ ամենայն ազգ մարդկան ունին զհաւատս ինչ ուղիղ կամ մոլար՝ իբրեւ պարտք իմացաւ կան բնութեան, վասն որոյ եւ առ Աստուածիս հաւատան ասի պին կամ գէր, որ նշանակէ զպարտս։ Քանզի իմացական միտք հարկաւ ինդրէ տեղի ինչ տարաստանի՝ յոր ապաւինեսցի եւ գոյցէ զհանգիստս մինչ վերանեալ տարակուսի եւ տանջի վասն այնպիսի՝ որոյ ոչ կարէ բնականապէս հասու լինել, եւ զորս պարտ եւ մեկն ըմբռնել։

Վասն զի յատկութիւն է իմացականին իմանալ ինչ՝ որ 'ի վերոյ իցէ քան զբնականն, եւ այս է զոր ուսուցանէ հաւատքն։ ապա թէ ոչ՝ մարդն լինէր ա նարգ քան զանբան կենդանիս, որք առաւել քան զմարդ զգան զբնականս եւ զապրեցութիւնս նոցա, եւ գիտեն կատարելոյ 'ի բնութենէ իւրեանց։

Քանզի աշխարհս եւ որ 'ի նոսա՝ ստարան յանհուն փարոզութենէն Աստուծոյ. եւ մարդն հունաւոր կարողութեամբ իւրով ճարտարեաց զարհեստական իրս 'ի գիտութիւն պիտոյից իւրոց, եւ քան ձեռքն հնս գոլոյ՝ զարգուամ բնական իրս դարձուցեաց բնութեան եգիտ տչնտանութիւն։ բայց սա այն սր գէր 'ի վերոյ է քան զբնականն, ոչ կարէր թեւակոխել մինչ կանուն, այլ կարօտ էր գերբնական զօրութեան։

Վասն զի ամենայն ինչ որ ունի զէութիւն կամ զգոյ՝ յերիս բաժանի։ յարհեստական, 'ի բնական,

եւ ի գերբնական։ Բրհնաւորութեան է ի վայր քան զամենայն մարդոյ, զի ի մտաց հնարեալ անուանակոչութիւն բնականն հաւասար է մտաց. իսկ գերբնականն ի վեր է քան զմիտս, ուստի կարօտի մարդ գերբնաւորեան շնորհաց, զի կարողացցի իմանալ զգերն ի վերոյ գոյն քան զինքն։

Եթէ՝ առաջին մարդն Ադամ ընկալեալ ունէր զգերբնական շնորհս, որով ճանաչէր զմի Աստուած ճշմարիտս եւ պաշտէր զնա, զոր եւ յեռանդուցն անուանեաց։ Այլ զկնի ջրհեղեղին ի բազմանալ մարդկան ի վերայ երկրի՝ սերունդք նորա մոռացան զանանձնութիւնն միոյն Աստուծոյ ճշմարտի, եւ անձնասէրք եղեն յազգի ազգի մոլորութիւնս. ասիացիք ոչ իսպառ անհետ եղեւ կրօնասիրութիւնն ի մարդիս կանէ, զի զհետ եղին իւրքանչիւր բազմութիւն ժողովրդոց հնարել զպաշտելի ինչ։

Բանդի այս ինչ բնական է մարդոյ, ունել զինն պաշտել՝ որ ի վեր հանդիպիցի քան զամենայն, եւ իցէ ստրկիչ եւ խնամող ամենայն ստրուածոյ, որ ի մեր լեզուս կոչի Աստուած։ Այլ ըստ նախնի հայոց սուտ գաղափարի՝ ասք էած զմեզ, այսինքն հնարումս, փոխ ի հանդուն ածող, այսինքն է հանուիչ. այլ կարի՞ն ասուն գաղափարիլ ազգաց, այսինքն սուղեցեալ, կամ հրատարակեալ, եւ կամ ծանուցեալ։ Բանզի չէր ինչ այնքան ազդեալ եւ ծանուցեալ առ ստրուածս քան զդէմն Աստուծոյ, որպէս եւ չէր ինչ այնքան լուսաւորեալ եւ ծանկեալ՝ քան զինչութիւնն Աստուծոյ, որ առաւելով ճանաչի բարդասիան անուամբ՝ քան զանոր բարդասիանաւ, զի ի վեր քան զմիտս է. ուստի զարդարեալ միայն զգոն նորա ճանաչել, եւ նմա պաշտօն մատուցանել, առ որ եւ բնութիւնն մեր ինքնին ձգիտի։

Զանն որոյ զոյլ եւ այլ կրօնս հեթանոսութեան անհանգիստն մարդիկ թեկնածութեամբ դիւ լին, որ

մարմնոյն զնոսա 'ի բազմաստուածութիւն, և 'ի զանազան ազանդս պաշտաման կուռց և ստեղծուածոց, որպէս զի նոքաք զբաղեալ դադարեցին 'ի խրն դիր լինելոյ ճշմարիտ աստուածգիտութեան։

Այլ գտան 'ի նոսա այլք իմաստասէրք որք բբ նական լուսով ծանեան՝ թէ սնոտի են պաշտամունք կուռց, և խնդրէին գտանել զհեղինակն բնութեան զմի միոյն ճշմարիտն Աստուած, մինչեւ. վերանալ մտաքն 'ի կամարս աստեղաց։ Ուստի 'ի շարժմանէ և 'ի պատճառելութենէ ստարածոց մակաբերեցին՝ թէ գոյ գերագոյն Անկ ինքնագոյ՝ անշարժ և ան պատճառ. որպէս զի վերամակահն էր 'ի նոսա՝ ասէր. Զոմն որ շարժէ, և ոչ շարժի, և ամբաւագոյն է, և նմա տալի է պաշտաման։

Այլ թէպէտ ծանեան նոքա զԱստուած, այլ ոչ որպէս արժանն էր ճանաչել, և ոչ եւս իբրեւ զԱստուած կարացին փառաւորել կամ գոհանալ, որպէս նշանակէ առաքեալն։ Բանզի ոչ էր հնար մարդոյ բնական գիտութեամբ վերանալ առ ծանօթութիւն գերբնականին, զի զգալի կարողութիւնն չուներ հաղորդութիւն առ իմանալի աստուածայն։ Զոմն որոյ գթայեալ Աստուծոյ 'ի գործս ձեռաց իւրոց՝ յայտնեաց զինքն առ նահապետսն ազգի ազգի տեսլեամբ, զրնակոք, խոստմամբ, և գրական օրինաք, որովք իբր զմանկունս նորակիրթս վարժէր զմարդկայինս բնութիւն յայրբեռնարանի ուսման ճշմարիտ հաւատոյ։ Այլ հուսկ յետոյ ոգեւորին իւրով Քրիստոսիս տերութամբ մերով յայտնեաց, և ուսոյց զճշմարիտ և զկատարեալ հաւատս աստուածապաշտութեան, որ նոյն ինքն է քրիստոնէական սուրբ և ուղղափառ հաւատքն։

Զպակէն բաց 'ի քրիստոնէական սուրբ հաւատոյ՝ ոչքան և զանազան ազանդք կամ կրօնք իցեն, ոչ են

Աշխարհս հաւատաց. զի կամ ոչ են հասեալ առ ի Աշխարհս աստուածանաթութենն՝ որպիսի է կամ պաշտաւորեանն, կամ թերի մնացեալ են ի Աշխարհս աստուածանաթութենէ՝ որպիսի է հրէականն. և կամ խառնուրդեալ յուղղութենէ Աշխարհս հաւատոյ սեռական և գործնական մոլորութեամբ, որպիսի են հերետիկական ազանդքն, որք են թիւր աւանդութիւն՝ անպիտան առ Ժառանգութիւն յաւիտենական փառաց։ Ելեալն քրիստոնէականն է միայն Աշխարհս մարիս հաւատոյ, որում միայն Ճանաչի Աշխարհսն Աստուած՝ մի էութիւն յերիս անձինս, ի Հայր՝ և ի Որդի՝ և ի սուրբ Հոգի, և հաւատացեալ լինի մարդեղութիւն Բանին Աստուծոյ, որպէս և սուրբ եկեղեցին ուսուցանէ ի հանդանակին և ի գաւանութեանն։

Դ. Որպէս մի է Աշխարհսն Աստուած, մի է լոյս գոյացութեան և Աշխարհս հաւատոյ յամենայն ազգս և ի լեզուս ուղղափառ քրիստոնէից, որ յառաքելոց անտի անընդհատ յաջորդութեամբ մինչև ցայսդ կայ հաստատուն ի մի՝ սուրբ՝ կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոջ, և կայցէ մինչև ցյաւիտեան։ Այս ամենայն եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս ամենայն՝ պարտութեամբ ամենայն ուղղափառ ազանց, են և ասին կաթուղիկէ եկեղեցի. որպիսի է Հայաստանեայց սուրբ եկեղեցին հիմնեալ ի վերայ քարոզութեան սուրբ առաքելոց, ի սահմանադրութեան ուղղափառ ժողովոց, և յոչ ջամիս վարդապետութեան սուրբ հարց։ Եւ խրատքանչիւր քրիստոնեայ՝ յորմէ ազգէ և իցէ, որ զնոյն Աշխարհսութիւն հաւատոյ ունի, է ուղղափառ։ Եթէ ընդ ուղիղ հաւատոյն արասցէ և զգործս բարիս, և բարի խոստովանութեամբ ելցէ յաշխարհէ՝ լոյս կանոնաց սուրբ եկեղեցւոյ, է որդեգիր Աստուծոյ

ծոյ և ժառանգ երկնից արքայութեան։

Ե. Խաղաղութիւն միայն ճանաչեն գանձինս թէ են քրիստոնեայք, բայց ոչ գիտեն զհարկաւորս գիտելիս քրիստոնէական հաւատոյ և ուղղափառ վարդապետութեան։ Զանազանս որոյ ի լինել խօսիլ զհաւատոյ և զվերաբերելոցն առ հաւատն, զնդդէմս ուղղափառութեան խօսելով մերժանչեն, կամ տարտղնոյ ցիչ մեն խօսելով ընկենոյ առիթս ասան զպաշտպանս թեան։ Բերեն արժանի ամենեցուն գիտել զայնս՝ որք առ հաւատաղիսն վերաբերին, և կարեւորք են ի փրկութիւն։

Զ. Պարտաւորք են ծնողք, ուսուցիչք, կնքաւորք և խաչատվնահարք առաջանել հաւատակից զիւրեան մատնոն հաւատոյ, և զուշադիր վարդապետութիւնս՝ ըստ աւանդութեան առքն եկեղեցոյ, եւս և զարտաքին առաքինութիւնս։ Ի ոչ զղջանիս հաւատքն է՝ որ ասոյ ճանաչել զԱստուած, և՝ է նա հիմն և խարիսխ ամենայն առաքինութեանց առ որս յարի յոյսն, որ է աներկիւղս ակնկալութիւն ի Փառանգել զնոսանցն բարին, զոր ծանայց հաւատքն։ առ նմին յարակցի և սէրն, որ է միաւորիչ ընդ այնմ զոր հաւատոյ, և առ որս յուսոյ մարդն։ Եւ ասի հաւատն ասոյ ճանաչել զԱստուած, յոյսն առ այնն հաստատեալ, և սէրն միաւորեալ։

Զ. սէրն կատարեալ ոչ գիտէ դադարել ի ներգործութենէ իւրմէ. զի եթէ առ վայր մի լռեսցէ ի սիրելոյ, անդէն կորուսեալ զգործս թիւն իւր շինմանի և որպէս թէ մեռանի. վասն որոյ հարկաւոր է նմա ելս դանել միշտ զներգործութիւնս սիրոյ, այսինքն սիրել զԱստուած ի մեր բոլոր զաւանեալս, զհանապազ զնմանէ յամենայնի, որ հնար՝ ոչ խնայել յինչս և ի սիրելին, ի մարմին և ի կեանս փոխն սիրոյն Աստուծոյ։ Խորշիլ յամենայն մեղաց, միաբանութեամբ

արդեւ ծառայել նմա, կատարել զամենայն կամս նորա, ճանաչել զերանութիս նորա, յաւասալ ամենայնի առ նա, և յանձինս բերել զայլ ամենայն աստուածահաճոյ առաքինութիւնս, որք վերագրեցին յամբ բողջութիւն և 'ի կատարելութիւն սիրոյ։ Զ. 'ի սէրն է պատակ հաւատոյ և յուսոյ, և ըստ առաքելոյն է լուսեղ օրինաց. զի զսիրոյն պատուիրանէ ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան։ Այս հաւատքն է իբրեւ արմատ, յոյսն իբրեւ ոստ, և սէրն իբրեւ պտուղ։

Է. Հաւատքն և յոյսն դադարին ըստ ներգործութեան՝ 'ի ժառանգել հաւատալեաց և յուսալեաց, և մնան միայն ըստ ունակութեան։ Իսկ սէրն որ առ Աստուած՝ ոչ երբեք գիտէ դադարիլ, թէ ըստ ներգործութեան և թէ ըստ ունակութեան. մանաւանդ թէ առաւել աճի և զօրանայ, յորժամ զսիրելեաւն փարի և ընդ նմա միանայ։ Իսկ նշան սիրոյն Աստուծոյ՝ է սէրն ընկերին. զի զԱստուած պարտ է սիրել վասն իւր, և զընկերն վասն Աստուծոյ։ Եւ ո՛ զգաստացէ զվիճակ նոցա, որք բանիւ ընկերք խոստանան ունել զսէր, բայց իրօք և ոչ մի ինչ ազգիւնս սիրոյ ցուցանեն առ Աստուած և առ մարդիկ։

Ը. Առաքինին յամենայն 'ի կեանս իւր երկնչի և դողայ, զի մի կորուցէ զարգիւնս առաքինութեան իւրոյ, ըստ այնմ. «Հիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք։» Փիլիպ. Բ. 12։ Այլ այս երկիւղ ոչ պատճառէ 'ի նմա զարտմական և զտանջոզ կիրս, այլ յաւէտ յառաջ ածէ զմտապիւր և զուրախական բերկրութիւնս, ըստ այնմ. «Երախ եղեցի սիրտ իմ յերկնչիլ յանուանէ քումմէ։» Սաղմ. ՃԺ. 14։ Եւ որքան վերամբարձ թռչի այնպիսին 'ի բարձրութիւն առաքինութեան, այնքան զօրանայ 'ի

նմա երկիւղ անկմանն. և որքան երկնչի յանկմանէ, այնքան վերասլանայ 'ի գագաթն գերագոյն առաքինութեանց։ Լաստի ոչ ինչ փոյթ է նմա զլկիլ յլնչ չնչոյ, անկանիլ յիշխանութենէ, տարապրիլ 'ի հայրենեաց, կորուսանել զառողջութիւն և զմարմն, զի քաջ գիտէ նա, թէ սոքա են անցաւոր և 'ի բնութենէ իւրեանց կորստական. իսկ վարձք առաքինութեան՝ որ է փառքն արքայութեան, է անկողոպտելի, և յաւիտենական մեծութիւն հոգւոյ։ Զայն որոյ ընդ սէսպէս ձախորդութիւնս աշխարհի որք կարեն պատահիլ ինքեան, ոչ տիրի և ոչ ընկճեալ լքանի, այլ ինդամիտ բերկրանօք հրճուի և զբանայ 'ի հոգի իւր, զի ունի աներկբայ յոյս առնուլ 'ի Տեառնէ զվարձս վաստակոց իւրոց 'ի յաւիտենական կեանս։

Թ. Այր առաքինի և կատարեալ չանէ 'ի միտս զբարին զոր արար, և ցաւի ընդ այն զորով ատրամութեամբ զանց արար։ Զիշատակէ միշտ զերախտիս բարերարին, և մուանայ իսպառ զանիրաւութիւնն զոր կրեաց յումեքէ։ Խաւական համարի զիւր սակաւ գոյն, և աչ ինչ վարկանի զայլոց զբազումն։ Ընկերակցի ընդ արանց բարեաց, և հեռի կայ 'ի հաղորդակցութենէ չարաց։ Դաւջի մեծամեծաց պատկառ կոտ կայ և լռէ, և ընդ հաւասարս և փոքունս սիրոով կենցաղավարի։ Ի բարս հեզ է և խոնարհ, և 'ի բանս քաղցր և սակաւախօս, և առ ամենեսին հաւասարիմ։ Ի յաջողութեան ոչ բարձրամտի, և 'ի ձախողութեան ոչ լքանի. լինի բարեկամ սակաւուց, և թշնամի ոչ ումեք։ Մենեցուն բարիս առնէ որքան կարէ, և ոչ ումեք չար ինչ առնէ՝ թէ և կարէ։ Իսկ յաւուրս մերս նա ոչ գիւտ ումեք, որ չէ կարող գիւտեալ. զի ժամանակն գոլով չար, հազիւ գտանի որ ուրեք, որ կարող իցէ գիւտեալ՝ և ոչ գիւտեցեալ։

Ա. Լուսաբանեն յաւէտ կասկի ի կենաց զանկն՝ քան զհամբաւ բարեմասնութեան խրատ բծաւորել, հասատակաղ ի վերս՝ թէ կեանք աշխարհս այսորիկ դիւրաբեկական է և անցաւոր, խակ համբաւ բարի անմահ է և մշանջենաւոր. և անմահութիւն է փոխանակիլ զմշանջենաւորն ընդ անցաւորին։ Լուսոյ յաւուրկ է առաքինութեան առանց ակնկալութեան բարի համբաւոյ գործել զբարին, և եթէ համբաւ չար հանիցեն նա, չարամիտ ընդ այն, այլ ջանալ զի մի չար ինչ արասցեն ինքեան։

ԺԱ. Որ զբարեխնամս մինչ բարեհամբաւեն ընդ նա այլք, և արամի՝ մինչ անուն չար հանեն զնմանէ. ծառայէ յոժարութեան և լեզուի այլոց. քանզի մարդիկ ոչ հայցին ի ճշմարիտն կամ ի սուտն, այլ որպէս կամին և ախորժեն՝ այնպէս համբաւեն։

ԺԲ. Լինեցին մեծագործ շինուածք հնութեամբ ժամանակին կարէն անհետանալ, բայց անուն բարի ոչ բնաւ կորնչի։ Նարեալ է մեռանիլ բարի անուանքն՝ քան կեալ վատահամբաւութեամբ. զի որ թողաւ համբաւ բարի յաշխարհի, նա և յետ մահու մեռոյ կենդանի. խակ վատահամբաւն կենդանոյն մեռեալ է, թէ և ապրեսցի զամս բազումս։

ԺԳ. Զէ նա կատարեալ և պատուելի, որ ունի զհամբաւս կատարելութեան և զպատիւ, այլ նա՝ որ ունի զկատարելութիւն յինքեան և արժանաւորութիւն պատուոյ։ Զի են բազումք որք ունին զհամբաւս կատարելութեան և զպատիւ, այլ չունին զկատարելութիւն յանձին և արժանաւորութիւն պատուոյ։ Եւ են բազումք որք չունին զհամբաւս կատարելութեան և զպատիւ, բայց ունին զկատարելութիւն յանձին և արժանաւորութիւն պատուոյ։ Լաւ կայն լաւ է լինել կատարեալ և պատուելի՝ քան տալ զհամբաւս կատարելութեան և զպատիւ։

Պատմեն նման է ծիծաղ, և որ զհետ ունդի, ոչ պակասի նոքա ապուռար վուշաց։

ԺԴ. Փութալն է գովութեան լինել արժանաւոր, բայց փախչելի է 'ի ընելոյ զգովութիւն։ Որ ախորժէ լսել զգովեստս իւր, կորուսանէ անդէն զարժանաւորութիւն իւր։ Այր կատարեալ յորժամ ասի երեսաց զգովեստս իւր լսէ, 'ի սրտի իւրում պանձն անգամանէ։ Ախորժակն լսելոյ զգովեստս անձին, է նշան սնափառութեան։ Ոչ մարիս գովութիւն դէմ յանդիման՝ է նման սուտ մարդահաճութեան։

ԺԵ. Բազումք են որք գովին, բայց սակաւք են 'ի նոսա արժանի գովութեան։ Ամբաւն բազում անգամ չէ հաճաչսի ընդ իրին՝ որ գովութեամբ հաչակի. զի հայաբակութիւնն սակաւ է առանց քաջ տեղեկութեան՝ 'ի վերք քան զճշմարտութիւն իրին հաչակ հաբկանել։ Ամբաւն է սառուեր մարմնոյ և գեղեալ յարեւու, որ մերթ աճի քան զմարմինն՝ և մերթ նուազի. վասն որոյ չէ արժան ամենայնիւ հաւատս ընծայել համբաւոյ, այլ մանաւանդ խնդրելի է ճշմարտութիւն իրին։

ԺԶ. Ամբաւ գովութեան իմաստնոց կամ առաքինեաց որ հնչէ 'ի բերանս ռամկաց, նման է օդոյ՝ որ դիւրաւ փոփոխի յամենայն գոյնս։ Օ՛յ թէ հաճատալ արժան է, եթէ ջուրք ծովու կարեն մնալ ան շարժ 'ի հողմոյ, հաւատալ 'ի դէպ է և համբաւոյ ռամկաց. այլ որպէս 'ի մեղմ ինչ հողմոյ շարժին ջուրք, նոյնպէս և 'ի դոյզն մի կարծեաց փոփոխի դիտումն և համբաւ նոցա։

Անարիմաստ է զմասնաւոր բարիս ուրուք գովութեամբք հաչակել։

ԺԵ. Այր առաքինի պարտ է լինել ներանձնաւոր՝ որպէս զի խոսեալն ընդ մարգոյ սակաւ, ընդ անձին յաճախ, և ընդ Աստուծոյ միշտ։ Ներանձնութիւնն

բանաստեղծաց զիրարին եղանակ յիրարին։ Ի խառել ընդ Աստուծոյ. զի Աստուած ոչ խառի ի որոշի ստրոգի բոյրդ եթէ ի միաբանութեան նորա։

Աստուծոյ խոստացութեան մարդոյ բան որոշեալ է փոքր՝ վերանի յերիս. կամ ի գովութիւն Աստուծոյ, կամ առ ի ուսանել զնշանագիրս ինչ, կամ առ ի ուսուցանել զիարեւորս. իսկ զոր խոստիցի ոչ ասաւոր ի տեղանէ, խոստովի ի սահմանէ մարդկութեան. զի անդէն անկանի կամ ի տրտնջանս զԱստուծոյ, կամ յուսաւանն մերթութեան, կամ յուսացանել զանպատմանս։

ԺԸ. Աստիճանութիւնն առաւել ասի ի կրել ընդ նեղութիւնս վասն Աստուծոյ. և որ սիրով զիրիս ասիցեն խաչին՝ ոչ զդայ զդժուարութիւն ինչ։ Զի յորժամ հաստատութեամբ գնէ ոչ ի մտի կրել ընդ միշտս՝ առ ի տարհել զհաւատն. և զերն Աստուծոյ միշտն անդէն վախճան առնուն։ Այս որ ի միտս առնի զչարչարանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. հասցէ բերէ տամենայն նեղութեան աշխարհի, մանաւանդ զի արժանի համարի զանձն դառնագին եւս վշտաց և նեղութեան։

Ցանկ միշտ ելոյ արդելու զյաճախակոզս մտանել յայդմն. և ապականել զարդիւնս նորա. նեղութիւնք և վիշտք՝ Հոգւոյն Թշնամւոյն հոգւոյս մտանել ի սիրտս ուսաքինեալսն, և կազմուտել զարեւմտութիւն նորա։

Որ կարէ բառնալ զնաչն ի վերայ ուսոց, չէ արժան նմա զանանգարշ ածել։

ԺԹ. Չէ արժանի վարձուց որ առնէ զարին, այլ որ համբերութեամբ յարատեւէ ի նմին. զի խոպան համբերութիւն է՝ որ պակէ զգործն բարի։ Որ յեռաս կապի ի բարւոյն զոր սկսեալ է առնել. խանգարէ զարարեալն, և չէ յայտ՝ թէ կարասցէ առնել լաւագոյն եւս քան զայն։

Ի. Ի՞նչ բանաւոր վարձք և պարգեւք բաղձանան, մինչ կարասցէ բեղմնաւորել զարդիւնս բարեաց 'ի դատն վիշտս. զի յայնժամ նմանի երկրի, որ քաւաւորանիցէ զշուշանս 'ի մէջ փշոց։ Բանդն և մարդիկ զարմանան և գովին, յորժամ տեսանեն զերկիր փըշահեղձ՝ լի շահեկան պտղով։

ԻԱ. Եւ՝ 'ի պարամեցին առաքելիք՝ մինչդեռ տեսանեն զայրս 'ի յաջողութեան ճոխացեալ, և զինքեան նոքա յանցաջողութեան ներգեւեալ. այլ յայնժամ պարտ է նոցա տրտմիլ, մինչ տեսանեն՝ թէ յօրացեալքն 'ի մեծութեան ոչ ունին փոյթ զաւաքի նաւթեանց։

ԻԲ. Գործք դժուարինք և իբր անհնարինք՝ դիւրաւոր են այնմ որ անձանձիր ջանայ գտանել զերս. գործք դիւրինք՝ դժուարին լինին այնմ որ դանդաղի մեղկութեամբ և լքանի։ Որ կամի լինել առաքինի, աշխատ լիցի կրթել զանձն իւր 'ի գործս առաքինութեան, որ թէպէտ 'ի սկզբանն երեւի կրել դժուարութիւն ինչ, բայց ապա զգայ զանակնկալն ի մեծ դիւրութիւն և զհանգիստ, որպէս վաստակեալն 'ի ճանապարհի՝ մինչ հասանէ յիջեւանն, և նաւագնացն՝ 'ի դէմ եղեալ նաւահանգիստն։

ԻԳ. Զէ քաջութիւն զինուորի մղել 'ի պատերազմ, այլ յաղթել թշնամւոյն։ Որ պանծայ 'ի քաջութիւն իւր 'ի ժամանակի խաղաղութեան, վաղ սաճապարէ 'ի փախուստ 'ի ժամու պատերազմի։

Պատերազմ է կեանք մարդոյ 'ի վերայ երկրի, և յաղթողք ժառանգեն զմրցանակն։ Արդ՝ է մարդ որ մարանչի ընդ անձին, է՝ որ ընդ աշխարհ, և է՝ որ ընդ մարդ. բայց ոմն յաղթէ, և ոմն յաղթի։ Յաղթէ նա անձին, յորժամ զանկարգ բաղձանս իւր նուաստէ. յաղթէ նա աշխարհի, յորժամ զփնտուս և զմեծութիւն արհամարհէ։ յաղթէ նա մարդոյ, յոր-

ամամ բարձս առնէ ամենեցուն, և հանիցէ զնա
առ՝ զոր ընդունի յանկաս մարդկանէ։

Իսկ յաքիր յանէնէ, յորմամ զկնոջս մարդոյն
կոչարէ։ յաքիր յոլովանէ, յորմամ փառաց և մե-
ծութեան ծառայէ։ յաքիրի մարդոյ, յորմամ շար փա-
խանակ շարի հատուցանէ։ Զոր ընտրեցուք յաքիրդ
զառնիլ յամենայնի, զի առցուք զարքայութիւն։

ԻԴ։ Զոր զիտարիս է՝ զոր առ ոմի կոչառնան
ընկեց կամ մեծութեան յանէն առնու անիրաւիլ առ
Զառաւած կամ առ ընկեր։ զի լաւ է մեռանիլ քա-
ղաքութեամբ՝ քան կենալ յանցաւորութեամբ։

ԻԵ։ Ծանեաք եղիր ոչ ընտրացին զարդս գործել
առաւել քան զերկրաւորդս, ոչ կարին արդարա-
նալ։ զիարդ զի ի ծերս Թաւրցիոյ են բանաքիւնք
սիրաւորք կրեալ։ և զի մերձ են երանիլ յանուի կին,
ցաղբայ, զարդարին զարշարս յաւիտենական ուրացին
զարդարաւոր ունիլ միշտ։

ԻԶ։ Զոր յերկրաւորդս Թեան իւրում զարդանաւէ
զեռանդն հատակին զոր կրեալ, և ոչ առաքինարար կեաց
եղեալ՝ ի մահ՝ ի ժամանակի ծերութեան գործել
զառաքինութիւն, այնոքիսին յորմամ հատանի ի ծե-
րութիւն և մտանի ի գրուանս մահու, ունի զարդ-
հառաւել զանարդութիւն մարդոյց։ Զոր քանզի չէ հրա-
նարդ ի գերեզմանի գործել զառաքինութիւն, ապա
իրաւամբ ժառանգէ զարդարեալ հեղգութեան իւրոյ։

ԻԷ։ Կեանքս մարդոյն է հոգին, և կեանքս հոգւոյն
է հաւատքն կենդանի։ կեանքս հաւատոյն է սէրն, և
կեանքս սիրոյն է յոյսն։ կեանքս յուսոյն է խոստաւ-
ծոյ՝ և կեանքս խոստմանն է ճշմարտութիւնն
Զառաւածոյ, որ ի խոստմանն է հաստատեալ։ Զարս պինդ
կալցուք զհաւատոյն ճշմարտութիւն, որով հանդերձ
չեմք զճշմարիտն Զառաւած, սիրեմք զնա, և յուսամք
անարեւութեան արարչութենէ նորա զոր խոստացաւ։

շնչիցեն այնոցիկ, որք հաւատով յուսով և սիրով ծառայեն նմա։

ԻԸ. Փառք կենդանոյս և հեշտութիւն մարմնական՝ նախ քան զառացանիցն քաղցր թուին, այլ զկնի առացանն դառնացուցանեն զախտաժանն մարդոյ. իսկ պիտութիւն և առաքինութիւն՝ որք են մտայ և հոգւոյ հեշտութիւն, զնիրհանին գործեն. զի յառաջագոյն քան զառացանիցն գառն և դժուարին թուին, այլ զկնի առացանանիցն քաղցրացուցանեն զհոգին, զոչ մի ասէ մարդ արէն։ Դ՝ասչակեցէք և տեսէք, զի քաղցր է։ Սաղմ. ԼԳ. 9։

ԻԹ. Առաքինութիւնն որպէս է գեղեցիկ, նոյն պէս է և փափաւէ, մինչ զի դոյզն մի պակասութիւնեանէ վնասակս առնուորի. զի է իբրեւ պարզ հայելի, որ 'ի չգրեալսն աղօտանայ, կամ իբրեւ դիւրաբեկ ապակի, որ 'ի թեթեւ ինչ բաղխմանէ խորտակի. փառք որոյ զգուշացին առաքինիք յինչ և ինչէ պակասութենէ, զի մի ուղեղասցին գեղափայլ երեսք առաքինութեան իւրեանց։

Ղ. Այլ ամենայն որ յերկրի կենդանալոցն և ըզփայելչութիւնս աշխարհի ունի՝ համարի աշխարհաստէր, այլ այն՝ որ մտաւք 'ի սէր և 'ի վայելչութիւն աշխարհիս բեւեռեալ կայ. քանզի հնար է մարմնով յերկրի բնակիլ, և հոգւով յերկինս ճեմել, ըստ առածին՝ կայ յոչխարհի, չկայ յանապատի։

ԼԱ. Զոր ինչ առնես ընկերի քում, զայն առնես Աստուծոյ քում. զի Աստուած ինքեան համարի զոր առնես այլում, զի և նա իւր է ստեղծած, և ըստ այնմ համ հաւատացանէ քեզ՝ եթէ բարի և եթէ չար։ Այդ ինչ ասեցեալ բարի առնել ընկերի քում. զի և քեզ բարի լինի նմանի. զի զոր ինչ սերմանիցես, զնոյն ժողովես։

ԼԲ. Անարդիկ բազում անգամ ընդ անձանոյ հանկապակին։ զի զոր ունիցի կարծեն զնոյն կորուսանեն,

եւ յոգոմէ փախչիլ կամին, ՚ի նմանէ ըմբռնին։ Որպէս
որկրամոլն կամելով հեշտանալ եւ ընդ երկար ուտ-
ռել, խճողէ զորովայն իւր ոչ ոչէս կերակրովք մի-
ըմպելեօք, սակայն նոքիմբք առաւել տանջի եւ կոչ-
ճէ զկեանս իւր։ Հարստան ցանկանալով յամենայ-
նէ փառասիրել, մեծամեծս բարբառի զանձնէ իւր-
մէ, բայց այնու առաւել եւս անդունդ, զի ամե-
նեքին արհամարհեն զհարստան։ Որոյ՝ անաչխատ
կենաց փափագանաւք ձեռնարկէ գոլանալ զինչս այ-
լոց, բայց ընդունելով ՚ի փախճանի՝ շարաչար մեռանի։
Այսպէս միայն առաքինութիւն է կեալ բարեբաստիկ։

ԼԳ. Չնչաւ պատուական քան զկեանս։ բայց զնչաւ
անարգ քան զնա յոչս մերոց, որք յուսկիս վաստ-
նեն զնա վասն անարժան իրաց։ Բանզի մեռանիցն
՚ի վտանգի դնէ զկեանս վասն փառաց, ագահն
վասն ընչից, բղջախոհն վասն հեշտութեան, որս-
կալն վասն հանելոյ զվրէժ. սոքա իրաւամբք զրկին
՚ի կենաց, զի ոչ ճանաչեն զյարգ նորա։

ԼԴ. Այլ որ է՝ որ ոչ սիրեսցէ զնա, եւ ոչ յու-
սասցի նմանք, զի ՚ի նմա հանգիցեն բաղձանք իւր-
քանզի վախճան սիրոյ եւ յուսոյ՝ է լրումն բաղձա-
նաց։ ապա բարիք եւ չարք ունին զսիրելիս եւ զյու-
սալիս, յորոց ակնկալեալ սպասեն առնուլ զլրումն
բաղձալեաց եւ յուսալեաց՝ իբրեւ զարձ եւ զարիստուր
սիրոյ իւրեանց եւ յուսոյ։

Արդ՝ բարիք սիրեն զ՚սատուած եւ յուսան առ նա,
վասն որոյ վարձք նոցա յաստուածուստ սպարգեւի
նոցա։ որ է հանգիստն յաւիտենից։ իսկ չարք սի-
լեն զաշխարհս։ եւ յուսան իրաց աշխարհի։ վասն զ-
որոյ յեղանել նոցա յաշխարհէ՝ մնան անվարձ Յ՚ստուա-
ծոյ։ զի զաւ սիրէին եւ որս՚ մ յուսային, մնաց ան-
դէն յաշխարհի։ Բանզի աշխարհս ոչ կարէ ՚ի հան-
գերձեալ կեանս վարձատրել զսիրողս իւր։ սակայն

սիրելին բարեաց Աստուած՝ որ երկնի և երկրի է տէր, հանդուցանէ զաղձանս բարեաց, նոյն ինքն ընկալցի նոցա վարձք սիրոյ նոցա և յուսոյ 'ի հանդերձեալն։

ԼԵ. Հաստատուն և խորամուտ ծառք թէպէտ և ոստովք յամենայն հողմոց շարժին, այլ կան մնան յարմատս անկարծեան. քան այսմ՝ այր առաքինի յարմատէ զինքն լաւ փոփոխման գարձուածոց ժամանակի, մնալով անշարժ 'ի բարեմտութեան իւրում։ Քանզի Ք փոփոխիլ ժամուց և ժամանակաց՝ եթէ փոխեսցի մարդ 'ի բարեմտութենէն, ոչ այլ ինչ շահի՝ քայց եթէ զինաս։ Այս է իմաստութիւն մարդոյ 'ի յաքաշարժ դիպուածս ժամանակի՝ 'ի բարի միտս մնալ հաստատուն։

"Աղաչեմ զձեզ եղբարք՝ գթութեամբքն Աստուծոյ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխոսուն պաշտօնդ ձեր։" Հռոմ. ԺԲ. 1։

"Հաւատարիմ է բանս, և 'ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ ածցին բարեաց գործոց վերակացու լինիլ հաւատացելքն Աստուած, զի այն է բարի և օգտակար մարդկան։" Տիմ. Գ. 4։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

Ա. Պատգամն պատուոյ և համբաւոյ՝ է խոհեմութիւն դատուն մտաց և ընտրողութիւնն. զի որ քաջ խորհի, բարւոք դատի, և լաւ պատրաստիցի ժամանակին յարմարել զգործն. ոչ ոք կարէ ստուգանել զնա թէ թէ, այլ մանաւանդ մատուցանէ նմա զգովութիւն և զմեծարանս։

Բ. Ինքնահաւանութիւն է առնել զամենայն՝ մի՛ այն ըստ իւրում դատողութեան, և յիմարութիւն է առնել զամենայն՝ մի՛ այն ըստ այլոց դատողութեան։

Գ. Ծերունի ոք՝ որ ընդ լիութեան աւուրց առնի զկատարելութիւն մտաց, գովութեան է արժանաւոր։ Զի բազմամեայ փորձառութեամբ ուսաւ ընտրել զլաւն 'ի վատթարէն, և զօգտակարն 'ի վնասակարէն։ Այլս երիտասարդք մի՛ հատանիցեն վշիռ դժուարին իրաց յառաջքան զփորձառու ծերս, այլ նախ ընդ նոսա 'ի խորհուրդ մտցեն, և ըստ դատմանն նոցա որոշեսցեն առնել։

Ծերն եթէ չիցէ խոհական՝ որպէս պահանջէ այն ազգ հաստակ, երիտասարդ է անփորձ. և երիտասարդն եթէ չիցէ եռանդնոտ, ծեր է ուժաթափ։

Դ. Զի իմաստութիւն միամտութեամբ սրտիւ վաղվաղակի հաճ և հաւան լինել խորհրդոյ իմիք՝ թէ և օգտակար երեւեսցի, մինչչեւ իցէ 'ի քննիչ մատուցեալ զամենայն պարագայս նորա, զի մի՛ գուցէ ինչս ինչ պատահեալ, զերկչեւ ապաշաւ զկնի եկեսցէ։

Ե. Խաբէութիւն մտաց է երկբայական կարծիք զամենայն անցս՝ որք ստուգիւ եղեն յանցեալ ժամանակս, և ոչ հաւատալ՝ որք լինելոց են յետ այսորիկ. և միայն հաւատի համարել՝ որք ակներեւ տեսանին լինել այժմուս. զի այսպիսիքս ոչ իբրեւ բանաւորք 'ի գործոց ներկայիս զանցեալն և զապառնիս իմաստասիրեն, այլ իբրեւ անբանք զգործ ներկայիս միայն ճանաչեն՝ որում ականատես եղեն, և զայն և ս վաղվաղակի մոռանան. կամ զոր 'ի հարկէ պատճառացն գան յառաջ, ըստ դիպաց. լոմն վարկանին լեալ, և զայն ոչ գիտեն՝ թէ հանդերձեալ են կրել. զնաստաք անձանց զպատիժ անհաւանութեան իւրեանց։

Զ. Ուեծի զգուշութեան պէտս ունի խոսիլ ինչ՝ կամ խորհուրդ տալ իշխանաց առ 'ի ուղղել զնոսա։

Զի թէ և ծանիցեն նոքա զՀշմարտութիւն բանիցն ասացելոց և զխաբմունս իւրեանց, բայց տակաւին զայրանան՝ եթէ իցեն 'ի բանս խրատու փոքր մի ծանրը և խիստ բառք. զի կենցաղավարութեամբ ընդմարդելուզոց ուսեալ են շողոքորթիլ, և լսել միշտ զհաճուկս։ Ուստի բաւական է իայլթել զնոսա Հշմարտութիւն պարզ բանից, մինչ կամին ճանաչել զխաբմունս իւրեանց։

Ե. Խոհեմն պա ստացումն միոյ իրի՝ ոչ դնէ 'ի վանգի կորստեան զբազումն. և վասն բազումանհաւաստի իրաց՝ զմի հաւաստին ոչ թողու 'ի ձեռաց։

Ը. Զթէ դէպ լիցի կռուիլ ընդ ումեք, քննելի է նախ՝ թէ ունիցի՞ արդար իրաւունս կռուելոյ։ Զբ կրորդ՝ թէ ընդ ո՞մ կռուիցի, կամ զինչ զօրութիւն իցէ նորա։ Զրրորդ՝ կարողութիւն իւր իցէ բաւական յաղթել նմա։ Զռաւել յուսալի է յաջողակ եղեալ հասանել խոհական խորհրդով, քան գաղանական վատահութեամբ։

Թ. Ոչ վայելէ քաջ զօրավարի անարի վատութեամբ յետս կալ 'ի պատերազմէ՝ թէ և իցէ վաստանգաւոր, մինչ օգուտն հայրենեաց ստիպէ. զի լաւ է նմա մեռանիլ փառօք՝ քան ապրիլ անարգանօք։ Բայց և ոչ յանդուգն համարձակութեամբ միջամուխ լինել 'ի թշնամիս, խնդրելով զկորուստ անձին. զի խելացարութիւն է արկանել զանձն 'ի վտանգ մահու՝ չունելով ուստեք ակնկալութիւն յաղթութեան։

Ար ոչ վարի խոհեմութեամբ, կշռելով զկար զօրութեան թշնամւոյն և զմիճակ թշնամւոյն, առաւել յանդուգնն է քան ազի, և արժանի է նախատանաց և պատուհասի՝ քան գովութեի և պսակի. զի միջնորդ ստանալոյ զյաղթութիւնն՝ է սպասել դիպողութեան։

Ժ. Զթէ կամեսցի ոք բուռն հարկանել զգործոյ

խմբէ, որ իցէ մեծ և դժուարին, պատշաճ է խորհրդադասկից ունել զնմաստունս և զառաքինիս, և սնկրն գիր լինել նոցա. զի եթէ ձախողակ ինչ դիպեսցի, մի աք կարիցէ մեղադիր լինել նմա։

ԺԱ. Ընդդէմ բնութեան մարտ մղէ, որ ձգտի առնել զգործս՝ որ առաւել է քան զկար անձին իւրոյ։

ԺԲ. Որ փութայ առնել զո և իցէ գործս, և ոչ սպասէ դիպողութեան ժամանակի՝, է նա որպէս ծառ՝ որ յառաջ քան զժամանակն արձակէ զծաղիկ, բայց ընդասեալ՝ ի ցրտոյ՝ ոչ ժամանէ բերել զպտուղ։

ԺԳ. Որ ինչ կամի՝ աք ասել կամ առնել, նախապէս պարտ է զամենայն պարագայս նորա մտածել, զի մի յետոյ ընդասս ինչ զհետ եկեսցէ, և վերջին զբաղջուն ոչ ինչ արժեսցէ։ Խորախորհուրդ մտածութեան կարօտի գործն, առ որ միանգամ ձեռնամուխ եղեալ՝ անհնարին է դադարեալ յետոս։

ԺԴ. Արդիկ յորմէակի վասն սակաւ օգտի ընդսին բազմաց. զի հայեցեալ միայն յառաջակայ օգուտն՝ ոչ մտադիր լինին մեծամեծ ընդասուց՝ որք կարեն զհետո գալ նմին. զոր եթէ ուշի ուշով դիտեալ էր նոցա, զդային արդեաք և զգուշանային, վասն որոյ ոչ զսակաւ օգուտն խնդրէին, և ոչ զբազում վնասս կրէին։

ԺԵ. Խորհրդականք ո՛ և իցէ ազգի կամ քաղաքի՝ պարտին լինել ազատ՝ ի կրից, այսինքն՝ ի սիրոյ և յատելութենէ, որպէս զի զօգուտն հասարակաց կարասցեն տնօրինել։

ԺԶ. Եթէ աք կոչեսցի՝ ի տուն խորհրդոյ, մի վազվազեսցէ խօսիլ զկարծիս իւր, մինչեւ ոչ հասցէ նմա կարգն խօսելոյ։

ԺԷ. Ի ժողովս բազմութիւնս՝ յորժամ խօսք ինչ լինիցին վասն կարեւոր խնդրոյ խմբի. ոչ է պարտ դպրի՝ թէ ո՛վ է որ ասէ, այլ թէ՝ զինչ է՝ զոր ասէ։

զի մարթ է լինել՝ թէ ասացուած միոյ ումեք 'ի նը-
ւաստից կամ 'ի փոքունց իցէ յաւէտ օգտակար քան
զկշռութիւնս բազում իշխանաւորաց. ապա չէ արդ-
ժան վասն անձինն նուաստութեան՝ անգոսնելի ըզ-
բանսն համարել։

ԺԸ. Հ�է բաւական գիտել զխօսիլն բարուք, այլ
և զյարմարութիւն ժամանակին և զտեղւոյն. զի
չարաչար նուագէ քնարահար, որ 'ի տուն մեռելոյ
գեղգեղէ զերգս հարսանեաց։ Որ 'ի ինչոյս ուրա-
խութեան խօսի զանս ագետից և տրտմութեան,
զքաղցր սիւկ գեղեցիկ գարնան փոխէ 'ի ցրտաշունչ
օդ ձմերան։

ԺԹ. Օգոյշ և չափաւոր պարտ է խօսիլ զանձնէ,
զի մի 'ի գովեստ իւր շրջեսցին բանքն. որ թէպէտ և
ստոյգ և հաւաստի իցէ, տակաւին կարծի լինել երկ-
բայական։ Որ ոչ ուստաւ զգուշութեամբ խօսիլ, այն-
պիսւոյն արժան է խսպառ լռել։

Ի. Անձն որ արժանի է գովութեան, պարտ է զայն
գովել ըստ չափու առաքինութեան նորին, և ոչ առա-
ւելագանց. իսկ եթէ հարկն ստիպեսցէ խօսիլ զպա-
կասութիւն ուրուք, խօսեսցի զեղչելովք և ոչ ճշդիւ։

ԻԱ. Անխորժելի է մարդոյ խրատել զայլս՝ քան
թէ զանձն իւր, գուցէ համարի թէ առաւել գի-
տիցէ զչահ և զվնաս այլոց քան զիւրն։ Ուստի թէ
խմաստուն ոք իցէ և թէ տուէտ՝ յօժարամիտ բերի
'ի խրատ այլոց, իսկ անձին իւրում կամ ոչ բնաւ,
կամ հազիւ երբէք գտանի խորհրդատու և խրա-
տիչ. սակայն արժան է գիտել յամենայնի, թէ իւ-
բաքանչիւրոք առաւել պարտական է հոգալ զանձնէ՝
քան զայլոց։

ԻԲ. Պարտ է կարծել՝ թէ կարելի է յամենայն
մարդոյ հատանել ինքեան չար, բայց ոչ է պարտ չար
ինչ առնել ումեք։

Ակ է խոհեմութիւն իսպառ զհետ սնդիկ տկար թշնամւոյն, զի մի գուցէ յաւուսահատեալ ընդդէմ դարձցի և զարասցի 'ի վերայ հալածչին իւրոյ։

Խոզում բարեկամք երբեմն ոչ կարեն օգնել յորժամ անկանի ոք 'ի տառապանս ինչ. բայց մի միայն թշնամի կարէ վնասել մարդոյ՝ մինչդեռ կայ 'ի յաջողութեան. ապա ջանալի է ոչ բնաւ ունել թշնամի։

ԻԳ. Երկու ինչ յաւէտ հարկաւոր են առ երջանկութիւն ազգի կամ քաղաքի, խոհեմութիւն և զօրութիւն։ Խոհեմութիւն՝ զի օգտակար օրինաց և խոհական խորհրդով կառավարեսցէ զազգն կամ զքաղաքն։ Զօրութիւն՝ զի պահպանեսցէ քաջութեամբ յարտաքին թշնամեաց, և զյարուցեալսն 'ի վերայ՝ որք կամին զխաղաղութիւնն ամբոխել, 'ի բաց հալածեսցէ։

Այլ հասարակութիւնն է մարմին ինչ, որոյ աչք են խոհեմութիւն, և ձեռք՝ զօրութիւն. և որպէս ձեռք առանց աչաց անպիտան են 'ի գործ, մանաւանդ թէ և վնասակար, զի փոխանակ հարկանելոյ զթշնամին՝ անգիտացեալ հարկանեն զբարեկամս, այսպէս և զօրութիւն առանց խոհեմութեան՝ է վնասակար։ Այս մեծ վնաս է ազգի կամ քաղաքի՝ յորժամ պակասին խոհեմ կառավարք։

ԻԴ. Այր հանճարեղ եթէ ոչ յօգուտ հասարակաց վարեսցէ զհանճարամտութիւն իւր, նման է այնմ՝ որ ունի զգեղեցիկ ոտս, բայց ոչ կարէ քայլել։

ԻԵ. Ոչ ոմանք որք ուրախութեամբ երթան 'ի գործ ինչ կամ 'ի զբօսանս, բայց բաղում անգամ դարձ առնեն տրտմութեամբ, կամ ոչ բնաւ կարեն դառնալ։ Բանզի ոչ գիտեն քաջ կշռել զհանգամանսն տեղւոյն և ժամանակին և ընկերացն, վասն որոյ շարժին անզգուշաբար, և վնասին չարաչար։ Զի բաւական մարդոյ խոկալ զգնացից իւրոց, այլ և զա-

մենայն պարտագոյից նորա՝ զի մի անկանիցի 'ի վտանգս. կամ եթէ անկանիցի, նախատես գոլով նմին՝ ճնաեցցի սակաւ, և գոցէ զերս։

ԻԶ. Յաւէտ զգուշալի են փոքր չարիք քան զմեծամեծ չարիս. զի յորժամ վտանգ ինչ ճանաչի լինել մեծ և մահաբեր, հնարս խնդրեն մարդիկ և ջերծանին. իսկ յորժամ տեսանի լինել փոքր, չնչին իմն հանդիպին զնա և անլնաս, և ոչ ինչ հոգան, վասն որոյ ըմբռնին 'ի նմանէ և ճնապին։ Լաստի պարտ է առն խոհականի ոչ լինել գլխովին վստահ, և ոչ կարի իմն կասկածոտ, այլ զմիջինն ունել շաւիղ զգուշաւոր. զի վստահն յոլովակի գահավիժի 'ի վտանգս, և կասկածոտն միշտ տանջի յերկիւղէ վտանգին։

ԻԷ. Հնար է մարդոյ գիտել զխորս ծովու, 'այլ ոչ զգաղտնիս սրտի. և չէ իմաստուն, որ 'ի բանից և 'ի գործոց ուրուք կարծէ ճանաչել զխորհուրդս նորա։ Զի բազում անգամ այլ է սիրտ ուրուք և այլ բանք նորա և գործ. և իմաստուն ոք որչափ և համարիցի իրազեկ եղեալ խորհրդոց նենգաւորին, տակաւին խաբի 'ի նմանէ, զի անդունդ անհնարին է սիրտ առն նենգաւորի։

ԻԸ. Զսիրտ ընդ լեզուի փոխանակէ՝ որ զցաւս սրտի իւրոյ պատմէ այնմ, որ միայն մնոտի խոստմամբ սովոր է օգնել, և ոչ ծագիւ մատին 'ի գործ մերձենալ։

Այր զգուշաւոր զկիրս ցաւոց սրտի իւրոյ ոչ յայտնէ արտաքին նշանաւ դիմաց կամ շարժմանց, գիտելով թէ ոչ օգուտ ինչ յայնմանէ ստանայ։

ԻԹ. Դիտնական ոք մինչ հանդերձեալ է խօսիլ զերեւելի ինչ խնդրոյ, պարտ է նմա զևրաքանչիւր բառսն կշռել, և պարզ և մեկին իմայուածով բացատրել։ Զի թէպէտ դիտաւորութիւն իւր լցէ ուղիղ և բանքն ողջամիտ, բայց եթէ գտանիցի 'ի

բանն մթին ինչ կամ երկդիմի, լսողքն առնուազն ի թիւր միտս, մանաւանդ եթէ իցեն հակառակասէր և ատելոյ ճշմարտութեան, և դառն թշնամութեամբ վատահամբաւեն զնա իբրև մոլորամիտս։

Իսկ եթէ լսողք իցեն մոլորամիտ, ծեքեն զուղիղն և մեկնեն չարաչար, և առնուն ի վկայութիւն խեղաթիւր կարծեաց իւրեանց, և գայթակղեցուցանեն զամիսն, և արկանեն ի նոսա շշունջ և խռովութիւն։ Այս մեծ զգուշութիւն պէտք գիտնականաց ի խօսիլ ինչ, որպէս զի մի կարասցեն չարայոյզ միտք գտանել պատճառս ի խօսել զչարիս։

Լ. Խոհեմն ոչ դատի զնրս տրամաբաշխաբար, այլ համեմատաբար. քանզի ոչ ամենեքին որք սահ բարձեալ են ի հաւասար իշխանութիւն, ունին և զհաւասար փառս. և ոչ ամենեքին որք անկեալ են ընդ հաւասար պատժովք, ունին և զհաւասար տանջանս. զի փառք և տանջանք պէտսիանան ընդ պէտ պիսութեան անձանց։ Այսպէս առաւել փառաւորի նուաստ ոք բարձրացեալ յիշխանական պատիւ, և առաւել տանջի ազնուական ոք իշխան՝ անկեալ ընդ պատժովք։ Զի նուաստ սկզբան՝ առաւել վաստեմ և պանծալի երեւի վախճան փառաւոր. և փառաւոր սկզբան առաւել դառն թուի և տանջողական՝ վախճանն թշուառ։

ԼԱ. Այ հիւանդութիւն՝ որ բժշկի դեղով, և է՝ որ պահեցողութեամբ. է բաղձանք՝ որ պէտս ունի ջանից և աշխատութեանց, և է՝ որ կարօտի ժամանակի և համբերութեան. ապա թէ ոք չգիտիցէ ո՞ր ոշել և ըստ տեղւոյն ի վար արկանել, ոչ լինու բաղձանք և ցանկութիւն նորա, որպէս գնալ ի դէմ եղեալ տեղին՝ պահանջէ զջանս զի հասանիցի, և մանգաղ արկանել յանդս՝ պահանջէ ժամանակ զի հասուանացի։ Այլ է բաղձանք՝ որ խնդրէ զջանս

միանգամայն և ժամանակս, որպէս բաղձանք գի-
տութեանց և արհեստից. ապա պիտել ժամանակ
աշխատութեան կամ համբերութեան՝ տայ լրումն
բաղձանաց և ցանկութեան։

ԼԲ. Խոհեմք՝ յարտաքին նշանաց ինչ բաղում մն-
գամ ճանաչեն զներքին յօժարութիւնն մարդկան.
վասն որոյ չէ ուստ՝ որպէս և նոքա համարին, թէ
որ 'ի փոխ առնու ուրախութեամբ, բազմիցս տրտ-
մութեամբ հատուցանէ, և որ առնու տրտմու-
թեամբ, վճարէ ուրախութեամբ։

Վասն զի որ 'ի փոխ առնու ուրախամիտ՝ թուի
թէ անիրաւ ոք է, և ոչ կամի անդրէն դարձուցա-
նել, կամ կարի անագան. վասն որոյ մինչ բռնադա-
տի ետալ զպարտս իւր, իբրեւ թէ ակամայ և տրտ-
մութեամբ հատուցանէ։ Իսկ որ առնու տրտմու-
թեամբ, երեւի թէ իրաւասէր ոք է, և հաստա-
տեալ է 'ի միտս հատուցանել զպարտսն. զի զփոխն
'ի 'ի ստիպմանէ հարկաւորութեան իբրեւ ակամայ առ-
նու, վասն որոյ վճարէ ուրախութեամբ։

ԼԳ. Ո՞՝ինչ ընդ ումիք կենցաղավարիս ընտանե-
բար, դիր 'ի մտի քում՝ թէ եկեսցէ ժամանակ՝ յորմէ
բաժանեսցիս խառվրութեամբ. ապա զդատ լեր չը-
տալ նմա զդաղտնիս քո, զի մի՛ զղջասցիս յետոյ։

ԼԴ. Ոչ՝թէ տեսանես զյաջողութիւն ուրուք, մի՛
դիցես 'ի մտի քում՝ թէ և քեզ պատահեսցի. բայց
մինչ տեսանես զձախորդութիւն ուրուք, այնպէս
հաւատացես՝ թէ մարթ է և քեզ պատահիլ. զի վաղ
հասանեն առ մարդիկ վտանգաւոր դիպուածք՝ քան
թէ յաջողուածք։

ԼԵ. Զիք հարկաւոր դիտութիւն քան զճանա-
չումն անձին. զի որ ճանաչէ զանձն իւր, ճանաչէ
զԱստուած. և որ ճանաչէ զԱստուած, սիրէ և վնա
և ցանկայ հաճոյանալ նմա։ որով ժամանէ 'ի դա-

գանձն կատարելութեան։ Իւրեանն պարտ է մարդոյ գիտել՝ թէ է մի 'ի հասարակ մարդկանէ մահկանացու տկար և հոստանուտ բնութեան վիճակեալ, յամենայնի և յամենայն ուրեք միշտ կարօտ աստուածային օգնականութեան, և թէ զոր ինչ ունի՝ յԱստուծոյ ունի, թէ՛ բնական և թէ ստացական։

ԼԶ. Իւրաքանչիւր մարդ կարէ ուղղել զվարս իւր եթէ խորհեսցի որպէս և պարտ իսկ է խորհիլ, թէ միառքն արքայութեան վասն իւր միայն է պատրաստեալ, և ինքն միայն է գնալոց յարքայութիւն՝ եթէ ծառայէ Աստուծոյ. նոյնպէս և գժոխքն վասն իւր միայն է, և ինքն միայն գնալոց է 'ի դժոխս՝ եթէ ոչ ծառայեսցէ Աստուծոյ։ Կամ թէ խորհեսցի զանձնէ լինել յաշխարհախումբ բազմութեան մարդկան, յորմէ յանակնկալ ժամու յափշտակելոց են զինքն տանիլ կամ 'ի յաւիտենական փառս, կամ 'ի տանջանս. արդ՝ զինչ արդեօք առնէր յայնժամ անտանելոր, արասցէ այժմ ասասէն, զի նոյն բան է՝ որ լինելոց է ամենայն մարդոյ։

ԼԷ. Հազուադ ինչ իրք տեսանին յաշխարհի, որոց պատճառքն են գաղտնի. բայց ոմանք 'ի մարդկանէ յախտէ հետաքրքրութեան դրդեալ յուզեն և քննեն զի կարասցեն հասու լինել պատճառացն. սակայն որ ինչ եղեալ է և լինի և լինելոց է, կամ յԱստուծոյ է, կամ 'ի մարդկանէ և կամ 'ի բնութենէ։

Աստուածային անհաս իմաստութեան գործս բազումք մեղանչեն յանդգնութեամբ, զի զպատճառսն կարգադրութեան կատարմանց, փոփոխութեան աշխարհի, չարաց յաջողութեան և բարեաց դժբախտութեան և այլն, ոչ կարասցեալ ընդդատման իւրեանց զուգակշիռ գտանել, յայլ և այլ անտեղի մոռածութիւնս և յօտար կարծիս անկանին, և յայսմանէ անթիւ ամբարշտութիւնք յառաջ եկին։

Եւ գործս 'ի մարդկանէ սրտարեալս վրիպին թիւր դատողութեամբ. զի զմիտս գործողին՝ որ առ մի վախճան դիտէ, առ զանազան վախճան վերածեն ըստ իւրաքանչիւր կարծեաց իւրեանց, յորմէ և ոչ սակաւ չարիք յառաջանան։

Եւ գործս բնութեան մեղրին՝ յորժամ 'ի մասնաւոր փորձոյ զընդհանուր ինչ հետեւեցուցանեն, քամ որոց պատճառքն են գաղտնի, զնոցանէ սնոտի կարծեօք յերապէն գիտել։ Սակայն բազումք 'ի բընեալ զգալտնիս բնութեան, թէ և մասամբ իւիք կարացին գիտել, այլ բազում իւիք սխալեցան։ Եւ յայնմանէ՝ զի կամեցան զհետ կարծեաց իւրեանց բռնի ձգել զգործս բնութեան, անհամար տարաձայն կարծիք և վէճք յուղեցան 'ի մէջ բնագնից և փիլիսոփայից, և յուղին մինչեւ ցարդ, և երեւի թէ ոչ բնաւ ունի վերջանալ։

Քանզի չիք այլ ինչ 'ի բնութեան, բայց եթէ շարունակութիւն պատճառաց և գործոց. սակայն բազում անգամ պատճառն է յայտնի և գործն ծածկեալ, և յոլովակի եւս գործն յայտնի և պատճառն ծածկեալ։ Այս պարտ է զգուշութեամբ վարել 'ի ճանաչելն զայնցանէ, որոց պատճառն և գիտութիւնն կամ 'ի մարդկանէ ծածկեալ է և կամ չափով յայտնեալ, զի մի առ Աստուած կամ առ մարդ մեղանչեսցուք, և կամ սխալեալ նախատեսցուք իբրեւ տըգէտ կամ յանդուգն։

ԼԸ. Այր խոհեմ յորժամ առնէ զգործ ինչ մեծ յօգուտ հասարակաց, ոչ պարծի և հռչակէ առնուլ զգովութիւն 'ի մարդկանէ, զի ոչ 'ի միտ բերէ թէ ինքն սրարեալ իցէ, այլ արդէն մոռանայ զոր արարն, և ջանայ և եւս մեծագոյն բարիս առնել ամենեցուն. զի որ պարծի ընդ գործս իւր, թէ և իցէ մեծ և արժանի գովութեան, կորուսանէ զյարգ իւր և զգո-

զուրթիւն։ Իսկ այր թեթեւամիտ նախ քան զձեռս նարկելն ի գործ ինչ, և կամ յառաջ քան զլրումն նորին մեծապէս պանծայ և հրճուարակէ. բայց իբրեւ ոչ յամբոկ գործոյն ժամանէ, չամաչէ առեալ թէ ապապէս ոչ կարծէի. վասն որոյ և առակ նշանաւոր կի լինի առաջի ամենեցուն։

ԼԹ. Այր խոհեմ ոչ պատմէ զանձնէ իւրմէ. ընդ գործ ինչ բարի՝ լսել զգովութիւն, և ոչ զչար՝ ընդունիլ զնախատինս։ Զի եթէ զբարիսն պատմէ՝ լսողք անգոնեն զնա իբրեւ զանարիւտ, իսկ եթէ զչարիսն՝ լսողք անարգեն զնա և գայթակղին. ապա ոչէ խոհեմութիւն ասել զայն ինչ՝ որ առ գովեստ և կամ յանարգանս իւր վերաբերի։

Խ. Ոչ ամենայն որ զկերպարանս ճշմարտութեան ունի՝ է ճշմարիտ, և ոչ ամենայն որ զկերպարանս ստութեան ունի՝ է սուտ. քանզի բազում ինչ իրօք՝ եղեն և եղեալ են և լինին, բայց ընդդէմ երեւին մտաց մարդկան, և բազում ինչ համաձայն մտաց պատմին՝ որք չեղեն իրօք. և գուցէ ոչ լինիցին մինչեւ ի յաւիտեան։ Ապա ոչէ արժան սուտ համարել զայն ամենայն որ ընդդէմ երեւի մեզ, և կամ ճշմարիտ վարկանել զայն ամենայն որ համաձայն թուի. այլ պարտ է խոհեմութեամբ զէակութիւն գործոյն և զպարագայսն քննել, ապա հաւանութիւն տալ՝ կամ չտալ։

Արդիւք եթէ ճանաչեն զմի ինչ պարագայ զբազնից և զգործոց ուրուք՝ որ իսկէ ճշմարիտ, առ այն վստահացեալ կարծեն գլուել և զայլ ամենայն գաղտնիս սրտի նորա. և ի միոյ բացայայտ և հաւատի դրութենէ վաղվաղակի մակաբերեն զբազում անծանօթ և երկբայական հետեւութիւնս իբրեւ ճշմարիտս, ուստի բազմիցս անպիտան առնեն և զայն զոր ճշմարտութեամբ ծանեան։ Քանզի ի ճանաչելն

զմի ճշմարտութիւն, ոչ հետեւի յայնմանէ գիտել և զայլ ամենայն ճշմարտութիւնս, այլ զնոր խորհուրդ և զքննութիւն պարտ է 'ի մէջ բերել, և ճըշդիւ խուզարկել աստիճան առ աստիճան զամենայն կարելի և կարծելի պարագայս իրին՝ զորմէ է բանն, մինչեւ յամենայն կուսէ փայլեսցի նշոյլ ճշմարտութեան։ Որպէս 'ի կորնչիլ իրիք 'ի տան, և 'ի լինել անդ առն ուրուք որ երբեմն գողացեալ իցէ ինչ, առ հասարակ կարծիք լինի զնմանէ՝ թէ նա գողացաւ։ Այլ ճշմարիտ է թէ նա երբեմն գողացաւ ինչ, այլ ոչ հետեւի թէ և այժմ նա գողացեալ իցէ. ապա զգուշանալի է 'ի ճանաչելն զմի ինչ ճշմարիտ՝ մակաբերել յայնմանէ զանծանօթ և զերկրայական հետեւութիւնս, և զնդել իբրեւ զճշմարիտս։

ԽԱ. Որդիկ քաջ գիտեն բարւոք խօսիլ՝ քան բարւոք գործել. զի թէ գիտէին այնպէս առնել՝ որպէս և ասեն, կամ՝ ոչ բնաւ գտանէին չարք յաշխարհի, և կամ՝ յոյժ սակաւ։

ԽԲ. Միամտութիւնն առանց խորագիտութեան՝ է յիմարութիւն, և խորագիտութիւնն առանց միամտութեան՝ է խորամանկութիւն. միամտութիւնն խորագիտութեամբ, և խորագիտութիւնն միամտութեամբ՝ է խոհեմութիւն, որպէս Տէրն մեր. Մատթ. Ժ. 16. ընդ միամտութեան աղաւնւոյ յաւրեաց զխորագիտութիւն օձին, զի ուսուսցէ զմարդիկ խորշիլ յերկուց վնասակար ծայրից, և հաստատիլ 'ի խոհեմութեան։

ԽԳ. Մի ամաչեսցէ իմաստունն խնարհիլ և խոնարհուրդ հարցանել այլոց, կարծելով թէ նոքա ոչ հասանեն 'ի չափ խոհականութեան իւրոյ. զի ահա և ածելին առնու զօրութիւն 'ի կակուղ կաշւոյ վարսավէրային, և երկաթն զգենու զզօրութիւն՝ մըխեալ 'ի լոյծ ջուր։

«Խորհուրդք բարեաց զգուշացի զքեզ, և միոք սուրբք պահանջեսցեն զքեզ։» Առակ. Բ. 11։

«Մի յալէ խոտորիցիս՝ և մի յահեակ. գարձո զոտն քո 'ի ճանապարհէ չարէ։» Առակ. Դ. 27։

«Բարի է կատարած բանից քան զսկիզբն իւրեանց. բարի է երկայնամիտ՝ քան զհպարտացեալն ոգւով։» Ժող. Է. 9։

«Փառք և անարգանք 'ի ձեռս լեզուի. և կործանումն մարդոյ 'ի ձեռն անարդ լեզուի իւրում։» Սիրաք. Ե. 15։

«Ուղեակ՝ ընարութեամբ արա բարի մարդոյ. զի 'ի նմանէ շնորհն բարեաց գացես։» Սիրաք. ԺԲ. 1։

«Եղերուք այսուհետեւ խորագետք իբրեւ զօձս, և միամիտք իբրեւ զաղաւնիս։» Մատթ. Ժ. 16։

«Ո՛վ ոք կամիցի շինել աշտարակ, և ոչ նախ նստեալ համարիցի ըզծախսն՝ եթէ ունիցի բաւական 'ի կատարումն։» Ղուկ. ԺԴ. 28։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԽՈՐՀՐԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ա. Ոչ այնքան վտանգաւոր է հեծանել յանկիրճ երիվար, քան յայտնել զգաղտնիս անփորձ բարեկամի։ Ա՛յսպա չէ արժան անխտիր ումեմն և ամենեցուն բարեկամի յայտ առնել զգաղտնիս սրտին, այլ այնմ՝ զոր փորձիւ ճանաչէ ոք լինել խորհրդապահ։

Ի ծակ սափոր ընու զջուր որ ծանուցանէ զծածուկս հոգւոյն այնմ՝ որ ոչ գիտէ պահել զխորհուրդ։

Բ. Եթէ ոք կամի զգաղտնի ինչ հաչակ հարկանել, դաշամբք խորհրդապահութեան յայտնեսցէ զայն ոմանցին, զի ոմանցին առաւել մուն ետիկ է խորհրդոց՝ քան խորհրդապահ։ Ա՛յսպա հաւատարիմ խորհրդապահութիւն ոչ է յուսալի գտանել 'ի մէջ ոմանց կամ՝ այլ իմաստնոց, և այն ոչ ամենայն իմաստնոց՝ այլ սակաւուց և կարի սակաւուց, առ որոյ ընտրութիւն մեծի զգուշութեան է պէտք։

Գ. Մեծ ինչ խնդրէ, որ խնդրէ պահել զխորհուրդն զոր յայտնէ։

Դ. Որ խորհրդապահ է, ունի զբերանն 'ի սրտի. և որ չէ խորհրդապահ, զսիրտն ունի 'ի բերանն Այլոց են ոմանք որք համարին զգաղտնիս՝ որպէս բարձրն ինչ ծանր, զոր ի՛նքեանք ոչ կարացեալ տանել, ասան այլոց որպէս բեռնակրաց 'ի բառնալ։

Ե. Հպարտն յափշտակեալ յախտէ մնափառութեան, ախորժէ պատմել զխորհուրդս մտաց իւրոց՝ որ բերէ գովութիւն ինքեան, որով մատանէ այլոց զգաղտնիս սրտի իւրոյ։

Զ. Խարկացողն ոչ կարէ պահել զխորհուրդս իւրոյ 'ի ցանուլ իւրում բուռն բարկութեամբ՝ եռայ արիւն նորա, և ոչ ժուժայ լռել, և անդէն վաղ վաղակի թափէ 'ի սրտէն զգաղտնիս իւր, ուստի գիւրին է գողանալ 'ի նմանէ զխորհուրդս գաղտնիս։ Օ՛ի բարկացողն է իբրեւ զտիկ լցեալ պատուական հեղանիւթիւ, որ մինչ բռնաբարի յումեքէ՝ պայթի առ ժամայն, և թափէ զոր ունի։

Է. Խորհրդապահն մի յաղագս պահելոյ զխորհուրդ ինչ՝ խօսեսցի զսուտ, և մի՛ յերկիւղէ յայտնութեան գաղտնեաց՝ այլափոխեալ զդէմն ցուցցէ. զի դէմք և աչք առաջնորդ և դեսպան են սրտին, և մարդիկ այսպիսի՝ նշանօք փութով նախատես լինին և իմանան զգաղտնիս։ Այս 'ի խօսքն պարտ է միայն զմնատակարան ծածկել, զի մի լիցի ստախօս. և զկարգ բանիցն անշփոթ պահել, զի մի՛ զնչոյլ խորհրդոցն երեւեցուսցէ 'ի դէմս իւր, զորմէ լռել կամէր։

---

* Որպէս քաղաք կործանեալ 'ի պարսպաց՝ և անպատիպ իցէ, նոյնպէս և այր որ ոչ խորհրդով ինչ գործիցէ։ » Առակ. ԻԵ. 28։

" Բաղումք խաղաղարար լիցին քեզ, և խորհրդակից լիցի քեզ մի 'ի հազարաց։ » Սիրաք. Զ. 6։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԽԻՂՃ ՄՏԱՑ

Ա. ԲԱՐՔ մարդոյ ուղղի 'ի ներքուստ 'ի խղճէ, և յարտաքուստ 'ի յօրինաց. զի եթէ խիղճն թեւ լադրեալ 'ի թիւր կամաց՝ հակառակ զինի ընդդէմ ուղիղ բանի, օրէնքն յանդիմանեալ սանձեն զնա, և ածեն 'ի հնազանդութիւն։ Խիղճն՝ իբր ներքին արդար դատաւոր 'ի կողմանէ բնութեան, և օրէնքն արտաքուստ իրաւարար 'ի կողմանէ Աստուծոյ, իբրեւ երկու թաթ կշռոյ՝ զմէտն արդարութեան 'ի միջասահմանութեան պահեն։

Բանզի մարդիկ եթէ միայն խղճիւ կառավարեալ լինէին, բազում անձնասէրք կողմնապահ լինէին բնութեան, և զուղիղն թիւրէին, և ոչ որ էր որ յանդիմանէր և ուղղէր զնոսա։ Իսկ եթէ միայն օրինաւք կառավարեալ լինէին, բազումք եւս չարակամութեամբ իւիք խաբէին զպարզամիտս, և զիրս անօրէնս իբրեւ զօրէնս յառաջադրէին առնել և գործել։ Այսպէս կարեւոր են երկոքին եւս՝ խիղճ և օրէնք՝ առաջնորդել մարդկան և ածել յառաքինութիւն իբրեւ առ հուպ վախճան, և այնու յերջանկութիւն իբրեւ առ իւր վերջին վախճան. զի ըստ առածին՝ Աստուած և բնութիւն ոչ երբէք գործեն ընդունայն։

Խիղճն 'ի բնական օրէնս պարտ է կրեալ երթալ ուղղութեան բանի, ըստ այնմ. «Եթանոսք որք զօրէնսն ոչ ունին՝ բնութեամբ զօրինացն գործեն։» Հռոմ. Բ. 14։ Այլ յեկեղեցականս՝ հետեւիլ աստուածային օրինաց. զի յաստուածային ոչ է բաւական միայն ուղղութիւն բանի, այլ և պահանջէ համաձայնութիւն օրինացն Աստուծոյ։

Բ. Զոյն մտաց՝ է նշոյլ ինչ յաւիտենական օրինաց, որ Յաստուծոյ ներտպեալ է ի բնութիւնս մարդոյ, որով մարդն առնէ զարժանն և զվայելուչն, և հերքէ զայն որ չէ արժան և վայելուչ։ Իւ աստուածային օրէնք պարգեւեցան Յաստուծոյ իբրեւ թարգման նորին կամաց. զի նա՝ որ միայն բնութեամբ էր մարդ, և ճանաչէր միայն զբնական ուղղութիւնս, օրինաւքն լիցի և բարոյականագէս մարդ, և ծանիցէ զաստուածային ուղղութիւնս, և կամ՝ որ նախ բնականաւ էր պատկեր Յաստուծոյ, օրինացն պահպանութեամբ լինիցի և նման Յաստուծոյ՝ և աստուածային մարդ։ Զայն որոյ ուղիղ բանն մտաց և օրէնքն միաբան ուղղեն զբարս մարդոյ ի պահել զխիղճն յուղղութեան ի խորհելն, ի խօսելն, և ի գործելն։ Զայս որ խոտորի յուղղութենէ մտաց և ի հրամանէ օրինաց, հակառակի Յաստուծոյ և բնութեան իւրոյ։

Գ. Զթէ ոք յամենայնի անսայ խղճին իբրեւ խրատ ճշմարտի, առաւել եւս սխալի, վասն որոյ հարկ է խոհեմութեամբ վարել ընդ խղճին. զի ոչ է արժան իսպառ անկուշել, կամ գլխովին նմա հեռեւիլ, այլ բարեկարգել զնա լուսով բանին և օրինաւք. և յիրս տարակուսական՝ ուր խիղճն մտաց տկարանայ որոշել, դիմել առ իմաստունս և օրինագէտս, և ուսանիլ ի նոցանէ զոր պարտն է առնել։ Զի յայնս՝ ուր երկուստեք ոչ պակասին հաւանական փաստք կամ պատճառք առ ի առնել զիմն կամ խորշիլ, զանկասկածն և զապահովագոյնն ընտրել։

Դ. Հար է խղճահարութիւնն, բայց չար ևս է լինելն անխիղճ. ապա պարտ է լինել խղճմտանաւոր, այսինքն՝ ոչ իբրեւ փոքրոգի յամենայնի երկնչիլ, և ոչ իբրեւ յանդուգն յամենայնի վստահիլ. այլ իբրև արի չերկնչիլ ուր չէ պարտ, և երկնչիլ ուր պարտն է։

Ե. Յանդուգն է կամք մարդոյ, և բազում անգամ ելանէ ըստ սահման բանաւորութեան. վասն որոյ և խիղճ մտացն տուաւ նմա սանձ, զի մի քան զպայման առաջնորդութեան բանին արշաւեսցէ. իսկ եթէ ոք ազդարարութեան խղճին ոչ անսայցէ՝ պարտաւորի դատաստանի։ Այլ դատողն վասն զի է մարդ՝ տկարանայ որոշել զիրաւունս արդարութեան, վասն որոյ ապաստան առնէ անդրէն զդատաստանն՝ խղճի մտաց պարտաւորին, զի նա է անխաբ դատաւոր գաղտնեաց սրտի, որպէս զի պարտաւորն նմա երդնուցու. որ եթէ ընդդէմ դատման խղճի մտաց երդնու, լինի երդումն տուտ, և մնայ այնպէսին պարտաւոր դատաստանին Աստուծոյ։

Զ. Անասունք եթէ ունէին կարողութիւն խօսելոյ ընդ մարդկան, արդարեւ կշտամբէին զայնոսիկ որք գործեն ընդդէմ ազդարարութեան բանին և խղճի մտաց։ Այլ քանզի անասունք ոչ ունին զբան, վասն որոյ և ոչ անկանին ընդ պարտաւորութեամբ պատժոց, և ոչ է վասն նոցա կարգեալ դատաւոր և քննիչ գործոց։ Իսկ մարդիկ՝ վասն զի ունին առաջնորդ զբանն՝ և ազդարար զխիղճն, եթէ ոչ անսան նմին՝ անկանին ընդ դատաստանաւ։ Այս նախատինք են մարդոյ ունիլ զբան, և վարիլ իբրեւ զանբան։

Է. Խաղաւմբ 'ի մարդկանէ քաջ ճանաչեն 'ի սիրտս իւրեանց, թէ սխալեալ են 'ի գործս ինչ կամ 'ի բանս. բայց տակաւին ընդդէմ խղճի մտաց իւրեանց չանան բանիւ արդարացուցանել զանձինս։ Այս է նշան յամառութեան իւրեանց 'ի չարիս, զի երեւի թէ ոչ կամին ուղղել զսխալանս իւրեանց։ Չէ ընտանութեան և սիրոյ արժանի՝ որ յայտնի ճշմարտութեան յամառեալ հակառակի, զի մի՛ սխալեալ երեւեսցի։

Ը. Որ ոք գործէ ընդդէմ խղճի մտաց իւրոց՝ չըկարէ լինել զերծ 'ի խայթոցէ նորա. զի խայթ խըղ-

ՀԻՆ խիստ է քան զմահ. քանզի մահն միանգամ մեռուցանէ, իսկ խայթ խղճին յամենայն ժամ։ Այսպէս ոչ ունի զխիղճ իւր անխաբ դատաւոր անձին, և հրնազանդի օրինաց և հրամանաց նորա, մնայ ազատ և խաղաղ 'ի ներքին տանջանաց որոնին։

Թ. Խիղճ մարդոյ նմանի շան, որ առ օտարս հաչէ և հալածէ, և ստ ծանօթս քծնի և շողքորդէ. քանզի 'ի խորհել և 'ի գործել ումեք զչար ինչ, խիղճն վաղվաղակի հաչէ և հալածել ջանայ զչարն, իբրեւ օտար և թշնամի բնութեան մարդոյ։ Իսկ եթէ տակաւ առ տակաւ չարն ընտելասցի մուտ և ել գործել 'ի միտս, այնուհետեւ խիղճն մնաց վարի ընդ նմա իբրեւ ընդ ծանօթի, և լռէ 'ի յանդիմանելոյ. վասն որոյ և մարդն համարձակ ասի յամենայն մոլորութիւնս, յորոց յառաջագոյն հարեալ 'ի խղճէ խորշէր։ Այսպա ջանալի է 'ի սկզբան չտալ տեղի չարի լոմիք, և զխիղճն միշտ արթուն պահել, զի մի գա հավէժ լիցի մարդ 'ի խորս չարեաց։

" Երկչոտին առանձին ինն չարութիւն՝ ինքեամբ վկայէ դատապարտեալ միշտ կանխէ զանհնարինն՝ ներգեալ 'ի խղճէ մատաց» Իմաստ. ԺԷ. 10։

" Քանզի պարծանք մեր այս են՝ վկայութիւն մատաց մերոց. զի սրբութեամբ և ստուգութեամբ Աստուծոյ, և ոչ մարմնական իմաստութեամբ Աստուծոյ, այլ շնորհաւքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի։ Բ. Կորնթ. Ա. 22։

" Ոչ խղճիցէք յանձինս՝ և լենիցիք դատաւորք չարեացն խորհրդոցն» Ցով. Բ. 4։

" Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ոչ ատգոտանիցեն, զհամարձակութիւն ունիմք առ Աստուած։» Ա. Ցովհ. Դ. 21։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐԴԱՐԱՒԹԻՒՆ

Ա. ԳԱՆԳԱՏԵ արդարութիւնն յորժամ մարդիկ ոչ այնպէս դատին զանձինս՝ որպէս դատէին զայլս։

Բ. Զէ հարկ դատաւորին ընդ պատժովք արկանել զյանցաւորն, եթէ առանց մեղանչելոյ իրաւանց՝ կարէ զնա թողուլ անպատիժ. զի պատուհասելովն ոչ եթէ զքրաւունս պաշտպանէ, այլ զի՛ բրաւունս անգութ առնէ։

Գ. Ոչն մարդիկ որ կամին ծառայեցուցանել զբրէնս արդարս հաճութեան կամաց իւրեանց. և ապ քա՛ են անօրէնք և կամապաշտք, որք և ջանեալն 'ի միւս՝ թէ պարտ է օրինաց իշխել 'ի վերայ կամաց մարդոյ, և ոչ եթէ կամք մարդոյ 'ի վերայ օրինաց. զի եթէ կամք մարդոյ լինէր օրէնք, լինէին այնքան օրէնք՝ որքան մարդիկ։

Բայց օրէնքն պահանջէ ունկդ և զհնազանդութիւն. իսկ 'ի կացուցանել ամենեցուն զկամս իւրեանց օրէնք, լինէին ամենեքին իշխողք. և ո՞վ դատանէր հնազանդ օրինաց, բայց եթէ յորժամ մի միայն մարդ մնայր յաշխարհի։ Վասն այնորիկ նախնի օրէնսդիրք իւրաքանչիւր ազգայ՝ սահմանեցին օրէնս քարիս, զի ամենեքին միաբանեսցին 'ի մի կամս. և որ բնութիւնն ետ իւրաքանչիւրոց զառանձին կամս, մարդիկ միացուցին 'ի մի օրէնս, ընդ որ բնութիւնն իսկ զարմացաւ, տեսանելով եթէ մարդիկ դտին հնարս կառավարել զկամս իւրեանց։

Դ. Զէ արժան բնակիլ 'ի քաղաքի՝ ուր ոչ գոյ օրէնք, կամ ոչ գտանի դատաւոր օրինապահ. զի ուր ոչ գոն օրէնք, մարդիկ լինին անօրէնք. և ո՞վ

կարասցէ ՅՈՒԼ անվնաս 'ի մէջ անօրինաց։ Կամ թէ
իցեն օրէնք, բայց թէ դատաւորն ոչ 'ի գործ դիցէ
զհրամանս օրինաց, յո՞ դիմեսցէ զրկեալն խնդրել
զիրաւունս. զի այնպիսիքն չատագովն զօրէնս, այլ
վարին իբրեւ զանօրէնս. և յեղծանել իւրեանց զօ-
րէնս, եղծանեն զքաղաքն և զհասարակութիւնն։

Օրէնք կամ բարեկարգութիւնք որք վերաբերին
առ հասարակութիւնն, հասարակաց հաւանութեամբ
պարտին հաստատիլ։

Ե. Արդեանիկ է քաղաքն, յորում դատաւորք են
իսնաստուն և արդար. միապէս հային 'ի դատաստանն
աղքատաց և փարթամաց, եկաց և բնակաց. ոչ
թիւրեն զիրաւունս վասն կաշառաց, կամ վասն եր-
կիւղի, կամ վասն սիրոյ։

Զ. Ոչ ինչ վճիռ գործոյ կարէ ՅՈՒԼ հաստատուն
եթէ չիցէ հիմնեալ յիրաւունս. ուստի մարդիկ ե-
թէ առ ժամն համաձայնեալ ընդ միմեանս, վճռեսցեն
առնել զգործ ինչ որ վերաբերի առ ինքեանս,
'ի վախճանի տարաձայնին 'ի միմեանց, և նանրանայ
վճիռն՝ եթէ չիցէ իրաւամբ հաստատեալ։

Ե. Եթէ այր ընդ ընկերի իւրում կենցաղավարէր
աննենգ և խաղաղ, աւելորդ լինէր նոցա դատաւոր
և դատաստան. զի ոչ որ ունէր յայնժամ զվէճ, և ոչ
որ կարօտէր երթալ 'ի դատ. վասն զի դատաւորն
տահմանեցաւ վասն խարդախութեան և անիրաւու-
թեան մարդկան, զի եթէ մարդիկ անիրաւեսցին առ
միմեանս, դատաւորն արասցէ իրաւունս։ Սոսկայ
արդարութիւնն, յորժամ դատաւորն որ պահապա-
նին է իրաւանց, հալածէ զարդարութիւնն 'ի դա-
տաստանէ իւրմէ, և զրկեալն խնդրէ իրաւունս 'ի
նմանէ։

Ոչ ատէ զիրաւունս, ատէ և զայնս որ խօսին
զիրաւունս։

Ը. Որ զրկէ և յափշտակէ զինչս այլոց, կորուստ նէ զերաւունս ժառանգութեան ընչից իւրոց, ապա որ ցանկայ խաղաղութեամբ վայելել զինչս իւր, հաստուացէ նմա զոր զրկեաց. զի որ զրկանօք զինչս այլոց ժողովէ, որպէս թէ զհուր 'ի հանդերձս իւր ծրարէ։

Թ. Զինչ քան զայս իրաւացի հաստուցումն՝ յորժամ նա որ յընթացս կենաց իւրոց ցաւօք և վնասուք այլոց ստացեալ ի ցէն զինչս, թողեալ երթիցէ ցաւօք սրտի և վնասուք հոգւոյ։ Անիրաւութիւն էր արդեօք եթէ նա որ զրկանօք մթերեալ էր զինչս՝ վայելէր 'ի նոսա մտադիւր. զի գանձք որ ժողովին զրկանօք, պահին կասկածանօք. և կորուսանին ցաւօք։

Ժ. Յանցաւոր է օրինաց որ ոչ ընու զպարտաւորութիւն իւր. ապաքէն իշխանաւորն դաշամբ հաստուցման վարձուց պահէ առ իւր զսպասաւորն զի ծառայեսցէ, և զսպասաւորն ծառայէ՝ զի վարձ առնուցու։ Ապա եթէ իշխանաւորն զլասցի տալ զսակ արկեալ վաճառն, կամ սպասաւորն ոչ ծառայեսցէ հաւատարմութեամբ, մինն լինի զրկող, և միւսն գող, և երկոքին իսկ ոչ հատուցանելով զպարտաւորութիւնս իւրեանց՝ յանցաւոր օրինաց դատին։

ԺԱ. Որ առանց իրաւանց առէր լինի բաղմաց, ի բաւունքն առնեն զնա ծառայ այլոց։

ԺԲ. Արդար հատուցումն լինի՝ յորժամ նա որ հատոյց վնաս այնմ յորմէ չէր ընկալեալ չարիս, կրեսցէ վնաս յայնմանէ՝ որում արարեալ էր բարիս։

ԺԳ. Որ առաջնորդ լինի մատնութեան և դաւաճանութեան, օրինակաւ իւրով ուսուցանէ այլոց ըստնայն առնել և ինքեան։

Ինութիւն է մարդոյ՝ 'ի բազում բարի օրինակաց զսակաւ բարիս, և 'ի սակաւ չար օրինակաց զբազում չարիս ուսանիլ։

ԺԴ. Աստուած ըստ յօժարութեան և բաղձանաց

և ջանից իւրաքանչիւր ումեք հաստատանէ զփոխարէնն. զի եթէ յօժարութեան ոք և ջանասցէ առնել զբարի կամ զչար, և չկարիցէ գործով 'ի գլուխ ածել, տակաւին արժանաւորի վարձուց կամ պատժոց։

Քանզի գործք որ ունին զբան բարւոյ կամ չարի, զնոսն այն փոխարինութեան են արժանի, զի գործին 'ի հրամանէ կամաց. ապա թէ ոչ՝ լինէին գործ մարդոյ՝ բնական և հարկաւոր, և ոչ եթէ գործ մարդկային՝ բարոյական և կամաւոր։ Իսկ վասն զի կամաւորութիւնն է որ առնէ զգործն արժանի հատուցման, ապա և բաղձանքն երբուզեալ 'ի կամաց՝ առ 'ի գործել զբարի կամ զչար, արժանաւոր գտանի վարձուց կամ պատժոց, է՝ որ յաւէտ, և է՝ որ նուազ, ըստ յաւէտ և նուազ՝ կամ յարատեւ և անցողական բղձանաց և ջանից իւրաքանչիւր մարդոյ։

Ա. Ճշմարիտ հաւատացեալն Քրիստոսի՝ է իբրեւ որդի և ժառանգ Աստուծոյ, իսկ անհաւատն՝ իբրեւ ծառայ և վարձկան. ուստի 'ի գործել նոցա զչար ինչ հաւասար ծանրութեամբ, արդարութիւնն պահանջէ զի պատժեսցին անհաւասար պատժովք, իբր զի սաստիկ պատուհասեսցի հաւատացեալն քան զանհաւատն. քանզի ապստամբութիւնն որդւոց է առաւել չար, և մեծագոյն պատժոց արժանի՝ քան զապստամբութիւնն ծառայից։

Այսպա Ճշմարիտ հաւատացեալք պարտին առաւել քան զամենայն մարդիկ ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործել, ըստ այնմ. «Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացս և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւնն Աստուծոյ։» Մատթ. Ե. 20։

«Բերան արդարոյ խորհի զիմաստութիւն, և լեզու նրա խօսեսցի զիրաւունս։» Սաղմ. ԼԶ. 30։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ա. Զուք քան զՃշմարտութիւնն արժանի սատ-
ուոյ, բայց չեք քան զնա յաւէտ անարգեալ։ Արդեաք
'ի խօսելն ընդ միմեանս մեծացուցանեն զփառս նորա,
և ցուցանեն զանձինս ջատագով Ճշմարտութեան.
բայց 'ի գործս իւրեանց արհամարհեն հանապազ, և
պատուադիր լինին ստութեան։

Սակայն Ճշմարտութիւնն զմարդասիրութիւն իւր
'ի գործ արկեալ, երկայնմտութեամբ տանի անարգ-
անաց իւրոց, և ոչ գլխովին մեկնի յաչխարհէ՝ ըս-
պասեալ դարձի նոցա, և կամի՝ զի որպէս ամենեքին
'ի խօսիլ իւրեանց մերձ են Ճշմարտութեան, միաս-
ցին ընդ նմա և 'ի գործել իւրեանց։ Աւստի ամե-
նայն որ բարիս գործէ, միանայ ընդ Ճշմարտու թեան.
զի ամենայն բարի է Ճշմարիտ, և ամենայն Ճշմարիտ՝
բարի. իսկ որ չար գործէ, հեռանայ 'ի Ճշմարտու-
թենէ, զի այն է չար՝ որ ոչ ունի զՃշմարտութիւն։

Տեսեալ զներողութիւնն Ճշմարտութեան, զի ոչ
առ ժամայն վրէժխնդիր լինի անարգողաց իւրոց, և
ոչ խնդրէ իրաւունս, այլ առ ամենեսին հուպ մատ-
չի՝ և օգնէ ստէպ զի շահեսցի զնոսա, թէպէտ ոչ
ամենեքին հուպ առնա գոտանին, և ընդունին զօգ-
նականութիւն նորա։

Բ. Զ՝ի ոք յուսացի 'ի սուտ խօսողէ ընդունիլ
զգաբի ինչ, քանզի ստասացն չունի ինչ բարի. զի որ
զՃշմարտութիւնն կորուսանէ, կորուսանէ զամենայն
բարիս, զի Ճշմարտութիւնն է ամենայն բարի։

Ստասացն զայս միայն շահի, զի թէ և զՃշմարիտ-
սն ասասցէ, ոչ ոք հաւատայ նմա։

Ձէ սրժան 'ի Թիւս մարդկան գրիլ՝ որ սովոր է սուտ խօսիլ։

Գ. Ձիք գովելի քան զՃշմարտութիւնն, բայց աւանդ՝ զի չիք այժմուս ստելի քան զայն. են բազումք որք բանիւ Ճշմարտասէր լինել պարծին, բայց սրտիւ ստեցողք են Ճշմարտութեան։ Իսկ Ճշմարտութիւնն Ճանաչելով զգաղտնիս մարդոյ՝ ծպտեալ շրջի յաշխարհի, զի մի լսողաց հալածեսցի. բայց Ճանաչեն զնա և պատուասիրեն որք ուղիղ են սրտիւք։

Դ. Ճշմարտութիւնն հաղորդական եղեալ 'ի մարդկանէ՝ որոց այլ է սիրտ և բերան, բնակի ընդ անմեղ անասունս, որոց նոյն է սիրտ և բերան։

Ե. Որ ծագեալ է լոյս, ոչ բնակէ անդ խաւարուր թագաւորէ Ճշմարտութիւն, անդ ոչ գտանին դեւք։

Որ ունի զՃշմարտութիւն 'ի խօսս, և զուղղութիւն 'ի գործս, ունի նա կրկին թեւս վերասլանալ յերկինս։

Զ. Որ չիք Ճշմարտութիւն, չիք անդ և բարութիւն, զի երկոքին սաքա են անբաժան ընկերք, որովհետեւ նոյն են իրօք ընդ միմեանս, և տարբերին տեսականութեամբ և եթ։ Ապա յայտ է՝ թէ 'ի չարիս չիք Ճշմարտութիւն, զի չեն բարի. և որ չունին զՃշմարտութիւն, խաւարեալ են միտք նոցա, զի Ճշմարտութիւնն է լոյս մտաց, վասն որոյ և չարք յամենայն խորս մոլորութեան անկեալ՝ ոչ իմանան։

Ուստի եթէ կամիցի որ զչարն դարձուցանել 'ի բարի, նախ պարտ է լուսաւորել Ճշմարտութեամբ զմիտս նորա, որպէս զի միտքն իւրովի յափշտակեսցի 'ի սէր բարւոյ, ապա թէ ոչ՝ ընդ վայր տքնի խրատիչն, և որպէս թէ անլուր լսելեաց չանայ ազդ առնել զներդաշնակութիւն երգոց։

Է. Լեզու մարդոյ եթէ Ճանաչէր զպարտաւորու-

թիւն իւր և զչափ իւր, գուցէ ոչ փակեալ լինէր 'ի բերանի ընդ պարսպաց ատամանց և դրամբք շրթանց իբրեւ յարգելանս բանտի։ Պարտաւորութիւն նորա է խօսիլ զճշմարիտն, զի լեզուն է թարգման խորհրդոց և մտաց, և չափ նորա է խօսիլ զարժանն։ Այլ ոչ ճանաչէ զպարտաւորութիւն իւր, եթէ ոչ պահէ զհաւատարմութիւն 'ի խօսս, և ասէ ինչ ընդդէմ ըմբռնման և դատման. իւրոյ և ոչ ճանաչէ զչափ իւր՝ եթէ աւելի քան զարժանն խօսի։ Այսպս իրաւամբ պատժի լեզուն՝ որ ոչ ճանաչէ զպարտաւորութիւն և զչափ իւր։

Այս չեն ինչ զարմանք, եթէ լեզուք զառամեալ ծերոց և պտռաւանց աւելի քան զարժանն խօսին, զի պարիսպ ատամանց նոցա խրամատեալ են, և դռնունք շրթանցն թուլացեալ։

Ը. Որ չէ օգտակնդիր անձին, սովոր է լինել ճշմարտախօս. քանզի շահաւէրքն են որք լռեն զճշմարիտն և կամ ստեն։ Ընդ ցորեանն զորոմն խառնէ, որ ընդ ճշմարիտն զսուտ ինչ յարէ։

Թ. Չէ արժան ստել երբէք առ 'ի զերծանիլ 'ի վտանգէ. զի թէ մարդկային հնարն տկարանայ 'ի փրկել, պատ է ողորմիւք առ Աստուած ապաւինիլ, և զելս հնարից առ 'ի նմանէ խնդրել, և ոչ երբէք վհատիլ և ստել. զի Աստուած է ամենեւին ճշմարտութիւն, և միշտ զճշմարտութիւն կամի։ Լաւ ոչ որ ոք ստութեամբ իւիք այլոյլ զճշմարտութիւնն, մեղանչէ ընդդէմ Աստուծոյ, և ընդդէմ խղճի մտաց իւրոց. և Աստուած քաջ գիտէ փրկել, եթէ իցէ օգուտ, ապա թէ ոչ՝ լաւ է մեռանիլ պահմամբ ճշմարտութեան, քան կեալ յանցանօք ստութեան։ Սակայն Աստուած երբեմն թոյլ տայ չարաց սուտ խօսիլ՝ առ 'ի փրկել զաարիս, որ սիրեն կորուսանել զկեանս քան ստել։

Ժ. Լուակի է ճշմարտութիւնն, սրտի, բերանոյ և գործոյ. բայց բազում անգամ ոչ ինչ զօրէ առ մարդիկ ճշմարտութիւնն սրտի և բերանոյ, եթէ ոչ 'ի վերայ գայցէ ճշմարտութիւնն գործոյ. որովհետեւ մարթ է ստիլ երկուց առաջնոց, կամ մնալ անգործաղիր։ Արդ՝ միայն Աստուծոյ է սեպհական ճանաչել զճշմարտութիւն սրտի. մարդիկ հաւատարիմք միմիանց՝ ճանաչեն զճշմարտութիւնն բերանոյ, իսկ հասարակութիւնն ճանաչէ զճշմարտութիւնն գործոյ։

Այպա չէ նա խոհեմ, մինչ զայն որ սեպհական է Աստուծոյ՝ պահանջէ 'ի մարդկանէ, այսինքն յորժամ խնդրէ 'ի մարդկանէ ճանաչել զյօժարութիւն և զբաղձանս սրտի իւրոյ, թէ ստուգիւ կամիցի զայս ինչ, այլ պարտ է նմա բանիւ եւս յայտ առնել։ Զէ խոհեմ մինչ զայն որ յատուկ է հաւատարիմ անձանց՝ պահանջէ 'ի հասարակաց, այսինքն խնդրէ 'ի հասարակութենէ հաւատալ բանից բերանոյ իւրոյ, այլ հարկ է նմա գործովք եւս ցուցանել։

Լուակի է և ստութիւնն, այսինքն սրտի, բերանոյ և գործոյ. զի է՝ որ զայլ ինչ խորհի, և զայլ ինչ խօսի. և է՝ որ զայլ ինչ խօսի, և զայլ ինչ գործէ. և ուր մինն երից աստի չէ համաձայն, անդ է սրտութիւն։ Այլ օրէն է խոհեմ կառավարչին երբեմն պատրուակել զճշմարտութիւնն, այսինքն զայլ ինչ խորհիլ 'ի սրտի, և զայլ ինչ խօսիլ, կամ զայլ ինչ գործել. բայց այս ոչ է աղաւաղել զճշմարտութիւնն, այլ միայն թանգուզել և ծածկել, զի այսպէս պահանջէ օգուտն հասարակաց. քանզի երբեմն բարին յաղթահարէ զճշմարիտն։

ԺԱ. Որ միանգամ ստէ երդման կամ դաշին իւրոյ վասն շահասիրութեան, վնասէ անձին, զի ոչ ոք հաւատայ նմա յայլում նուագի, թէ և երդնուցու պահել զխոստումն իւր. վնասէ եւս հասարակու-

թեան, զի բառնայ յանշխարհէ զյարդ հաւատարմութեան, որ հաստատեալէ յերդման։

ԺԲ. Լաւ է քաջութեամբ մեռանիլ՝ ի պատերազմի՝ առ հաստատուն պահելոյ զդաշն հաւատարմութեան, քան յաղթել թշնամւոյն ուխտադրուժ երդմնազանցութեամբ։

ԺԳ. Ոչ արժան վնաս հասուցանել այնմ, զոր երկբայական կարծեաք հաճարիս լինել թշնամի, զի լաւ է թէ նա լիցի չարագործ՝ քան թէ դու։

Բազում ինչ իրողութիւն գործեցան յառաջին դարս, բայց այժմ կամ ոչ հաւատան նոցա մարդիկ, և կամ դժուարաւ, և բազում ինչ ստոյգ գործին՝ ի ներկայս, զորս յետապայք կամ ոչ հաւատացեն, և կամ դժուարաւ։ Այսպէս զգուշալի է մեզ չտեսել զանցս անցելոց, զի մի և յետապայք անստոյգ համարեսցին զճշմարտութեամբ գործեալսն առ մեզ։ Որ ոչ երբէք հաւատայ ումեք, ոչ ոք կարէ հաւատալ նմա։

ԺԴ. Ոչ ամենայն հակառակութիւն է իրաւացի. զի են ոմանք՝ որք հարցեալ ինչ ումեք՝ լսեն պատասխանի ճշմարիտ, բայց չունելով ուղիղ միտս՝ թիւրեն զքանն և հակառակին յանիրաւի։

Բազումք եւս լուեալ զճշմարիտ ինչ՝ ոչ կամին հաւատալ, մինչեւ չիցեն զփորձ առեալ. և յորժամ փորձեն՝ վկայեն լինել ճշմարիտ, բայց վնասուք անձանց իւրեանց։

ԺԵ. Զոր ինչ խօսի ոք՝ պարտ է լինել ճշմարիտ. բայց ոչ զամենայն որ իցէ ճշմարիտ, պարտ է խօսիլ։

ԺԶ. Բնական է մարդոյ խնդրել զճշմարիտն, և ցանկալ բարւոյ. զի ճշմարիտն է առարկայ կարողութեան մտաց, և բարին կամաց. և յատուկ է ամենայն կարողութեան բնականաբար դիմել առ իւր առարկայն։ Բայց բազումք ոչ ունելով զկատարեալ ճա-

նաչումն ճշմարտի և բարւոյ, վարանական դեգերին 'ի խնդիր նոցուն. և մինչ ոչ կարեն ստանալ, անհաստանելի զերան վարկանին. իսկ թէ ուշի ուշով հայեսցին, կարեն զնոսա ճանաչել և 'ի ձեռս բերել, զի չէ օտար 'ի հասողութենէ մարդկան։

Այսքէն ճշմարտութիւնն է համակերպութիւն իրի ընդ իմացութեան. իսկ բարին է այն՝ որ է հաճելոյն ուղիղ բանի։ Լուստի եթէ ոք հետազօտէ մտօք ըմբռնել զերն այնպէս՝ որպէս է իրն յինքեան, հաստատ եղեալ ճշմարտութեան. և որ լուսով բանին առաջնորդի յընտրութիւն գործոց՝ գտանէ զբարին, ապա թէ այլազգ վարեսցի, վրիպի 'ի ճշմարտութենէ և 'ի բարւոյ, և անկանի 'ի մոլորութիւն և 'ի չարիս։ Լերեմն քաջ մտադիր լինել պարտ է 'ի հետազօտել զբնութիւն իրին՝ 'ի ճանաչել զճշմարիտն, և խոհական խորհրդով վարիլ յոլոշելն զմի ինչ գործողութիւն յայլմէ՝ 'ի գտանել զբարին. և յայտնիկ կայանայ կատարելութիւն մարդոյ։

Լուստի իմաստունք որք ճանաչեն զճշմարիտն, և առաքինիք որք գործեն զբարին, են զուարթամիտ և ուրախասիրտ. իսկ տգէտք որք զսուտն ըմբռնեն որպէս զճշմարիտ, և մոլիք որ զանաբեւոյթ բարին սիրեն փոխանակ իսկական բարւոյ, միշտ տանջին 'ի միտս և 'ի կամս իւրեանց, և ոչ ունին հանգիստ. զի միայն ճշմարիտն է հանգուցիչ մտաց, որպէս և բարին կամաց։

ԺԷ. Ճշմարտութիւնն բնական իրաց հաստատեալ է 'ի փորձս. զի ամենայն տարակուսանք կամ դժուարին խնդիրք՝ որք են շուրջ զբնական կամ ըստ գոյլն գոյացութեամբ, ոչ լուծանին բանիւ՝ այլ միայն փորձով։ Զի բանն որչափ և զօրաւոր իցէ, միայն զմիտսն հաւանեցուցանէ, այլ ոչ կարէ զնա հանդուցանել, կամ իբրեւ ապացուցեալ ճշմարտու-

թիւն բռնադատել 'ի հաւանութիւն, զի քաղցեալն ոչ յագի բանիւ, այլ խնդրէ հաց 'ի կերակուր։

ԺԸ. Յաճախակի խրատն մարդիկ, որք հանապազ ցանկան լսել զնորագոյնս, զի ոչ հետամուտ լինին քննել և իմանալ զճշմարտութիւն իրին։

ԺԹ. Ուրուասուէ ճշմարտութիւնն՝ մինչ ատեն զնա նենգաւորք և ստամոլք. և եթէ ոչ ուրեք գտանէին հաւատարիմքն՝ ուղղախօսք մխիթարել ըզնա, իսպառ չուէր յաշխարհէս և երթեալ բնակէր յերկինս, ուր ոչ գոյ նենգութիւն և ստութիւն։

«Ամենայն երկիր ապաւինի 'ի ճշմարտութիւն, և երկինք օրհնեն զճշմարտութիւն. և ամենայն գործք շարժին և գողան առաջի նորա. և ոչ է 'ի ճշմարտութեան անիրաւութիւն և ոչ մի։» Ա. Եդր. Դ. 36

«Պիղծք են առաջի Տեառն շրթունք սուտք. իսկ որ առնեն զհաւատս՝ ընդունելի է նմա։» Առակ. ԺԲ. 22.

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԲԱՐԵԿԱՄ

Ա. Բնութիւնն մարդոյ գոլով քաղաքական և ընկերասէր՝ կարօտի բարեկամութեան թէ՛ յուրախականս և թէ 'ի տրտմականս. իսկ որ ոչ ունիցի զսէր բարեկամութեան ընդ ումեք, արտաքոյ ելանէ ըստ սահման բնութեան մարդոյ. վասն զի ուրախութիւնն ընկերակցութեամբ բարեկամաց առաւելու, և տրտմութիւնն բարեխառնեալ նուազի։ Այլ որ ոչ գիտէ թէ զինչ է բարեկամութիւն, ոչ գիտէ նա՝ թէ զինչ է մարդ։

Բ. Կենցաղավարս խորհրդածութիւնն փոխադարձ խօսողութեամբ բեղմնաւորի և իբր կենդա-

նանայ և աՀի. զի երկու կարծիք ընդ միմեանս բաղդատեալ՝ ցուցանի արժանն և վայելուչն, և ի ղանակն դիւրութեամբ 'ի գործ դնելոյ 'ի դէպ ժամանակի. իսկ 'ի մնալն առ մի ոք ծածկեալ՝ ընդ ինքեան բթանայ, և կամ մոռացմամբ կորնչի։ Այս պարտ է ունել մարդոյ խոհեմ և խորհրդապահ բարեկամ խորհիլ ընդ նմա. զի եթէ բարի է՝ զոր կամի առնել, օգնելով բարեկամին՝ լինի բարեգոյն, իսկ եթէ ոչ է բարի, աղդարարութեամբ բարեկամին յեռա կապի 'ի նմանէ. զի օգուտ կամ վնաս խորհրդոց և գործոց՝ այլում պարզ և մեկն երեւի քան ինքեան։

Գ. Ճշմարիտ բարեկամութիւնն գտանի տիրապէս 'ի մէջ իմաստնոց՝ մարդասիրաց և առաքինեաց. ապա որ ունի հաւատարիմ բարեկամութիւն ընդ ումեք, նշան է՝ թէ ունի նա և զիմաստութիւն, կամ զմարդասէր բարս և զբարուք կենցաղավարութիւն. զի ընդ այսպիսիս յօժարամիտ և փոյթ են մարդիկ առնել զբարեկամութիւն. իսկ այն որ ոչ ունի զոք բարեկամ, նշան է՝ թէ իցէ տգէտ, կամ մարդատեաց, կամ մոլի, վասն զի ամենեքեան խորշին յայսպիսեաց։

Դ. Ճշմարիտ բարեկամութիւնն կայանայ 'ի փոխադարձ հաղորդութեան բարեաց և չարեաց, որպէս զի յաջողուածովք բարեաց ուրախասցին սիրտք և կարեկցութեամբ չարեաց թեթեւասցին տրտմութիւնք, ապա թէ ոչ՝ բարեկամութիւնն փոխի 'ի շահասիրութիւն։

Ե. Լաւ է ունիլ զիմաստուն բարեկամն՝ քան զբազում գանձս. զի իմաստուն բարեկամն օգնէ յաւուր նեղութեան օգտակար խրատուք, այլ գանձք և մեծութիւնք ոչ բնաւ։

Զ. Յատուկ է Ճշմարիտ բարեկամաց լինել հաւատարիմ միմեանց; և յատուկ է հաւատարմաց՝

ունել ընդ միմեանս սերտ բարեկամութիւն։

Օրէնք բարեկամութեան հաստատի և պահպանի 'ի հաւատարմութեան. և ուր չիք հաւատարմութիւն, չիք անդ և բարեկամութիւն։

Է. Օրկիլ 'ի բարեկամէն առաւել դատն է և ցաւալի՝ քան զլրկիլ յընչից. զի ինչք բազմացուցանեն զթշնամիս, և բառնան զհանգիստ ստացողին. իսկ բարեկամութիւնն զթշնամին նուազէ, և զանձն բարեկամին հանգուցանէ։

Ը. Ոչ փութով բարեկամանայ ընդ ումեք, փութով քակէ զկապն բարեկամութեան։

Թ. Կեղծ բարեկամ՝ է ուղխաջուր անձրեւոյ. և որպէս ուղխն 'ի պակասիլ անձրեւոյ ցամաքի, նոյնպէս և կեղծ բարեկամն 'ի դադարիլ յաջողութեան անհետ լինի։

Ժ. Յատուկ է օգտակնդիր և կեղծաւոր բարեկամի՝ 'ի ձախողութեան բարեկամի իւրոյ նախկին լինել 'ի փախչողս, որ 'ի յաջողութեան նորա նախահրաւէր լինէր 'ի կոչնականս։

Ձախորդութիւնն է փորձաքար բարեկամութեան, և որ չէ անկեալ 'ի ձախորդութիւն ինչ, ոչ կարէ որոշել զկեղծ բարեկամն 'ի ճշմարիտ բարեկամէ։

ԺԱ. Կեղծ բարեկամն է առաւել չար՝ քան զյայտնի թշնամին. զի 'ի յայտնի թշնամեաց սովոր է զգուշանալ ոք, բայց 'ի ծածուկ թշնամեաց չունելով զկասկած՝ վնասի չարաչար։

ԺԲ. Արժանի զարմացման է, զի յորժամ մարդիկ զձի կամ զէշ գնոց առնուն, խուզարկեն զքնութիւն և զբարս նորա. իսկ յորժամ բարեկամ զոք ստանան, յարտաքին կերպարանս նորա և ելթ հային, իսկ ընդ ներքին բնաւորութենէ նորա անտիւթ լինին։ Ոչ քնարէ իւր բարեկամ և խորհրդակից զարս առաքինիս և ճշմարտախօսս, արժան է զի վնասեսցի 'ի նէն

գաւոր բանից խորամանկ շողոքորթաց։

ԺԳ. Զինչ յիմարութիւն քան զայս ստանալ վասնզաւոր, մինչ զարատաւոր անասունս առանց դանդաղանաց արտաքս վարեն մարդիկ 'ի տանէ իւրեանց, իսկ զմոլի բարեկամս հանապազ սեղանակից և խորհրդակից ունին ընդ ինքեանս։

ԺԴ. Եր ստանայ զբարեկամ բարի, գտանէ զամենայն բարի. իսկ որ ստանայ զբարեկամ չար, կորուսանէ զամենայն բարի. Ընտրելի է մնալ առանց բարեկամի՝ քան ընկերանալ ընդ չարի։ Զան այնորիկ մանաւանդ ստանալի է զբարեկամն, զի բարին զոր ունի ոք՝ մնասցէ ամբողջ, և զոր չունի՝ ստասցի նոր։ բայց բարեկամ չար՝ զբարին զոր ունի ոք՝ բառնայ 'ի նմանէ, և զոր ոչ ունի՝ ոչ բնաւ կարէ տալ. զի որ չարքն են, այլում բարիս առնել ոչ կարեն։

ԺԵ. Թէ կամիս ունել քեզ զոք բարեկամ և հաւատարիմ, նախ լեր դու նմա անկեղծ բարեկամ, զոպէս զի քոյդ բարութիւն զայլս արասցէ քեզ բարեկամ. զի եթէ դու ոչ կամիս այլոց զբարին, մի՛ յուսար՝ թէ այլք կամեսցին քեզ բարի։

ԺԶ. Զիք յաւէտ զուարճալի իմաստնոց՝ քան կենցաղավարիլ ընդ առաքինի բարեկամս, և խօսակից լինել վասն կարեւոր և օգտակար իրաց. դիւրին է իմաստնոց կորուսանել զամենայն վայելչութիւնս աշխարհի, քան զսկիզ յընկերութենէ առաքինի բարեկամաց։

ԺԷ. Երկնաքաղաքացի 'ի դէպ է անուանել զնոսա, որք 'ի գործս բարեպաշտութեան սերտ սիրով բարեկամութեան մնան 'ի միմեանց անբաժան, այս է երկնային կեանս վարել 'ի յերկրի. զի երկնայնոց է 'ի սէրն Աստուծոյ և 'ի սէր ընկերին մնալ հաստատուն։ Զպա որ բարեկամութեամբ կեայ ընդ բարիս 'ի գործս բարիս, նախ քան զելանելն յերջանկաց գա-

ւառ՝ անշուշտ կրէ յանձին զնոցուն քաղաքավարութիւն։

ԺԸ. Ողբագն ողբան և լուսափայլ լիցէ, տակաւին պէտս ունի հատման պատրուգի, ապա եթէ մնասցէ անցաբդար, լինի դիւրահալ և աղօտալոյս. այս պէս և մարդ ողբան և բաղմահանճար լիցէ, կարօտի խորհրդակցութեան բարեկամաց, զի մի գուցէ կնքեւոր ինչ խորհրդածեալ իրողութիւն՝ իբրեւ իւղ ճրագի վաղվաղակի հալեալ ապառեսցի, կամ աւելորդ պարագայիւք առլցեալ՝ պայծառութիւն խորհրդոյն մռայլ առնուցու։

ԺԹ. Խրատ իմաստուն բարեկամաց քաջ պահպանէ զիշխանն՝ քան զբազում գունդս տեղ զօրաց։ Ընկանին 'ի վտանգս՝ ողբ անգոներն զերատ իմաստուն բարեկամաց։

Ի. Սի 'ի նշանաց ճշմարիտ բարեկամութեան է պահել 'ի գաղանիս սրտի զխորհուրդս ընկերին, և ոչ մատնել օտարաց, զի խորհրդապահութիւնն է հիմն բարեկամութեան, և առանց նորա սէր ընկերին չկարէ կալ կանգուն։ Զէ ճշմարիտ բարեկամ, որ մինչ գժդմնի ընդ բարեկամին իւրոյ, լուծանէ զկնիք հաւատարմութեան, և հրատարակէ զգաղտնիս նորա։

ԻԱ. Հարազատ բարեկամնման է հայելւոյ՝ կրկնոյ և փորձաքարի։ զի որպէս հայելեաւ տեսանէ ոք զվայելչութիւն կամ զպատ երեսաց իւրոց, և կշռով իմանայ զչափ ծանրութեան իրին, և փորձաքարիւ ճանաչէ զաստիճան և զարժողութիւն ոսկւոյն, այսպէս և ազդարարութեամբ բարեկամի կարէ ոք քաջ 'ի միտ առնուլ, թէ խորհուրդ իւր զոր խորհեալն էր յառանձնութեան իւրում՝ իցէ փայելուչ, կատարեալ և արժանի՝ ըստ ժամանակին, ըստ տեղւոյն և ըստ այլ ամենայն պարագայիցն։ Վնասիցէ բան

զում անգամ առանձինն առանց խորհրդակցի՝ թէ և իմաստուն ոք լիցէ՝ անկանի 'ի սխալանս, կամ տարակուսի յիրս ինչ, կամ զխորհեալն թողու տարտամ և անգործ. վասն որոյ կարօտի այլում, զի ուղղեսցէ զսխալանսն, և զտարակուսանսն լուծցէ, և զխորհեալն եթէ լիցէ հարկաւոր և օգտակար՝ խրախուսեսցէ 'ի գործ դնել։ Այլ որ ունի անկեղծ և իմաստուն բարեկամ՝ ոչ սխալի, քանզի սէր առաւել տեսանեն քան զակն. իսկ որ ոչ ունի խորհրդակից բարեկամ 'ի գործս զոր հանդերձեալ է առնել, զդոյշ լիցի, զի կամ անկեալ է 'ի վրիպակս, կամ մերձ է յանկանիլ։

ԻԲ. Հարազատ բարեկամութիւնն պահանջէ ունելի զհաւասարութիւն ինչ, կամ ըստ փարթամութեան, կամ ըստ պատուոյ, կամ ըստ իմաստութեան և կամ ըստ խոհեմութեան. ապա թէ ոչ՝ փոխարկի բարեկամութեանն անուն կամ 'ի շահասիրութիւն, կամ 'ի շողոքորթութիւն, կամ 'ի դաստառութիւն, և կամ 'ի կուրօրէն հաւանութիւն. վասն որոյ անհաստատ է բարեկամութիւնն՝ ուր չիք հաւասարութիւն ինչ։

ԻԳ. Հոգին բարեկամութեան է անկեղծ սէր, զի առանց նորա բարեկամութիւնն է դի անկենդան, կամ է պաճուճապատանք ինչ՝ որ արտաքին երեւութիւն ցուցանի լինել մարդ, այլ իրօք է կեղծիք. և որպէս դիւրաւ կործանի շինուածն որ չլցէ հաստատեալ 'ի վերոյ վիմի, սոյնպէս փութով եղծանի բարեկամութիւնն որ չլցէ հիմնեալ 'ի վերայ սիրոյ։

ԻԴ. Բարեկամութիւնն որպէս գեղեցիկ է տեսլեամբ, նոյնպէս և փափուկ է բնութեամբ. վասն որոյ և դոյզն պակասութեամբ ծանր հիւանդանայ, և փոքր ինչ անհոգութեամբ մեծամեծ վէրս երեւեցուցանէ. քանզի մարդիկ չնչին նեստիւք սիրելեաց

կարեվէր խոցին 'ի սիրտ՝ քան հրաշալի գնտակաց թշնամեաց։ Խաղաղ ամենայն սաստիկ սէր բարեկամութեան յանհնարին ատելութիւն փոխարկի անզգուշութեամբ, նմին իրի միշտ կարօտի փոխադարձ դարման մատուցանելոյ, զի եւս քան զեւս զօրասցի։

ԻԵ. Յուսախել առ բարեկամն առանց կարեւոր ինչ առթի՝ բերէ վատաղութիւն և զանպատուութիւն։ Իւ կարի իմն յամր և անագան երթեւեկութիւն՝ հովացուցանէ զջերմութիւն սիրոյ, ըստ ասածին, որ հեռի է յաչաց, հեռի է և 'ի մտաց. ապա որ կամի արդոյ և սիրելի լինել յաչս բարեկամին մի՛ կարի յաճախեսցէ, և մի՛ կարի անապատեսցի, այլ մեծն լծակօք կշռեսցէ զժամանակն։

ԻԶ. Ինդ է կատարեալ բարեկամութիւն, յորժամ երկոքին ունին զմի սիրտ և զմի հոգի. զոր ինչ կամի մինն՝ կամի և միւսն, և զոր ինչ ասէ մինն՝ ասէ և միւսն. եթէ առնէ մինն՝ առնէ և միւսն, և եթէ դադարի մինն՝ դադարէ և միւսն, մինչեւ ընդ բեւ իլ նոցա՝ թէ ոչ են երկու անձինք, այլ մի հոգի յերկուս մարմինս բնակեալ։ Ինդ է տեսանել անձանձիր քաղցրութիւն կենաց, և յաւէրժ ուրախութիւն 'ի միասին կեան, և 'ի միասին մեռանին, մանաւանդզի մեռանին և բնաւ իսկ ոչ, զի ունին ներդոյացեալ 'ի հոգիս իւրեանց զսէր անմահ և մշտնջենաւոր։

ԻԷ. Ինչան է կատարեալ բարեկամութեան՝ եթէ ոք յանձն արասցէ զօգուտն իւր 'ի կամս բարեկամին, և ասիցէ. զայն օգուտս համարիմ ինձ, զոր կամիցի առնել ինձ բարեկամն իմ։

ԻԸ։ Ինարժան է սիրոյ և բարեկամութեան՝ որ մոռանայ զերախտիս բարեկամի իւրոյ. զի է մարդ՝ որ բազում անգամ զմեծամեծ բարերարութիւնս ընկալեալ է յումեքէ, և մինչ ըստ գիպաց իմն յայլում նուագի ոչ գտանէ զոր խնդրէ, վաղվաղակի մոռա-

նայ, և առ ոտն հարկանէ զայն ամենայն երախտիս նորա, խոժոռի և անգոսանէ զբարեկամն։

ԻԹ. Ոչ է ճշմարիտ բարեկամ, որ յորդորէ զբարեկամն իւր գործակից լինել ընդ ինքեան 'ի վնաս այլոց, այսպիսին կերպարանաւք զանուն բարեկամութեան կրէ, բայց իրաւք զթշնամութիւն նիւթէ. զի տայ նմա մեղանչել, գործակից առնելով անօրէնութեան իւրոյ։

Լ. Բարեկամութիւնն ծնանի 'ի սիրոյ. իսկ սիրոյն ոչ է հարկ՝ զի սիրեցցեալ առարկայն իցէ մերձաւոր, քանզի կարէ սիրել և զկարի հեռաւորն և զբացակայն։ Աստի որք պատճառաւ հեռաւորութեան անդրոյ դադարին 'ի սիրելոյ զընկերն իւրեանց, և ոչ ինչ առնել նմա զբարիս, աչ են կատարեալ 'ի սէրն։

ԼԱ. Այրանան ցաւք արտի, մինչ 'ի վչտանալ ուրուք՝ ուրախանան այլք. թեթեւանան ցաւք, մինչ ընդ վչտացելոյ ուրուք՝ կարեկից լինին այլք։ Այսպէս որ ունի զկիրս ցաւոց 'ի սրտի, թագուցէ զայն 'ի թշնամւոյ՝ զի մի ուրախացին, և ինքն աւելի տրտմեսցի. և յայտնեսցէ բարեկամին, զի 'ի վչտակցիլ նորա՝ թեթեւասցի ինքն 'ի ցաւոց և մի խիթարեսցի։

ԼԲ. Ճշմարիտ բարեկամ այնոքիկ են, որք փոփոխակի բառնան զծանրութիւն և զցաւս իրարաց. բայց գտանին և ոմանք, որք բանիւ շրթանց կոչեն զընկերս իւրեանց բարեկամ և սիրելիս, այլ 'ի սրտէ համարին զնոսա որպէս բեռնաբարձ գրաստս. զի միշտ բառնան զբեռինս իւրեանց 'ի յուս նոցա, իսկ ինքեանք ոչ երբէք մերձենան 'ի բեռինս նոցա. և սոքա են կեղծաւորք և սուտ բարեկամք։

ԼԳ. Ձէ արժանի սիրոյ որ ոչ սիրէ զինն՝ որպէս պարտն է սիրել, վասն զի կամ՝ ոչ ճանաչէ զյարգ նո-

բա, կամ արհամարհէ զնա։ Լաւն ճշմարիտ սիրոյդ ենն բանք լեզուի, այլ արդիւնք գործոց։ Ոչ է անգ ոէր։ ուր թագաւորէ իմ՝ և քո։

ԼԴ. Ոչն պարտ է ճանաչել բարեկամ և ամենգ ունել 'ի սիրելութեան, որ ազդ առնէ զխնայանս քո առանց իրիք շահասիրութեան. զի թէ և խիստ իցեն բանքն և ընդդէմ ախորժակին քում, հաճեաց ընդունիլ, զի հային յօգուտ անձին քո։ Զիմար է նա՝ որ ատէ զբարեկամ իւր, զի յանդիմանի 'ի նմանէ։

ԼԵ. Մի զայն միայն համարեսցիս թշնամի՝ որ հաստուցանէ անձին քում չարիս, այլ և զայն՝ որ բաբեկամ լինել կարծի, բայց ոչ ազդ առնէ զխնայանս քո, և վասն շահասիրութեան իւրոյ ներբողէ զքեզ կեղծաւորապէս գովեստիս, յորմէ խաբեալ անկանիս 'ի վտանգ, և լինիս վատանուն։

ԼԶ. Ճշմարիտ բարեկամութիւնն պարտաւորէ զամենեսեան զբարիս կամիլ, և առնել ընկերին. իսկ խրատել և յանդիմանել զեղբայրն՝ որ ի՞նչ սխալեալ 'ի բանս՝ կամ 'ի գործս, է կամիլ և առնել ընկերի իւրում զբարիս, ապա որ կարող գոլով զանց առնէ և անփոյթ լինի 'ի դարձուցանելոյ զեղբայր իւր 'ի մեղաց խրատուք կամ յանդիմանութեամբ, մեղանչէ ընդդէմ սիրոյ պատուիրանին։

Ոչ ինչ զօրէնս ճշմարիտ բարեկամութեան, որ տեսանէ զորդի բարեկամի իւրոյ անխրատ՝ և ոչ խրատէ կամ յանդիմանէ։

ԼԷ. Ինական և աստուածային օրինաք պարտաւորիմք նպաստիւք ընչից օգնել ընկերին, մինչ է 'ի կարօտութեան ըստ մարմնոյ. ապա առաւել եւս հարկ 'ի վերայ կայ նպաստիւք խրատուց և յանդիմանութեան օգնել կարօտելոյն ըստ հոգւոյ։ Արժանի է վարձուց որ առաջնորդէ ուղիք ընդ ճանապարհ ուղիղ. բայց ոչ է պարտ յերկուանալ՝ թէ

ՀԱՍԱՑԷ անվարձ, որ արդելու զոք գնալ ընդ ճանապարհ մնլար։

ԼԸ. Հղբայրական յանդիմանութիւն առ հաւասար և համապատիւ բարեկամն 'ի գործ դնի. զի իշխանաւոր ոք, կամ դատաւոր մինչ յանդիմանէ զյանցաւորն, այն է սաստ կշռամբանաց հեղինակութեամբ իւիք, իսկ եթէ փոքրն յանդիմանէ ըզմեծն, այն է յանդգնութիւն։ Այլ խոհեմութեամբ և զգուշութեամբ իւիք որդին զհայր իւր, կրտսերն զերէց եղբայր իւր, կինն զայր իւր, և հպատակն զիշխանն իւր կարէ խրատել, և զգործ յանդիմանութեան 'ի վար արկանել. բայց այն ոչ ասի յանդիմանութիւն՝ այլ ազդարարութիւն, իբրեւ զի յուշառնէ նմա զանպատշաճութիւն բանից, կամ գործոց, յորոց կամի խորշեցուցանել զնա։

ԼԹ. Յանդիմանութիւնն՝ յառաջ եկեալ 'ի սիրոյ բարեկամութեան, պահանջէ ունել զայսոսիկ պայմանս. Նախ՝ զի յանցանքն իցէ ստոյգ, զի յանդիմանութիւնն վասն տարապարտ յանցաւորութեան կարեվեր խոցէ զսիրտ։ Երկրորդ՝ զի իցէ համաչափ յանցանացն, կամ նուազ քան զարժանն. զի որ տարապայման ձգի 'ի յանդիմանելն, փոխանակ զվէրս բուժելոյ՝ առաւել եւս զայրացուցանէ։ Երրորդ՝ զի իցէ 'ի դէպ ժամու և առանձին. զի յանդիմանութիւն որ լինի առաջի բազմութեան, ոչ է խրատ զգաստութեան՝ այլ թշնամանք։ Չորրորդ՝ զի իցէ ցաւակցաբար՝ մեղմ և ազդու բանիւք. զի որ հոգւով վրէժխնդրութեան և խիստ բանիւք վարի, տեղի տայ յանդգնութեան։ Հինգերորդ՝ զի իցէ յոյսուղղութեան. զի առաւել վտանգաւոր է յանդիմանել զանուղղայն։

Խ. Որ զպակասութիւն բարեկամի իւրոյ՝ ոչ ազդառնէ, և ոչ խրատական բանիւք յանդիմանէ, զի

մի բարեկամն վշտասցի կամ խոժոռեսցի, ոչ է նա ճշմարիտ բարեկամ՝ այլ մանաւանդ թշնամի. զի գործ թշնամութեան է՝ կարող գոլով ոչ ուղղել զաւակսն բարեկամին, յորմէ զհետ գան նմա և այլ մեծամեծ վնասք, զորս եթէ կամեսցի յայնժամ՝ ոչ կարէ խափանել։ Այլ եթէ խրատեսցէ և նա ոչ անսայցէ, առցէ ընդ իւր և զոմանս 'ի բարեկամաց և խրատեսցէ նոքօք, զի գոնէ շահեսցի զերեսայրն։ Իսկ թէ և նոցա ոչ անսայցէ, ասասցէ առաջնորդին եկեղեցւոյ, որով ապատեսցի 'ի պարտաւորութենէ. որ եթէ նմա եւս ոչ լուիցէ, եղիցի իբրեւ զհեթանոս և զմաքսաւոր։ Մատթ. ԺԸ. 17։

«Լաւ են հարուածք բարեկամի, քան զկամակոր համբոյրս թշնամւոյ։» Առակ. ԻԷ. 6։

«Լաւ է յայտնութիւն յանդիմանութեան՝ քան զբարեկամութիւն 'ի ծածուկ։» Առակ. ԻԷ. 5։

«Բարեկամ հաւատարիմ՝ աշտարակ ամուր, և որ եգիտ զնա՝ եգիտ գանձ։» Սիրաք. Զ. 14։

«Զհաւատարմութիւն ստացիր ընդ բարեկամի յազքատութեանն նորա, զի և 'ի բարիս նորա ուրախասցիս։» Սիրաք. ԺԲ. 28։

ԳԼՈՒԽ Ի.

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա. Ամուսնութեանց ումանք են առանձնական, որք միայն զգործողս իւրեանց միմիթարեն, որպիսի է աղօթք և ծնրադրութիւն, բարեպաշտ խոկումն զԱստուծոյ և զաստուածայնոց, զղջումն 'ի մեղաց, ծոմապահութիւն և պահեցողութիւն, և այլ ապաշխարանաց գործք. և սոքա վերաբերին առ կրօնն։

Իսկ ոմանք են ընկերական, որք միանգամայն զգործողն և զընդունողն միխիթարեն, որպիսի է ողորմիլ կարօտելոց, աղատել զգերիս, ծառայել հիւանդաց, միխիթարել զտրտմեալս, բարիս առնել հասարակաց և ոչքա վերաբերին առ բարոյականն։

Եւ արդարեւ սոքա երկոքին եւս են գովելի, բարի, աստուածահաճոյ, և վարձուց արժանաւոր։ այլ ընկերական առաքինութիւնք եթէ գործին ապանց անափառութեան, գովելի եւս են, և մեծագոյն վարձուց արժանի։ զի ոչ միայն լինին յօգուտ և 'ի շահ գործողին՝ այլ և ընկերին, մանաւանդ զի օրինակք գործոց իւրեանց շարժեն զբաղումս բարեբարելոյս։ Ի՝ստ այսմ է և հիւրասիրութիւնն, որ ոչ միայն զհիւրընկալն ուրախացուցանէ՝ այլ և զհիւրընկալն։ որ և զայլ բազում մասունս առաքինութեան պարունակէ յինքեան, այսինքն զմարդասիրութիւն, եղբայրսիրութիւն, քաղաքավարութիւն, օտարասիրութիւն, ողորմութիւն, խոնարհութիւն, քաղցրութիւն բարուց, և այլն։

Բ. Ոչ քաջ գիտէ թէ զինչ է լինել հիւրասէր և օտարասէր, որ երբեմն լեալ իցէ նժդեհ և պանդուխտ, չքաւոր կամ հիւանդ յօտար երկրի։

Գ. Ոչ է նա հիւրասէր՝ որ կոչէ 'ի սեղան ըզհացկատակս, կամ զբարեկամս 'ի շնորհուկս նոցա և 'ի փառս անուան իւրոյ, այլ այն որ 'զաղքատս, զանչարկս և զնժդեհս ժողովէ 'ի տուն իւր, կերակրէ և միխիթարէ զնոսա առանց փոխադարձ ակնկալութեան։

Դ. Ոչ ամբ զուարթունք և բանք քաղցունք առաւելել յապէցուցանեն զհիւրս՝ քան սեղան բազմախորոտիկ և անուշահամ ըմպելիք։

Ե. Ոչ՝ նոյն և խելագար է հիւրընկալուն՝ որ այնուդիսումամբ ասպնջական լինի օտարաց, զի եկեալ մա-

տուսցեն ինքեան զպատիւ և զմեծարանս։

Զ. Որ առաջի հիւրոց մեծաբանէ զանձնէ, ոչ միայն զվարձս իւր կորուսանէ, այլ և որպէս զամբարտաւան նախատի։ Թանզի հիւրն կամ պարտի գովել զմեծաբան տանուտէրն՝ և լինել մարդահաճոյ, կամ լուռ կալ՝ և երեւիլ տմարդի։ Լաւ է 'ի տեղան քաղցրախօս աղքատի ուտել հաց աչտուռ, քան 'ի կոչունս մեծաբան փարթամի՝ կերակուր համադամ։

"Բրդեա զհաց քաղցելոց քո, և զաղքատս անյարկս տար 'ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկ՝ զգեցուցանիցիր։" Եսայ. ԾԸ. 7։

"Ի պէտս սրբոց հաղորդեցարուք. զհիւրասիրութեան զգեա երթայք։" Հռովմ. ԺԲ. 13։

"Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ. զտարաբնակութիւն մի մոռանայք, զի այնու ոմանք յանգիտաս ընկալան զհրեշտակս։" Եբր. ԺԳ. 1։

"Ողորմ քան զամենայն սէր սերտ ունել ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց, օտարաբերք լինել ընդ միմեանս առանց տրտունջի։" Ա. Պետ. Դ. 8։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Երջանիկ է քաղաքն որոյ բնակիչք են ժրաջանք, և վայելեն 'ի վարձս աշխատութեան իւրեանց. ստացեալ ունին միայն զհարկաւոր պիտոյս կենաց, և փախչին յաւելորդաց և 'ի զուարճալեաց. կահք և կարասիք՝ հանդերձ և տուն՝ կերակուրք և ըմպելիք համեստս են և չափաւոր։ Ընդ է տեսանել խաղաղութիւն քաղաքացւոց և միաբանութիւն ընտանեաց, հպատակութիւն օրինաց և հնազանդութիւն

մեծաց, ատել զմարդահաճոյս և սիրել զբարեսիրուս և կեալ ազատ և ուրախ։

Բ. Որ ոչ բաւական համարեալ զկարեւորս անձին զոր ունի, զհետ լինի վայելչականաց՝ որք 'ի զարդ և 'ի զուարճութիւն վերաբերին, զկի և 'ի կարեւորաց անտի. և որ չէ գոհ ընդ վիճակ իւր՝ կորուսանէ և զայն, և ապա խնդրէ և ոչ կարէ գտանել։

Գ. Սակաւապէտն հանգիստ և անտրտունջ վարէ զկեանս իւր. զի սակաւ են իրք կարեւորք, որոց հարկաւ պէտս ունիցի, և զայնոսիկ եւս դիւրաւ կարէ գտանել։ Ոչ տանջի 'ի ստանալ զաւելորդս՝ որք անուշանեն զնաւիառութիւն, և ոչ տրտնջէ յորժամ չգտնիցի զնոսա, զի ոչ կարօտի նոցունց։

Բանզի որ բազմաց կարօտի, անհանգիստ ջանայ ստանալ զնոսին. և մինչ ոչ կարէ 'ի ձեռս բերել՝ տանջի և տրտնջէ։ Իսկ տրտունջն ոչ միայն է ամբոխիչ մտաց և խարտոց կենաց, այլ և ձանձրացուցիչ ընկերաց. զի ամենեքին զզուին և տաղտկանան և 'ի բաց հեռանան 'ի տրտնջող բերանոյ, վասն որոյ և ոչ ոք կամի կենցաղավարիլ կամ բարերարել այնպիսւոյն։ Զ'ի այս իսկ է բարք տրտնջողին, անգոհ լինել զբարերարէն՝ թէ և բազմաք իցէ երախտաւորեալ 'ի նմանէ. և մեծամեծս տրտնջալ՝ եթէ փոքր մի ժամանակ անտես եղեալ իցէ 'ի բարերարութենէ նորա։

Դ. Ոչամեստն սակաւուք չստանայ՝ որք կարեւորք են 'ի դարման կենաց, վասն որոյ միշտ մտաց գիւր կայ և ուրախ։ Իսկ փառամոլն հանապազ ջանայ 'ի ստանալ զարծաթ 'ի պէտս վայելչականաց, վասն որոյ անհանգիստ տառապի 'ի հոգս և 'ի զբաղանս։ Ա՛յ՝ բազում անգամ անաբժան միջոցաք հնարի շահիլ, զի մի նուազութիւն ինչ բերցէ պատւոյն իւրոյ, սմին իրի չարաչար տանջի 'ի խղճէ մտաց։ Այպա բարի է լինել չափաւոր և համեստ, և կեալ

զուարթամիտ, քան լինել մեծատուն՝ բայց փառամոլ, և տանջիլ մտօք և մարմնով։

Ե. Զ. Ինչ առաւել ցանկալի մարդկութեանս քան զայն՝ որ առաւել օգտակար է 'ի պահպանել զկեանս մեր երջանկաբար. ապա զի՞նչ զի չլցէ յաւէտ ցանկալի բաւականութիւնն կարեւորօք, որ պահէ զկեանս մարդոյ զուարթ, առողջ և երկար։

Զ. Քաղաքական կենցաղավարութիւնն միջակայնոց է առաւել տպահով և հանգիստ քան զայլ վիճակս կենաց. զի եթէ լինիցի ոք կարի իմն նուաստ, այլք իշխեն նմա, վասն որոյ կայ միշտ 'ի տառապանս նեղութեան և վշտաց։ Այլ եթէ լինիցի կարի իմն յարգոյ, ինքն իշխէ այլոց, վասն որոյ կրէ հանապազ զթշնամութիւն 'ի յաչագոտաց։ Իսկ որ զմի ջակայինն վարէ զկենցաղ, ոչ գլխովին ընկճեալ է ընդ իշխանութեամբ ուրուք իբրեւ զնուաստ ոք, և ոչ կրէ զթշնամութիւն 'ի յաչագոտաց իբրեւ զիշխանաւոր ոք. վասն որոյ միշտ կայ խաղաղ և մտադիւր, չափաւոր պիտոյիւք շատացեալ։

Է. Տրտմութիւն է սրտի ըղձանալ բազմաց, և հասանիլ սակաւուց. և բերկրութիւն է հոգւոյ ըղձանալ սակաւուց, և հասանել բազմաց։ Այսպէս մի՛ ցանկասցի ոք բազում ստացուածոց, զի մի՛ տրտմեսցի յորժամ չկարիցէ ունել. այլ սակաւուց և կարեւորաց միտ դիցէ, զորս դիւրին է 'ի ձեռս բերել։ Այլ եթէ բազմաց եւս հասանիլ նմա դէպ լիցի, յայնժամ ուրախամիտ բերկրեսցի անձն նորա, իբրեւ զայն որ 'ի սեղեալն զերկիր գտանէ զգանձ։

«Լաւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտունս լի զենիւք և բարեօք թշնամութեամբ։» Առակ. ԺԷ. 1.

«Շահավաճառ մեծ ատուածպաշտութիւն է բաւականութեամբ հանդերձ։» Բ. Տիմ. Զ. 6.

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա. Երկիրն է՞ մայր գթած, և ոչ դադարի երբէք 'ի բաշխելոյ զպարգեւս բարիս որդւոց իւրոց, և առնել զնոսա փարթամ. և որքան առաւելուն 'ի ջանս գործել զնա, այնքան առաւել արդիւնս շահեկանս մատուցանէ նոցա. ապա պարտաւոր գտանին բնակիչք՝ եթէ թողուն զերկիրն անգործ և զանձիւնդ կարօտ։

Բ. Պարտ է ջանալ և աշխատիլ յայնպիսի արհեստս, որով սնանի և պահպանի կեանք մարդոյ. և ահա այսպիսի է արհեստն մշակութեան։ Թող զի աշխատութիւնն առողջ պահէ զմարմինն և զօրացուցանէ, իսկ ծուլութիւնն հիւանդագին առնէ և տկար։

Գ. Բարեբաստիկ փարթամութիւն՝ մշակութիւնն է համարելի, որ անենախանձ ընձեռէ զՀշմարիտ հարկաւորս կենաց մարդկան. իսկ թէ կարելի է մարդոյ գործելով զերեսս երկրի ստանալ զհարկաւոր պէտսն, ուրեմն տարապարտ տաժանի 'ի խնդիր ոսկւոյ և արծաթոյ՝ ական հատեալ 'ի խորս երկրի։

Դ. Բազումք 'ի մարդկանէ զերջանիկ հարստութիւնն՝ որ զետեղեալ է 'ի մշակութեան երկրի, մահու չափ պատերազմաւ և արեան հեղմամբ զոր ամենայն տառապին գտանել, և ոչ գիտելով թէ ուր իցէ, 'ի զուր թարթափին ընդ ամենայն երկիր։ Զէ յանդունդս խորոց թաքուցեալ, այլ կայ 'ի պատրաստի 'ի ներքոյ ոտից իւրեանց. եթէ գործեն զնա, ոչ միայն զդարման կենաց գտանեն՝ այլ և զխաղաղութիւն, զառողջութիւն և զերկարութիւն կենաց՝ աւելի քան զոր կարծեն այլով եղանակաւ ունել։

Ե. Անափառութիւնն է աղբիւր թշուառութեան, զի բաղումք վասն չափազանց վայելչութեան 'ի կաչրեւորացն եւս զրկին, և սառապին 'ի կարօտութեան. ապա որք հարկաւոր պիտոյիւքն շատանալ կամին, գտանեն զինդութիւն և զխաղաղութիւն։

Զ. Լաւել քան զամենայն արհեստս որք ծառայեն 'ի դիւրութիւն՝ 'ի զարդ և 'ի վայելչութիւն մարդկան, պարտ է ծաղկեցուցանել զարհեստս որք հարկաւորք են կենաց, որպիսի է երկրագործութիւն, հովուութիւն, դարբնութիւն, ոստայնանկութիւն և հիւսնութիւն։ Դողովուրդք որք շատանան հարկաւորօք, և աչ զհետս կրթին վայելչականաց, կեան անմեղ և հանդիստ կենաց, ոչ առնչեն զայլս անիրաւ յափշտակութեամբ և բռնութեամբ, և ոչ ուրկանեն զանձինս 'ի չարաչար աշխատանս առ 'ի ստանալ զաւելորդս, որք ոչ են կարեւորք կենաց՝ այլ ունտի վայելչութիւն։ Անութիւնն սակաւուք ստոյգ է շատանալ, իսկ ցանկութիւն՝ ոչ երբէք գիտէ ասել բաւ։

Է. Միրոյ և յարգանաց են արժանաւոր ճարտար արհեստագէտք, զի կազմեն զարհեստակերտուածս հանճարաւոր, որք թէպէտ են գործ ուշիմ մտաց, այլ ոչ հարկաւոր 'ի պէտս կենաց։ Իսկ զնդրդ չիցէ գովելի մշակն, որոյ գործ է հարկաւոր և կենցաղոգուտ, և ոչ ըստ գործոց ճարտարաց 'ի վայելչութիւն մարդկան հնարեալ. զի քրտնաջան վաստակոցն արդեամբ կերակրէ զքաջահանճար արհեստաւորն, և զամենայն վիճակ մարդկային ազգի։

Չէ պարտ անգոսնել զմշակութիւնն. զի ոչ՝ որ առողջ միտս ունի, արհամարհէ զգործ ինչ պիտանի՝ արարեալ ձեռամբ անհանճար գիւղականի. այլ հաճեալ հաւանի ընդ այն, և մեծ շնորհ և երախտիս անձին վարկանի։

Ը. Հերեկտոն թագաւոր Լիթենացւոց՝ որ է գլուխ զկիրառութիւն արծաթի դրամոց, եդ օրէնս հպատակաց գործել զերկիր, և պտղովք նորա սնանել. գաղմանել զխաշինս, և զկաթն նոցա առնուլ 'ի կերակուր և զսայն 'ի ծածկոյթ, զի աէր. երկիր տայ անպակաս զպտուղ իւր 'ի սնունդ մարդկան, մինչ աշխատին 'ի նոսա մարդիկ։ Այլ յորժամ եռեռս եթէ 'ի պատճառս դրամոց թողին զերկրագործութիւնն, և ապականեցին զբարս իւրեանց, և յանիսկ արծաթասիրութեան յաճախեցան չարիք 'ի վերայ երկրի, զղջացաւ յոյժ, և առ դառնութեան օրսին թողեալ զնշխանութիւն իւր, առանձնացաւ յանմարդի խորշ լերանց, և եկաց անդ աղքատ և թափծագին մինչեւ ցվախճան կենաց իւրոց։

---

*Որ՝ոչն կամիցի գործել և կերիցէ մի։ Բ. Թես. Գ. 10.

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԾԱՌԱՑՈՒԹԻՒՆ

Ա. ԾԱՌԱՑ կամ ապաստաւոր որ միայն զդիւրութիւն անձին ընտրէ, ոչ բարւոք ծառայէ տեառն իւրոյ. զի ծառայ բարի յանձն առնու կրել զնեղութիւն յօգուտ տեառն իւրոյ. իսկ ծառայ վատ խոյս տայ 'ի դժուարութենէ, և ոչ օգնէ նմա 'ի ժամանակի հարկաւորութեան։

Բ. Զինչ օգուտ է շրթամբք խօսիլ երեւիլ տիրասնան, և գործով գտանիլ դաւաճան. զի ոչ լեզուն է որ տիպասէր առնէ, այլ գործն որ յառաջ գայ յանիսարդախ սրտէ։ Ծառայ օգտակնեդիր ոչ կարէ

լինել հաւատարիմ տեառն իւրոյ, և ոչ բարեջան 'ի վաստակս։

Գ. Ծառայ որ նենգէ տեառն իւրում, և յարի 'ի կողմն թշնամւոյն, արժան է զի պատժեսցի յայնմանէ՝ որում եղեւ. թեւակից. զի որ իւրում բարերարը տեառն գտաւ դաւաճան, ոչ այլ ումեք յուսալի է լինել նմա հաւատարիմ։

Դ. Կամք ծառային պարտի լինել այն՝ զոր ունի տէրն իւր. սիրել զոր սիրէ. և ատել զոր ատէ. զի որ ջանայ խոնարհեցուցանել զտէրն 'ի կամս իւր, և գործել ըստ հաճոյս անձին իւրոյ, ոչէ ծառայ՝ այլ տէր։ Եւ ոչ իսկ արժան է ծառային քննել զպաշտաղայս գործոյն, ընտրել կամելով զդէպն և զանդէպն, այլ միայն կամակար հնազանդութեամբ 'ի կատարումն պատուիրանին վուրթալ։

Ե. Հաւատարմութիւն սպասաւորին երեւի յիրս դժուարինս. զի նա է հաւատարիմ, որ եռանդագին սիրով և զուարթութեամբ տանի վշտաց. իսկ որ խոժոռի և տրտնջէ անարժան է սպասաւորութեան և վարձուց։ Որոյն մի ծառայութիւն մեծաւ սիրով առաւել հաճելի է քան մեծ ինչ աշխատութիւն արարեալ նուազ սիրով։

Զ. Հնազանդութիւն ծառային յառաջ գայ 'ի բաթերարութենէ տեառն. և ուր առաւել է բարերարութիւն, անդ առաւել է հնազանդութիւն։

Է. Ընդդէմ արդարութեան է զաշխատաւոր ըստ պատաւորս թողուլ անիւնամ 'ի ծերութեան նորա կամ 'ի տկարութեան. զի որ մինչ կարողն էր՝ ծառայէր հաւատարմութեամբ, արժան է զի խնամալ կեսցի 'ի տկարութեան իւրում, ապա թէ ոչ՝ ոչ երբէք գտանիցի հաւատարիմ սպասաւոր։

Ը. Եթէ տեարքք լինէին բարի, ոչ գտանէր ծառայ չար. զի ծառայք ոչ այլ իմիք ցանկան և հե-

տեւին, բայց եթէ նմանող լինել տեառն իւրեանց, և 'ի պատիւ նոցա հասանել։

Թ. Այն է կատարեալ ծառայութիւն առ Աստուած, որ յառաջ գայ միայն 'ի սիրոյն Աստուծոյ. և ճշմարիտ սիրոյն յանձն առնու կորուսանել զինչս, զպատիւ, զսիրելիս և զանձն իսկ, զի մի կորուսցէ զսէրն Աստուծոյ։ Անկատար ծառայութիւնն է՝ որ յառաջ գայ յերկիւղէ պատժոց. զի որ առ երկիւղի ծառայէ և հնազանդի, առաւել զինքն սիրէ քան զԱստուած։

"Զծառայ ճշմարիտ որ վաստակիցէ քեզ՝ մի զայրացուցցես. և ըստ վարձկան որ առեալ իցէ զանձն իւր 'ի վերայ քո՝ մի զղջիր։" Սիրաք Է։ 22։

"Զծառայ ժիր սիրեա դու, և յազատութենէ կալցես զնա մի առնիր։" Սիրաք։ Է։ 23։

"Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի. մի առանձին ծառայութեամբ իբրեւ մարդահաճոյք։" Կոլոս։ Գ։ 22։

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Ա. Գիրքս դուստր խոնարհութեան 'ի դէպ է անուանել զնազելի հնազանդութիւնն, զորոյ ըստ բազմապատիկ ձիրս շնորհաց՝ վայելողք միայն ճանաչեն. զի բարոյապէս ազատ կացուցանէ զկամս մարդոյ, որ ազատ գոլով բնականաբար հնազանդութեամբ բանին, անհնազանդութեամբն նման՝ եղեալ է ծառայ կրից բարոյապէս. և այս ազատութիւն է անաշխատ թագաւորութիւն, առանց պատերազմի յաղթութիւն։ Այդ է տեսանել ամենայն թշնամեաց պարտութիւն։ անդ վերընձիւղին երիտասարդ ծա-

զնիկք խաղաղութեան. անդ բարեպատմին կենցաղոգուստ ազատութիւն սիրոյ և խնդութեան։

Այսպէս որդիք մարդկան, որք միանգամ ցանկայք կոյք կորգակից ձեզ ունել զվայելչագեղ օրիորդն խոնարհութեան զհնազանդութիւնն՝ որպէս և կամի Այսուհետ, փութացարուք ընդ առաջ ելանել նմա և ողջունել. առեալ ածել զնա 'ի սենեակ սրտի ձերոյ, և իբրեւ դշխոյ պանծալի բազմեցուցանել 'ի գահոյս կամաց և յօժարութեան ձերոյ, որպէս զի և դուք թագ ականակուռ կապեալ 'ի գլուխ՝ պսակ կեսջիք փառաց։

Գ. Հնազանդութիւնն ենթադրէ զներգործութիւն ինչ դրական, կամ 'ի ներքս յինքեան և կամ արտաքս։ Ի ներքս, որպէս հնազանդիլ կամաց առբարոյ առաջադրութիւն մտաց, և կամ կամիլ զկրինչ ըստ կամաց հրամայողին։ Ի առ արտաքս, որպէս հայիլ աչօք, խօսիլ լեզուաւ, գործել ձեռօք, և այլն։ Այս պաշտօն հնազանդութեան՝ է գործութիւն ինչ դրական, գործադրիչ այնմ ամենայնի՝ որ է վայելուչ օգտակար և բարի, առաջադրեալ 'ի մտաց կամ 'ի հրամայողէն։

Գ. Հնազանդն ոչ ունի զյատուկ կամս, զի կամքն նորա է կամքն հրամայողին. և այսու ոչ եթէ բառնի անձնիշխանութիւն մարդոյ, այլ առաւել հաստատի։ Զի մեծ իշխանութիւն է մարդոյ այնպէս կառավարել զկամս իւր, մինչեւ ամենայն ակնարկութեան մտաց հնազանդեցուցանել, զորս միտքն յաստուկ ճանաչմամբ իւրով օգտակար համարի, և առաջադրէ նմա առնել։ Այս թէ ոչ՝ մարդն լինէր անկարող 'ի շարժել զկամս իւր, որով բառնայր իսպառ ազատութիւն անձնիշխանութեան. զի կամքն գոլով բաղձանք իմն կոյր՝ ոչ կարէր ընտրել զբարի և զչար՝ եթէ ոչ հնազանդէր մտաց։

Աստուծոյ միոյ միայն տեսակ զօգուտն անձին իւրոյ՝ յորդորել զկամն հնազանդիլ կամաց այլոց, ապա դէն միացեալ է ընդ նմա, և այնու հետեւ այն ոչ է կամք այլոյ՝ այլ կամք իւր, և իբրեւ իւրոյ ինքեան հնազանդի ազատաբար։ Այսպէս ուրեմն որ ազատ կարողութեամբ ենթարկէ զկամս իւր կամաց այլոց, զոր տեսականեալ ունի ինքեան իբրեւ յատուկ կամք, ոչ եթէ կորուսանէ զանձնիշխանութիւն իւր, այլ առաւել հաստատէ։

Դ. Հնազանդիլ կամացն Աստուծոյ՝ բնական է ամենայն ստեղծուածոց, ըստ որում Աստուած է հեղինակ բնութեան, ուստի և յաւիտենական անհեղլի օրինացն Աստուծոյ հնազանդին ամենայն ստարածք. իսկ հնազանդիլ օրինացն Աստուծոյ՝ է հնազանդիլ աստուածային կամաց, զի 'ի նմանէ է օրինադրեալ։

Այդ՝ օրէնքն աստուածային առ հաստատուն և անեղծանելի մնալոյ տպաւորեցան 'ի միտս մարդկան, որք կոչին բնական օրէնք. կամ աստուածային յայտնութեամբ 'ի գիր արձանացան, որք և ասին գրաւոր կան և հնարական օրէնք, զորս մարդիկ օրինադէտք՝ կամ որոց յանձն է պաշտպանութիւն օրինաց, գուն գործեն հանապազոր հրատարակել ամենեցուն. և որք լսենն՝ պարտաւորին հնազանդիլ, և 'ի կատարումն նոցին փութալ։

Այն և օրէնք եկեղեցական և քաղաքական, որք թէպէտ չեն յատկապէս հրամայեալ յԱստուծոյ, սակայն դիմեն 'ի լրումն կամացն Աստուծոյ. զի եկեղեցականն հայի 'ի բարեկարգութիւն ճշմարիտ կրոնի, և քաղաքականն 'ի բարւոք կառավարութիւն հասարակաց։ Այսպէս որ ոչ հնազանդի օրինացս այսոցիկ, արժանի է պատժոց՝ իբրեւ հակառակող աստուածային կամաց։

Ե. Հնազանդութիւնն պարտաւորէ զհնազան-

գեղջան մինչեւ ցմահ. զի եթէ որ 'ի միում նուազագի անհնազանդ գտանիցի, զառաջին վարձն եւս կորուսանէ. զի ոչ շահ ստացի որ 'ի հնազանդութենէ օրինաց, եթէ 'ի վախճանի օրինազանց ելցէ յաշխարհէ։

Զ. Մարդիկ յինչ ինչ գործողութիւնս զոր պարտէին առնել, պատճառանօք իմն կարեն զանձինս անբասիր կացուցանել՝ եթէ զանց ապատցեն զնոքօքս, այլ ոչ է մարմնի անբասիր մնալ նոցա. եթէ անհնազանդ գտանիցին այնց՝ որոց աստուածային կամքն մարդկային օրինօք պարտաւորին հնազանդիլ։ Բասք պարտին ամենեքեան պատուապարիլ ընդ դրօշակաւ հնազանդութեան. և որ ոչ ստամբակեալ վատանգ չէ, արժանի է պատուհասի. զի գրեալ է. Որդի անհնազանդ 'ի կորուստ եկցի։

Է. Ոչ որ բաւական է յընթացս կենաց անվրէպ ընթանալ ինքնին առանց առաջնորդի. քանզի որ ընդանծանօթ ճանապարհ գնայ, պէտս ունի ուսեալ ընթանալ նմա ուղեցոյց։ Իսկ մարդիկ մինչ գան յաշխարհս անծանօթ են կենցաղոյս ճանապարհի. ուրեմն կարօտին ուսանիլ յայլոց զճանապարհ ուղիղ, ընդ որ ունին անցանել 'ի կեանս իւրեանց, զի մի խոտորիցին յուղիղ պողոտայէ մարդկօրէն կենցաղավարութեան 'ի յառս և 'ի կիրս. և այս լինի հնազանդութեամբ տեղեկագունից։ Զի զոր ոչ գիտէ որ առորդիմէ, պարտի ուսանիլ յայլոց, զի հասանիլ կարիցէ։

Մարդ՝ եթէ ոչ վարժեսցի 'ի համառունից 'ի խօսս, 'ի գործս, 'ի վարս և յուսմունս, անպիտ քան զանբանս գտանի։ Ինքանք 'ի կատաւորութիւն իւրեանց ունին դաստիարակ զքնութիւնն. իսկ մարդիկ կարօտին ընուլ զայն 'ի միմեանց, ապէսք 'ի գիտունոց ուսանելով, և տկարք 'ի կարողաց խնամելով. և այսորիկ բարեմասնութիւնք ոչ կարեն յառաջանալ

պլով իւիք, բայց եթէ հնազանդութեամբ ուսուցչաց և խնամակալաց։

Արդարին տղայն 'ի մնալն անխնամ՝ կամ մեռանի, կամ այլանդակ իմն դառնայ. զի թէ ոչ ոմնդեն 'ի խանձարուրս զփափուկ անդամս նորա, քայլէ իբրև զգոտոն։ Այսոր որոյ Աստուած խնամածու բնութեան մարդկան՝ զառաջին ծնողս մեր 'ի կատարեալ հասակ կի ստեղծ, և 'ի միտս նոցա տպաւորեաց զամենայն հարկաւոր գիտելիս, 'ի կառավարել զնորաբոյս մանկութիւն մարդկայինս բնութեան. և սերունդք նոցա վարժութեամբ ուսեալ առ 'ի նոցանէ՝ առ յետնոցդս աւանդեցին. և խոհականագոյնքն 'ի նոսա ընդ զարս դարս բազում փորձիւ զբազում կենցաղոգուտ խնամս 'ի վերայ յաւելին մինչեւ ցարդ՝ 'ի դիւրութիւն կենաց մարդկան. բայց այս ամենայն եղեւ և քնի հնազանդական հոգւով։

Զի եթէ ոչ անասային յետինք 'ի գործ դնել զոր լուան և տեսին յառաջնոց, ոչ գտանիւր այժմ օգտակար ինչ յաջորդս թեամբ հասեալ առ ժառանգս նախնեաց։ Լուստի հարկաւոր էր արդեաց, կամ ունել զամենայն շնորհս զոր ունէր նախկին մարդն, կամ զուրկ մնալ յամենայն բարեմասնութենէն, և կամ կրել իւրաքանչիւրոց զբազում տարժանմունս 'ի գիւտ նոր 'ի նորոյ կենցաղոգուտ պիտոյից։ Այսպէս պարտ է համբակաց հնազանդիլ հմտագունից առ 'ի ուսանիլ զամենայն հարկաւորսն, թէ արհեստական, և թէ իմաստասիրական, մանաւանդ ըզբարոյականս, որպէս զի կարասցեն գնալ անմոլար յընթացս կենաց, և բարւոք զելս գտանել 'ի հովանէս տառապանաց։

Ը. Աշակերտք պարտին հնազանդիլ ուսուցչաց իւրեանց յո՛ և իցէ արհեստս, թէ՛ յազատականս և թէ 'ի ծառայականս. և յանձն առնուլ զաշխատանս

կամակար սիրով, և ջանալ ըստ չափու՝ մինչեւ 'ի կատարեալ տեղեկութիւն։ Այլ արդէն բազու�մք անհնազանդութեամբ յետս կայեալ մնան թերի յօդուտաբեր ուսմանց, որով զրկին 'ի բարեբաստութենէն զոր մարթ էր նոցա ստանալ՝ եթէ հնազանդեալ 'ի գործ դնէին զպատուէրս ուսուցչաց։

Այլ և ուսուցիչք պարտին ուսուցանել աննախանձ և փոյթեռանդն, զի մի համբակքն 'ի սնուցուտակ տարժանմանց վհատեալ լքանիցին, ապա թէ ոչ՝ հակառակ լինին Աստուծոյ, որ կամի զի մարդիկ օգնեսցեն միմեանց 'ի բարի կրթութիւնս ուսմանց։

Թ. Հնազանդիլ Աստուծոյ, ծնողաց, ուսուցչաց, իմաստնոց և ծերոց, և եւս բարերարաց՝ որպիսի են թագաւորք, իշխանք կամ առաջնորդք, ոչ միայն գրական և շնորհական օրէնք, այլ և բնական օրէնքն զնոյն օրինադրէ։ Որովհետեւ մարդիկ ծնանին տգէտ և անհրահանգ, կարօտին ապա ուսանիլ 'ի գիտնոց և հրահանգիլ 'ի խնամակալուաց. ուրեմն որ ոչ հնազանդի սոցա, չարաչար մեղանչէ, և պատժոյ է արժանի։

Ընտաքին կերպարանաւ և բանիւ բերանոյ ոչ ոք զանձն օտարացուցանէ 'ի հնազանդութենէն Աստուծոյ, բայց գործովք սակաւք գտանին. սակայն Աստուած ոչ 'ի բանս՝ այլ 'ի գործս հայի։ Զգա որ կամի գիտել թէ լցէ հնազանդ Աստուծոյ, քննեսցէ զգործս իւր, որ թէ լցէ աստուածային օրինաց համաձայն, է հնազանդ. իսկ եթէ այլազգ ինչ լցէ, ծանիցէ զինքն անհնազանդ։

Ժ. Հնազանդութիւնն ոչ է անկարգաբար հպատակութիւն կամաց այլում, այլ ունի չափ կարգ և կանոն. չափն է կարողութիւն հնազանդելոյն, զի ոչ ոք պարտաւորի բառնալ զլուծ 'ի վեր քան զկար իւր։ Կարգն է արժանապատուութիւն այնոյ՝ որոց հնա-

զանդիլ պահանջէ, որպէս հայր արժանապատիւ է քան զմայրն, երէց եղբայր քան զկրտսերն, թագաւոր քան զնշխանս, հոգեւոր առաջնորդք քան զաշխարհական տեարս, և չէ արժան զնուազն նախամեծար ընտրելք քան զառաւելն։ Իսկ ինքնանն է աստուածային կամքն. զի սա է յաւիտենական կանոն ուղղութեան տպաւորեալ 'ի միտս մարդկան, յորմէ ոչ ոք պարտի դատաւորել։ Իսկ եթէ ոք ընդդէմ կամացն Աստուծոյ քննաքարէ ինքն 'ի հնազանդութիւն յինչ և ի ցէ իրս և ոչ ստահմանս, եղծանէ զկանոն հնազանդութեան, վասն որոյ ոչ ոք պարտաւորի հնազանդիլ նմա։

ԺԱ. Անաչխատ հնազանդին մարդիկ յորոց երինչին, զի մի ինաս ինչ կրեսցեն. բայց եթէ ինասն ի ցէ հոգեւոր, չէ արժան առ երկիւղի հնազանդիլ, զի լաւ է կորուսանել զինչս, զպատիւ և զմարմնոյ կեանս՝ քան կորուսանել զհոգի։

ԺԲ. Յամենք անվարձ ելանեն 'ի հնազանդութենէ, զի հնազանդին այնոցիկ, որոց համբաւ և մեծութիւն 'ի փառս աշխարհային բարձր է՝ և ոչ յաստուածային. և յանկանիլ սոցա 'ի սնոտի հողմածիգ բարձրութենէ, կորնչին և վարձք հնազանդելոցն նոցին։ Այս ոչ է հնազանդութիւն առաքինական՝ այլ ծառայական և մոլեկան, և այսու ախտիւ բազում են այժմ ախտացեալք։ Իսկ եթէ հնազանդէին առաքինեաց և իմաստնոց, մեծութեան նոցա և փառաց՝ որ բարձր է առաջի Աստուծոյ, լինէին և ինքեանք հաղորդակից։

ԺԳ. Այր հլու և հնազանդ՝ թէ և պակասեսցի մահուամբ, տակաւին համբաւ նորա և փառք՝ որ է պտուղ հնազանդութեան նորա, մնայ անծորելի. զի թէպէտ նա դնաց յաշխարհէս, բայց զբաղում բարի գործս եթող յաշխարհի կենդանի, զոր հնազանդութեամբ ուսաւ կատարել։ Զի փառք ան-

ձին գործն է, և ըստ գործոց զանազանին մարդիկ, որովհետեւ ըստ մարդկութեան ամենեքեան են նոցա։

ԺԴ. Հնազանդութիւնն բռնի՝ կրէ ընդ իւր զապստամբութիւն ինչ գաղանի. զի միշտ ժամ պարապոյ խնդրէ նուաճեալն ջընկէց լինիլ ի բռնութենէ. և երկոքին եւս տանջին ի միտս, բռնաւորն՝ զի մի թողուցու վտարանջել, և նուաճեալն՝ թէ ոչպէս ազատեսցի ի բռնութենէ։ Այս է չարաչար հնազանդութիւն, որ անարդ եւս է քան զգերութիւն։ զի որ գերի է, միանգամ վշտացաւ՝ յորժամ եղեւ գերի, և յետ այնորիկ ունի զինքն յօրէնս գերւոյ, վասն որոյ ոչ այնքան վշտանայ, նա՝ զի գուցէ գերիչն իբր ի ստացուած իւր ինայէ ի նա, և ոչ տառապեցուցանէ։

Իսկ որ ոչ է գերի օրինօք պատերազմի, ճանաչէ զինքն ազատ, թէ և իցէ հպատակ կամ հարկատուորոյ աղագաւ. մինչ բռնաբարի անդր քան զօրէնս հպատակաց կամ հարկատուաց ի չարաչար հնազանդութիւն, տատապի մեծապէս, և ապստամբիլ խորհի։ Այս չէ արժան զոք բռնի նուաճել ի հնազանդութիւն, այլ քաղցրութեամբ և բարերարութեամբ։

ԺԵ. Հաւասարապատիւ իշխանաց դժուարին է հնազանդիլ միմեանց, զի ամենայն աղնուական ծանր համարի իւրում նմանեւոյ հնազանդիլ. յոյսմանէ յառաջանայ անհնարին խառնութիւն և հակառակութիւն առ միմեանս, և վիշտ և ցնաս առ հասարակութիւնն։ Այս արժան է աղաչել զԱստուած՝ զի զգլխաւորս ազգի կամ քաղաքի ի սէր շարժեսցէ. զի սոքա միայն շաղկապաւ սիրոյն կարեն միաբանիլ, և միմեանց հնազանդիլ՝ յօգուտ անձանց և հասարակութեան։

ԺԶ. Ի բառնիլ հնազանդութեան՝ բառնին բա-

ընդարգութիւնք յամենայն կառավարութենէ. զոր
օրինակ եթէ զօրապետք ոչ հնազանդէին արքայի.
և զոր՝ զօրապետաց, ուր երեւէր յաղթութիւն
թշնամեաց։ Ոչ ի թէպէտ քաջութեամբ մղի պատե-
րազմ, բայց պահանջի եւս հնազանդութիւն ամե-
նայն ակնարկութեանց զօրապետին, որով անդին
լինի արիւնն զոր հեղուն։ Իսկ եթէ ինքնարշաւ մե-
ղեցին 'ի պատերազմ առանց հրամանի զօրապետին.
ոչ 'ի համարի գնոց է հեղումն արեան նոցա. այսպէս
ամենայն բարեկարգութիւնք յաշխարհի՝ հիմնեալ
կան 'ի կանոնն հնազանդութեան։

ԺԷ. Պարտաւոր են մանկունք՝ հպատակիլ սիրով
և զուարթութեամբ ամենայն ակնարկութեանց ծը-
նողաց և ուսուցչաց իւրեանց, և եւս եղբարց, կամ
խնամածուաց, մինչեւ չտալ տեղի սրտմտութեան
նոցա։ Այսուհետեւ զի չար և վտանգաւոր է հակառակիլ
կամաց ծնողաց, կամ վարպետաց, կամ եղբարց.
և կամ այցելուաց, որք զբարին նոցա կամին և ա-
ռաջադրեն. որովհետեւ հասակն մանկական չէ բա-
ւական անձամբ անձին զօգուտն իւր խորհիլ եւ
առնել։ Այս ուսանիցին որդիք հնազանդ լինել ծը-
նողաց իւրեանց, զի և որդիք իւրեանց հնազանդեսցին
ինքեանց. զի զոր ինչ սերմանէ ոք, զնոյն և հնձէ։

ԺԸ. Հնազանդութիւնն է ենթարկել զկամս 'ի
ներքոյ հրամանի այլոյ, կամ վասն սիրոյ, կամ վասն
վարձուց և կամ վասն երկիւղի։ Որ վասն սիրոյ հը-
նազանդի, սիրէ զանձն նորա որում հնազանդի։ Որ
վասն վարձուց հնազանդի, սիրէ զինչս նորա՝ զոր
ակն ունի առնուլ 'ի նմանէ։ Որ վասն երկիւղի հնա-
զանդի, սիրէ զիւր ինքն զի մի՛ պատժեսցի։

Այսպիսին երեքին եւս են բարի և օգտակար. այլ
առաջինն յոյժ գովելի է, և կատարեալ 'ի կարգի որ-
դւոյ թեան, զի որդւոց է վասն սիրոյ հնազանդիլ ծը-

նոլաց։ Երկրորդն է 'ի կարգի վարձկանութեան. զի վարձկանաց է վասն վաքճուց հնազանդել վարձատուաց։ Երրորդն է 'ի կարգի ծառայութեան, զի ծառայից է յերկիւղէ պատժոյ հնազանդել տերանց։ որ առաւել ծառայութիւն ասի՝ քան հնազանդութիւն, վասն զի ոչ է կամաւոր. իսկ հնազանդութիւն է՝ որ լինի ազատ կամաւք. նա զի՝ ամենայն որ է ծառայ, հարկ է նմա լինել եւս հնազանդ, այլ ոչ ամենայն որ է հնազանդ՝ պարտ է լինել եւս ծառայ։

« Լաւ է ունկնդրութիւն քան զզոհ ընծիր, և հնազանդութիւն քան զճարպ խոյոց։ » Ա. Թագ. ԺԵ. 22։

« Որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս և հնազանդութեամբ միոյն՝ արդարք բազումք եղջին։ » Հռովմ. Ե. 19։

« Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն, եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ումիք, եթէ դատաւորաց՝ իբրեւ 'ի նմանէ առաքելոց 'ի վրէժինդրութիւն չարագործացն, և 'ի գովութիւն բարեգործացն։ » Ա. Պետ. Բ. 13։

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ա. ՅԱՆԿԱԼԻ է ամենայն կենդանեաց ընկերութեամբ կենցաղավարիլ ընդ տեսակակիցս իւրեանց, առաւել եւս մարդկային ազգի, որք բազում անգամ 'ի բազում իրս փոփոխակի կարօտին օգնականութեան միմեանց, 'ի ձախողակի պատահման, 'ի ժամանակի հիւանդութեան, 'ի պակասիլ կարեւոր պիտոյից։ Եւ որովհետեւ մարդիկ ծնանին տգէտ և տկար, առաւել քան զայլ ամենայն կենդանիս պէտք ունին դարմանոյ և ուսման՝ առ 'ի կեալ և լինել երջանիկ. և պայտոսիկ ոչ կարեն գտանել յառանձնակեցու-

թեան, բայց եթէ յընկերական վիճակի։

Իսկ թէ բնական է մարդոյ ըղձանալ ընկերական կենցաղավարութեան, յայտ է փորձիւ. զի ահա 'ի դատանիլ ումեք յանապատ անմարդի՝ տրտմի և տա՜ռապի, և 'ի տեսանել զիսուն բազմութիւն մարդկան՝ ուրախանայ և միխիթարի։ Սակայն պարտ է ընտրել զայնպիսի ընկեր, որ յուրախական կիրս ուրախակից լինիցի, և 'ի տրտմականս կարեկից և միսիթար։ Այս որքան քաղցր է և ցանկալի ընկեր բարի, այնքան դառն է և տաղտկալի ընկեր չար։ Այս 'ի գժուարին դիպուածս գիտէ բառնալ զծանրութիւն ցաւոց և դիւրացուցանել զտաւապանս. ստ պատ՜ճառէ զանակնկալ վտանգս, և յաւելու վիշտս 'ի վերայ վշտաց։

Բ. Բազում՞ չարք են 'ի մարդիկ, որք եթէ չար ընկերի ոչ պատահէին, ոչ լինէին չար. են և բազում՞ բարիք, որք եթէ բարւոյ ընկերի ոչ հադիպէին, ոչ լինէին բարի։ Այս լինել չար կամ բարի՝ յոլովակի պատճառի յընկերութենէ։ Զգուշացին երիտասարդք յընկերութենէ՝ չարաց, եթէ ոչ կամին լինել չար և վատահամբաւ. զի հաւակն երիտասարդական՝ դիւրատահ գոլով 'ի մոլութիւնս, օրինակաւ չար ընկերին փութով ուսանի զչարիս. յիմար է այն որ անխոտիր ընդ ամենեսին ընկերանայ։

Գ. Ոչ ինչ են զարմանք, զի բազում՞ բարեբարոյ մարդիկ հազիւ զմի որ չար կարեն ուղղել, իսկ մի ոմն ջոր բաւական է մոլորեցուցանել զբազում՞ն. քանզի Ա. բազում՞ առողջք զմի բորոտ ոչ կարեն սրբել, բայց մի որ բորոտ կարէ ախտացուցանել զբազում՞ն։

Դ. Բազում՞ք ընկերակից լինելով չարաց, ոչ միայն զհոյրենի ժառանգութիւնս վատնեալ՝ 'ի յետին չքաւորութիւն հասին, այլ և զանգին գանձ ամօթխածութեան և պարկեշտութեան կորուսին. և ա՜

նորդ անուն ուսացեալ՝ առակ նշանակի եղեն յաշ-
խարհի, և կորեան զկորուստն յաւիտենից։ Այս մե-
ծի զգուշութեան պէտս ունի ընտրութիւն ընկերաց։

Ե. Զարասէր մարդիկ շողոքորթ և կեղծ բարուք
արուսաքուստ երեւին բարի, բայց իբրեւ զօձ գեղեց-
կամորթ զթոյն մահու ծածկեալ ունին 'ի ներքս 'ի
սրտի, և խաբելով զանփորձ երիտասարդս՝ անկանին
'ի պէսպէս մոլութիւնս։ Այս եթէ կամիցի երիտա-
սարդն կենցաղավարել ընդ ոմեք, քննեսցէ զընկերս
նորա, եթէ իցեն բարեհամբաւ, ընկերակից լինիցի
և ինքն. իսկ եթէ իցեն վատանուն, խորշեսցի 'ի նը-
մանէ, զի մի և ինքն լինիցի վատանուն. զի ըստ ա-
ռածին, այր յընկերէ իւրմէ ճանաչի։

Զ. Դժուարին իմն է երիտասարդաց հեռի կալ
'ի տեսաւորութենէ չարաբարոյ ընկերաց. զի այն հա-
սակ առյդ և եռանդնոտ ցանկայ երթալ 'ի զբօսա-
նս և 'ի սրճանոցս, և ընկերակից լինել ընդ բազմաց։
Բայց պարտ է գիտել նոցա, թէ արք բարեբարոյք
սակաւ, իսկ չարք բազում են յոյժ. ապա ընտրելի է
ընդ սակաւուց բարեաց կենցաղավարիլ՝ քան անխտիր
ընդ բազմաց, զի մի գուցէ հանդիպեսցին չարաբա-
րոյ ընկերաց։

Է. Լաւ է ընդ բարի ընկերս գտանել 'ի վիշտս,
քան ընդ չար ընկերս 'ի հեշտալի վայելս. նա է 'ի
մահուանէ կեցուցիչ, իսկ սա մարմնոյ և հոգւոյ ա-
նողորմ դահիճ։

Ը. Եթէ ոք ընկերակցի ընդ չարս, կամ ապաքա է
համաձայնիլ նոցին, կամ հակառակիլ. եթէ համա-
ձայնի, լինի և ինքն չար. իսկ եթէ հակառակի, առ-
նէ զնոսա թշնամի ինքեան։ Այս յաւէտ զգուշալի
է 'ի կենցաղավարութեան, զի մի գուցէ ընկերակից
լինիցի ընդ չարս. զի դիւրին է ընկերանալ, բայց
դժուարին է օտարանալ։

«Որդեակ իմ մի՛ նախանձիր ընդ չարս, և մի՛ յանկանայցես կալ ընդ նոսա։» Առակ. Իդ. 1.

«Որ անձին չար է՝ պղծոց բարի ոչ լինի։» Սիրաք. ԺԴ. 3.

«Ի պղծոյ նոցա ծանիցիք զնոսա. մի թէ քաղեսցեն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուզ։» Մատթ. Է. 16.

«Զառնէ հերձուածողէ՝ յետ միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր. գիտասջիր զի թիւրեալ է այնպիսին։» Տիտ. Գ. 10.

ԳԼՈՒԽ ԻԶ.

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

Ա. ՈՐՊԷՍ չէք մեծագոյն չար քան զհպարտութիւնն, նոյնպէս չէք մեծագոյն բարի քան զխոնարհութիւնն. զի նա առնէ ատելի Աստուծոյ և մարդկան, և սա սիրելի և հաճոյ. նա անհանգիստ տապալեցուցանէ, սա անվրդով խաղաղութեամբ հանգուցանէ։ Այս թէ խորհեսցի մարդ՝ թէ զինչ էր նախ, և զինչ այժմ, և զինչ լինելոց է առ յապայն, ոչ կարէ բնաւ հպարտանալ.

Քանզի սկզանիլն է յանարգ նիւթոյ, ծնանիլն ցաւօք, կեալն տառապանաք, իշխանութիւնն անօգուտ, փառքն վաղաթառամ, կեանքն կաքաւատեւ, մահն հարկաւոր, մնալիսն ապականացու և կերակուր որդանց. յայսմ ամենայնէ և յայլ բազում գլխոց դիւրին է մարդոյ առնուլ ի միտ զմշուառութիւն բնութեան իւրոյ, և լինել խոնարհ։

Բ. Ոչ է նա ճշմարիտ խոնարհ, որ քանիւ լոկով զանձն անպիտան խոստովանի, բայց մինչ զնոյն յայլ մէ լսէ, վրդովի գժգոհի և բարկանայ. ուստի յայտ է թէ այնպիսին առաւել հպարտ է քան խոնարհ, զի խոնարհն խոստովանութեամբ կամի գովութիւնս ընդունիլ և փառս որսալ ի մարդկանէ։ Այնաւանդ

զի ստասայ է և կեղծաւոր, զի զայլ ինչ ունի 'ի սրտի, և զայլ ինչ խորհի 'ի սրտի. և որպէս խարդախ ոսկեգործ զարոյրն փոխանակ ոսկւոյ ջանայ 'ի վայր արկանել։

Գ. Խոնարհն զգործ բարի և օգտակար բազմաց սովոր է առնել 'ի ծածուկ, զի մի գովութեամբ հրաչակեսցի, քանզի 'ի Տեառնէ ակն ունի առնուլ զհատուցումն։ Իսկ հպարտն զփոքր ինչ գործ բարի զոր առնէ՝ յանկայ հրատարակել, զի ընկալցի զգովութիւն 'ի մարդկանէ՝ իբրեւ զվարձ գործոց իւրոց, վասն որոյ և ոչ առնու վարձս 'ի Տեառնէ։ Խոնարհն ելիէ զգովեստ անձին յաւմէքէ լսէ, ամաչէ և տրտմի. իսկ հպարտն գոռոզանայ և բերկրի, և կամի զի առաւել եւս լուիցէ։

Դ. Խոնարհութիւնն վասն զի է բարի՝ ոչ խորհէ զոք, այլ ընդունի զամենեսին որք սիրեն զնա. զի այս բնութիւն է բարւոյ, զամենեսին հաղորդս առնել բարութեան իւրոյ։ Իւ է որպէս անդամանդ ազնիւ՝ որ 'ի տունջեան և 'ի գիշերի փայլի, առ ալքատս՝ որք գոհ են զվիճակէ իւրեանց և շատանան կարեւորօք, ունի շողշողիւն՝ բայց աղօտալոյս. իսկ առ փարթամն՝ որք աղգօգուտ արդեամբք ճոխանան, իբրեւ 'ի քաջպարուեստ ակնագործէ բազմանկիւն ճախարակեալ՝ մեծապայծառ ցոլանայ, և զաչս ամենեցուն առ ինքն գրաւէ։

Ե. Կատարեալ խոնարհն թէ և ունիցի զմեծամեծ շնորհս, զինչս, զպատիւ. և զմեծութիւն, տակաւին նուաստ զգացումն ունի զանձնէ իւրմէ. ոչ տեսանէ զբարին զոր ունի, այլ կամի զպակասութիւնս իւր տեսանել՝ զի ուղղեսցէ զնոսա, որով և եւս արժանանայ շնորհացն Աստուծոյ։

Զ. Ո՞ր ոք զխոնարհութիւնն կարծիցէ պակասութիւն անձին զօրութեան՝ կամ յիմարութիւն մտաց

կամ թիւրութիւն կամաց, այլ Ճշմարտիւ գիտացէ՝ թէ նա է նշան արիութեան ոգւոյ, իմաստութեան մտաց, և ուղղութեան կամաց։ Քանզի անարին՝ յիմարն և մոլին ոչ երբէք կարեն խոնարհիլ. զի ոչ ամենեքեան բաւական են ունիլ զոյնքան մեծ զօրութիւն, մինչեւ յաղթել զանբան կիրս հպարտութեան և բարկութեան, և քինիլ հեզ և խոնարհ։ Այսն ո՞րոյ որ կամաւ խոնարհի առաջի ամենեցուն, է զօրեղ, իմաստուն և բարի. և ընդ հակառակն՝ անզօր յիմար և մոլի է նա՝ որ չունի զխոնարհութիւն, զի ոչ կարէ նուաճել զմոլեկան կիրս անձին իւրոյ, և զյաղթանակ խոնարհութեան առնուլ յասպարիզի կենցաղոյս։

Է. Այն բազումք որք գովեն զխոնարհութիւնն առաջի մարդկան՝ առ 'ի ցուցանել զանձինս խոնարհ. իսկ նա որ Ճշմարիտ խոնարհ է ըստ սրտին Աստուծոյ, գովէ զխոնարհութիւնն յայն սակս՝ զի է բարի և արժանի գովութեան, և ոչ եթէ այնու խոնարհ կարծեսցի ինքն և փառաւորեսցի. նա՝ զի Ճշմարիտ խոնարհն ոչ երբէք համարի զանձն հասեալ 'ի կատարեալ խոնարհութիւն, այլ միշտ կրթէ զինքն առ այն հասանելոյ։

Ը. Ոչ է նա խոնարհ՝ որ առաջի մեծամեծաց նուաստացուցանէ զանձն, և կերպարանի 'ի կերպարանս խոնարհի, բայց մնօք հաւասարապատիւ նոցին կամ վերագոյն քան զնոսա զանձն վարկանի. այլ նա՝ որ քան զայլս ամենեսին նուաստ Ճանաչէ զանձն իւր, թէ և ունիցի զմեծագոյն առաքինութիւնս և զայլ ստացական բարիս առաւել քան զնոսա։

Թ. Ոչ է նա խոնարհ, որ մինչ գտանէ զյաջողուածս բարեաց և զպատիւս 'ի մարդկանէ, երեւի հանդարտ և խոնարհ. իսկ յորժամ անկանի 'ի ձախողութիւն և կրէ զարհամարհանս, վրդովի և

գտանանայ։ Ճշմարիտ խոնարհութիւնն ոչ է ծառայ մոլութեանց, զոր իբրեւ անարգ գերի, կամ անբան գրաստ ըստ հաճոյս ոք կապեսցէ և արձակեսցէ, կամ իբրեւ աւելորդ զգեստ ագանիցի ոք և 'ի բաց հանցէ, այլ ազատ է և ինքնիշխան, հարկաւոր զարդ հոգւոյ, և պարծանք ազգի մարդկան։

Այլ Ճշմարիտ խոնարհն յամենայն ժամ և յամենայն տեղիս մնայ հանդարտ և անվրդով. ոչ 'ի պատուիլ իւրոմ ամբարտաւանէ, զի ոչ երբէք զանձն արժանի պատուոյ համարի. և ոչ յարհամարհիլն վշտանայ, զի գիտէ ունկլ զպակասութիւնս արժանի անարգանաց։

Ա. Ընդվայր ջանայ խոնարհ երեւիլ նա որ ըստ հետ պնդի փառաց, զի թէ և արտաքուստ ունիցի զկերպարանս խոնարհութեան, բայց 'ի ներքուստ կրէ յինքեան զհոգին հպարտութեան։ Իսկ Ճշմարիտ խոնարհն որքան 'ի բարիս յաճախէ, այնքան առաւել ամչէ, և իբրեւ բազմապտուղ ոստ ծառոց՝ որքան առաւելու արդեամբք, այնքան առաւել խոնարհի։ Վասն որոյ զամենայն բարիս զոր ունի՝ շնորհացն Աստուծոյ տեառնագրէ և գոհանայ և միշտ զանձն անարժան վարկանի, և երկնչի՝ զի չմի գուցէ մեծամտեսցի, որով մեծամեծ եւս պարգեւաց գտանի արժանաւոր։

Բ. Խոնարհն ոչ միայն երկարակեաց լինի և առողջ, այլ և յամենայն ժամանակս ազատ մնայ 'ի վնասուէ. զի ոչ խռովի յումեքէ, ոչ տրտմի, ոչ յուսահատի, ոչ զայրանայ, յորոց պատճառին ազգի ազգի հիւանդութիւնք և մահ. ոչ թշնամանայ ընդ ումեք, վասն որոյ և ոչ ոք ջանայ վնասել նմա, և այսպէս խաղաղ և երջանիկ կենաւք կնքէ զաւուրս իւր։

Գ. Այն է հեղ և խոնարհ, որ թէպէտ կարող է վրէժխնդիր լինել անիրաւութեանց արարելոց

ընդդէմ իւր, այլ աստուածատուիս ի՞նն երկիւղածութեամբ ներէ։ Իսկ հպարտն վասն փոքու յանցանաց ջանայ վրէժս պահանջել, զի երեւեսցի կարող։

ԺԳ. Մի խաբեսցեն զանձինս մեծամիտք ի մնալ իւրեանց անպատիժ մինչ ոչ թողուն զյանցանս զըղջացելոյն, որ Թախծապին պաղատանաւք հայցէ զնեղութիւն։ Զի Թէպէտ և երկայնամիտ լինի Աստուած, և յապաղէ պատժել։ զի Թերեւս դարձցին ի խրատասրտութենէ իւրեանց, բայց յետոյ իբրեւ տեսանէ յամառեալ, ասասկագինս պատուհասէ. որ պէս ուժգին հարկանէ զոր ապտակ, որքան զձեռն իւր հեռի տարածէ։ Այլ իմիք ներողութեան է արժանի, որ չէ ներողամիտ։

ԺԴ. Որ կամի մերժել յանձնէ զմեծամտութիւն, ամբարձցէ զաչս իւր և հայեսցի ի հոյակապ դամբարանս. ածցէ զմտաւ Թէ մարդիկ որ երբեմն մեծաշուք փառաւք բարգաւաճեալ ճոխանային ի վերոյ երկրի, զինքդ այժմ ի ներքոյ երկրի նեխեալ և հոգացեալ կոխան լինին յամենայնէ։

ԺԵ. Իշխանք և մեծատունք դիւրաւ կարեն ըստանալ զխոնարհութիւն, եԹէ ածցեն զմտաւ՝ Թէ յոր աստիճան բարձրութեան ամբարձեալ կան. զի որ ի բարձունս բնակի՝ առաւել երկիցէ յանկմանէ քան որ ի ստորին վայր գտանի։ Այսպա իշխանք որ ի վերոյ են քան զքաղու�, ի խոնարհութեան կալցին զանձինս իւրեանց առաւել քան զքաղուmն՝ զի մի անկանիցին. քանզի մեծութիւն և փառք յաշխարհի որչափ բարձրագոյն իցեն, այնչափ վտանգաւոր են և երկիւղուտ։

«Արձակեսցէ արմատս 'ի խոնարհն՝ և արասցէ ցպտուղ 'ի վերս։» Դ. Թագ. ԺԹ. 30։

«Խոնարհաց և հեզոց աղաչանք՝ միշտ քեզ հաճոյ ելցեն։» Յոբ. Թ. 16։

«Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց. և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա։» Սաղմոս. ՃԱ. 17։

«Ոչափ մեծ ես՝ խոնարհեցո զքեզ յամենայնի. և առաջի Աստուծոյ գտցես զշնորհս։» Սիրաք. Գ. 20։

ԳԼՈՒԽ ԻԷ.

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆՆ է զօրութիւնն այն՝ արիութեան, որով դիմակալէ անգութապ կրից. ապա ոչ յաւելու ինչ 'ի ներգործութիւնս՝ զորս ներգործեն մարդկային գործարանք ներքին և արտաքին, այլ միայն է զօրութիւն ինչ բնաւորեալ 'ի զսպել և արգելուլ զայն ամենայն զոր խոհեմութիւնն ոչ թոյլատրէ առնել։ Այսն զի խոհեմութիւնն է ընտրել զառնելիս և զխորշելիս, և արիութիւնն է 'ի գործ դնելն իսկ զօրութիւնն որ ընդդէմ կայ և խափանէ առնել զոր արգելու խոհեմութիւն, ասի համբերութիւն։ Այսպա համբերողն է տիրող 'ի վերայ բուռն կրից, իսկ անհամբերն՝ յաղթահարեալ և տկար։

Եւ խորհրդաբար կոչեցաւ համբերութիւն, այսինքն համբերող. զի յորժամ կիրք բարկութեան արկն ելիցեն զանիսկ զարիւնն, 'ի կծու և 'ի դառն համ խոխարկէ զքաղցրութիւն նորա. զի որպէս յայտ է 'ի փորձոյ, յորժամ ստատիկ եռայցէ քաղցրահամ ինչ, փոխի 'ի կծու և դառնահամ։ Իսկ առն համբերողն զիջանին կիրք, զովանայ արիւնն, և անդէն ստանայ զառաջին բնական համն քաղցրութեան, ուստի ասաւ համբերութիւն, այսինքն համբերողութիւն։

Բ. Զիք յաղթող դժուարութեանց աշխարհիքան զհամբերողն, և ոչ յաւէտ տկար քան զայն ապաժոյժ. զի ոչ գոյ այնքան ծանր և դժուարին՝ որում կատարեալ համբերութիւնն ոչ յաղթեսցէ, և ոչ թեթեւագոյն ինչ բեռն՝ զոր անհամբերութիւնն ոչ ծանրացուսցէ, զի ո՛ և իցէ իր դիւրաբառնալի՝ ի պակասիլ համբերութեան լինի անտանելի։ Զայն որոյ այր անհամբեր յամենայնի տաղտկանայ, խռովի և յուսահատի, և ոչ միայն անձին իւրում է տանջանք՝ այլ և ամենեցուն, նմին իրի ամենայն ուրեք է անարգ և թշուառ։

Գ. Ոչ՝ ինչ արդեօք շահի ոք անհամբերութեամբ ի պատահիլ դժուարութեան, բայց եթէ զառաւել վիշտս։ որում եթէ համբերէր, վիշտքն դադարէին ի լինելոյ վիշտ։ Բանզի անհամբերութիւնն բազում անգամ անոտի կարծեօք երեւակերպէ զդժուարութիւն, ուր չէք բնաւ դժուարութիւն. կամ զսակաւն առաւելս և զփոքրն մեծացուցանէ. զի նը մանի թոշուրացոյց ապակւոյ՝ որ զլուն իբրեւ զփիղ երեւեցուցանէ, կամ մելամաղձութեան ախտի՝ որ ըստ չգոյն իբրեւ զգոյ կարծեցուցանէ, սմին իրի հանապազ անանջի՝ որ ոչ գիտէ համբերել։

Դ. Զի այն լինի ոք անհամբեր, ընդ որ ոչ հաճի կամք իւր. զի եթէ ամենայն ինչ լինէր ըստ կամաց, ապաքէն կամք իւր հաճեալ հաւանէր և միաբանէր ընդ նմին, և յայնժամ ոչ բնաւ պարտ էր գտանիլ ի մարդում ունակութիւնն համբերութեան։ Իսկ արդ՝ գոյ ունակութիւն համբերութեան տպաւորեալ ի կամս մարդոյ անդստին ի բնութենէ. ապա պարտին գտանիլ յաշխարհի ներգործութիւնք ինչ կամ պատահարք՝ որք իցեն ներհակք հաճութեան կամաց առ ի համբերել նոցին։ Զի որովհետեւ ա ժամենայն կարողութիւն կարգեալէ առ իւր առարկայ,

ձայա և կարողութիւնն համբերութեան կարգեալ է առ հակառակս կամաց մարդոյ՝ առ վիշտս և նեղութիւնս, որպէս առ իւր առարկայ։

Այսպէս որ ոչ կամի համբերել կրից, բարձցէ յաշխարհէ զամենայն հակառակ ներգործութիւնս և զվիշտս. իսկ եթէ չէ բաւական այսմ, զայն արասցէ՝ առ որ բաւական գտանի, այսինքն է՝ համբերել դիւ-ժուարութեանց։ Իսկ եթէ ոչ տիրոջէ համբերել, բարձցի ինքն անհամբերն յաշխարհէ որ ոչ կամի հնազանդիլ ընդհանուր կարգի տիեզերաց, որ 'ի հակառակ էութեանց գոլով բաղկացեալ՝ զհակառակ ներգործութիւնս ածէ յառաջ։

Ե. Համբերութիւնն անդ երեւի, ուր անհաճոյք կամաց մարդոյ պատահին, որպէս հիւանդութիւն, ձախորդութիւն, չքաւորութիւն, անպատուութիւն, եւս և մահ սիրելեաց, և որ ասացուն են ասելի վշտացուցիչ դիպուածք։ Արդ՝ է ինչ յայտ ցանէ որ յաստուածային կարգադրութենէն ելնէ՝ որ 'ի մարդկանէ պատճառի, և է՝ որ 'ի կամանց կամ յանզգուշութենէ ուրուք յառաջ գայ։

Այս սակ անհամբեր, ում 'ի սոցանէ բարկանալ արժան է. զի անհամբերութիւնն յառաջանայ 'ի բարկութենէ։ Եթէ բարկանաս հեղինակին բնութեան՝ որ է Աստուած, թէ ընդէր թողու դալ դիւ-ժընդակ պատահարացս, հակառակիս Արարչին քում։ Եթէ բարկանաս մարդկան զի վշտացուցին զքեզ, հարկիս ուրեմն զամենայն մարդիկ 'ի կամս քո խոնարհեցուցանել, զի արասցեն զհաճոյս կամաց քոց. և այս է յանկարելեաց ստկի, զի չէ բաւական մի ոք նուաճել զկամս բազմաց և հնազանդեցուցանել ինքեան, այլ մանաւանդ քեզ անկ է նուաճիլ ընդ կամօք նոցա և հնազանդիլ։ Իսկ եթէ բարկանաս անձին քում՝ զի հասոյց քեզ չարիս, ահա դու ընդ

քեզ ոգեորիս. և այս է անհնարին յիմարութիւն։ Այ-
պա զոր ակամայ կրես, պարտիս կամաւ համբերել։

Զ. Անհնար է մարդոյ ամենեւին զերծ 'ի վտան-
գե մնալ, մինչդեռ կենցաղավարի 'ի կեանս յայսմիկ.
ապա 'ի հասանել արկածից պարտ է արիաբար տո-
կալ և համբերել, և իբրեւ վեմ անդրդուելի զալիս
փորձութեանց կենցաղոյս ծովու փշրել և յետս դարձ-
ուցանել. զի լաւ է համբերել տառապանաց և կեալ-
քան անհամբեր բարոյիւք լքանիլ և զմահ համբուրել։

Է. Պարտ է ունիլ մարդոյ զհամբերութիւնն
ոչ միայն վասն շահու անձին՝ այլ և վասն աստուած-
սիրութեան, եղբայրսիրութեան և ազգասիրու-
թեան։ Բանզի է մարդ որ գիտէ համբերել միայն
վասն օգտի իւրոյ. իսկ ուր ոչ գուցէ ինքեան շահ
ինչ, թէպէտ և օգտակար լցէ բազմաց, չկամի հաճ-
բերել։ Այլ սակայն պարտ է համբերել վասն աս-
տուածսիրութեան, մինչ յուսալի է փառաւորու-
թիւն անուանն Աստուծոյ. վասն եղբայրսիրութեան՝
մինչդեռ այնու եղբայրն քո շահեալ լինի. վասն
ազգասիրութեան՝ յորժամ ազգն ողջոյն բարեհամբա-
ւի։ Բանզի անհամբերութեամբ՝ է զի փառքն Աս-
տուծոյ խափանի, է զի՝ եղբայրն քո գթէ կամ կոր-
ծանի, և է զի՝ ազգն ողջոյն պախարակի կամ վնասի։
Այսպէս փութալի է ստանալ զհամբերութիւն, առ 'ի
ստանալ վարձս աստ և 'ի հանդերձեալն։

Ը. Համբերութիւնն առանց իրիք սանձի նուա-
ճէ զանբան կիրս բարկութեան ընդ հնազանդու-
թեամբ բանին։ Այս է օրհորդ գեղեցիկ՝ որ ընդ ա-
ռաջ ելանէ ամենի առիւծու գազանացեալ բարկու-
թեան. ուր գեղով երեսաց, բարեձեւութեամբ կեր-
պարանաց, համեղութեամբ բանից և վայելչութեամբ
ձայնից 'ի հեզութիւն հանդարտութեան ածէ զվի-
ղակն անհեթեթ՝ առաւել քան երկաթի կապանօք։

Լաւ ի կարէ զարդիւնս համբերութեան ճանաչել, բայց եթէ նա՝ որ գիտէ համբերել. քանզի զինչ չար ոչ յառաջ գայր 'ի բազմահոյլ ամենի կրից իբրեւ զալիս ծովու առ միմեանս բաղխելոց, եթէ համբերութիւնն իբրեւ վէմ ոչ խորտակէր զբռնութիւն նոցա։ Այս յաղթութիւն որով յաղթէ համբերողն ամենայն դժուարութեանց և կրից, է մեծ և զուարճալի. զի որ զմտաւ ածէ զվտանգն յորմէ համբերութեամբն զերծ գտաւ, ոսն ցնծութեան կատարէ։ Այսպա լեր ծառայ համբերութեան, զի ազատ լիցիս 'ի ծառայութենէ բորկութեան. և որ ծառայէ համբերութեան, ամենայն կիրք նմա ծառայեն։

Թ. Ընդհանուր բնութիւնն է քաջավարժ դասուիարակ՝ ածել զանհամբերն 'ի համբերութիւն, և խոհական խորհրդով ընտրել զժամանակ խօսելոյ և գործելոյ. ոչ ամենայն ինչ յամենայն ժամու յաջող լինել, զի է ինչ՝ որում պարտ է լինել ատտ և պարզմ, և է ինչ՝ որ յայլում տեղւոջ և յայլում ժամանակի. ապա թէ ոք չիցէ խելամուտ ոսցին ընտրութեան և հանգամանաց, ոչ մի ինչ մարթի ըստ կարգի խօսիլ կամ գործել։

Տես՝ զինարդ գիտեն տունկք զժամանակն արձակելոյ զտերեւ, զծաղիկ և զպտուղ, և հաւք զձուս ածելոյ, 'ի թուխս նստելոյ և զձագս հանելոյ. իսկ եթէ ապաժամանն քերին 'ի գործս՝ առ որ կարգեալ են 'ի բնութենէ հաստատուն օրինաք, եղծանին և չքանան։ Այսպէսն ուսիր համբերել, ով մարդ, և պահել զկարգ բանական բնութեան, զի մի քան զանրզդայս և զանբանս երեւեսցիս անզգայ և անբան։

Ժ. Խազումք համբերութեն դասն նախատանաց զ տարաց առ երկիւղի, բայց խրատական բանիկ բարեկամաց՝ որք ծանր թուին, ոչ համբերեն վասն սիրոյ.

ոքա նմանին դիւահարի, որ երկիւղիւ բանտապետին զգաստանայ, և սիրով բարեկամին կատաղի, որոց պարտ էր առաւել համբերել սիրելեաց քան օտարաց։

Եւ մի ասիցէ ոք, թէ ակամայ բռնադատիմ համբերել օտարի։ Այսպէս եթէ արժան է համբերել օտարի յոչ կամաց, ապա եւս առաւել արժան է համբերել բարեկամին յօժարութեամբ կամաց. եթէ առ ակամայն գիտես զինչանիլ, ընդէր 'ի կամաւորէն յեռոս նահանջիս, յայտ ուրեմն է՝ թէ ոչ ունիս զսէր, որով անարգ քան զամենայն արարածս գրստանիս. զի չէք արարած որ ոչ ունիցի սէր կամ դիմողութիւն առ նմանին իւր. տես յոր յեռին աստարգութիւն հաւեր, ոմ անհամբեր։

ԺԵ. Այն ինչ զոր ամենեքին գովեն և պանծան ունել՝ է բարի և օգտակար, զի ոչ է մարթ ամենեցուն միանգամայն խաբիլ և սխալիլ. իսկ արդ՝ ընդհամբերութիւնն ամենեքին գովին և ունել պարծին, նա և նոքին իսկ անհամբերքք. ապա է բարի և օգտակար մարդկան։ Լաւսի որ ոչ գիտէ համբերել նեղութեան որում պարտ է համբերել, է անխոհեմ և արժանի մեղադրութեան. զի անխոհեմութիւն է հերքել զբարի ինչ և օգտակար, և մեղադրութեան արժանի՝ ոչ ճանաչել ումեք զպարտաւորութիւն իւր։

ԺԲ. Ոչ ինչ այնպէս զօրաւոր դեղ երեւեցաւ յաշխարհի 'ի բժշկել զծանր ծանր հիւանդութիւնս՝ որքան համբերութիւնն. զի անպիտան լինէին ամենայն դեղք և. ճարտարութիւնք բժշկաց՝ եթէ անհամբեր լինէր հիւանդն 'ի պահել զպատուիրանս բժշկին։ Այսպա համբերութիւնն գործ կատարեալ ունի. և որ համբերէ ճախողակի դիպուածոց, 'ի վախճանի գտանէ զելս յաջողակ և զդիւրութիւն։

ԺԳ. Քաջահանճար խորհրդածութիւնք իմաստնոց

իբր խոր յիմարութիւն համարէին, եթէ ոչ ընկերա-
նայր նոցա համբերութիւնն 'ի գործ դնել զդիտմու-
նըս իւրեանց սպասելով դիպողական առթի և ժա-
մանակի. ապա այր անհամբեր՝ թէ և իցէ նրբամիտ
և խորախորհուրդ, տակաւին յիմար է և ոչ ինչ գի-
տէ, զի ոչ կարէ յառաջացուցանել զայն զոր խոր-
հեալն է յառաջագոյն։

ԺԴ. Խաղումք կարէին հասանիլ բաղձանաց իւ-
րեանց որոց ցանկային, եթէ գիտէին համբերել որ-
չափ պիտոյն էր, որ իբր քաջ ուղեցոյց ընդ անմոլար
ճանապարհս առաջնորդէր նոցա 'ի դէմ եդեալ տե-
ղին։ Իսկ անհամբեր բարոյիւք վաղվաղեալ յընթա-
ցըս՝ կորուսին զճանապարհն, և դեգերեալ յաղտ-
մոզ և յանել շաւիղս՝ չկարացին ժամանել 'ի նպա-
տակ բաղձանաց իւրեանց։

ԺԵ. Զիք զորեղ բարեկամ որ կարող իցէ աղա-
տել զոք 'ի նեղութենէ՝ քան զհամբերութիւնն, զի
բազումք անկեալ 'ի տառապանս՝ չունելով զհամբե-
րութիւն զօրավիգ ինքեանց, վհատեալ լքան և զը-
բաւեցան 'ի կենաց, որք եթէ գիտէին յուսով համ-
բերել, կարէին ելանել 'ի տառապանաց, և մոռա-
ցեալ զվիշտս՝ զուարճանային ընդ կենդանիս, բայց
արդէն ընդ մեռեալս են։

ԺԶ. Խաղում պիտոյք են յաշխարհի 'ի պահել ըզ-
կեանս մարդոյ, սակայն ոչ ամենեքին միապէս կարե-
ւորք. զի են իրք՝ որք եթէ պակասիցին, տակաւին
պահպանին կեանք մարդոյ՝ բայց ոչ վայելչաբար, որ-
պէս աղ, իւղ, միս, գինի և այլն։ Իսկ են իրք՝ որք
եթէ պակասեսցին, պակասի և կենդանութիւն մար-
դոյ, որպէս օդ, ջեր, հաց, ջուր։ Այսպէս բազում
առաքինութիւն պիտոյ են մարդոյ, յորոյ ոմանք ե-
թէ պակասին, կարէ լինել մարդ՝ այլ ոչ կատարեալ,
որպէս խմաստութիւն, արիութիւն, առատաձեռ-

նութիւն, զուարճախօսութիւն և այլն։ Իսկ առանց համբերութեան ոչ կարէ լինել մարդն մարդ, զի համբերութիւնն այնպէս պիտոյ է մարդոյ առ 'ի կեաղ մարդկաբար, որպէս օդ, հաց և ջուր առ 'ի կեաղ կենդանի։ Այլա որ ոչ գիտէ համբերել, ոչ դիտէ նա և կեաղ մարդկաբար։

"Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղաղակիս իմոց։" Սաղմ. Լթ. 1.

"Զայն որ կորուսանէ զհամբերութիւն։" Սիր. Բ. 16.

"Որ համբերեսցէ 'ի սպառ՝ նա կեցցէ։" Մատ. ԺԴ. 22.

"Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ արարեալ հասցէք աւետեացն։" Եբր. Ժ. 36.

ԳԼՈՒԽ ԻԸ.

ԽՈԿՈՒՄՆ ՄԱՀՈՒ

Ա. Զտեսութիւն մարմնական կենաց 'ի դէպ էր կոչել անընդհատ յաջորդութիւն մահու. և ոչ շոմհետեւ ամենայն վայրկենի քայլափոխէ 'ի մահ, գրեթէ յամենայն վայրկենի մեռանի. և որչափ առաւելու ամաց 'ի կեանս, այնչափ առաւել կրէ մահունս։ Այսպա յիրաւի յիմարութիւն է յանմահից կարգի դնել զանձն, և անփոյթ լինել զհոգեւորաց. այլ մանաւանդ յամենայն կիսի ճանաչել զանձն մեռանելոց, և գործել զբարիս, որ է կեանք հոգւոյ և պատճառ երջանկութեան։

Բ. Թէպէտ Աստուած վասն օգտի մարդկան ծածկեաց 'ի նոցանէ գիտել զժամանակ օրհաս մահուն, բայց և ոչ յամայրամեան երկարութեամբ կենաց

եթող մուտանալ՝ որպէս յառաջին դարան, յորս ապրէին զբազում հարիւրաւոր ամս՝ մինչ անցանել զնոսա հարիւր ամաց։ Այլ հազիւ իբր զտասանորդն կենաց մարդկան առաջնոյ դարուն առ յետնորդս եթազի դուն ուրեք արդէն շուրջ զիննուն կամ զհարիւր ամաց պարսաքերի ժամանակ մարդոյ, և այն ցաւաց և հեծութեամբ։

Եւ զայս արար Աստուած ոչ միայն 'ի կարճել զչարութիւն մարդկան, այլ և առ 'ի զգաստ առնել զնոսա, զի գոնէ այսու չափաւոր թուով ծանուցեալ զկարճութիւն կենաց մարդկան, յամենայն ժամ արթուն և պատրաստ գտանիցին տնօրինել զկեանս իւրեանց 'ի բարիս։ Եւ ոչ այսու միայն՝ այլ և ինչ ինչ յայտնի նշանաց ծանոյց զմերձենալ մահուն, այսինքն՝ սպիտակութեամբ հերաց, ծերութեամբ, հիւանդութեամբ և նէսպէս տկարութեամբ մարմնոյ։ Այլա ոչ են ազատ մարդիկ 'ի մեղադրանաց, եթէ տակաւին յաղդարարութենէ սոցա ոչ զգան զմերձենալ մահուն։

Գ. Որչափ մեծանայ ոք հասակաւ, այնքան առաւել մօտի 'ի գերեզմանս. զի կեռն մարդոյ՝ է խոնարհիլ 'ի մահ. և յորժամ ծերանայ, յայնժամ հասանէ 'ի գրունս մահու։

Դ. Զկնք ստոյգ քան զմահն, և չկնք անստոյգ քան զօր և զժամանակ մահուն. սակայն այր խոհեմ ոչ է անծանօթ, զի քաջ գիտէ՝ թէ ամենայն վայրկեան է ժամանակ մահու իւրոյ։

Իսկ արդ՝ ժամանակն բաժանի յերիս, յանցեալն, 'ի ներկայն և յապառնին. անցեալն և ապառնին ոչ են ընդ իշխանութեամբ մարդոյ, զի մին անց դնայ, և միւսն չեռ եւս է եկեալ։ Եւ ներկայն է յարահոս և անկայուն, 'ի գոլն՝ անդէն չքանայ և փոխի 'ի յանցեալն. անուամբ յորջորջի, քայց իրաք

ոչ երեւի, զի է յարաբախուստ միջոց անցելոյ և ապառնւոյ. և ասացաւ ներկայ, զի իբրեւ կէտ անբաժանելի 'ի մէջ կայ երկուց ժամանակաց, և ահա միայն ներկայ ժամանակն է 'ի գործածութեան, զոր լով յածի կեանք մարդոյ։

Իսկ ժամանակն է փոփոխական տեւողութիւն ըստեղծական և փոփոխական իրաց. և ժամանակ ասի, զի գայ ժամանէ միշտ. և այս լինի մեզ 'ի հոլովմանէ արեգական, որ չափէ զվայրկեան, զժամ, զօր, զամիս և զտարի. և ասի տարի, զի միշտ տանի զժամ և զժամանակ կենաց մերոց։ Տես ուրեմն յոլովիսի անկայուն միջոց զետեղեալ է կեանք մարդոյ։

Արդ՝ որ զայս քաջ 'ի միտ առնու, ճանաչէ զինքն զվայրկենի իմիք ներկայ ժամանակի մեռանելոց, զի յամենայն վայրկենի հնար է մեռանիլ. և այսու մըտածութեամբ զմահն կրէ միշտ առաջի իւր, ըստ այնմ։ Հաւատաս քեզ ամենայն օր ծագել վերջին։ Իւ եթէ զգիտէ զօրհասն՝ թէ յայսմ կիսի յորում գըտանի, մեռանելոց իցէ, որովհետեւ ոչ գիտէ՝ թէ կարիցէ մնալ կենդանի 'ի յաջորդ վայրկեանն, որ դեռ եւս է ապառնի։

Ե. Արդն կեայ տուրեւառութեամբ հնչոյ, և այն յառաջ գայ 'ի շարժմանէ և 'ի բաղխմանէ սրտին. արդ՝ եթէ դադարիցի բաղխումն սրտի, իսկայն մեռանի մարդն. իսկ ոչ ոք գիտէ թէ երբ դադարիցի, զի հնար է՝ թէ վայրկեանն յորում առնու ոք զշունչ, իցէ վերջին. ապա յամենայն հնչառութիւնս պարտի ասել՝ թէ այս վայրկեան է վերջին, որով միշտ ըզգաստ մնայ։ Այս է նկատումն սրբոց, որք ճանաչեն զինքեանս յամենայն հնչառութեան մեռանելոց. իսկ որ ճանաչէ՝ թէ արդէն մեռանի, ոչ կարէ մեծանչել. ապա խոկումն մահու ազատ պահէ զմարդն 'ի մեղայ։

Զ. Այնքան է անհրաժեշտ ոստիկան մարդկան 'ի կողմանէ Աստուծոյ, որ յօրէ ծննդեան կալեալ ունի զօձիս իւրաքանչիւր մարդոյ՝ ածել կացուցանել առաջի Աստուծոյ։ Այս կարի յանդուգն է նա որ ոչ զարհուրի, մինչ գիտէ թէ 'ի ձեռս անխաբ ոստիկանի անկեալ կայ, որ կարէ ընդ քարշ տանիլ զինքն 'ի յատեան անաչառ արքայի 'ի դատել։ Արդ՝ որ 'ի սոյն լինի միշտ մտախոհ, ոչ երբէք կարէ մեղանչել։

Է. Թուի թէ կեանք մարդոյ 'ի վերայ երկրի իցէ երեք օր. մի օր ծննդեան, մի օր մահուան, և մի օր ամենայն ժամանակ կենաց նորա, թէ երկար իցէ և թէ սուղ։ Այց յաւէտ երեւի լինել՝ թէ իցէ երեք վայրկեան. զի ծնանի 'ի մի վայրկենի, կեայ 'ի մի վայրկենի, մեռանի 'ի մի վայրկենի. զի յամենայն վայրկենի հնար է մեռանիլ։ Այս առանի թէ և կեցցէ զամբս բազումս, համարի իբրեւ զմի վայրկեան ժամանակի. զի ամք բազկանան յամոց, ամիսք յաւուրց, աւուրք 'ի ժամուց, ժամք 'ի վայրկենից. և ոչ այլ ինչ են ամք, բայց եթէ բազմապատկութիւն վայրկենից. յայտնանէ յայտ է՝ թէ հեշտութիւն կամ տանջանք զոր կրեն մարդիկ յաշխարհի, են վայրկենական։ Այս մեծ անմտութիւն է սակս վայրկենական հեշտութեան կամ տանջանաց մեղանչել առ Աստուած, զի երկոքեանն եւս 'ի վայրկենի լմիք են և իսկոյն անցանեն։

Ը. Կեանք մարդոյ՝ թէ և տեւեսցէ զամս բազումս, է տակաւին սուղ. զի զկէս մասն յափշտակէ քունն, զմի մասն տանի անզգայութիւնն տղայութեան, զմի մասն գողանան դատարկաբան ընկերք, գուցէ և զմասն ինչ տկարութիւնք մարմնոյ և ցաւք. ապա ջանալի է 'ի գործ ածել զայն մասն ժամանակի զոր 'ի ձեռին ունիմք՝ 'ի բարի և յօգտակար իրողութիւնս։

Թ. Ոչ ոք 'ի մարդկանէ կարաց մինչեւ ցարդ, և ոչ կարասցէ ոք երբէք իսկութեամբ նշանակել ըստ պատկեր մահու. զի զայն միայն մեռեալք տեսին և ուսան. և չեղեւ միւսմ 'ի նոցանէ դառնալ յաշխարհս 'ի յայտնել կենդանեաց՝ թէ որպիսի ինչ է մահն, ապա կենդանիք որքան զարհուրելի գոլ ցուցանեն, տակաւին ոչ կարեն լրիւ յայտ առնել, զի անծանօթ են զնմանէ։ Զահն յաւէտ անողորմ գըտանի յայսմ մտին, զի մի անգամ գայ առ կենդանիս. և այն 'ի վերջին կէտն. թէպէտ և յայնժամ ուսանին մարդիկ՝ թէ ո՞ իցէ, որպիսի պատրաստութեամբ սպասելի է նմա, զիարդ պարտ է ընդունիլ, զինչ արդեօք խնդրէ 'ի մէնջ, տակայն այն ամենայն ուսումն է անօգուտ, զի յետ այնորիկ ոչ կարէ ոք 'ի գործ դնել.

Ժ. Զահն մի անգամ պատահի մարդկան, բայց մարդիկ յերկիւղէ նորին պաշարեալ՝ գրեթէ յամենայն ժամ կենդանեոցն մեռանին։ Զայլ տակայն ընդ վայր տանջանք է երկնչիլ յայնմանէ, յորմէ ազատիլ չէ հնար. միայն պարտ է պատրաստ գտանիլ, զի մի իբրեւ չարագուշակ դահիճ 'ի գուբն մահու, այլ իբրեւ աւետարեր հրաւիրակ կոչեսցէ զքեզ 'ի յարքրն յաւիտենից.

ԺԱ. Ոչ զարհուրի 'ի մահուանէ իմաստունն, զի ճանաչէ զմահն անհրաժեշտ պարտք բնութեան մարդկեղէն կազմուածոյ. ոչ զարհուրի առաքինին, զի գիտէ զնա բարեհրաւէր առաջնորդ առ Աստուած ճանապարհին։ Մեռանի աներկիւղ և ուրախ՝ որ միշտ զմահ իւր ունի 'ի մտի, և ազգ 'ի վերայ յանցուածոց իւրոց։ Մեռանի երկիւղիւ և տրտմութեամբ՝ որ ոչ յիշէ զմահ, և ուրախանայ 'ի հաճոյս մարմնոյ և աշխարհի։

ԺԲ. Եթէ կամիս չերկնչիլ 'ի մահուանէ, կալ

միշտ գնա 'ի մոռ քում, զի ընդելացեալ ընդ նմա իբրեւ ընդ բարեկամի, և մի զարհուրեսցիս 'ի նը մանէ՝ յորժամ առեալ տանիցի զքեզ յայլ աշխարհ։ Այլ եթէ կամիս տեղեկանալ բնութեան և բարուց նորա, յաճախակի երթ յայցելութիւն մահամերձ հիւանդաց, և տես՝ թէ որպէս մեռանին նոքա. զի այս բնութիւն է մահու՝ միապէս վարիլ առ ամենեսին առ մեծատունս և առ աղքատս, զի ոչ երբ կընչի յուսեալք։ Այլ ուսեալ քո զմեռանիլն՝ աներ կիւղ լիցիս 'ի մահուանէ, որ է յատուկ պարտաւորութիւն քո, զոր բնութիւնն՝ աստուածատահման և անկեղծի օրինաւք եդեալ է 'ի վերայ քո։ Թող նա երբ կիցէ 'ի մահուանէ, որ ոչ յիշէ զմահ, և չէ ընդ նմա ընդեալ և բարեկամ. վասն որոյ մինչ գայ առ նա մահն, երեւի նմա իբրեւ սոսկալի թշնամի, որ եկեալ է վարել զնա յանկերծ և 'ի դժնդակ ծառայութիւն։

Որ միշտ զմահ իւր ունի 'ի մտի, 'ի մեռանիլ իւր նա ոչ զարհուրի. զի մահն եկեալ որպէս ընտանի, հրաւիրէ հանդչիլ յիւրն հայրենի։ Որ 'ի մահուանէ միշտ հեռի փախչի, զմահն առնէ անհաչտ թշնամի. գայ որպէս զինուոր ահեղ արքայի, տանիլ խրատութեամբ ուր ոչն կամի։

ԺԳ. Զինչ օգուտ է կեալ բարի անուամբ, և մեռանիլ վատութեամբ. զի չարաչար մահն եղծանէ զբարի կեանս, յորս եկեաց ոք զաղում ժամանակս. և բարի մահն տայ մոռանալ զանբարի կեանս անցեալ ժամանակաց։ Այլ քանզի ոչ գիտէ մարդ թէ յորո՞ւմ առուր մեռանիցի, որպէս զի բարի մահուամբ կնքեսցէ զկեանս իւր. զի գայ մահն որպէս զգող գիշերի 'ի ժամա՞ յորում ոչ կամիցի ոք։ Այսպա յայժ սխալն նա, որ ապատէ առուր վախճանի՝ զի լինիցի բարի։ Այլ քանզի ամենայն օր կարէ լինել վախճան կենաց, ապա զօր ամենայն պարտ է գտա-

նիլ բարի, որպէս զի բարի մահուամբ կնքեսցէ ըզ-
վախճան իւր։

ԺԳ. Այն է բարի մահ յորժամ 'ի շնորհս Աստու-
ծոյ մեռանի մարդն, զի որպէս կեռանք մարմնոյ է հո-
գին, նոյնպէս կեռանք հոգւոյն է շնորհքն Աստուծոյ։
Մեռանի մարմինն մինչ բաժանի հոգին 'ի նմանէ.
մեռանի հոգին յորժամ բաժանի 'ի նմանէ աստուա-
ծային շնորհք։ Նման է բնութեամբ հոգին մարդոյ,
բայց 'ի զկիրն յաստուածային շնորհաց՝ ասի մեռա-
նիլ բարոյականապէս. իսկ շնորհքն պահպանի և ա-
ճի առաքինութեամբ. ապա այր առաքինի է 'ի շնոր-
հքս Աստուծոյ, վասն որոյ մահն առաքինեաց է բարի։

ԺԵ. Չորեք են վասն որոց դառն թուի մահ. սէր
աշխարհի, խիղճ մտաց և անստուգութիւն փրկու-
թեան։ Ուստի ասէր ոմն իմաստասէր. Որովհետեւ
ոչ գիտես՝ եթէ յորում տեղւոջ և յորում ժամանա-
կի սպասէ քեզ մահն, դու յամենայն ժամ սպա-
սեսջիր նմա, զի մի անպատրաստ գտանիցիս 'ի գա-
ղաստեան նորա։

ԺԶ. Արդս ունի ազատութիւն նմանիլ հրեշտա-
կաց և անբանից. եթէ հոգւոյն վարի՝ նմանի հրեշ-
տակաց, իսկ եթէ մարմնոյ՝ նմանի անբանից։ Արդ
մինչդեռ կենդանի է մարդ, թէպէտ կարէ վարել
զկեանս ըստ նմանութեան անբանից, այլ ոչ կարէ
յետ մահու մնալ անմորոգելի և անպատիժ ըստ նը-
մանութեան անբանից. քանզի ունի հոգի բանական
և անմահ ըստ նմանութեան հրեշտակաց, վասն որոյ
ըստ նմանութեան հրեշտակաց չարաց պատժի 'ի յա-
ւիտեան։ Այս խորհեսցի իւրաքանչիւր զվախճան
իւր, և արասցէ որպէս և կամի։

ԺԷ. Այր բարի և իմաստուն՝ 'ի քաջառողջ կեն-
դանութեան իւրում զմիտս մահամերձ հիւանդաց
ունի։ Զի յայնժամ բազում ինչ ճշմարտութեամբ

զգայ հիւանդն, զորս յառաջնութեան իւրում ոչ զգայր. վասն զի քաջ ճանաչէ 'ի նոյն կէտ զօգուտ և զպատուականութիւն առաքինութեան, զոչնչութիւն և զվնաս աշխարհային հեշտութեան և մեծութեան։ Ա՛ստղիկ ողբան և մալի իցեն յառաջնութեան իւրեանց, 'ի ժամ մահու զգաստանան, և ցանկան առաքինաբար կեալ. բայց սա՛ղ զի ոչ ինչ կարեն շահիլ, վասն զի արեգակն 'ի մուսս է խանարհեալ։

ԺԸ. Ել զք քաջ ճանաչէ զդառնութիւն մահու, բայց այն՝ որ էառ զճաշակ մահու. այլ զինչ օգուտ իցէ գիտել յայնպիսաւ ժամանակի, մինչ ոչ կարէ այնուհետեւ քաղցրացուցանել զդառնութիւն նորա։ Սակայն և այժմ ոչ իսպառ մնայ անգիտելի՝ որոյ սէք են 'ի գլխի իւրում. զի մարթ է ստկաւուք իրազգած լինել նմա և զօգուտն տնօրինել։ Զի եթէ զք ե դեալ զանձն 'ի տեղի հոգեվար հիւանդի՝ առաջի նկարեսցէ զանհրաժեշտ մահուն զպատկեր, փոքր 'ի շատէ իմանայ զանհնարին տագնապ և զդառնութիւն ժամուն այնորիկ։ Ա՛ստի և նա որպէս 'ի մեռելոց կենդանի՝ յառաջնութեան իւրում հոգայ և պատրաստէ զկարեւորսն անդառնալի սուղոյն և յաւէժ կենդանութեանն. որովք դառնութիւնն փոխի 'ի քաղցրութիւն, և տագնապ մահուն 'ի հանգիստ քնոյ, և առաջնորդ կենացն անվախճանից։

ԺԹ. Խորհրդով սահմանեցան գերեզմանատունք իւրաքանչիւր ազգաց 'ի բազմամբոխ հրապարակս, կամ 'ի դրունս քաղաքաց, կամ յանցս ճանապարհաց. զի որ 'ի քաղաքին են մարդիկ՝ տեսեալ զմահարձանս զգաստասցին և յիշեսցեն, զի և ինքեանք թաղելոց են անդ. և որք 'ի քաղաքն մտանեն, 'ի միտ առցեն՝ թէ և 'ի նմա մարդիկ մեռանին։ Բանզի անմեռունչ բարբառք մեռելոց առաւել զարթուցանեն զմարդիկ յիշատակել զոր մահուն և զգաստանալ, քան

մեծաձայն ապդարարութիւնք կենդանեաց։

Ի. Խորհրդոք գրեն 'ի մահարձանս մեռելոց, թէ ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ. որովհետեւ մարդ 'ի մեռանիլ իւրում՝ հանգչի 'ի տառապանաց աշխարհի. զի փորձութիւն է կեանք մարդկան 'ի վերայ երկրի։

Սակայն եթէ կարէին մարդիկ զատանել 'ի միմեանց զբարիս և զչարս, 'ի դէպ էր գրել զայս միայն 'ի մահարձանս բարեաց. իսկ 'ի մահարձանս չարաց՝ լաւ եւս էր դրոշմել ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ՏԱՆՋԱՆԱՑ։ Բանզի չարք 'ի մեռանիլն անցանեն յառօրեայ վշտաց աշխարհի՝ 'ի յաւիտենական տանջանս, այսինքն մահուանէ 'ի մահ, որպէս և բարիք կենաց 'ի կեանս։

ԻԱ. Օգերեզմանատունս եթէ ոք անուանեսցէ բնակարան ստախօսից, ոչ սխալէ. վասն զի թաղեալքն 'ի նոսա 'ի կենդանութեան իւրեանց զբազում ինչ ասէին և խոստանային առնել, այսինքն շինել, քակել, ուտել, լմպել, պՃնիլ, շրջիլ և այլն. այլ ստելով խոստման իւրեանց, գնացին անդր և դադարեցան, և առնեն ինչ ոչ։

ԻԲ. Գերեզմանատունն է այնպիսի դպրոց, յորում մեռեալք վարժեն զկենդանիս, համբոյր զնաւնս. այբբենարան կամ գիրք ընթերցանութեան են մահարձանք շիրմաց, զորս եթէ ուշի ուշով ընթերցցի ոք, զբազում կենցաղօգուտ շահեկանութիւնս գանձէ անձին. 'ի միտ առնու՝ թէ ոչք են թոզեալքն, ում սպասեն, զինչ խորհին, զիարդ թոզեալ ժառանգութիւնս և զատացուածս իւրեանց՝ մերկ և կողոպուտ ստ ընկողմանին. Ճոխաբան լեզուք կան լռիկ, քաջարուեստ մատուանք՝ անգործ, սիգաձեմ ընթայք՝ կաշկանդեալք, որք ոչ սեղմէին 'ի հոյակապ ապարանս՝ յերկկանգուն տապանի բռվանդակին. զայսոսիկ և առաւել քան զսոյն օգտակար խրատս ուսանին կենդանիք 'ի մեռելոց։

ԻԳ. Որք 'ի կեանս իւրեանց սովոր են հոգալ ըստ ասանց, զվաճառաց և զառեւտրութեանց, նա և 'ի ժամն մահուան իւրեանց զնոցանէ միայն խոկան, զնոսա յանձն առնեն յեւոնոց. և վասն նոցա պատուիրեն աշխատս լինել, որպէս թէ միւսանգամ դառնալ ունին յաշխարհ։ Խորհին զերեսց՝ յորոց հրաժարին, և ոչ զայնց՝ առ որս 'ի պատրաստի են երթալ. խօսին զանցաւորաց՝ և ոչ զյաւիտենականէն։ Պատուիրեն կատարել զշինուածս զորս հիմնաւորեցին։ զարդարել զայգիս և զբուրաստանս զորս տնկեցին։ շահեցուցանել տոկոսեաք զմայր դրամացն զորս գտանեցին. հոգալ զարծաթոյն զորս 'ի վարձու եւուն։ արդիւնաւորել զշահավաճառութիւնն զոր ակնկալեալ ուրեցին։ Եւ զինչ քան զայս անմիտ խորհրդածութիւն և ջանք՝ անփոյթ լինել զճշմարիտ ապրումոյից, և հոգալ զայնց՝ որք չեն ինչ նմա պիտանացու։

ԻԴ. Օգոյշ են մարդիկ 'ի պահպանութիւն մարմնաւոր ընչից, այլ անհոգ 'ի պահպանութիւն հոգեւոր գարեաց. բայց որ իմաստունն է, առաւել քան զմարմնաւոր ստացուածս գուն գործէ անկրթուսս ունել զհոգեւոր բարիս։

ԻԵ. Գործք մարդկացին ըստ էակութեանն են մնացաւոր և անկայուն, այլ ըստ ներգործութեան կամացն անփոփոխ և մնայուն, զի յոր միանգամ յարի կամքն և սիրէ ազատ ներգործութեամբ, 'ի նմա յաւիտեան մնալ ախորժէ եթէ հնար իցէ. վասն որոյ ըստ յաժարութեան բաղձանացն չափի հաստատումն յաւիտենական բարւոյ կամ չարի։

Պարձեալ՝ կամքն գոլով ամենառ սիրոյ, ներգործել նոցա և յարիլ յինչ՝ է սիրել զնա. և յորժամ 'ի բարին յարի՝ զԱստուած սիրէ, որ է յաւիտենական. զի միոյն Աստուած է իսկապէս բարի և աղբիւր բարութեան, ըստ այնմ. «Չկայ՝ որ բարի, բայց մի Աստ-

ասուած։ ԵՒ յորժամ 'ի չար ինչ յարի, յետս դառնայ 'ի սիրոյն Աստուծոյ առ ստեղծուածս. նմին իրի ժամանակաւոր գործոց մարդոյ հաստատեալ փոխադարձ վարձք կամ պատիժ յաւիտենական, զի առաքայն զոր սիրեաց կամ ատեաց, է Աստուած յաւիտենական։

Ապաքէն յամենայն կէտ կամք մարդոյ կարէ յարել կամ 'ի բարի ինչ կամ 'ի չար, ունակաբար կամ ներգործաբար. և ոչ գիտէ մարդ, թէ 'ի հատանել մահուան՝ 'ի բարի կամս գտանիցի, թէ 'ի չար կամս։ Խրատն պարտ է մարդոյ յամենայն ժամ հաստատել զկամս 'ի բարի խորհուրդս և յաստուածահաճոյ գործս, զի ընկալցի իւր վարձք յաւիտենական զամենաբարին Աստուած. քանզի զներգործութիւնէ կամացս խրատանչիւր ումեք կախի հաստատումն, եթէ բարի և եթէ չար։

ԻԶ. Ամենեքեան զերկուս չնորհս առնէ բարեաց, մի՝ զի ազատէ զնոսա 'ի չարեացն աշխարհի յորս տապարապէին, և միւս՝ զի հաստատանէ զնոսա 'ի ժառանգութիւն երկնային բարեացն որոց փափագէին։ Ներհակ այսմ, զերկուս զնոսա առնէ չարաց, մի՝ զի զոկէ զնոսա 'ի վայելչութեանց աշխարհի յորս հեշտանային, և միւս՝ զի մատնէ զնոսա 'ի տանջանս գժոխոց յորմէ երկնչէին։ Վասն որոց բարիք ուրախութեամբ մեռանին, իսկ չարք թախծութեամբ։

ԻԷ. Ամենեքն ոչ վարի աշխատանաց ընդ ումեք, վասն որոց ոչ ոք պարտի զնմանէ գանգատել։ Զի եթէ բառնայր յաշխարհէ միայն զծերս, ով կարէր զմոլութիւնս երիտասարդաց զսպել. եթէ զերիտասարդս, ո՞ բաւական լինէր զազահութիւն ծերոց յաղթահարել։ Եթէ զպաւագարս միայն 'ի կենաց հատանէր, ո՞ կարող էր արդեաք զուժեղացն յանդգնութիւն չափաւորել. եթէ զառողջս մարմնով, ո՞ ձեռնհաս

գտանէր զպատապարս և զհիւանդս խնամել։ Եթէ միայն զաղքատս 'ի բաց ոտանէր, միթէ մարթ ինչ էր ասել զփարթամայն հպարտութիւն խոնարհեցուցանել. եթէ զփարթամս միայն, ո՞ կարէր զթիւ աղքատաց 'ի համար առնուլ։ Եթէ զառաքինիս բառնայր 'ի միջոյ, աշխարհս լինէր դժոխք, զի մնային միայն մարդիկ դիւազդիք. եթէ զչարս, յոյժ սակաւ գտանէին մարդիկ յաշխարհի, որովհետեւ սակաւաթիւ են բարիք։ Այսպէս մահն ընդ ամենեսեան միօրինակ վարի, զի զամենեսեան զգաստ և անտրտում պահեսցէ. վասն որոյ ոչ ոք իրաւունս ունի սրտնջալ զնմանէ, զի մարթ է իւրաքանչիւր ասել ըմբռնիլ 'ի մահուանէ յորում հասակի և իցէ։

ԻԸ. Արտնեղութիւն է յոյժ և տանջանք մեռոց՝ սպասել գալստեան ասելոց, մանաւանդ յորժամ յաստ նա 'ի գալ. ուստի լաւ է՝ եթէ այլք սպասեսցեն քեզ գնալ առ նոսա, քան թէ դու սպասեսցես գալստեան նոցա առ քեզ։ Այս անհնարին տանջանք լինէր կենդանեաց, եթէ սպասէին մեռելոց՝ միւս անգամ գալստեան նոցա յաշխարհ, զորս սիրէին։ բայց այժմ ոչ տանջին կենդանիք, զի ոչ սպասեն մեռելոց, այլ մեռեալք սպասեն կենդանեաց՝ երթալ առ նոսա։

ԻԹ. Որ վասն յանցանաց մատնի 'ի բանդ, ոչ զայլ ինչ մտածէ, բայց եթէ ազատիլ. իսկ մարդիկ 'ի նախկին մարդն յանցանօք ըմբռնեալ, արկան իբր 'ի բանդ՝ 'ի բազմամիջոց յայս աշխարհ, ուր մնան յամենայն 'ի կեանս որպէս յարդեղանս, և 'ի մեռանիլն ազատին. ուրեմն մահն է ազատիչ 'ի բանտէ վշտաց աշխարհի։ Այլ Աստուած ողորմած և գիտակ ամենայնի՝ զորս կրեն մարդիկ յայս աշխարհ, կարճեաց զժամանակ կենաց մարդոյ. և ինքեան մի ոչինչ պահեաց զանասելն, այսինքն զվշտիս մահուն,

ոչ մի ոք տաղտկացնել 'ի դառն վշտաց համարձակ կերպի խնդրել զմահ, կամ զնեռոգին երթալ։ Զայն որոյ մահն որ լաւ կամեցան Աստուծոյ լինի, ոչ միայն ապրասէ զմարդն 'ի բանտէ տարապանաց աշխարհի, այլ և հասուցանէ 'ի լաւագոյն կեանս, յայն սակս մահն ասի դուռն լաւագոյն կենաց։

Սպանէն քանի դառն լինէր կեանք մարդոյ 'ի վերայ երկրի, եթէ ոչ էր մահ. յայտ է փորձն 'ի չարաչար ախտացեալս, 'ի զառամեալ ծերս, 'ի յետին հիւանդութիւնս և յանդիմանութիւնս, որոց ամենեցուն միխիթարիչ է մահն։

Զինք ճարտար բժիշկ յոսպաքինել ոչաւ հիւանդին՝ առաւել քան զօրհաս մահուն. զի ուր ոչ ազդեն զօրութիւնք դեղոց քաջախուսեստ բժշկաց, սա առանց ինչ 'դեղոյ դիտէ ապաքինել։ Սպա մեծ ողորմութիւն է յԱստուծոյ առ մարդիկ՝ լինիլ նոցա մահկանացու, որ և ոչ փոքր պատիւ է մարդոյ, մինչ Աստուած ինքեան սեպհական տարար գիտել և կամիլ զօր և զժամ մահու, ուրեմն մի երկնչիր 'ի մահուանէ, այլ ջանա զի բարի մահուամբ եղցես յաշխարհէ։

Ա. Հրամանելի է մարդ՝ որ գիտէ եթէ սանդուխտ է 'ի վերայ երկրի, վասն որոյ ընդ ժամանակս ժամանակս առաքէ 'ի բուն հայրենին իւր 'ի յերկինս զգանձս բարեաց՝ զոր ստացաւ յամենայն 'ի կեանս իւր։ Ի կամակատարութեանն իւրով պատրաստեալ զպիտոյս Ճանապարհի՝ ապառեալ մնայ գալստեան մահու 'ի բերեալ հանուս առաջնորդի, Ճանապարհորդել յերկինս՝ 'ի վայելել յաւիտեան յարդիւնս վաստակոց իւրոց։

Այլ է մարդ որ գիտէ՝ թէ երկիրս չէ տեղի սեպհական ինքեան, այլ ի ճեռան ինչ առ ժամանակս կեաց բնակութեան. որովհետեւ չէ ծնեալ մարդս վասն երկրի լոյս աշխարհի անդանիցս, այլ վասն երկ-

ենից լուսն նմանութեան հրեշտակաց։ բայց ասկայն ոչ ինչ հոգաց զայնմանէ, և ոչ ինանց փոխարկել ոնդ զբանձս իւր վայելել անվնասեան կենաց։

Եթէ թէպէտ կուրազեան մահու հիւանդութիւնն բառում ունդամ եկեալ ազդ առնէ նմա, այլ նա ասվարեալն ոչ զգուստանայ սրատրուստական գաղանիս։ Իսա մինչ յաւուր միում իբրեւ զգող գիշերի յանկարծակի հասեալ բռնագատէ տանիլ, յայնժամ զգաց ճարդ զվերիսական զոր ապար, բայց անապան։ Օ ի թէպէտ լսեա ձեռնհաս գոլոյ ուշնապարհ պատրաստելոյ, այլ ոչ ամենայն կարեւոր պիտոյիւք։ և ոչ եւս փորձ առնել կուսակագիր, որպէս զի ամենայն ինչ յետ մահու իւրոյ լինիցի բարեկարգ և օրինաւոր։ Պատն որոյ յոլովակի յառնէ խուսվութիւն 'ի մէջ ժառանգորդաց։ և այր ընդ երեքօր խրոյ 'ի դատ վարեալ, ծախեն զինչս բաղումս 'ի դատաստանաւորացն կռիւս։ և եթէ ոչ խաղաղացին 'ի հեռագոյնաց հոգեւոր հովուաց և մտերիմ բարեկամաց, հայրենի ժառանգութիւնն ամենայն ոչ կարէ լինել բաւական՝ վայրավատին ծախուց նոցա։

Ապա ամենայն որ փութացի մինչդեռ ժամանակն 'ի ձեռս է, պատրաստել զկէտն հոգւոյ և մարմնոյ իւրոյ հաստատուն կուսակրութեամբ։ Բայց այս գովելի սովորութիւն զոր հաստատուն օրինաց պահեն այլազգ քրիստոնեայք, նուազեալ տեսանի այժմ յազգի մերում, թերեւս յանհոգութենէ աւանդողաց և իշխանաց, որ արդար և պիտանի է յոյժ և օգտակար, մնանալանդ առն քրիստոնէի և բարեպաշտի։

ԷԱ. Զկնք թշուառ և ողորմելի քան զայն, որ ընկղմանեալ 'ի մահիճս տանջի արտաքուստ մահաբեր ցաւոք, և 'ի ներքուստ 'ի խղճէ մտաց։ 'ի միոյ կողմանէ տեսանէ զխուճապումն մահու՝ վարել զհոգի

իւր յանձանցիթ ինչ աշխարհ, և 'ի միւսմէ կողմանէ նշմարէ զարտաքսաստուերիւն ժառանգորդաց ընչից իւրոց՝ տանիլ զնոսին իւր 'ի գերեզման։ Արկեալք գանձուց և սառացուածոց որք զեռեղեալ են մի ըստ միով առաջի աչաց իւրոց, յաւելուն զոստասպանս նորա. զի յուշ անդր ածեն զզրկեալսն՝ յորոց յանիրաւի էառ, և զկարօտեալսն՝ որոց զլացաւ տալ. զնոսին յոյսն պառղջութեան զոր տան նմա մերձաւորք իւր, ոչ կարէ միսիթարել զնա, զի տեսանէ զանդամս մարմնոյ իւրոյ լուծեալ և թալկացեալ։

Այսպէս որ կամի սնոտուռամ մեռանիլ՝ յորմէ անհնարին է խորշել, կատակագիր արասցէ 'ի կենդանութեան իւրում. եթէ զլկեալ իցէ զոք, հատուցցէ նմա. եթէ զլացեալ իցէ նպաստել կարօտելոց եկեղեցեաց և վանորէից՝ տացէ ըստ արժանւոյն, և մաքրեալ զմիտս 'ի խղճէ չարեաց խոստովանութեամբ և հաղորդութեամբ, հրաժարեսցի 'ի տառապանաց կենցաղոյս հանգչիլ 'ի յերկինս։

ԼԲ. Բ՝ որ խրատէ զհիւանդն հաստատուն կտակագրութեամբ տնօրինել զամենայն պէտս հոգւոյ իւրոյ և մարմնոյ, զողորմութիւնն աղքատաց, զպատարագիս, զնպաստն եկեղեցեաց և վանորէից, և զոր այլ եւս են հոգողութիւնք յօգուտ որդւոց և ընտանեաց իւրոց. յուշ արարեալ նմա՝ թէ այս ամենայն պատրաստութիւնք ոչ եթէ փութացուցանեն զմահ, այլ խոստանան զառողջութիւն. զի թեթեւացուցեալ զմիտսն 'ի բազմաբագնապ հոգոց, և մաքրեալ զսիրտն 'ի խղճէ չարեաց, թեթեւացուցանեն և զհիւանդն 'ի ցաւոց։ Այ՝ զի ցորչափ կենդանի է կտակագիրն, ոչ ոք ունի իրաւունս պահանջել 'ի նմանէ ինչ. զի կոտակ յետ մահուն է հաստատուն։

Այլ յորժամ ինքն հիւանդանայ, չածէ 'ի միտ զխրատն որով խրատեր զայլն. և եթէ ոք 'ի բարե-

կամաց առաջադրեցէ նմա կուսակապիր ընել խոժոռի և երեսս գարձուցանել ասելով. միթէ ամենայն որ հիւանդանայ՝ մեռանելոց իցէ։ Յաւելու ասել՝ թէ զգամ յանձն իմ, զի ես այսու հիւանդութեամբ ոչ մեռանիմ. բայց թէ հիւանդացայց առ ի մահ, յայնժամ եղեալ եմ ի մտի առնել զկտակագրութիւն։ Այսոսիկ և զոր այսպիսիք են անտեղի բանք յանդգնի խօսիլ, որպէս այն՝ թէ Աստուած ոմն իցէ գիտել զոր մահուան։

Աստի բարւոք առնէր, եթէ ոք զկարսուն զոք տայր սլոց հիւանդաց՝ արձանագրէր ի թղթի, և ի հիւանդանալ իւրում կատարէր գործով։ Բանքն մահն ոչ զոք ունի իւր խորհրդակից, զի ազդ արասցէ նմա զժամն օրհասական. և ոչ ումեք ասէ, զի յապաղեսցէ. և ոչ յումեքէ երկնչի, զի հեռի կացցէ. ոչ զոք թողու կենդանի, զի և ինքն ընդ նոսա անմեռ մնասցէ։

Եւ վասն զի կայ մնայ մարդկան մի անգամ մեռանիլ, գուցէ յայսմ հիւանդութեան մեռանելոց իցէ. զի չինք նմա յայտնութիւն ի վերուստ, թէ յայլում նուագի մեռանիցի։ Այլա որ ուսուցանէ զայլս, և զանձն ոչ ուսուցանէ, բազում գանից պարտաւոր գտանի, իբրեւ զծառայն որ գիտէ զկամս տեառն իւրոյ, և ոչ պատրաստէ ըստ կամաց նորա։

ԼԳ. Ի՞ժիշկ ոք եթէ ոչ ճանաչէ զպատճառ հիւանդութեան ուրուք, ոչ կարէ առողջացուցանել զնա. զի պնդացուցիչ դեղս տայ՝ որում օշարակ պիտի, և երակ հատանէ՝ որ խարանաց կարօտի. սմին իրի բազում բժիշկք բազում անգամ ի խորհուրդ մտեալ՝ ոչ կարեն բժշկել զկոթացեալն։ Ի նոքա միայն մարմնական ախտաւորութեանց գոլով հմուտ՝ անտեղեակ են հիւանդութեանց հոգւոց. և ո՞ դիտէ, գուցէ հիւանդութիւն այնմ՝ որում ջանան

օգնել, թեպե պատճառեալ 'ի խղճէ մտաց։

Զի որ վերս ունի 'ի հոգին, և սատանայի հաճոյացեալ 'ի խայթէ մտաց, նա 'ի դոյզն մի հիւանդութենէ մարմնոյ տկարանայ, և անկանի 'ի մահիճս ցաւոց. և զիանդ օգնեսցեն այնպիսւոյն ճարտարութիւնք բժշկաց, կամ ոչ շահ նմա 'ի մարմնական դեղոց. և այսու օրինակաւ բազում են տխտացեալք, զոր չէ մարթ ճանաչել։

Այս պարտաւոր են մերձաւորք հիւանդին՝ ապանց դոնդողանաց լսանել առ նա զհոգեւոր բժիշկ, որ խորհրդական խոստովանութեամբ ծանիցէ զցաւս հոգւոյ նորա, և զդղտակսն մատուցցէ նմա զդարմանս. և հիւանդն ազատեալ հոգւով 'ի խղճէ չարեաց ցրն, առողջացի և 'ի մարմնական տխտաւորութենէն։ Իւ եթէ մահ եւս 'ի վերայ հասանիցէ՝ ոչ ինչ տապնապեսցի, այլ որպէս 'ի քաղցր քուն հանգիցէ. և փրկութեամբ հոգւոյ իւրոյ բերկրեալ՝ զուարթ դիմաք 'ի պատրաստեալ օթեւանս երկնից ճանապարհ արասցէ. և փոխանակ սգոյ և տրտմութեան զբ թողլոց է մերձաւորաց իւրոց, թողուցու հոգեզբաւդճ սփոփանս և մխիթարութիւն։

ԼԴ. Այն է ճշմարիտ բարեկամ, որ օգնէ բարեկամին 'ի մեծի նեղութեան նորա. իսկ ոչ կարէ լինել այլ ինչ նեղութիւն մեծ 'ի կեանս մարդոյ՝ քան զոր մահու նորա. ապա ճշմարիտ բարեկամն 'ի լսել զհիւանդութիւն բարեկամին, երթայ և օգնէ նմա օգտակար խրատուք, որպէս զի փութացի առնուլ զսուրբ խորհուրդն ապաշխարութեան, և արասցէ կտակագրութիւն։

Բայց աւա՜ղ՝ զի զբազումս սեռանեմք յաւուրս մեր, որք պանծան զանձանց լինել բարեկամ հիւանդին. և երթեալ յայցելութիւն նորա, չառնեն ինչ զոյց զապաշխարութենէ և զկտակագրութենէ,

այլ վեր 'ի վերոյ խօսելով զհիւանդութենէ նոցա և զբժշկայ, դառնան և յաստուծոյն զնա առողջանալ. և իբրեւ մարգարէ կամ որգի մարգարէի նշանակեն նմա զոյն և զժամն ելանելոյ նորա 'ի մահճացն, և երթալոյ 'ի վաճառանոցն։ Եւ սղարմելի հիւանդն հաւատացեալ բանից նոցա, յապաղէ տեսանել զպատարատութիւն իւր. և մինչ օրհաս մահուն ասի՝ այնչ գնա, հաղիւ առեալ զխաչհուրդն ապաշխարութեան՝ ելանէ յաշխարհէ.

Այսպիսիք ոչ են ճշմարիտ բարեկամ հիւանդին՝ այլ շողոքորթ, լաստացիոց թէ թշնամի. զի փոխանակ յուսացուցանելոյ զհիւանդն տեսանել զպատարատութիւն անդառնալի գնացիցն, սուտ խոստմամբ առողջութեան՝ ասեն նմա յապաղել. փոխանակ նպաստամատոյց լինելոյ, վնասու նորա դատանին պատճառս։

Այսքէն ընդ ամենայն մարմնաւոր ծառայութեանց և բարերարութեանց կրթել մարդ ըստ տրժանուոյն հասուցանել. բայց ընդ հոգեւոր խրատուն՝ անհնարին է մարդոյ առնել արժանի հատուցումն։ Զի հոգին է անգին, ապա և խրատն որ ասուեալ լինի 'ի փրկութիւն հոգւոյ՝ է անգին։ իսկ առ այն որ է անգին, պահանջի արժանի հատուցումն վարձք անգին։ բայց քանզի տալ զայն անկարելի է մարդկան, ապա Աստուած տայ և հատուցանէ ընդ հոգեւոր անգին խրատուց զվարձս անգին։

Լե. Այնքան սաստիկ է և զօրաւոր սէրն ծնողական, մինչ զի 'ի մեռանիլ որդւոյն՝ ծնայ պնմեռ 'ի սիրոտ ծնողին, մանաւանդ եթէ որդին իցէ բարեբարոյ։ Բայց ոչ վայելէ հաւատացելոյ անդր քան զպայմանն ագալ և տրտմիլ. զի եթէ բարի էր որդին, ոչ է արժան լալ, զի մեկնեցաւ 'ի միջոց չարեաց, և գնաց վայելել յարդիւնս բարեաց իւրոց։ Իսկ եթէ չար էր, ոչ բնաւ արժան է լալ, զի կանխահաս օր

հատիս բարձաւ չարն 'ի միջոյ, և ոչ յաւելաւ պա-
տիժ նորա, որ եթէ միայր կենդանի, կարէր դոր-
ծել զայլ եւս չարիս՝ յաւելուլ զպատիժ իւր։ Այլ
է երբեմն զի թոյլ տայ Աստուած մեռանիլ որդւոյ
բարւոյ, զի մի գուցէ լինիցի չար. և բառնայ 'ի կե-
նաց որդի չար, զի մի չարագոյն եւս լինիցի։

. ԼԶ. Կոծ մեծ ունել 'ի վերայ մեռելոյ և վայիւք
և ճչմամ ողբալ, արտաքոյ է մարդկային բանաւորու-
թեան, և անվայել քրիստոնէական յուսոյ և կրօնի։
Զ. Ի եթէ ուղիղ հաւատով և բարի վարուք հրաժա-
րեցաւ 'ի կենցաղոյս, նա յանմահական կեանս ու-
րախացեալ բերկրի. և դու իբրեւ անյոյս ոք սգաս
տրտմութեամբ, որպէս թէ չիցէ անդրէն յաւնե-
լոց։ Իսկ եթէ չարաչար վարուք մեռաւ, բաւական
է նմա սուգն զոր ունի 'ի վերայ իւր. զի թէ և աշ-
խարհ ամենայն 'ի մի վայր ժողովեսցին և կոծեսցին,
ոչ կարեն հաւասարիլ սգոյ և տրտմութեանն, զոր
ունի մեռեալն 'ի վերայ կորստեան իւրոյ։

. Եթէ ասիցեն՝ բարեացապարտ ումն էր մեռեալն
և երախտաւոր բազմաց։ Պարտէն արժան էր նոցա
գիտել, թէ ստատիկ սգով չկարեն լինել շնորհապարտ.
իսկ եթէ ախորժեն, անմուսաց 'ի մոր կալցեն զե-
րախտիս նորա, և բանիւ և գրով յիշատակեսցեն
զհամբաւն բարութեան, և զաղգդուստ արդիւնս
վաստակոց նորա՝ յազգէ ազգ մինչեւ յաւիտեան.
մանաւանդ զի յորդորեալ յօրինակէ նորին՝ լինիցին
իւրքանչիւր ըստ կարի բարերար և երախտաւոր
հայրենեաց իւրեանց։

Իսկ եթէ ասիցեն՝ բազմորդի էր մեռեալն և ան-
ստացուած, և եթող որբ և անխնամ զորդիս և զըն-
տանիս իւր։ Զ. Ի՞նչ զի չառնուն 'ի միտ, թէ ոչ ինչ
օգտէ սուգ և թախծութիւն, զի ոչ կարէ լնուլ
զպէտս որբոցն և այրւոյ։ Հապա փոխարկեսցեն ըզ-

սուգ իւրեանց 'ի գթութիւն, և մարդասէր կամք խնամածու: լինիցին նոցա մինչեւ 'ի զարգանալ, և հոգալ զկարեաց իւրեանց՝ մի թողուցուն յաղարտի և անխնամ զարբան, և մի կարօտեալ զընտանիս նորա։

Եւ թէ ասիցեն՝ սիրելի էր մեզ մեռեալն և բարեկամ։ Իսկ արդ՝ պարտ էր նոցա ոչ մեծակամն ձայնարձակութեամբ ընդ վայր աղաղակել, և սգով և կոծով 'ի թուխս համակիլ, այլ հաստատուն կալ 'ի սիրելութեան, և որ ինչ վայելէ բարեկամութեան 'ի նոյն կանխել. աղօթս առնել վասն մեռելոյն; և տալ պատարագիս և ողորմութիւն, 'ի բարելից ձեռնութեան պահել զտուն նորա, և խնամով զարգացուցանել զորդիս նորա. զուստերսն տալ յուսումն գիտութեան և յարհեստս պիտանիս, և զդստերսն բարեկարգութեամբ պահել և ամուսնացուցանել, և սիրով բարեկամութեան հոգածու լինել ընտանեաց նորա, որպէս թէ ինքն իցէ կենդանի։

Այլ ասիցեն, եթէ 'ի ծաղկեալ հասակի մեռաւ, ծանիցեն այնպիսիքն, թէ և այն էր հարկաւոր եւ գրեթէ բնական, նկատմամբ պատճառացն յորոց եկն յառաջ մահն տարաժամ։

Այսքէն մարմին մարդոյ լաւ անյեղլի օրինաց արարչապետին բնութեան՝ բաղկացեալ է յայլասեռ տարերաց կամ 'ի նիւթոց, որք ունին զտարբեր յատկութիւնս, զտարբեր շարժմունս և զտարբեր ներգործութիւնս։ Քանզի հոլն է հաստատուն, անթափանցելի, և ծանրագոյն քան զայլն։ Ջուրն է մածուցիկ, որ ընդմտեալ յամենայն կազմութիւնս գործարանաց մարմնոյ, տայ նոցա լինել դիւրաշարժ։ Օդն է հօսանուտ, որ տայ միջոց այլոց տարերաց մարմնոյ շարժիլ առ հարկաւոր գործս։ Հուրն է յաւէտ ներգործական և շարժուն։ Աստի և մարմինն բաղկացեալ յայսոցիկ տարերաց կամ 'ի նիւթոց

զանի զգնաղան յատկութիւնս նոցա, այսինքն զանթափանցութիւն, զծանրութիւն, զդանդաղութիւն, զաժանելութիւն, զտարածութիւն և զշարժականութիւն։

Այդ՝ մինչ հաւասարակշիռ են տարերքս, զօրացուցանեն և պահպանեն զմարմին մարդոյ. բայց մինչ կորուսանեն զհաւասարակշռութիւնն, տկարացուցանեն և առբերեն զմահ. և որք պատճառ էին պահպանութեան և կենաց, լինին առիթ ապականութեան և մահուան։ Վասնզի հուրն առաւելեալ՝ երագէ զշարժումն մասանց նիւթոյ, և խանդակէ զկազմուած մարմնոյ. ջուրն առատացեալ՝ թուլացուցանէ զվիլս և զնեարդս. օդն լցեալ անչափապէս մասամբ՝ բերէ զմահաբեր ախտս։

Կորուսանեն զհաւասարակշռութիւնս իւրեանց տարերքս, մինչ 'ի քաղցմանէ գործոյթենէ տկարանան գործարանք մարմնոյ. և նուազի օր ըստ օրէ ձգողական շարժումն տարերաց, որք ձգէին զմասունս համեմատս էութեան իւրեանց 'ի մնունդ և յաճումն մարմնոյ, և 'ի պահպանութիւն կենաց. և ընդ հակառակն՝ սկսանին տարերքք վանողական շարժմամբ վանել զնիւթս որք աննման են էութեան իւրեանց, և տկարանան և քակտին. և յայսցանէ յաճալ գոյ մահն ծերութեան ըստ սահմանելոյն Աստուծոյ։

Կորուսանեն եւս զհաւասարակշռութիւնս իւրեանց տարերքք, է՝ որ 'ի կերակրոց և յըմպելեաց, և է՝ որ 'ի խառնակեցիկ վարուց. է՝ որ յապականութենէ օդոյ, և է՝ որ յամբոխմանէ կրկնց. և յայլ եւս բազում և 'ի զանազան պատճառաց, որք կարեն խանգարել զկազմուած մարմնոյ և գործարանաց. ուստի և տարերքք վանողական շարժմամբ հերքեն զնիւթսն որք ոչ համեմատին էութեան իւրեանց, և նուազին

և քակտին, և յայսցանէ յառաջ գայ մահն տարաժամ։

Իւ զայսոսիկ զերկոսին, այսինքն զշարժումն ձգողութեան որով պահպանին կեանք, և զշարժումն վանողութեան որով լուծանին կեանք, հաստատուն օրինաք սահմանեալ է Աստուած 'ի բնութեան մեր։ Իւ յորժամ փոփոխեսցին օրէնք բնութեան յորէնս չնորհաց, և եղեցի երկին նոր և երկիր նոր, յայնժամ նորոգեսցի և մարմին խնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց որդւոյն Աստուծոյ, և տուցէ Քրիստոս զհաստատումն գործոց իւրոց։

Իսկ արդ՝ եթէ մահն ծերութեան և եթէ մահն երիտասարդութեան են բնական և հարկաւոր, մինչ զպատճառսն յորոց յառաջ գան խելամտութեամբ քննեսցուք։ Զի որ արկանի 'ի հուր, հարկաւ այրի. և որ դահավէժ լինի, հարկաւ խորտակի. այսպէս ամենայն պատճառ հարկաւորապէս ներգործէ, ուստի և ամենայն գործ է հարկաւոր և բնական, նկատմամբ պատճառացն որք զուգընթացանն և յառաջ ածեն զգործն։ Այս չէ պարտ տրտմութեամբ լքանիլ ընդ մահ մեռելոյն, այլ զգաստութեամբ զարժանն տնօրինել, և զնոյն կատարել փութալ։

«Եթէ մեռանիցի մարդ՝ կեցցէ, վախճանեալ զաւուրս կենաց իւրոց։ Սպասեցից մինչ միւսանգամ լինիցիմ։» Յոբ. ԺԴ. 14։

«Սակաւ լաց 'ի վերայ մեռելոյն՝ զի հանգեաւ։» Սիրաք. ԻԲ. 11։

«Ո՞վ մահ, որպէս զի դառն է յիշատակ քո մարդոյ խաղաղացելոյ 'ի վերայ ստացուածոց իւրոց։» Սիրաք. ԽԱ. 1։

«Ո՞ մահ, զի գեղեցիկ են դատաստանք քո՝ կարօտելոյ աւն, և նուազելոյ 'ի զօրութենէ։» Սիրաք. ԽԱ. 5։

«Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։» Յովհ. ԺԲ. 24։

«Զի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհքն Աստուծոյ՝ կեանք յաւիտենից, 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր։» Հռովմ. Զ. 23։

ՑԱՆԿ

ԳԼԽՈՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Ա.	Առաջնորդ	11
Բ.	Բահանայ	24
Գ.	Իշխան	27
Դ.	Յողովուրդ	50
Ե.	Ազգասէր	56
Զ.	Վարժապետ	73
Է.	Ծնող	77
Ը.	Ամուսնութիւն	91
Թ.	Երիտասարդ	95
Ժ.	Դիտութիւն	100
ԺԱ.	Վիճակ կենցաղոյս	110
ԺԲ.	Երջանկութիւն	132
ԺԳ.	Ուսքինութիւն	142
ԺԴ.	Խոհեմութիւն	160
ԺԵ.	Խորհրդապահութիւն	173
ԺԶ.	Խիղճ մտաց	175
ԺԷ.	Արդարութիւն	179
ԺԸ.	Ճշմարտութիւն	183
ԺԹ.	Բարեկամ	189
Ի.	Հիւրասիրութիւն	199
ԻԱ.	Բաւականութիւն	201
ԻԲ.	Երկրագործութիւն	204
ԻԳ.	Օտարայրութիւն	206
ԻԴ.	Նազանդութիւն	208
ԻԵ.	Ընկերութիւն	217
ԻԶ.	Խնարհութիւն	220
ԻԷ.	Համբերութիւն	225
ԻԸ.	Խոկումն մահու	232